



Գրքերի օգնությամբ

Ուրլյամ Սարոյան
Մարդկային
կառավարություն



**Ուիլյամ Սարոյան
Մարդկային
կառավարչություն**



Անտես

Երևան

William Saroyan
THE HUMAN COMEDY

Անգլերենից թարգմանեց
ՆՈՒՆԵ ԹՈՐՈՍՅԱՆԸ

Խմբագիր՝
ԼԵՌՆԻԿ ԴԱԼԼԱՔՅԱՆ


Սարոյան Ուիլյամ

Մարդկային կատակերգություն: Վեպ/Ուիլյամ Սարոյան.–
թարգմ.՝ Նունե Թորոսյան: Եր.: Անտարես, 2020.– 192 էջ:

«Մարդկային կատակերգություն» վեպում (1943) սարոյանական ջերմության, մարդասիրության ու լավատեսության անմոռանալի տեսարաններ են հաջորդում իրար՝ արգելավագքը հաղթահարող Հոմերը, Քովիգթոնի խանութում արջի թակարդն ընկած փոքրիկ Ուլիսեսը, ծեր հեռագրիչ Գրոգանն իր դարակում թաքցրած օղու շշով, որ բթացնի սիրո, հույսի, ցավի ու մահվան հեռագրերի անվերջանալի տարափի դառն իրականությունը, Հոմերի՝ պատերազմ մեկնած եղբոր երգը տնից հեռու սլացող գնացքում... Սարոյանն ինչով ասես չէր զարմացրել ընթերցողին, բայց այս գործը կարծես գերազանցել է ամեն ինչ. պատերազմի ու սովորական համեստ մարդկանց մասին մի շիտակ պատմություն: Մի փոքրիկ վեպ: Մի մեծ նվաճում:

Սա գրքի երկրորդ՝ հեղինակի լրամշակած տարբերակի (1966) առաջին թարգմանությունն է հայերեն:

ISBN 978-9939-76-544-0



Անտարես

THE HUMAN COMEDY Copyright © William Saroyan, 1943
Cover ©William Saroyan's painting #2 Feb 12 1963 SF,
Provided by courtesy of William Saroyan Foundation.

© Անտարես, 2020

© Թորոսյան Ն., թարգմ. համար, 2020

Եվհրում եւմ Թագուիի Սարոյանիւն

Հարուկ քեզ համար պարմություն գրելս շատ երկար
 րևեց, որովհետև ուզում էի, որ լավը լինի, գրածներիցս
 ամենալավը: Վերջապես, երբ էլ սպասելու ժամանակ չկար,
 ասացի՝ փորձեմ: Կարող էի ավելի ձգձգել, բայց ո՞վ իմանա՝
 մեզ ինչ է սպասում, կամ հետո ձիրքիցս ու տրամադրու-
 թյունիցս ինչ կմնա, ու որոշեցի հույսս այս պահի ձիրքիս
 ու տրամադրությանս վրա դնել: Երանի շուրով շնորհալի
 մեկը գրածս հայերեն թարգմանի՝ քեզ հարազատ գրերով:
 Գուցե թարգմանությունն ավելի գեղեցիկ հնչի, քան իմ
 անգլերենը, և գուցե, ինչպես հաճախ արել ես, ինձ համար
 դրանից հարվածներ կարդաս. շատ էլ թե ինքս եմ գրել:
 Այդ դեպքում խոստանում եմ լսել ու զարմանալ, թե ի՞նչ
 գեղեցիկ է մեր լեզուն, որ քչերը գիտեն, և էլ ավելի քչերն
 են ի զորու քեզ պես զգալ ու սիրել: Քանի որ չես կարող
 անգլերենը կարդալ ու վայելել այնքան, որքան հայերենն
 ես կարդում ու վայելում, և քանի որ ես էլ հայերեն բոլո-
 րովին գրել չգիտեմ, մնում է՝ հույսներս լավ թարգման-
 չի վրա դնենք: Ինչևէ, այս պարմությունը քեզ համար եմ
 գրել: Երանի հավանես: Աշխատել եմ շատ պարզ գրել՝ մեր
 ընտանիքին ու հարկապես քեզ բնորոշ խստաբարոն ու
 թեթևը միախառնած: Գիտեմ, պարմությունը մեծ բան չէ,
 բայց հետո՞ ինչ: Դու հաստատ մեծ բան կհամարես, քանի
 որ որդիդ է գրել՝ սրտանց:

Ուիլյամ Սարգյան
Սան Ֆրանցիսկո, 1942

1. ՈՒԼԻՍԵՍԸ

Օրերից մի օր Ուլիսես Մաքուլի անունով մի փոքրիկ տղա Կալիֆոռնիայի Իթակա քաղաքի Սանտա Կլարա պողոտայի իրենց տան բակում գետնասկյուռի անցքի գլխին էր կանգնել: Անցքի բնակիչ գետնասկյուռը խոնավ հողը դեն տարավ ու աչքերը պլշեց տղայի վրա, որն անձանոթ էր, բայց կարծես թշնամի չէր: Բնության այս հրաշքը դեռ կարգին չըմբռնեց՝ Իթակայի թռչուններից մեկը եկավ ու թառեց կաղնու սաղարթին և տղայի ուշադրությունը երկրից երկինք շեղեց: Հաջորդը՝ ամենացնձալին, հեռվից անցնող բեռնատար գնացքի փնչոց-ոռնոցն էր: Տղան լսում էր ու զգում, թե գնացքի ընթացքից հողը ոնց է ոտքերի տակ դողում: Հետո սկսեց վազել՝ աշխարհի (ինչպես իրեն էր թվում) ամենամեծ արագությամբ:

Խաչմերուկին ճիշտ այն պահին հասավ, որ հասցնի գնացքի անցնելը տեսնել. ծայրից ծայր՝ շոգեքարշից մինչև պոչը: Մեքենավարին ձեռքով արեց, բայց սա չպատասխանեց: Հինգ ուրիշներին արեց, որ էլի գնացքում էին, բայց սրանք էլ չպատասխանեցին: Կարող էին, բայց չարեցին: Հետո գնացքից մի սևամորթ կախվեց, ու գնացքի դղրոյունի տակից Ուլիսեսի ականջին նրա երգը հասավ.

Լաց մի՛ լինի, սիրու՛ն տիկին, է՛լ հերիք տխրենք:

Քենթուկիի մասին արի հին երգը երգենք

Ու կարոպով՝ հեռվում թողած մեր տունը հիշենք:

Ուլիսեսը սևամորթին էլ ձեռքով արեց, ու հանկարծ տարօրինակ, անսպասելի բան եղավ. այս մարդը՝ սևամորթը, որ մյուսներից տարբեր էր, պատասխանեց, ձեռքով արեց ու բղավեց.

– Տուն եմ գնում, տու՛ն, իմ հին տունը:

Փոքրիկ տղան ու սևամորթն իրար ձեռքով էին անում, մինչև գնացքը համարյա աչքից կորավ:

Հետո Ուլիսեսը շուրջը նայեց: Ահա այստեղ՝ շուրջբոլորը, զվարճալի ու միայնակ իր կյանքն ու իր աշխարհն էր: Տարօրինակ, մոլախոտապատ ու աղբապատ, հրաշքներով լի, անմիտ, բայց գեղեցիկ աշխարհը: Ճանապարհով բեռը մեջքին մի ծեր մարդ էր գալիս: Ուլիսեսը նրան էլ ձեռքով արեց, բայց մարդը շատ ծեր էր, շատ հոգնած, և փոքրիկ տղայի բարեկամական ողջույնը մեծ բանի տեղ չդրեց: Այնպես նայեց Ուլիսեսին, կարծես ինքն էլ, տղան էլ մեռած լինեին:

Փոքրիկը կամաց շրջվեց ու քայլեց տան կողմը: Քայլելիս դեռ շարժվող գնացքի ձայնը, սևամորթի երգն ու հրճվալից բառերն էր լսում. «Տուն եմ գնում, տու՛ն, իմ հին տունը»: Ոտքը կախ գցեց, որ այս ամենի մասին մտածի. ճկենու ծառի մոտ մլուլ տվեց՝ տակի հոտած դեղին պտուղները ոտքով դեսուդեն հրեց: Հետո ժպտաց Մաքուլիներին բնորոշ մեղմիկ, իմաստուն թաքուն ժպիտով, որը աշխարհին *ողջույն* էր ասում:

Անկյանը հասավ, թեքվեց ու իրենց տունը տեսնելով՝ ուրախ-զվարթ ցատկոտեց: Այս ցնծության պատճառով ընկավ, բայց վեր կացավ ու առնչ գնաց:

Մայրիկը բակում էր՝ հավերին կուտ էր տալիս: Նայեց՝ տեսավ տղայի ընկնելը, բարձրանալն ու նորից ցատկոտելը: Տղան արագ, բայց անձայն մոտ եկավ, մի քիչ կողքին կանգնեց, հետո հավանոց գնաց, որ տեսնի՝ ձու

կա՞: Մեկը գտավ: Մի պահ նայեց, ձեռքն առավ, տարավ ու մե՛ծ զգուշությամբ մայրիկին տվեց՝ հասկացնելով մի բան, որ մեծը չէր կռահի, իսկ երեխան հետո է՛լ չէր հիշի, որ ասեր:

2. ՀՈՄԵՐԸ

Մեծ եղբայրը՝ Հոմերը, հին հեծանվի թամբին նստած, խիզախորեն մաքառում էր գյուղական ճանապարհի փոշու դեմ: Հոմեր Մաքուլիի հագին հեռագրատարի՝ վրան մեծ բաճկոն էր ու գլուխը հագիվ ծածկող գլխարկ: Արևը թեքվում էր՝ հթակայի բնակչությանը քնկոտ երեկոյի բաղձալի խաղաղությունը պարզևելու: Չորս կողմը Կալիֆոռնիայի ծե՛ր, ծե՛ր հողին փռված մրգատու այգիներ ու խաղողի վազնուտներ էին: Որքան էլ ընթացքն արագ՝ տեղանքի գեղեցկությունը Հոմերի աչքից չէր վրիպում: Մի տեսե՛ք, է՞, – չէր դադարում ինքն իրեն ասել ամեն ծառին, թփին, ամպին, հողին, արևին: Ի՛նչ սիրուն է: Հետո սկսեց հեծանվով նախշեր գծել ու ոլոր-մոլոր շարժումներին համընթաց՝ ձայնը գլուխը գցած, պարզ, հուզական ու զվարթ երգեց: Մտքում նրա մեղեդուն մեկ նվագախմբի լարայիններն էին ուղեկցում, մեկ մայրիկի տավիղն ու քրոջ՝ Բեսսի դաշնամուրը: Վերջում, որ ընտանիքն ամբողջանա, ակորդեոնը միացավ, մեղեդուն եղբոր՝ Մարկուսի թեթև, անբռնազբոս զվարթությունը բերելով:

Հոմերի երգն ընդհատեց երկնքով սուրացող երեք անճոռնի սարքերի հռնդյունը: Հեռագրատարը գլուխը բարձրացրեց՝ ինքնաթիռներին նայելու, ու փոսն ընկավ: Ինչ-որ գյուղացու շուն վազեվազ եկավ և լուր բերած սուրհանդակի տեսքով սկսեց հաչել: Հոմերն այս լուրը բանի տեղ չդրեց. միայն ծաղրանքով «հա՛՛ֆ,

հա՛ֆ» ասաց, հետո նորից հեծանիվը նստեց ու առաջ ընթացավ:

Քաղաքի գիծը հատեց՝ առանց ճամփեզրի ցուցանակը կարդալու:

ԻԹԱԿԱ, ԿԱԼԻՖՈՐՆԻԱ

ՏԱՆ ՊԱՏԵՐԸ ԶԵՐՄԱՑՆՈՒՄ ԵՆ

ԲԱՐԻ ԳԱԼՈՒՍՏ, ՃԱՄՓՈՐԴ

Հաջորդ անկյանը կանգ առավ՝ զինվորներ տեղափոխող բեռնատարների շարայանը նայելու: Պատվի առավ, ինչպես եղբայրը՝ Ուլիսեսն էր գնացքի մարդկանց ձեռքով արել: Զինվորներից շատերն էլ նրան պատվի առան. ինչու՞ չառնեին, ի՞նչ ունեին կորցնելու:

3. ՀԵՌԱԳՐԱՏԱՆԸ

Երբ Հոմերը վերջապես հեռագրատուն հասավ, Իթակայում արդեն երեկո էր: Պատուհանի ժամացույցն ասում էր՝ յոթն անց երկու: Հոմերը ներսում պարոն Սպանգլերին՝ հեռագրատան կառավարչին տեսավ, որ մի քսան տարեկան հոգնած տեսքով անհանգիստ երիտասարդի պարզած հեռագրի բառերն էր հաշվում: Ներս մտավ ու լսեց.

– Տասնհինգ բառ՝ ստացողի հաշվին, – ասաց պարոն Սպանգլերը:

– Մայրս հեռագիրը ե՞րբ կստանա, – հարցրեց տղան:

– Ի՞նչ ասեմ. արևելյան ափին ժամը ուշ է, համ էլ մեկ է՝ գիշերով դժվար է փող ճարել: Բայց ես հենց հիմա կուղարկեմ, որ շուտ հասնի, – ու առանց տղային նայելու ձեռքը գրպանները տարավ՝ մի բուռ մանր, մի թղթադրամ և մի պինդ խաշած ձու հանեց:

– Ա՛ռ, – ասաց, – համենայն դեպս, – ու փողը մեկնեց տղային: – Մայրիկդ ուղարկի՛ կվերադարձնես:

Հետո ձուն ցույց տվեց.

– Յոթ օր առաջ բարում եմ գնել: Բախտավոր է:
Տղան ապշած՝ փողին նայեց:

– Շնորհակալ եմ, – ասաց ու արագ դուրս եկավ:

Սպանգլերը հեռագիրը Ուիլյամ Գրոգանին հանձնեց՝ գիշերային հեռագրիչին:

– Վճարված ուղարկիր, Վիլլի: Ես կվճարեմ:

Պարոն Գրոգանը ձեռքը սարքի բռնակին տարավ ու սկսեց չխկչխկացնել՝ տառ առ տառ, Մորզեի այբուբենով.

ՏԻԿԻՆ ՄԱՐԳՐԵԹ ՍՏԻՔՄԱՆԻՆ

1874 ԲԻԴԼ ՍՏՐԻԹ

ՅՈՐՔ, ՓԵՆՍԻԼՎԱՆԻԱ

ՍԻՐԵԼԻ ՄԱՅՐԻԿ, ԵՐԵՍՈՒՆ ԴՈԼԱՐ ՈՒՂԱՐԿԻՐ:

ՈՒԶՈՒՄ ԵՄ ՏՈՒՆ ԳԱԼ: ԼԱՎ ԵՄ, ԳՈՐԾԵՐՍ ԼԱՎ ԵՆ:

ԶՈՆ

Հումերն առաքումների դարակին նայեց, որ տեսնի՝ առաքելու ինչ կա: Պարոն Սպանգլերը մի պահ նրան նայեց, հետո հարցրեց.

– Հը՛, հեռագրատար լինելը ո՞նց է:

– Ո՞նց է, – կրկնեց Հումերը: – Դրանից լավ բան կա՞: Ինչքա՛ն մարդ ես տեսնում: Ինչքա՛ն տեղեր ես գնում:

– Ճիշտ որ, – ասաց Սպանգլերը: Հետո ավելի ուշադիր նայեց տղային:

– Գիշերը լա՞վ ես քնել:

– Լավ, – պատասխանեց Հումերը: – Շատ հոգնած էի, բայց լավ եմ քնել:

– Դպրոցում քունդ չտարա՞վ:

– Մի քիչ:

– Ո՞ր դասին:

– Պատմության:

– Իսկ սպո՞րտը: Ուզում եմ ասել՝ գործիդ պատճառով չմասնակցեցիր, չէ՞:

– Հավ էլ մասնակցեցի: Ամեն օր մարզանքի դաս ունենք:

– Հա՞: Ես դպրոցում 200 մետր ցածր արգելքներով վազք եմ վազել: Մեր Հովտի չեմպիոնն էի,– հեռագրատան կառավարիչը լռեց, հետո շարունակեց:– Իսկապե՞ս գործի հավանում ես:

– Կտեսնե՞ք՝ ձեր ամենալավ հեռագրատարն եմ դառնալու:

– Բարի՛: Բայց քեզ չկոտորես: Առաքումների արագ տեղ հասցրու, բայց *չափից դուրս* չշտապես: Մարդկանց հետ քաղաքավարի եղիր, վերելակում գլխարկի հանիր, ու կարևորը՝ հեռագիր չկորցնես:

– Այո՛, սըր:

– Գիշերային հերթափոխը ցերեկայինից տարբեր է: Գիշերով չինական թաղ կամ կորած-մոլորած մի տեղ հեռագիր տանելը մեկ-մեկ վախենալու է: Բայց *պետք չի՛* վախենա: Մարդը մարդ է, վախենալու ի՞նչ կա: Քանի՞ տարեկան ես:

Հումերը թուքը կուլ տվեց.

– Տասնվեց:

– Հա, գիտեմ,– ասաց Սպանգլերը,– երեկ ասել էիր: Տասնվեցից փոքրերին գործի չենք վերցնում, բայց կարծում եմ՝ քո դեպքում բացառություն կանենք: Քանի՞ տարեկան ես:

– Տասնչորս:

– Հա, ի՞նչ, երկու տարուց տասնվեցի կլրանա:

– Հա՛, սըր:

– Թե մի բան չհասկանաս՝ ինձ հարցրու:

– Հա՛, սըր,– պատասխանեց Հումերը: Հետո հարցրեց.

– Երգող հեռագրերն ի՞նչ պիտի անեն:

– Կարծեմ լավ ձայն ունես, չէ՞:

– Մի ժամանակ կիրակնօրյա երիցական դպրոցի երգչախմբում երգել եմ:

– Շատ լավ է: Մեր երգող հեռագրերի համար հենց էդպիսի ձայն է պետք: Հիմա, ասենք մեր պարոն Գրոգանին ծննդյան շնորհավորանք են ուղարկել: Ո՞նց կփոխանցես:

Հոմերը մոտեցավ պարոն Գրոգանին ու երգեց.

*Տարեդարձ է այսօր,
Տարեդարձ է այսօր,
Շնորհավո՛ր, մեր լավ Գրոգան,
Թող լինե՞ք բախտավո՛ր:*

– Շնորհակալ եմ, – ասաց պարոն Գրոգանը:

– Լավ էր, – գովեց պարոն Սպանգլերը, – միայն ոչ թե «մեր լավ Գրոգան», այլ «պարոն Գրոգան» պիտի ասեիր: Շաբաթական տասնհինգ դոլարն ի՞նչ ես անելու:

– Մայրիկիս եմ տալու:

– Ապրես: Էսօրվանից մեր *մշտական* աշխատողը կլինես: Մեր գրասենյակի մի մասնիկը: Ուշադիր եղիր, աչքերդ բաց, ականջներդ՝ սրած պահիր, – հեռագրատան կառավարիչը մի պահ հայացքը կողմ ուղղեց, ապա հարցրեց.

– Ապագադ ո՞նց ես տեսնում:

– Ապագա՛ս, – կրկնեց Հոմերը: Մի փոքր շփոթվեց, որովհետև ինչ իրեն հիշում էր՝ ամեն աստծու օր ապագայի ծրագրեր էր կազմել, հեչ որ չլինե՞ր՝ հաջորդ օրվա ծրագրեր:

– Ը՛ր, – կմկմաց, – հաստատ չգիտեմ, բայց կուզեի մի օր մի անվանի մարդ դառնալ:

– Անպայման կդառնաս, – ասաց Սպանգլերը: – Բրողվեյի Չաթերթոնի հրուշակարանի տեղը գիտե՛ս: Ա՛ռ

էս քսանհինգ սենթը: Ինձ երկու հատ երեկվա կարկանդակ բեր. խնձորով ու կոկոսի կրեմով: Քսանհինգ սենթի՛ երկու կարկանդակ:

– Հա՛, սըր,– գոչեց Հոմերը, Սպանգլերի նետած դրամը բռնեց ու գրասենյակից դուրս վազեց: Սպանգլերը հեռագրիչին դարձավ.

– Հը՛, ի՞նչ կասես:

– Լավ տղա է,– պատասխանեց պարոն Գրոգանը:

– Սանտա Կլարա պողոտայի աղքատ, ազնիվ ընտանիքից է: Հայր չունեն: Եղբայրը բանակում է: Մայրն ամառները մթերանոցում է աշխատում: Քույրը քոլեջ է գնում: Մենակ թե պետք եղածից մի երկու տարով փոքր է:

– Ես էլ պետք եղածից մի երկու տարի մեծ եմ,– ասաց պարոն Գրոգանը:– Յուլա կգնանք:

Սպանգլերը գրասեղանի առաջ մի քիչ աշխատեց ու հանկարծ վեր թռավ:

– Քորբեթի բարում կլինեմ: Թե պետք եղա՛ կկանչեք: Կարկանդակները երկուսով կերեք...– նա պապանձված կանգ առավ՝ տեսնելով, որ Հոմերը, երկու փաթեթ ձեռքին, ներս վազեց:

– Ասում ես՝ անունդ ի՞նչ էր,– համարյա բղավելով հարցրեց Սպանգլերը:

– Հոմեր Մաքուլի:

Հեռագրատան կառավարիչը ձեռքն իր նոր հեռագրատարի ուսին դրեց:

– Հիմա ի՛նձ լսիր, Հոմեր Մաքուլի: Գիշերվա հերթափոխն իսկը քեզ պես տղայի կարիքն ունի: Վայ թե Սան Հոաքին հովտի ամենաարագավազ արարածը լինես: Ու մի օր հաստա՛տ երևելի մարդ կդառնաս: Թե ողջ մնացիր: Աշխատի՛ր մնալ:

Այս խոսքերով շրջվեց ու, մինչ Հոմերն ասածի իմաստը կհասկանար, գրասենյակից դուրս գնաց:

– Լավ, տղա՛ս, – ասաց պարոն Գրոգանը, – կարկանդակները բեր՝ տեսնենք:

Հոմերը կարկանդակները Գրոգանի սեղանին դրեց, մինչ նա շարունակում էր խոսել:

– Հոմե՛ր Մաքուլի, իմ անունը Ուիլյամ Գրոգան է, ու չնայած վաթսունյոթ տարեկան եմ, մարդիկ ինձ Վիլլի են ասում: Ես հեռագրիչ եմ՝ աշխարհի վերջին հեռագրիչներից մեկը: Նաև գիշերային հերթափոխի գլխավորն եմ: Նաև քաղցած եմ: Հիմա արի քե՛ֆ անենք՝ խնձորով ու կոկոսի կրեմով կարկանդակներն ուտենք: Էսօրվանից ես ու դու ընկերներ ենք:

– Հա, սը՛ր:

Ծեր հեռագրիչը կարկանդակներից մեկը չորս կտոր արեց, ու սկսեցին ուտել:

– Մեկ-մեկ քեզ կխնդրեմ հրահանգներս կատարել կամ ինձ հետ երգել, կամ ուղղակի զրուցել: Խմած ժամանակ քեզնից ընթռնում կակնկալեմ, մի բան, որ տասներկու տարին բոլորած մարդկանցից ակնկալելը դժվար է: Քանի՞ տարեկան ես:

– Տասնչորս, բայց ընթռնելու գործում լավ եմ:

– Շատ բարի, խոսքիդ չեմ կասկածի: Ամեն գիշեր էս գրասենյակում կուզեմ հույսս վրադ դնել. կօգնես, որ գործս տեղը-տեղին անեմ: Թե քունս տարավ ու թափ տալով չարթնացա՝ երեսիս սառը ջուր կցողես, հետո Քորբեթի բարից մի գավաթ տաք սև սուրճ կբերես:

– Հա, սը՛ր:

– Բայց գրասենյակից դուրս վարքդ ուրիշ պիտի լինի: Թե հանդիպես ու տեսնես՝ խմած եմ, կողքովս անցնելիս կբարևես, բայց որ քե՛ֆս լավ է՝ նկատելու չտաս: Ես նրբազգաց մարդ եմ ու հասարակական հոգածության առարկա դառնալ չեմ սիրում:

– Գրասենյակում՝ սառը ջուր ու մի բաժակ սուրճ, – կրկնեց Հումերը, – փողոցում՝ բարևել ու անցնել: Լավ, սըր:

Հեռագրի սարքը սկսեց ճարճատել: Պարոն Գրոգանը մոտեցավ, որ պատասխանի, գրամեքենայի առջև իր տեղը գրավեց, բայց շարունակեց խոսել:

– Ոնց որ լսեցի, թե ժամանակին կիրակնօրյա դպրոցում երգել ես: Ի՞նչ կլինի, քանի Վաշինգթոնից եկած հաղորդագրությունն եմ տպում, երգացանկիցդ մի երգ երգիր ինձ համար:

Հումերը եկեղեցական մի երգ երգեց, իսկ պարոն Գրոգանը հաղորդագրությունն էր տպում: Հեռագիրը պաշտպանության նախարարությունից էր՝ Կալիֆոռնիայի Իթակա քաղաքի 1129 Գ փողոցի բնակիչ տիկին Ռոզա Սանդովալին հասցեագրված: Տիկին Սանդովալին տեղեկացնում էին, որ որդին՝ Խուան Դոմինգո Սանդովալը, զոհվել է մարտի ժամանակ:

Պարոն Գրոգանը հեռագիրը Հումերին տվեց: Հետո աթոռի կողքի դարակում պահ տված շիշը հանեց ու մի մեծ կում արեց: Հումերը հեռագիրը ծալեց՝ ծրարը դրեց, փակեց, դրեց գլխարկի մեջ ու գրասենյակից դուրս եկավ: Հեռագրատարի դուրս գալուն պես տարեց հեռագրիչը ձայնը գլուխը գցեց ու նույն՝ Հումերի երգած երգը երգեց: Որովհետև ինքն էլ, բոլորի պես, մի ժամանակ ջահել էր եղել:

4. ՏԱՆԸ

Սանտա Կլարա պողոտայի՝ Մաքուլիների տնից երաժշտության ձայն էր գալիս: Բեսսը և տիկին Մաքուլին «Ու բոլորն ինձ կնախանձեն» երգն էին նվագում: Մարկուս անունով զինվորի համար: Կարևոր չէր, թե ինքը որտեղ էր. ուղղակի այս երգը

շատ էր սիրում: Մերի Արինան հարևան տնից եկավ, կանգնեց դաշնամուրի մոտ՝ Բեսսի կողքին, հետո սկսեց երգել: Երգում էր Մարկուսի համար, որին *աշխարհի չափ* սիրում էր: Փոքրիկ Ուլիսեսը կանգնած նայում էր ու լսում: Ինչ-որ խորհրդավոր բան կար այս ամենի մեջ, ու թեև քունը շատ էր տանում, փորձում էր հասկանալ: Վերջապես կենտրոնացավ ու հարցրեց.

– Բա Մարկուսն ո՞ր է:

– Բանակում, – պատասխանեց տիկին Մաքուլին:

– Ե՞րբ է գալու:

– Հենց որ պատերազմը վերջանա:

– Վա՞ղը:

– Չէ, վաղը չէ:

– Բա ե՞րբ:

– Չգիտենք: Սպասում ենք:

– Բա հայրի՞կն ուր է, – հարցրեց Ուլիսեսը: – Որ սպասենք, նա է՞լ Մարկուսի պես տուն կգա:

– Չէ, Մարկուսի պես չի գա: Փողոցի ծայրին չի հայտնվի, աստիճանով չի բարձրանա, շենքը չի հատի ու ներս չի մտնի՝ ոնց որ առաջ:

Սա տղայի խելքից վեր էր, ու քանի որ միայն մի բառ կար, որ կարող էր ինչ-որ բացատրություն տալ ու փարատել, նա այդ բառն ասաց.

– Ինչու՞:

– Հայրիկդ երկու տարի առաջ մահացել է, Ուլիսե՛ս: Բայց քանի մենք կանք, քանի միասին ենք, քանի դեռ մեզնից գոնե *երկուսը* կենդանի են, աշխարհում ոչ մի բան նրան մեզնից չի խլի:

Տղան մի պահ մտքի մեջ ընկավ, հետո հիշեց առավոտյան տեսածը:

– Գետնասկյուռներն ի՞նչ են:

Մայրիկին այս հարցը չզարմացրեց: Գիտեր, որ տղան աչքեր ունի, բացի աչքերից՝ խելք, բացի խելքից՝ հոգի, սեր ու ծարավ: Հասկանալու ծարավ:

– Դրանք մեզ պես՝ էս երկրի բնակիչներն են: Մեզ պես կյանք ունեն: Մեր մասնիկն են, կյանքի մասնիկն են:

– Լավ, բա Հումե՞րն ուր է, – հարցրեց Ուլիսեսը:

– Եղբայրդ երեկ գործ է գտել: Դասերից հետո պիտի աշխատի: Կեսգիշերին է գալու, երբ դու մուշ–մուշ քնած լինես:

Ուլիսեսն ինչքան փորձում էր արթուն մնալ, է՛լ չդիմացավ:

Տիկին Մաքուլին հայացքն Ուլիսեսից Բեսսին դարձրեց:

– Տար, պառկեցրու, – ասաց:

Բեսսն ու Մերին տղային իր սենյակը տարան: Սրահում մենակ՝ տիկին Մաքուլին թվաց, թե ոտնաձայն է լսում, ու շրջվեց: Թվաց, թե դռան մոտ Մաթյու Մաքուլին է տեսնում, բայց ոնց որ նորից Ուլիսեսը լիներ, ոչ թե վերջերս՝ այնքա՛ն վաղուց, մահացած հասուն տղամարդը:

5. ՏԻԿԻՆ ՍԱՆԴՈՎԱԼԸ

Տիկին Սանդովալի տան առջև հեռագրատարը հեծանվից իջավ: Մոտեցավ դռանն ու կամացուկ թակեց: Չգիտես ոնց՝ իսկույն հասկացավ, որ տանը մարդ կա: Ձայն չլսեց, բայց հաստատ գիտեր, որ թակոցը մեկին դռան մոտ է կանչել, ու շատ էր ուզում տեսնել, թե այդ մեկը՝ տիկին Սանդովալ անունով մեկը, ո՛վ կլինի: Դուռը չհապաղեց բացվել, բայց ծխնիների վրա դանդաղ էր դառնում: Կարծես ներսի կինը աշխարհում վախենալու ոչ մի բան չունենար: Վերջը բացվեց, ու կինը հայտնվեց:

Հումերի աչքին այս մեքսիկուիին գեղեցկուիի թվաց:
 Երևում էր, որ ամբողջ կյանքում համբերել էր, ու հիմա՝
 տարիներ անց, շուրթերին մեղմ ժպիտ էր քարա-
 ցած: Բայց կյանքում հեռագիր չստացած մեկի մտքով
 հեռագրատարի տեսքից հազար ու մի բան կանցնի:
 Հումերը հասկացավ, որ տիկին Սանդովալին իր տեսքը
 ցնցել էր: Նրա առաջին բառը ամեն տեսակ զարմանք
 արտահայտող առաջին բառն էր. «ա՛խ» ասաց, կարծես
 դռան առջև ոչ թե հեռագրատարին, այլ մի հին ծանո-
 թի էր սպասում տեսնել ու հաճույքով ներս հրավիրել:
 Նա Հումերի աչքերին նայեց, ու Հումերը հասկացավ, որ
 հասկացել էր, որ բերած լուրը բարի չէր լինելու:

Հումերն ի՞նչ մեղք ուներ: Նրա գործը հեռագիր բերելն
 էր: Բայց մեկ է՝ մի տեսակ շփոթվեց, ոնց որ պատա-
 հաժի մեղավորը *հենց* ինքը լիներ: Միևնույն ժամա-
 նակ շատ էր ուզում առաջ գալ ու ասել. «Ես ընդամենը
 հեռագիր բերողն եմ, տիկի՛ն Սանդովալ: Ներե՛ք ինձ, որ
 ստիպված եմ էսպիսի հեռագիր բերել, բայց ուրիշ ի՞նչ
 անեի, ախր գործս դա է»:

– 1129 Գ փողոց, տիկին Ռոզա Սանդովա՛լ,– հարց-
 րեց Հումերը: Ու հեռագիրը մեքսիկուիուն պարզեց, բայց
 կինը ձեռքը հետ քաշեց:

– Տիկին Սանդովալն եք, չէ՞:

– Համեցե՛ք, ներս մտեք,– նա մի պահ կարկամեց ու
 նայեց տղային, որը շփոթված կպել էր դռանը՝ ներսից,
 բայց համ էլ վախենում էր առաջ գալ:

– Խնդրում եմ,– ասաց,– հեռագիրն ի՞նչ է ասում:

– Տիկի՛ն Սանդովալ,– պատասխանեց տղան,– հե-
 ռագիրն ասում է...

Բայց կինն ընդհատեց:

– Ախր հեռագիրը պիտի *բացեք* ու *կարդաք*,– ասաց:–
 Չեք բացել:

– Այո, տիկի՛ն,– պատասխանեց Հոմերը՝ ասես սխալն ուղղած ուսուցչուհու հետ խոսելիս լիներ:

Ու դողացող մատներով հեռագիրը բացեց: Մեքսիկուհին կռացավ, որ պատռած ծրարը վերցնի, ու հարցրեց.

– Ումի՞ց է, որդու՞ցս, Խուան Դոմինգոյի՞ց:

– Չէ, տիկի՛ն, հեռագիրը պաշտպանության նախարարությունից է:

– Պաշտպանության նախարարությունի՞ց,– կրկնեց կինը:

– Տիկի՛ն Սանդովալ,– արագ-արագ վրա տվեց Հոմերը,– ձեր որդին զոհվել է: Գուցե սխալմունք է: Գուցե ձեր որդին չի: Գուցե մի ուրիշ զինվոր է: Հեռագրում գրված է, որ Խուան Դոմինգոն է, բայց գուցե սխալ է գրված:

Մեքսիկուհին ձև արեց, թե չի լսում:

– Մի՛ վախեցեք,– ասաց,– ներս եկեք՝ ձեզ կոնֆետ բերեմ,– նա տղայի ձեռքը բռնեց, մոտեցրեց սենյակի կենտրոնում դրված սեղանին ու նստեցրեց:

– Տղաները կոնֆետ սիրում են,– ասաց: Հետո մյուս սենյակ գնաց ու շոկոլադի կոնֆետների տուփ բերեց: Տուփը բացեց. մեջը տարօրինակ կոնֆետներ էին:

– Խնդրեմ,– ասաց կինը,– հյուրասիրվեք: Տղաները կոնֆետ սիրում են:

Հոմերը մի կոնֆետ վերցրեց, դրեց բերանն ու փորձեց ծամել:

– Դուք ինձ վատ հեռագիր չէիք բերի,– ասաց կինը:

Հոմերը փորձում էր չոր կոնֆետը ծամել: Կինը շարունակեց.

– Մեր սարքածն է,– ասաց,– կակտուսից:

Հետո հանկարծ սկսեց մի տեսակ շնչել ու կամացուկ ձայներ հանել՝ կարծես իրեն զսպել ուզելով,

կարծես լացելը ամոթ էր: Հոմերը շատ էր ուզում վեր կենալ ու փախչել, բայց գիտեր, որ կմնա: Մի պահ մտքով անցավ, որ երևի ընդմիջտ կմնա: Ուղղակի չէր պատկերացնում, թե է՛լ ինչ անի, որ կնոջ վիշտը թեթևացնի: Եթե խնդրեր, որ իր տղայի տեղը բռներ, երևի մերժել չկարողանար, որովհետև չէր իմանա՝ ո՞նց մերժի: Նա վեր կացավ, ասես կանգնելով ուզում էր անշտկելի սխալը շտկել, հետո հասկացավ, որ արածը հիմարություն է, ու է՛լ ավելի շփոթվեց: Հոգու խորքում ինքն իրեն կրկնում էր ու կրկնում. «Բայց ես ի՞նչ անեմ, գրո՞ղը տանի, ե՞ս ինչ անեմ: Ախր առաքիչ եմ»:

Հանկարծ կինը նրան գիրկն առավ ու ասաց.

– Իմ տղաս, իմ ձագու՛կս:

Հոմերը չհասկացավ, թե ինչու (որովհետև այս ամենը նրան միայն ցավ էր պատճառում), չգիտես ինչու՝ սիրտը խառնեց, ու որձկաց: Չէ՛ թե կնոջը չէր *հավանում*, բայց պատահաժն այնքան սխալ էր թվում, այնքան անհեթեթ, որ չէր հասկանում, թե է՛լ երբևէ ապրել կուզի՞:

– Արի՛,– ասաց կինը,– նստի՛ր,– նա Հոմերին մի ուրիշ աթոռի նստեցրեց ու գլխավերևը կանգնեց,– թո՛ղ քեզ տեսնեմ:

Նա մի տեսակ հայացքով Հոմերին նայեց, ու տղան՝ ներսը տակնուվրա, անշարժացավ: Նրա զգացածը ոչ սեր էր, ոչ ասելություն. ավելի շուտ զզվանքի ու միաժամանակ խոր կարեկցանքի պես մի բան: Ո՛չ միայն այս խեղճ կնոջ, այլև ամեն ինչի հանդեպ. դրանց ապրելու ու մեռնելու սարսափելի ձևի հանդեպ: Մտովի ժամանակով հետ գնաց, տեսավ այս գեղեցիկ, ջահել կնոջը՝ մանուկ տղայի օրորոցի կողքին: Տեսավ՝ հայացքը դեռ անխոս, դեռ անօգնական

արմանք-զարմանք մարդկային արարածին հառած, որին մի ամբողջ աշխարհ էր սպասում: Տեսավ, ոնց էր օրորում ու փոքրիկի համար երգ ասում: Իսկ հիմա՞, մտածեց. տեսեք՝ ինչ եղավ:

Ու հանկարծ նորից հեծանվի թամբին հայտնվեց՝ մութ փողոցով սլանալիս, աչքերը՝ թաց, շուրթերը ջահելի անզուսպ հայհոյանքներ շնչալիս: Երբ հեռագրատուն հասավ՝ աչքերն արդեն չորացել էին, բայց մյուս բաները դեռ նոր էին սկսվում, ու գիտեր, որ դրանց առաջն առնել է՛լ չէր լինի: «Թե չէ մեռածից ինչո՞վ եմ տարբեր», – ասաց, կարծես ծանր լսող մեկն ականջ էր դնում:

6. ՊԱՐՈՆ ԳՐՈԳԱՆԸ

Հոմերը նստել էր պարոն Գրոգանի սեղանի դիմաց: Հեռագրալարերը լուռ էին, բայց հանկարծ սարքը սկսեց ճարճատել: Հոմերը սպասում էր, որ պարոն Գրոգանը պատասխանի, բայց պարոն Գրոգանը չէր պատասխանում: Հոմերը սեղանի հետևն անցավ:

– Պարո՛ն Գրոգան, – ասաց, – կանչո՞ւմ են, – ու կամացուկ թափ տվեց:

– Զարթնեք, պարո՛ն Գրոգան, զարթնե՛ք:

Վազեց՝ ջրի սափորից թղթե բաժակը լիքը ջուր լցրեց: Հետո հետ վազեց, բայց վախեցավ իրեն տված հրահանգը կատարել: Գավաթը ցած դրեց ու շարունակեց հեռագրիչին ցնցել:

– Զարթնեք, պարո՛ն Գրոգան, ձեզ են կանչում:

Հոմերը ջուրը հեռագրիչի երեսին շփեց: Պարոն Գրոգանը տեղից վեր թռավ, աչքերը բացեց, նայեց Հոմերին, սարքի ճարճատելը լսեց ու պատասխանեց:

– Ապրես, տղա՛ս, հիմա շո՛ւտ տաք սուրճը բեր: Վազի՛ր:

Հումերը դուրս վազեց ու Քորբեթի բարը սլացավ: Երբ հետ եկավ, ծեր հեռագրիչի աչքերը նորից համարյա փակվել էին, բայց շարունակում էր գործն անել:

– Լավ է, տղա՛ս, – ասաց, – մի՛ վախեցիր: Չանհանգստանաս, ամեն ինչ ճիշտ արեցիր:

Պարոն Գրոգանը լարի հակառակ ծայրին նստած հեռագրիչին սպասել տվեց ու սկսեց կում-կում սուրճը խմել:

– Նախ սառը ջուրը, հետո տաք սուրճը:

– Հա, սը՛ր, – պատասխանեց Հումերը: – Կարևո՞ր հեռագիր է:

– Չէ, – ասաց պարոն Գրոգանը, – *հե՛ջ* կարևոր չի: Գործի մասին է: Փողի մասին է: Գիշերվա նամակ է, բայց գիշերով տանելու կարիք չկա: Հե՛ջ կարևոր չի, բայց կարևոր էր, որ պատասխանեի:

Չայնը բարձրացրեց, որովհետև արթնացել էր ու քնից սթափվել:

– Քանի տարի է՝ սպասում են, որ ինձ թոշակի ուղարկեն: Սպասում են, որ աշխարհով մեկ իրենց հորինած սարքերը դնեն՝ մուլտիպլեքսներն ու տելեթայփերը: Մարդկանց փոխարե՛ն: – Հետո ձայնն իջեցրեց. չգիտես՝ ում հետ էր խոսում, ինքն իր հե՞տ, թե՞ իր տեղն ազատել փորձող մարդկանց.

– Չգիտեմ էլ, թե աշխատանքս կորցնեմ՝ ինչ եմ անելու: Երևի մի շաբաթ դիմանամ ու մեռնեմ: Ախր ամբողջ կյանքս աշխատել եմ, ո՞նց կլինի:

– Հա, սը՛ր:

– Գիտեմ, որ ինձ կօգնես, տղա՛ս, – ու շարունակեց սարքը չխկչխկացնել: Պատասխանը եկավ, և նա անցավ հեռագիրը տպելուն, բայց շարունակում էր խոսել՝ մի տեսակ հպարտությամբ ու ավյունով, որ Հումերին շատ էր դուր գալիս:

– Ուզում եմ տեղս ազատել, տղա՛ս: Չգիտեմ, որ աշխարհի ամենաարագ հեռագրիչն եմ եղել, Վոլինսկուց էլ արագ: Թե՛ ստանալս, թե՛ ուղարկելս, ու անսխալ: Վիլլի Գրոգան՝ աշխարհում հեռագրիչ չկա, որ անունս չիմանա: Գիտեմ, որ Վիլլի Գրոգանը լավագույնն է, – նա մի պահ լռեց ու ժպիտով նայեց տղային, որ աղքատ ընտանիքից ճիշտ ժամանակին եկել էր այդ գիշեր հեռագրատար աշխատելու:

– Մի երգ էլ երգիր, տղա՛ս:

Հոմերը, առանց երկար մտածելու, մի գեղեցիկ հին եկեղեցական օրհներգ երգեց:

7. ՏԻԿԻՆ ՄԱՔՈՂԻՆ

Տիկին Մաքուլին Սանտա Կլարա պողոտայի տան հյուրասենյակում ճոճաթոռին նստած՝ տղային էր սպասում: Տղան տուն եկավ կեսգիշերը մի փոքր անց՝ կեղտոտ, հոգնած, քունը գլխին, բայց մայրը նկատեց, որ մի տեսակ մոլորված ու անհանգիստ էր: Հասկացավ, որ երբ խոսի, ձայնը ամուսնու՝ տղայի հոր ձայնի պես խուլ է լինելու: Տղան բավական երկար ուղղակի կանգնել էր մութ սենյակում: Հետո, փոխանակ օրվա կարևոր անցուդարձերից խոսելու, ասաց.

– Անհանգստանալու բան չկա: Չեմ ուզում, որ *ամեն* գիշեր էսպես արթուն ինձ սպասես, – ասաց, լռեց ու նորից կրկնեց, – անհանգստանալու բան չկա:

– Գիտեմ, – ասաց մայրիկը: – Նստի՛ր:

Հոմերը քայլ արեց, որ աթոռին նստի, բայց փոխարենը տապալվեց: Մայրը ժպտաց:

– Տեսնում եմ, որ հոգնած ես, – ասաց, – բայց զգում եմ, որ համ էլ անհանգիստ ես: Ի՞նչ է եղել:

Տղան վարանեց, հետո սկսեց խոսել՝ արագ-արագ, բայց շատ կամացուկ:

– Էսօր մի մեքսիկուիի տիկնոջ հեռագիր եմ տարել,–
հանկարծ լռեց ու վեր կացավ:

– Չգիտեմ, թե քեզ ոնց պատմեմ,– ասաց,– ախր... մի
խոսքով, հեռագիրը պաշտպանության նախարարու-
թյունից էր: Տղան սպանվել էր, բայց ինքը չէր հավա-
տում: Չէր հավատում, ու վերջ: Ինձ կակտուսից սար-
քած կոնֆետ տվեց, որ ուտեմ: Հետո գրկեց ու ասեց,
որ *ես* իր տղան եմ: Ես դեմ չէի, եթե դրանից իրեն լավ
էր զգալու: Կոնֆետին էլ դեմ չէի,– էլի լռեց:– Էնպես էր
վրաս նայում, ոնց որ տղան *լինեի*, ու քիչ էր մնում՝ ինձ
էլ թվար, որ տղան եմ: Շատ սուկալի տխուր էր: Հետո
հեռագրատուն հասա, ու պարոն Գրոգանը հարբած էր:
Ինձ ասել էր, որ մեկ-մեկ լինում է: Ոնց *ասել էր*՝ երե-
սին սառը ջուր շփեցի ու վազեցի տաք սուրճ բերելու,
որ զարթնի: Գործը կարգին չարեց՝ թոշակի կուղարկեն,
իսկ ինքը չի ուզում: Լավ էր՝ արթնացրի, ու գործը ոնց
որ պետք էր՝ արեց, հետո մի քիչ իր մասին պատմեց,
հետո երգեցինք:

Հումերը լռեց ու սենյակով հետ-առաջ քայլեց: Հետո
կանգնեց բաց դռան մոտ ու հեռուն նայեց:

– Ու մեկ էլ հանկարծ,– ասաց,– սկսեցի ինձ ուրիշ
տեսակ զգալ, ոնց որ առաջվանը չլինեի: Իսկի հայրի-
կի մահանալուց էսպես չէի զգացել: Ոնց որ երկու օրում
ամեն ինչ փոխված լինի: Էնքան մենակ եմ, բայց չգի-
տեմ՝ *ինչու*:

Մայրիկը ձայն չհանեց. սպասեց, որ ասելիքն ասի:

– Չգիտեմ՝ ինչ է կատարվում ու ինչու, բայց ինչ էլ
պատահի, մի՛ թող, որ քեզ էդպես ցավ պատճառի:

Կինը սպասեց, տեսնի՞ էլ ասելիք ունի՞, բայց չուներ,
ու ինքը խոսեց.

– Ամեն ինչ իրոք փոխվել է,– ասաց,– քեզ համար: Բայց
մյուս կողմից՝ առաջվանն է: Չգացածդ մենակությունը

նրանից է, որ է՛լ երեխա չես: Աշխարհը միշտ լիքն է եղել էդ մենակությամբ: Եթե ես էդ մեքսիկուհու նման հեռագիր ստանամ, չգիտեմ, թե ինչ կանեմ: Չգիտեմ...– Հանկարծ լռեց, բայց մի թուպեից շարունակեց՝ համարյա զվարթ ձայնով.

– Ընթրիքին ի՞նչ ես կերել:

– Կարկանդակ,– ասաց Հոմերը:– Խնձորով ու կոկոսի կրեմով: Կառավարիչն էր գնել: Նրանից լավ մարդ չեմ տեսել:

– Վաղը Բեսսին կուղարկեմ, որ քեզ ճաշ բերի:

– Չէ, պետք չի: Դուրս ենք գալիս, մի բան առնում, մի տեղ նստում ու միասին ուտում: Էնքան լավ է: Իզուր ինչու՞ չարչարվես,– էլի մի պահ լռեց:– Էս աշխատանքը կյանքումս պատահած ամենամեծ հաջողությունն էր: Բայց դրա համեմատ դպրոցը ոնց որ անհեթեթ լինի:

– Իհարկե,– ասաց տիկին Մաքուլին:– Դպրոցը երեխաներին փողոց չթողնելու համար է, բայց մեկ է՝ վաղ թե ուշ, ուզեն–չուզեն՝ փողոց են գնալու: Հայրերն ու մայրերը միշտ էլ աշխարհից զգուշանում են՝ երեխաների համար: Բայց վախենալու բան չկա: Աշխարհը վախեցած երեխաներով է լցված, որ իրենք վախեցած՝ իրար են վախեցնում: Փորձիր հասկանալ,– շարունակեց,– փորձիր հանդիպածդ մարդկանց սիրել: Ես ամեն գիշեր էս հյուրասենյակում քեզ կսպասեմ: Բայց եթե ինքդ չուզես, պետք չի գալ ու հետս խոսել: Ես կհասկանամ: Գիտեմ՝ կպատահի, որ սիրտդ լեզվիդ մի բառ էլ չի կարողանա տալ, թե բերանդ բացես,– այստեղ լռեց ու նայեց տղային:

– Հոգնած ես. գնա քնիր,– ասաց տիկին Մաքուլին:

– Լավ,– ասաց տղան ու իր սենյակը գնաց:

8. ԲԵՍԱՆ ՈՒ ՄԵՐԻՆ

Առավոտ ժամը յոթին զարթուցիչը չխկաց՝ ընդամենը, ու Հոմեր Մաքուլին զարթնեց: Զարթուցիչն անջատեց, որ չզանգի, հետո անկողնուց վեր կացավ, Նյու Յորքից ստացած մարմնամարզության ձեռնարկը վերցրեց ու սկսեց օրվա վարժությունները կարդալ: Եղբայրը՝ Ուլիսեսը, կանգնած նրան էր նայում: Հոմերը միշտ զարթուցիչի չխկոցից էր զարթնում, չէր թողնում, որ զանգը տա: Ինքն էլ: Ձեռնարկը փոքրիկ գրքույկ էր, հետը՝ ռեզինից ձգիչ: Հոմերը յոթերորդ դասը բացեց: Ուլիսեսը եկավ, թևի տակ խցկվեց, որ խորհրդավոր առարկային մոտ լինի: Մի քանի սովորական նախապատրաստական վարժություններից հետո, որոնցից մեկը խոր շնչելն էր, Հոմերը մեջքի վրա հատակին պառկեց ու ոտքերը թափով բարձրացրեց:

- Ի՞նչ ես անում, – հարցրեց Ուլիսեսը:
- Մարզանք:
- Ինչի՞ համար:
- Մկանների:
- Որ աշխարհի ամենաուժե՞ղը դառնաս:
- Հը՛-ը:
- Բա՞:
- Գնա քնիր, հա՞, – ասաց Հոմերը:

Ուլիսեսը գնաց՝ նստեց մահճակալին ու շարունակեց նայել: Հոմերը վերջացրեց ու հագնվելուն անցավ:

- Ու՞ր ես գնում:
- Դպրոց:
- Որ բա՞ն սովորես:
- Ըհը՛, համ էլ արգելավազքին հասնեմ:
- Ու՞ր է, որ պիտի հասնես:
- Ոչ մի տեղ չեմ հասնելու, վազել եմ հասցնելու:
- Ինչի՞ համար:

– Որովհետև մրցում է: Քաղաքում բոլորն էլ էդ վազքը վազում են: Իթակայի ամենակարևոր մրցումն է: Հեռագրատան կառավարիչն էլ է դպրոցում վազել: Մեր Հովտի չեմպիոնն է եղել:

– Հովտի չեմպիոնը ո՞րն է:

– Ամենակարևոր մարդը:

– Դու է՞լ ես ամենակարևոր մարդ լինելու:

– Փորձելու եմ: Դե քնի՛ր:

Ուլիսեսը վերմակի տակ մտավ ու ասաց.

– Վաղը,– հետո ինքն իրեն ուղղեց,– *երեկ* գնացքը տեսա:

Հոմերը հասկացավ, թե եղբայրն ինչ էր ուզում ասել: Հիշում էր՝ ժամանակին ինքը ինչ հիացմունք էր ապրել սուրացող գնացքը տեսնելուց:

– Ո՞նց էր:

– Մի սևամորթ մարդ ձեռքով արեց:

– Իսկ դու՞:

– Առաջ ես առաջինը ձեռքով արեցի: Հետո ինքը առաջինը ձեռքով արեց: Հետո ես: Հետո ինքը: Ասեց՝ «Տուն եմ գնում, տու՛ն»,– Ուլիսեսը եղբորը նայեց,– բա մե՞նք երբ ենք տուն գնալու:

– Մենք *արդեն* տանն ենք:

– Բա ինչու՞ ինքն էլ չեկավ:

– Ամեն մեկի տունը տարբեր տեղ է: Մեկինը՝ Արևելքում, մեկինը՝ Արևմուտքում, մեկինը՝ Հարավում, մեկինը՝ Հյուսիսում: Մերն Արևմուտքում է:

– Արևմուտքն ամենալավն է:

– Ի՞նչ իմանամ: Ուրիշ տեղ չեմ եղել:

– Բայց կգնա՞ս:

– Օրերից մի օր:

– Ու՞ր:

– Նյու Յորք:

– Նյու Յորքն ու՞ր է:

– Արևելքում: Էնտեղից Լոնդոն կգնամ, հետո Փարիզ, հետո Բեռլին: Հետո Վիեննա, Հռոմ, Մոսկվա, Ստոկհոլմ... Օրերից մի օր աշխարհի բոլոր մեծ քաղաքները կգնամ:

– Բայց հետ կգա՞ս:

– Բա ո՞նց:

– Ուրախ կլինե՞ս:

– Բա ո՞նց:

– Ինչու՞:

– Որովհետև տուն գալը միշտ լավ է, այ՛ թե ինչու:

Փոքրիկ եղբայրը անկեղծորեն թախանձեց.

– Մի՛ գնա, հա՞:

– Հիմա չեմ գնում: Հիմա ուղղակի դպրոց եմ գնում:

– Հեղտ էլ մի գնա, – ասաց Ուլիսեսը:

– Մի մտածիր, դեռ մինչև գնալս էնքա՛ն ժամանակ կա: Քնի՛ր:

– Լավ, – ասաց Ուլիսեսը: – Իսկ դու վազարգելի՞ ես գնում:

– Արգելավազքի:

Երբ Հոմերը նախաճաշի նստեց, քույրը՝ Բեսսը, սեղանի մոտ նրան էր սպասում: Հոմերը մի պահ գլուխը կախեց, հետո բարձրացրեց ու սկսեց ուտել:

– Հիմա ի՞նչ աղոթք ասեցիր, – հարցրեց Բեսսը:

– Էն, որ միշտ սեղան նստելիս ասում եմ, – պատասխանեց Հոմերը ու բառ առ բառ արտասանեց, ինչպես որ վաղուց, դեռ կարգին խոսել չսովորած, անգիր էր արել:

Ներկա եղիր մեր սեղանին, ով Տեր,

Ու պաշտելի՛ այսպեղ և ամենուր,

Օրհնիր էականերին բոլոր ու տար քո տուն,

Որ խնջույքի նստենք Քեզ հետ դրախտում:

Ամեն...

– Չէ, դա հին է, համ էլ ինքդ էլ իմաստը չես հասկանում:
– Շատ լավ էլ հասկանում եմ: Իսկ *դու՞* ինչ աղոթք
ասեցիր:

– Չէ, նախ բացատրիր, թե ասածդ ինչ է նշանակում:
– Հենց ասածս էլ նշանակում է:
– Լավ, ասածդ ի՞նչ է:

– «Ներկա եղիր մեր սեղանին, ով Տեր», – ասաց
Հումերը, – նշանակում է՝ ներկա եղիր մեր սեղանին, ով
Տեր: «Ու պաշտելի՛ աշատեղ և ամենուր», այսինքն՝ թող
բոլորն ու ամեն տեղ բարությունը պաշտեն: Էակները
մենք ենք ու մյուս բոլոր-բոլորը: Օրհնելը նշանակում է
աչքը վրաներս պահել: «Որ խնջույքի նստենք Քեզ հետ
դրախտում», սա *հենց* դա էլ նշանակում է, կամ ոչինչ
էլ չի նշանակում: Ինքդ որոշիր: Որ խնջույքի նստենք
Քեզ հետ դրախտում: Էդքան բան: Էսօր երկու հարյուր
մետր ցածր արգելքներով վազք եմ վազելու: Կարևոր
մրցում է: Պարոն Սպանգլերն էլ է *դպրոցում* վազել: Հա՛մ
վազում ես, *հա՛մ* ցատկում: Պարոն Սպանգլերը մի պինդ
խաշած ձու ունի՝ բախտ բերող:

– Բախտ բերելու համար պինդ խաշած ձու պահելը
անապաշտություն է, – ասաց Բեսսը:

– Շատ էլ թե: Ինձ ուղարկեց, որ երկրորդ օրվա կար-
կանդակներ առնեմ: Երկու հատը քսանհինգ սենթով:
Թարմի մեկն է քսանհինգ սենթ: Եթե ավել փող չունես,
մի հատ կգնես: Իսկ երկրորդ օրվանը կես գին է՝ երկու
հատ կառնես: Ես ու պարոն Գրոգանը պիտի կես-կես
ուտեինք, բայց ինքը երկու պատառից ավել ուտել չի
կարող, էնպես որ, ինձ շատ է մնում: Պարոն Գրոգանին
խմելն ուտելուց շատ է դուր գալիս:

Բակի կողմից Մերի Արինան՝ հարևան աղջիկը խոհանոց մտավ ու ձեռքի ամանը սեղանին դրեց: Հոմերը կանգնեց:

– Համեցի՛ր, Մերի Արինա, նստի՛ր:

– Շնորհակալ եմ, Հոմեր, դուք ձեր նախաճաշն արեք: Հայրիկիս համար դեղձաչրի կոմպոտ էի սարքել, մի քիչ ձեզ եմ բերել:

– Ապրես, – ասաց Հոմերը: – Հայրիկդ ո՞նց է:

– Լավ: Առավուտը խոհանոց եկավ թե չէ՝ հարցրեց. «Նամակ կա՞: Մարկուսից նոր նամակ ստացե՞լ են»:

– Շուտով կստանանք, – ասաց Բեսսը ու սեղանից վեր կացավ: – Արի՛, Մերի: Գնացի՛նք:

– Որ ճիշտ ասեմ, – Մերին տիկին Մաքուլին դարձավ, – քուեջից զզվել եմ: Ոնց որ դպրոց գնաս: Ես է՛լ դպրոց գնալու տարիքի չեմ: Ժամանակները փոխվել են: Կուզեի գնալ՝ մի աշխատանք գտնել:

– Ես էլ, – համաձայնվեց Բեսսը:

– Հիմար բաներ մի՛ խոսեք, – ասաց տիկին Մաքուլին: – Երկուսդ էլ երեխա եք՝ տասնյոթ տարեկան: Հայրդ լավ գործ ունի, Մե՛րի, *եղբայրդ էլ*, Բե՛սս:

– Բայց մի տեսակ արդար չի, – առարկեց Մերին: – Մարկուսը բանակում է, ամբողջ աշխարհը իրար է գզում:

Հոմերը հեռացող աղջիկներին նայեց:

– Մրա՞ն ինչ կասես, – հարցրեց:

– Ի՞նչ պիտի ասեմ: Բնական է, որ ամեն աղջիկ ուզի բնից դուրս թռչել, – պատասխանեց տիկին Մաքուլին:

– Ես ամեն աղջկա մասին չեմ ասում, Մերիի մասին եմ ասում:

– Մերին անուշիկ, ազնիվ երեխա է: Իմ իմացած ամենաանուշիկ երեխան է: Ուրախ եմ, որ Մարկուսը նրան է սիրահարվել:

– Մա՛,– Հոմերը համբերությունը կորցրեց,– *էդքանը* գիտեմ: Ես դա չէի հարցնում:– Նա լռեց, հետո ասաց.– Ու՛Ֆ, լավ, գնացի՛:

Տիկին Մաքուլին տղայի հետևից նայեց, բայց հանկարծ աչքի ծայրով գիշերանոցը հագին կանգնած Ուլիսեսին տեսավ: Տղան հայացքը մորն էր հառել, ճիշտ այնպես, ինչպես ամեն փոքրիկ գազանիկ իր սեփականությանը՝ իր մորը կնայեր: Նրա փոքրիկ դեմքը վերին աստիճանի լուրջ ու վերին աստիճանի անուշիկ էր:

– Ինչու՞ էր ասում՝ *Հերիք է փխրենք*:

– Ո՞վ:

– Գնացքի սև մարդը:

– Երգի բառեր են,– ասաց մայրիկն ու ձեռքը բռնեց:– Գնա՛նք հագնվենք:

– Էսօր էլի գնացքում կլինի՞:

Տիկին Մաքուլին մի փոքր մտածեց:

– Կլինի՛,– ասաց:

9. ՎԵՏԵՐԱՆԸ

Հոմերի դպրոցի ճանապարհին՝ Սան Բենիտո պողոտայում, մի ցանկապատած մուլախոտախեղդ տարածք կար: Փայտե ցանկապատը հին էր ու փտած և ոչ մի բանի չէր ծառայում, բացի ամայի հողակտորը երիզելուց ու պաշտպանության կարիք չունեցող մուլախոտերը պաշտպանելուց: Գիշերային հեռագրատար, ցերեկով դպրոցական տղան հեծանիվը կտրուկ արգելակեց, թամբից ցատկեց ու ցանկապատի կողմը սլացավ, կարծես մի խիստ վաղանցիկ բան էր հայտնաբերելու, որը, եթե չշտապեր, պիտի կորչեր գնար: Ցանկապատը վազքի արգելքներից մի ոտնաչափ բարձր կլիներ:

Հումերը զննեց ցանկապատը, ներսի հողակտորն ու առջևի՝ թափ առնելու տարածքը, հետո աչքով բարձրությունը չափեց գոտկատեղից մի քիչ բարձր էր: Տասը մետր հետ-հետ գնաց ու, առանց ինքն իրեն նախազգուշացնելու, թափ առնելով՝ կատաղի առաջ սլացավ: Մոտեցավ թե չէ՝ մի գեղեցիկ ցատկ կատարեց, ոտքը խփեց ցանկապատին, մասամբ գետին տապալեց, ինքը մոլախոտերն ընկավ, բայց իսկույն վեր թռավ ու հետ գնաց, որ մի անգամ էլ փորձի: Յոթ անգամ փորձեց, յոթն էլ անհաջող: Միայն երբ ցանկապատից բան չէր մնացել, կանգ առավ:

Դիմացի տնից ձեռնափայտով, ծխամորճը բերնին մի տարեց մարդ էր դուրս եկել ու անձայն Հումերին էր հետևում: Երբ Հումերը վերջին ապարդյուն փորձից հետո կանգնել՝ շորերն էր թափ տալիս, մարդը խոսեց.

– Ի՞նչ ես անում:

– Ուզում եմ արգելքը հաղթահարել:

– Հո չցավե՞ց:

– Չէ՛, բան չկա, ուղղակի ցանկապատը մի քիչ բարձր է: Մոլախոտերն էլ սոթլիկ են:

Ծերունին մի պահ մոլախոտերին նայեց, հետո ասաց.

– Թունաթափ է՝ ճագարի կեր: Ճագարները շատ են սիրում: Տասնմեկ տարի առաջ ճագարներ ունեի, բայց մեկը գիշերը դուռը բաց էր արել՝ փախել էին:

– Դուռը բացել էին, որ ի՞նչ:

– Ի՞նչ իմանամ: Ոչ էլ բացողին գտա: Երեսուներեք հատ ճագար կորցրի՝ աշխարհի ամենասիրուն ճագարներիս, կարմիր աչուկներով, փխոյի մռութներով, բելգիական ու մի երկու-երեք ուրիշ տեսակի: Էդպես էլ չգտա:

– Ճագարնե՞ր եք սիրում:

– Պատիկ բարի գազանիկներ են: Ընտանի ճագարները շատ բարի են,– ծերունին ամայի տարածքի մոլախոտերին նայեց:– Տասնմեկ տարի ու երեսուներեք անտուն ճագար: Ի՞նչ իմանաս՝ հիմա քանիսը դարձած կլինեն: *Դրանց* բազմանալը հիշելով... Չեմ զարմանա, որ ամբողջ քաղաքը վայրի ճագարներով լցված լինի:

– *Ես* որ ոչ մի հատ չեմ տեսել:

– Կարող է պատահել: Բայց հաստատ էստեղարենք են: Չեմ զարմանա, որ քաղաքով մեկ տարածված լինեն: Մի երկու տարուց փորձանք են դառնալու:

Ինչևէ, Հոմերը նորից հեծանվին նստեց:

– Պիտի գնամ:

– Էլի արի,– ասաց ծերունին:– Երբ ուզես: Ուրախ կլինեմ:

– Ընորհակալ եմ,– պատասխանեց Հոմերը:– Էսօր դպրոցում երկու հարյուր մետր արգելավազք եմ վազելու:

– Ես դպրոց չեմ գնացել, բայց իսպանա-ամերիկյան պատերազմում կռվել եմ:

– Հա, սը՛ր: Լավ, մնաք բարով:

– Հա՛,– ասաց ծերունին, բայց արդեն ինքն իրեն,– ժամանակի մեծ մասը ճագարի պես դեսուդեն էինք վազվզում:

Հոմերը անկյան հետևն անցավ ու էլ չէր երևում: Ծերունին, ծխամորճը փստացնելով ու շուրջը նայելով, իր փոքրիկ խարխուլ տնակը գնաց:

10. ՀՆԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԻՆ

Իթակայի ավագ դպրոցի վազքուղում 200-մետրանոց վազքի արգելքները շարված-պատրաստ էին: Արդեն առավոտյան չորս տղա փորձնական վազում էին: Էավ էին վազում. չորսն էլ արգելքները լավ

հաղթահարում էին: Մարզիչ Բայֆիլդը, վայրկենաչափը ձեռքին, հաղթողին մոտեցավ:

– Ա՛յ սա լավ էր, Ա՛քլի,– ասաց նրանցից մեկին, որ, իհարկե, սովորական տղաներից տարբեր էր, բայց շատ էլ տարբեր չէր: Պահվածքից երևում էր, որ ընտանիքը վերջին տասնամյակներում կարիք չէր իմացել ու զանազան առիթներով իրենց նմանների հասարակությունն էր վայելել:

– Դեռ սովորելու շատ բան ունես,– ասաց մարզիչը,– բայց կարծում եմ, որ այսօր մրցումը կհաղթես:

– Ջանք չեմ խնայի, կտեսնեք:

– Այսօր դժվար չի լինի, բայց երկու շաբաթից Հովտի մրցումներում շատ մրցակիցներ կունենաս: Հիմա գնա, հագնվիր ու մինչև կեսօր աշխատիր հանգստանալ:

– Լավ, սը՛ր,– պատասխանեց տղան:

Մյուս երեքը, քիչ հեռու կանգնած, նայում ու լսում էին:

– *Վրան նայես՝ նրբիկ-մրբիկ է,*– ասաց նրանցից մեկը,– բայց ամեն անգամ ինքն է հաղթում: Բա դու՞ ուր էիր, Սա՛մ:

– *Ե՛ս ուր էի,*– վրդովվեց Սամը:– Բա *դու՞* ուր էիր: *Դու՞* ինչու հետ մնացիր:

– Ես երկրորդը հասա:

– Ի՞նչ տարբերություն՝ երկրո՞րդը, թե՞ երրորդը,– ասաց երրորդ ընկերը:

– Հյուբերթ Աքլի երրորդը մեզ հաղթել է,– ասաց Սամը:– Գետինը պատռվեր՝ մեջն ընկնեի՞նք:

– Հա,– ասաց երկրորդը,– բայց նրա դեմ ի՞նչ փաստ ունենք: Ամենալավ վագոդն է, ու վերջ:

Մարզիչը նրանց դարձավ և արդեն բոլորովին այլ ձայնով ասաց.

– Լսեք, տղանե՛ր, ի՞նչ արդյունք եք ցույց տվել, որ քթների տնկած կանգնել եք: Գնացեք՝ ելման դիրք ընդունեք ու մի անգամ էլ փորձեք:

Տղաներն առանց խոսքի եզրագծի մոտ շարվեցին, ու մարզիչը վազելու նշան տվեց: Երբ տեղներից պոկվեցին, ինքն իրեն ասաց, որ մինչև մրցույթը դեռ մի երկու անգամ էլ կվազեցնի: Որոշել էր ամեն գնով Հյուբերթ Աքլիին հաղթող դարձնել:

Դասարանն արագ լցվում էր: Հնագույն պատմության ծեր ուսուցչուհին՝ օրիորդ Հիքսը, սպասեց, որ զանգը տա, ու դասարանում կարգուկանոն հաստատվի, որպեսզի ինքն անցնի Իթակայի աշակերտներին կրթելու, գուցե և խանդավառելու հերթական փորձին, ինչի արդյունքում նրանք, գոնե տեսականորեն, պիտի պատրաստ լինեին կյանք մտնելու: Հոմեր Մաքուլին հայացքով Հելեն Էլիոթ անունով աղջկան հետևեց, որ իր տեղն էր գնում: Աշխարհի ամենասիրուն աղջիկն էր, կասկած չկար: Բայց նաև մեծամիտ էր, ինչին Հոմերը չէր ուզում հավատալ: Հելենի հետևից Հյուբերթ Աքլի երրորդը եկավ, ու երկուսով քչփչացին. Հոմերը քիչ էր մնում նախանձից ու բարկությունից պայթեր: Զանգը տվեց, ու օրիորդ Հիքսն ասաց.

– Լավ, լռեցի՛նք: Բացակա ունե՞նք:

– Ե՛ս, – ասաց տղաներից մեկը: Ջո Տերանովան էր՝ դասարանի խեղկատակը: Նրա չորս-հինգ ընկերներն ու հավատարիմ հետևորդները իսկույն արձագանքեցին սրամտության այսպիսի բուռն պոռթկմանը: Բայց Հելեն Էլիոթն ու Հյուբերթ Աքլին խոժոռված հայացք նետեցին այս նվիրյալների, հետնախորշերի այս անտաշ թափթփուկների վրա: Սրանից Հոմերն այնպես կատաղեց, որ երբ բոլորը ծիծաղել-վերջացրել էին, թատերական Հա՛-հա-հա քրքիջով շշպռեց Հյուբերթին,

որին արհամարհում էր, և Հելենին, որին պաշտում էր: Հետո արագ շրջվեց Ջոյի կողմն ու ասաց.

– Իսկ դու, Ջո՛, ձայնդ կտրիր, երբ օրհորդ Հիքսը խոսում է:

– Էլ ձայնդ չլսեմ, Ջոզեֆ Տերանո՛վա, – ասաց օրհորդ Հիքսը: Ապա Հոմերին դարձավ, – ոչ էլ քո՛նը, Հոմեր Մաքուլի, – հետո լռեց ու դասարանին նայեց: – Շարունակենք Ասորեստանի մասին խոսել: Հիմա բոլորդ կենտրոնացեք. *համակ ուշադրություն* դարձեք: Նախ եկեք դասագիրքը կարդանք: Հետո կարդացածը բարձրաձայն կքննարկենք:

Դասարանի խեղկատակը նման առիթը բաց թողնողը չէր:

– Չէ, օրհորդ Հիքս, – առարկեց նա, – եկեք բարձրաձայն չքննարկենք: Եկեք մտքի մեջ քննարկենք, որ մի քիչ քնեմ: – Նվիրյալներն էլի հռհռացին, իսկ մեծամիտներն էլի զզվանքով շուռ եկան: Օրհորդ Հիքսն անմիջապես պատասխան չտվեց: Սրամտությունն իրեն էլ էր դուր եկել, ու չէր ուզի վերջ դնել, բայց մյուս կողմից չէր կարելի տղային կարգի չհրավիրել: Վերջապես ասաց.

– Ներողամիտ եղիր, մանավանդ որ իրավացի ես:

– Ներեք, օրհորդ Հիքս: Չդիմացա: Ախր բարձրաձայն քննարկու՛մ: Քննարկումն էլ ո՞նց պիտի լինի: Բայց ներողություն եմ խնդրում, – հետո, ինքն իրեն ու իր հանդգնությունը ծաղրելով, ձեռքը թափ տվեց ու ներողամտորեն ասաց.

– Շարունակեք, օրհորդ Հիքս:

– Շնորհակալ եմ, – ասաց ուսուցչուհին: – Հիմա բոլորն ուշքները վրաները պահեն:

– Ուշքները վրանե՛րը, – կրկնեց Ջոն: – Մի դրա՛նց նայեք, բոլորն աչքերը բաց ուշագնաց նստած են:

– Մի անգամ էլ խանգարեցիր, – ասաց ուսուցչուհին, – քեզ տնօրենի սենյակը կուղարկեմ:

– Ի՞նչ արեցի, որ: Ընդամենը ուզում էի բան սովորել:

– Դե սու՛ս մնա, – Հոմերն ընկերոջը դարձավ, – հերիք ցուցամոլություն անես: Գիտենք, որ սրամիտ ես:

– Էլ ծպտուն չլսեմ, – ընդհատեց օրիորդ Հիքսը, – ոչ մեկիցդ: 117-րդ էջը բացեք: Երկրորդ պարագրաֆը:

Բոլորը գրքերը բացեցին ու տեղը գտան:

– Հնագույն պատմությունը, – շարունակեց ուսուցչուհին, – ոմանց կարող է անհետաքրքիր ու ավելորդ թվալ: Մեր օրերում, երբ աշխարհում այսքան շատ բան է կատարվում, մի այլ՝ անցած-գնացած աշխարհի պատմություն սովորելը կարող է անիմաստ թվալ: Բայց սա սխալ կարծիք է: Ուրիշ ժամանակների, ուրիշ մշակույթների, ուրիշ ժողովուրդների, ուրիշ աշխարհների մասին իմանալը շատ կարևոր է: Ո՞վ կուզի գրատախտակի մոտ գալ ու կարդալ:

Երկու աղջիկ և Հյուբերթ Աքլի երրորդը ձեռք բարձրացրին:

Ջոն՝ խեղկատակը, դարձավ Հոմերին ու ասաց.

– Մի դրա՛ն տես:

Ձեռք բարձրացրած աղջիկներից օրիորդ Հիքսը Հելեն էլիոթին ընտրեց: Հոմերը նայեց՝ ոնց է գրատախտակին մոտենում: Կանգնեց՝ այնքա՛ն գեղեցիկ, ու հնարավոր ամենագուլալ, ամենավճիտ ձայնով սկսեց կարդալ, իսկ Հոմերը զմայլվում էր այս էակի ու այս ձայնի աննման հրաշքով:

– Ասորիները, – կարդաց Հելենը, – երկարաքիթ, երկարահեր ու երկայնամորուս՝ երկրի հյուսիսում մայրաքաղաք Նինվեն մեծ հզորության էին հասցրել: Խեթերի և եգիպտացիների հետ բազում պատերազմներից հետո, Ք.ա. տասնմեկերորդ դարում՝ Թիգլաթպալասար

Առաջին թագավորի օրոք, նրանք նվաճեցին Բաբելոնը և հետագայում դարեր շարունակ քարակերտ Նինվենու աղյուսաշեն Բաբելոնը փոփոխական հաջողությամբ մրցում էին միմյանց հետ: Ասորի և սիրիացի անուններն առնչություն չունեն, և ասորիները պատերազմներ էին մղում սիրացիների դեմ, մինչև որ Թիգլաթպալասար Երրորդին հաջողվեց նրանց նվաճել և արտաքսել Իսրայելի տասը կորած ցեղերին:

Հելենը կանգ առավ, որ շունչ քաշի ու հաջորդ պարագրաֆին անցնի, բայց նախքան կարդալը կվերսկսեր՝ Հոմեր Մաքուլին խոսեց.

– Իսկ Հյուբերթ Աքլի երրորդի՞ն ինչ է հաջողվել: *Ինքն է՞լ* է նվաճել, թե՞ ոնց:

Դաստիարակված երիտասարդը մի տեսակ զսպված դառնությամբ ոտքի կանգնեց:

– Օրիորդ Հիքս, – ասաց ամենայն լրջությամբ, – Ես չեմ հանդուրժի, որ նման քինոտ ծաղրն անպատիժ ու անհետևանք մնա: Ստիպված եմ խնդրել, որ պարոն Մաքուլիին տնօրենի սենյակն ուղարկեք, թե չէ... – շարունակեց՝ ամեն բառը ծանրութեթև անելով, – ստիպված կլինեմ այս հարցն ինքս լուծել:

Հոմերը տեղից վեր թռավ:

– Սու՛ւ մնա, հա՞: Անունդ Հյուբերթ Աքլի երրորդ է, չէ՞: Ես էլ հարցնում եմ՝ դու՞ կյանքում ինչ ես արել, կամ Հյուբերթ Աքլի երկրորդն ինչ է արել, – նա մի պահ լռեց, ապա օրիորդ Հիքսին ու Հելեն էլիոթին դարձավ, – կարծում եմ՝ շատ էլ տեղին հարց եմ տվել, – հետո նորից նայեց Հյուբերթ Աքլիին ու կրկնեց.

– Ի՞նչ են արել:

– Ասեմ, – պատասխանեց Հյուբերթը, – համենայն դեպս ոչ մի Աքլի երբևէ գռեհիկ... – նա կանգ առավ, որ հնարավորինս նվաստացնող բառ գտնի, ու

արտաբերեց,- Ֆանֆարոն (այս բառն հթակայում մինչ այժմ լսած չկային) չի եղել:

- Ֆանֆարոն,- կրկնեց Հոմերը:- Ֆանֆարոնը ո՞րն է, օրիորդ Հիքս,- ու քանի որ վերջինս պատրաստ պատասխան չուներ, նորից Հյուբերթ Աքլին դարձավ ու շարունակեց:- Լսի՛ր, երրորդ համար, մեկ էլ չփորձես ինձ անձանոթ անուններ կպցնել:

- Ֆանֆարոնը,- ասաց Հյուբերթը,- գռեհիկ պոռոտախոսն է,- ու դադար առավ, որ է՛լ ավելի անպատիվ բառ գտնի:

- Ու՛Ֆ, ձայնդ կտրիր, հա՛,- վրա բերեց Հոմերը:

Հետո Մաքուլիների նշանավոր ժպիտով Հելեն Էլիոթին նայեց:

- Ֆանֆարոն,- կրկնեց,- է՛լ ինչ հայհոյանք կմոզոնի,- ու նստեց:

Հելեն Էլիոթը ուսուցչուհու հրահանգին էր սպասում, որ շարունակի կարդալ: Բայց օրիորդ Հիքսը հրահանգ չէր տալիս: Վերջապես Հոմերը հասկացավ. ոտքի կանգնեց ու Հյուբերթ Աքլի երրորդին դիմեց.

- Լավ, ներողություն եմ խնդրում: Սխալ էի:

- Շնորհակալ եմ,- ասաց դաստիարակված երիտասարդն ու նստեց:

Պատմության ուսուցչուհին մի պահ հայացքը դասարանով սահեցրեց ու ասաց.

- Հոմեր Մաքուլին և Հյուբերթ Աքլին դասից հետո դասարանում կմնան:

- Ախր, օրիորդ Հիքս,- առարկեց Հոմերը,- բա արգելավագքի մրցու՞մը:

- Ձեր միտքը մարզելը պակաս կարևոր չէ, քան մկանները մարզելը: Նույնիսկ ավելի կարևոր է:

- Օրիորդ Հիքս,- միջամտեց Հյուբերթ Աքլին,- վախենամ՝ մարզիչ Բայֆիլդը *պնդի*, որ ես վագքին մասնակցեմ:

– Չգիտեմ՝ մարզիչ Բայֆիլդն *ինչ կպնդի, ինչ չի պնդի*, բայց *ես* էդ վազքը վազելու եմ:

Հյուբերթ Աքլին Հոմերին նայեց.

– Չգիտեի, որ դու էլ *ես* որոշել մասնակցել:

– Որոշել եմ: Օրիորդ Հիքս, եթե *ես* անգամ թողնեք, խոսք եմ տալիս, որ էլ երբեք չարություն կամ անկարգություն՝ *էդ տեսակ բաներ* չեմ անի: Հյուբերթն էլ է խոսք տալիս: Չէ՞:

– *Ես* էլ եմ խոստանում, օրիորդ Հիքս, – հաստատեց Հյուբերթը:

– Դասից հետո երկուսդ էլ կմնաք: Հե՛լեն, խնդրեմ՝ շարունակիր կարդալ:

– Դաշնակից զորքերը, – շարունակեց կարդալ Հելենը, – քաղդեացիները՝ հարավից և մեդիացիներն ու պարսիկները՝ հյուսիսից, գրավեցին Ասորեստանի կայսրությունը և ծնկի բերեցին Նինվեն: Բաբելոնյան երկրորդ կայսրությունում իշխում էր Նաբուգոդոնոսոր երկրորդը: Այնուհետև Բաբելոնը նվաճեց Աքեմենյան թագավոր Կյուրոս երկրորդ Մեծը: Սա ընդամենը շարքային նվաճումներից մեկն էր, քանզի այս զորքի հետնորդները հետագայում իրենք նվաճվեցին Ալեքսանդր Մակեդոնացու կողմից:

Հոմերը, այս ամենից զզված, գիշերվա հերթափոխից հոգնած ու աղջկա անուշ ձայնի ներքո, որն իր կարծիքով միայն իր համար էր ստեղծված, գլուխը կամացուկ ձեռքերին դրեց ու սկսեց նիրհի պես մի բան վայելել: Քնի մեջ, սակայն, շարունակում էր աղջկան լսել:

– Այս խառնարանից, – կարդում էր վերջինս, – աշխարհը նշանակալի ժառանգություն ստացավ: Աստվածաշնչյան տասը պատվիրանների հիմքում մասամբ ընկած են Համնուրաբի թագավորի օրոք (որին նաև Օրինաստեղծ են անվանում) ստեղծված

օրենքները: Բացի հաշվարկման մեզ ծանոթ տասական համակարգից, նրանք օգտագործել են վաթսունական համակարգը, որից գալիս է ժամի բաժանումը 60 րոպեի և շրջանագծի բաժանումը 360 աստիճանի: Արաբները մեզ թվանշաններ են տվել, որոնք մինչև օրս արաբական են կոչվում՝ ի հակադրություն հռոմեականների: Ասորիները ստեղծել են արևային ժամացույցը: Դեղագործական ժամանակակից խորհրդանշանները և կենդանակերպի նշանները Բաբելոնից են ծագում: Փոքր Ասիայում համեմատաբար վերջերս կատարված պեղումները պարզել են, որ ժամանակին այնտեղ մի փառապանծ կայսրություն է ծաղկել:

– Փառապանծ կայսրություն՝,– քնի մեջ ասաց Հոմերը:– Որտե՞ղ, Կալիֆոռնիայի Իթակա քաղաքում: Գրողի ծոցում, առանց ոչ մի մեծ ժողովրդի՞, առանց ոչ մի մեծ հայտնագործությա՞ն: Առանց արևի ժամացույցի, առանց կենդանակերպի, առանց հումորի, առանց ոչ մի բանի՞: Էդ մեծ կայսրությունը որտե՞ղ էր,– նա որոշեց նստել ու շուրջը նայել: Տեսած միակ բանը Հելեն Էլիոթի դեմքն էր՝ կայսրություններից թերևս ամենափառապանծը, լսածը՝ զուլալ ձայնը, թշվառ մարդկության նվաճումներից թերևս ամենապանծալին:

– Խեթերը,– ասաց ձայնը,– ծովը հատել ու Եգիպտոս էին հասել: Նրանք, հրեական ցեղերի հետ խառնվելով, վերջիններիս իրենց քիթը պարզկեցին:

Հելենը դադարեց կարդալ ու օրհորդ Հիքսին դարձավ.

– Գլուխը վերջացավ, օրհորդ Հիքս:

– Լավ, Հելեն: Ապրե՛ս, շատ լավ կարդացիր: Կարող ես նստել:

11. ՔԻԹԸ

Օրհորդ Հիքսը սպասեց, որ Հելենը նստի, ապա հայացքն աշակերտների դեմքերով սահեցրեց:

– Այսպիսով,– ասաց,– ի՞նչ սովորեցի՞նք:

– Որ բոլոր մարդիկ քիթ ունեն,– պատասխանեց Հոմերը:

Օրհորդ Հիքսին այս դիտարկումը չբարկացրեց՝ ընդունեց որպես պատասխան:

– Է՞լ:

– Որ քթերը,– նորից ասաց Հոմերը,– միայն խնչելու ու հարբուխի համար չեն, այլև հին աշխարհի ժամանակագրությունը չշփոթելու:

Օրհորդ Հիքսը հայացքը Հոմերից մյուսներին դարձրեց:

– Է՞լ ով կասի: Հոմերը կարծես քթերով շատ է տարվել:

– Բայց դասագրքում գրել են, չէ՞: *Ինչու՞* են գրել: Ուրեմն երևի կարևոր է:

– Պարո՛ն Մաքուլի, գուցե կուզեիք հանպատրաստից մի զեկու՛յց անել քթերի մասին:

– Ինչու՞ չէ,– ասաց Հոմերը:– Ոչ էնքան զեկույց, բայց... հնագույն պատմությունը մեզ մի բան է ասում,– հետո դանդաղ, մի տեսակ չափազանցված հանդիսավորությամբ, շարունակեց,– որ մարդիկ միշտ քիթ են ունեցել: Այս բանն ապացուցելու համար բավական է, որ ձեր շուրջը՝ նստածներին նայեք,– ու նա հայացքը սահեցրեց համադասարանցիների վրայով:– Որ կողմը նայեք՝ քթեր են:– Մի պահ կանգ առավ, որ մտածի, թե խնդրո առարկայի մասին է՛լ ինչ կարելի է ասել:

– Քիթը մարդկությանը միշտ հիմար վիճակի մեջ է դրել ու ամենաշատը՝ խեթերին, որովհետև դրանցը համ մեծ էր, համ կեռ: Հեչ կարևոր չի, թե արևի

ժամացույցն ով է ստեղծել, որովհետև վաղ թե ուշ ձեռքինն էր ստեղծվելու: Կարևորը՝ ով ինչ քիթ ունի:

Խեղկատակ Ջոն, համակ ուշադրություն՝ հիացմունքով, եթե չասենք՝ նախանձով, լսում էր:

– Մարդկանց մի մասը քթի մեջ են խոսում: Մեծ մասը՝ քթի մեջ, մի մասն էլ քթով սուլում են կամ երգում: Մարդիկ մարդկանց քթից բռնած ման են ածում, մարդիկ էլ կան՝ քիթն ինչի մեջ ասես չեն խոսում: Կատաղած շներն ու դերասանները կրթոտ տեսարաններում իրար քիթ են կծում: Քթին դուռ են շրխկացնում, քիթը տրորում են: Քիթը ծառի պես հաստատուն է, բայց շարժական առարկայի՝ գլխին ամրացած, պատիժներ է կրում, որովհետև անցանկալի տեղեր մեջ է ընկնում ու խանգարում: Քթի առաքելությունը հոտ քաշելն է, բայց որոշ մարդիկ քիթը տնկում են, ուրիշների ասածը, արածը կամ տեսքը քթին չեն դնում, – նա Հյուբերթ Աքլի երրորդին նայեց, հետո՝ Հելեն էլիոթին, որի քիթը, տնկվելու փոխարեն, չգիտես ինչու՝ կախվեց:– Էս մարդիկ սովորաբար քիթը երկինք են ցցում, երևի կարծում են, թե երկնային արքայությանն ավելի մոտ կլինեն: Կենդանիների մեծ մասը ռունգեր ունի. քիթ քչերն ունեն: Բայց մեկ է՝ հոտառությունն ավելի զարգացած է, քան մարդկանցը, որոնք են էլ ի՛նչ քիթ ունեն, – Հոմեր Մաքուլին խոր շունչ քաշեց ու որոշեց իր ճառը եզրափակել:– Քթի մասին ամենակարևորը, որ պիտի իմանանք, սա է. քիթը փորձանքի բուն է, պատերազմների պատճառ, կարող է ընկերներին գժտեցնել, կարող է երջանկություն կործանել: Օրիո՛րդ Հիքս, *հիմա* կթողնե՛ք արգելավազքին գնամ:

Պատմության ուսուցչուհին, թեև հիացած էր աննշան առարկայի շուրջ այսպիսի բուռն երևակայությամբ

արտասանված ելույթով, չէր կարող թույլ տալ, որ այն դասարանում կարգուկանոն հաստատելու գործին խանգարի:

– Դասից հետո կմնաք, պարո՛ն Մաքուլի, ինչպես և *դու՛ք*, պարոն Աքլի: Իսկ հիմա, երբ քթերի հարցը պարզեցինք, ո՞վ կուզի կարդացածը մեկնաբանել:

Բոլորը լուռ էին:

– Հը, ձե՛զ տեսնեմ: *Մեկնումեկդ* մի բան չի՞ ասի:

Խեղկատակ Ջոն մարտահրավերն ընդունեց:

– Քթերը լինում են կարմիր, կապտած կամ մանուշակագույն: Կորչի՛ իթական: Կեցցե՛ Կալիֆոռնիան:

– Է՛լ:

– Ծովագնացներն ու հետախույզները քիթը քամուն են բռնում, – ասաց աղջիկներից մեկը:

– Ապրե՛ս: Հե՛նրի:

– Ես քթերի մասին բան չգիտեմ, – ասաց Հենրին:

– Լավ, – ասաց Ջոն, – Մովսեսն ո՞վ էր:

– Աստվածաշնչից մի մարդ:

– Քիթ ունե՞ր:

– Հա, իհարկե քիթ ուներ:

– Բա դե ասա. «Մովսեսը մյուսներից ոչ պակաս մեծ քիթ ուներ»:

– Ասեմ, որ ի՞նչ:

– Ո՞նց, որ հնագույն պատմություն իմանաս:

– Է՛լ:

Ոչ ոք ձայն չհանեց, ու Ջոն ասաց.

– Ի՞նչ անեմ, էլի ինձ մնաց: Ձեռքն ու աչքը շարժվում են, բայց միայն քիթն է վազում:

– Օրիո՛րդ Հիքս, – ասաց Հոմերը, – ի՞նչ կլինի, թողեք՝ արգելավազքը վազեմ:

– Քո *արգելքն* ու *վազքը* ինձ չեն հետաքրքրում, – պատասխանեց ուսուցչուհին: – Է՛լ ով ինչ կասի:

Բայց արդեն ուշ էր. զանգը տվեց: Հոմեր Մաքուլիից ու Հյուբերթ Աքլիից բացի՝ բոլորը արգելավագրին գնացին:

12. ՕՐԻՈՐԴ ՀԻՔՍԸ

Իթակայի ավագ դպրոցի մարզիչը կանգնել էր տնօրենի գրասենյակում, մի մարդու, որի ազգանունը էք էր: Այս հանգամանքին իսկույն արձագանքել էր պարոն Ռոբերթ Ռիքլին, օրաթերթի՝ «Անհավատալի է, բայց փաստ» վերնագրված ծաղրանկարի տեսքով: Պարոն էքի անունն Օսկար էր և հատուկ ուշադրության ոչ արժանի:

– Օրիորդ Հիքսը, – ասում էր տնօրենը, – այս դպրոցի ամենահին ու լավագույն ուսուցչուհին է: Անգամ ինձ է դաս տվել աշակերտ ժամանակ: Ինչպես և ձեզ, պարոն Բայֆիլդ: Վախենամ՝ չեմ կարող ինձ թույլ տալ արգելել, որ անկարգ աշակերտներին պատժի:

– Հյուբերթ Աքլի երրորդը *անկարգ աշակերտ* չէ, – առարկեց մարզիչը: – Հոմեր Մաքուլին՝ հա, բայց ո՛չ Հյուբերթ Աքլին: Նա վերին աստիճանի բարեկիրթ տղա է:

– Հա, ինչ խոսք, բարեկեցիկ ընտանիքի զավակ է: Բայց եթե օրիորդ Հիքսը ուզում է, որ դասարանում մնա, այդպես էլ *կլինի*: *Կարող է* և բարեկիրթ տղա է: Բայց օրիորդ Հիքսը հնագույն պատմության ուսուցիչն է ու դեռ երբեք ոչ մեկի անտեղի չի պատժել: Հյուբերթ Աքլին մի ուրիշ օր կվազի:

Տնօրենը համարեց, որ հարցը լուծված է: Մարզիչը շրջվեց ու սենյակից դուրս եկավ: Բայց մարզադաշտ չգնաց: Փոխարենը գնաց հնագույն պատմության դասասենյակը: Հոմերը, Հյուբերթն ու օրիորդ Հիքսն այստեղ էին: Նա գլուխը խոնարհեց՝ ծեր ուսուցչուհուն ողջունեց ու ժպտաց:

– Օրիորդ Հիքս, – ասաց, – ես պարոն Էքի հետ համաձայնության եկա, – այս հայտարարությունն ակնարկում էր, որ Հյուբերթ Աքլին ազատ արձակելու թույլտվություն է ստացել: Բայց առաջինը Հոմեր Մաքուլին տեղից վեր թռավ, կարծես ազատ արձակվածն *ինքը* լիներ:

– *Պոլ* չէ, – ասաց մարզիչը, – պարոն Աքլին:

– Ի՞նչ նկատի ունեք, – հարցրեց պատմության ուսուցչուհին:

– Պարոն Աքլին կարող է հենց հիմա մարզադաշտ գնալ, որ արգելավազքին մասնակցի: Նրան ենք սպասում:

– Իսկապե՞ս, – գոչեց Հոմերը: Նրան արդարացի ցասում էր համակել: – Իսկ պարոն *Մաքուլին* ինչ պիտի անի, – բայց այս հարցն անպատասխան մնաց, որովհետև մարզիչը, մի փոքր շփոթված ու անհանգիստ երիտասարդին՝ Հյուբերթ Աքլի երրորդին հետևից գցած, դասասենյակից դուրս եկավ:

– Տեսաք, չէ՞, օրիորդ Հիքս, – ասաց:

Պատմության ուսուցչուհին այնքան էր իրեն կորցրել, որ բերանը չէր բացվում: Վերջապես մի կերպ շշնջաց.

– Պարոն Բայֆիլդը ստախոս է:

Հոմերն ապշեց. երբեք ուսուցչուհուն այսքան բարկացած չէր տեսել: Նրան թվաց, որ օրիորդ Հիքսն աշխարհի ամենալավ ուսուցիչն է:

– Երեսունհինգ տարի Իթակայի դպրոցում պատմություն եմ դասավանդում: Իթակայի հարյուրավոր տղաների ու աղջիկների եմ ճանաչում: Եղբորդ՝ Մարկուսին, ու քրոջդ՝ Բեսսին էլ եմ դաս տվել: Ու եթե փոքր քույր-եղբայր ունես, մի օր նրանց էլ դաս կտամ:

– Չէ, մենակ եղբայր՝ Ուլիսեսը: Մարկուսը *n՞նց* էր սովորում:

– Մարկուսն էլ, Բեսսն էլ լավ աշակերտներ էին: Ազնիվ ու վայելուչ: Այո, *վայելուչ*: Նախնիների վարքու-բարքը նրանց ի ծնե վայելուչ էր դարձրել: Մարկուսն էլ քեզ պես տեղի-անտեղի կխոսեր, բայց երբեք ստախոս չի՛ եղել: Իսկ էս մարդը եկավ ու առանց ամաչելու սուտ խոսեց, ճիշտ ինչպես աշակերտ ժամանակ էս սենյակում նստած էր սուտ խոսում: Էդպես էլ իրենից ուժեղներին քծնելուց բացի՝ ոչինչ չսովորեց: *Արգելա-վազք* պիտի վազի: Ստորաքա՛րշ, – ուսուցչուհին քիթն ու արցունքները սրբեց:

– Մի՛ սրտնեղեք, օրիորդ Հիքս, – ասաց Հոմերը:– Չեմ մտածել, որ ուսուցիչներն էլ են բոլորի պես, մի բան էլ՝ բոլորից լավ մարդիկ: Ես կմնամ, օրիորդ Հիքս: Ինձ պատժեք:

– Ես ձեզ պատժելու համար չեի պահել, – ասաց ուսուցչուհին:– Ես միշտ միայն նրանց եմ պահել, ում բոլորից շատ եմ գնահատել: Հավատս չի գալիս, որ Հյուբերթի մասին սխալվել եմ: Մեկ է՝ երկուսիդ էլ մի րոպեից մարզադաշտ էի թողնելու: Ձեզ պահել էի, որ դաս առնեք, ոչ թե պատժեմ: Ես միշտ հետևում եմ, թե աշակերտներիս հոգին ո՛նց է հասունանում: Դու Հյուբերթ Աքլիից ներողություն խնդրեցիր: Ու նա էլ, թեև նեղվելով, որովհետև ներողությունիցդ իրեն անարժան էր զգում, մեծահոգաբար ընդունեց: Խնդրեցի դասե-րից հետո մնալ, որ հետներդ խոսեմ: Մեկդ արժանա-վոր բարեկեցիկ ընտանիքից է, մյուսդ՝ արժանավոր աղքատ ընտանիքից: Էս աշխարհում հարմարվելը նրա համար ավելի դժվար կլինի, քան քեզ համար: Ուզեցի, որ իրար մի փոքր ավելի լավ ճանաչեք: Ուզեցի *երկուսիդ հետը* էլ խոսել:

– Գիտե՞ք, Հյուբերթն ինձ դուր է գալիս, – ասաց Հոմե-րը:– Ուղղակի ոնց որ մտածի, թե մյուսներից լավն է:

– Հասկանում եմ՝ ինչ ես զգում, բայց աշխարհում ամեն մարդ *իրոք* մյուսներից լավն է: Ոչ թե *մյուսների չափ* լավը: Ջոզեֆ Տերանովյան Հյուբերթից սուր միտք ունի, բայց Հյուբերթն էլ նույնքան ազնիվ է: Ազատ երկրում ամեն մարդ մինչև դրսևորվման պահը մյուսներին հավասար է: Իսկ հետո ամեն մեկն ազատ է ուզած ձևով դրսևորվել: Ես ուզում եմ, որ ի՛մ տղաների ու աղջիկների դրսևորումն արժանապատվությունը լինի: Արտաքին տպավորությունն ինձ չի մտահոգում: Ո՛չ վայելուչ շարժումներ, ոչ կոշտուկոպիտ պահվածքը ինձ չեն խաբի: Ինձ պետք է, որ հոգին արժանապատիվ լինի: Կարևոր չէ՝ աշակերտս հարուստ է, թե աղքատ, միտքը փայլուն է, թե տկար, հանճար է, թե պարզամիտ, քանի դեռ Մարդ է՝ հոգի ունի, ճշմարտասեր է ու արդար, և հարգանքով է վերաբերվում թե՛ իրենից նվաստներին, թե՛ հզորներին: Եթե աշակերտներս Մարդ են, հեչ պետք չէ, որ որպես մարդ նույն *պահվածքն* ունենան: Եթե անարժան չեն, ոչ էլ կարևոր է, թե իրարից ինչով են տարբերվում: Ես կուզեմ, որ ամեն մեկն ի՛նքը լինի: Չեմ ուզի, որ դու մի ուրիշի նման լինես՝ ուղղակի ինձ դուր գալու կամ աշխատանքս հեշտացնելու համար: Մի դասարան լիքը կատարյալ վարքով բարեկիրթ օրիորդներից ու պատանիներից շատ արագ կհոգնեի: Ուզում եմ, որ աշակերտներս *Մարդ* լինեն, ամեն մեկն իր ձևով, ամեն մեկը մյուսներից մի հետաքրքիր ու լավ բանով տարբերվող: Ուզում էի, որ Հյուբերթ Աքլին էլ, քեզ հետ, էս խոսքերս լսեր ու քեզ հետ հասկանար, որ եթե հիմա ինքը քեզ դուր չի գալիս, դու էլ իրեն դուր չես գալիս, ոչ մի արտառոց բան չկա: Ուզում էի՝ իմանա, որ հենց սովորեք ի հեճուկս միմյանց հանդեպ հակակրանքի՝ մեկդ մյուսին հարգել, ա՛յ էն ժամանակ կսկսեք Մարդ դառնալ: Քաղաքակիրթ լինելը սա՛ է: Հնագույն

պատմությունից քաղած դասերը սա՛ են: Էս բաներն ամենաշատը քեզ կուզեի ասել. ուրախ եմ, որ ստացվեց: Երբ դպրոցն ավարտես, երբ տարիներ անցնեն, ու ինձ *մոռանաս*, ես դեռ քեզ հետևելիս կլինեմ՝ թե ինչի ես հասել, – օրիորդ Հիքսը նորից քիթը սրբեց ու թաշկինակն աչքերին տարավ: – Հիմա մարզադա՛շտ վազիր:

Կալիֆոռնիայի Իթակա քաղաքի Սանտա Կլարա պողոտայում ապրող Մաքուլիների ընտանիքի երկրորդ որդին նստած տեղից վեր կացավ ու սենյակից դուրս գնաց:

Մարզադաշտում Հյուբերթ Աքլին և նրա հետ արդեն վազած երեք տղաները վազքուղիներին իրենց տեղն էին գրավում: Հոմերն իր՝ հինգերորդ վազքուղուն հասավ ճիշտ այն պահին, երբ մրցավազքն ազդարարողը ձեռքը վեր բարձրացրեց: Հոմերն իր տեղը զբաղեցրեց: Լավ էր զգում, բայց շատ բարկացած էր ու վստահ էր, որ ոչ մի բան՝ ո՛չ անհարմար կոշիկները, ո՛չ մարզահագուստ չունենալը, ո՛չ մարզվածության պակասը, չէին խանգարի, որ վազքը հաղթեր:

Հյուբերթ Աքլին, որ Հոմերի կողքի վազքուղուն էր կանգնած, շրջվեց ու ասաց.

– Էդ ձևով վազել չի կարելի:

– Հա՛, – պատասխանեց Հոմերը, – դե սպասի՛ տե՛ս:

Մարզիչի աթոռին նստած պարոն Բայֆիլդը մտքում հարցրեց. «Էն ո՞վ է ծայրի վազքուղուն առանց համազգեստի կանգնել»: Հետո հիշեց:

Նա որոշեց վազքը կանգնեցնել, որ հինգերորդ վազորդին հեռացնի, բայց արդեն ուշ էր: Ազդանշանը տրված էր, ու վազորդները սկսել էին վազել: Հոմերն ու Հյուբերթը, մյուսներից մի փոքր առաջ ընկած, առաջին արգելքը հաղթահարեցին, երկուսն էլ՝ վարպետորեն: Երկրորդ արգելքին Հոմերը Հյուբերթից փոքր-ինչ

առաջ անցավ ու այսպես հասավ երրորդ, չորրորդ, հինգերորդ, վեցերորդ, յոթերորդ և ութերորդ արգելքներին: Հյուբերթ Աքլին կրնկակոխ հետևում էր:

Հումերն իններորդ արգելքին հասավ ճիշտ նույն պահին, ինչ Իթակայի ավագ դպրոցի մարզիչը՝ հակառակ կողմից, և ուսույուն կատարելով՝ նրա բաց գիրկն ընկավ, ու միասին տապալվեցին գետին: Հյուբերթ Աքլին կանգ առավ և մյուսներին կանգնեցրեց:

– Տեղից չշարժվե՛ք,– բղավեց:– Թողեք, թող վեր կենա:

Հումերը ոտքի կանգնեց, ու վազքը շարունակեցին:

Հանդիսատեսները, Հելեն էլիոթը մյուսների թվում, կատարվածից քարացել էին: Հիմա էլ վերջնագծի մոտ պատմության ուսուցչուհին էր հայտնվել:

– Վազիր, Հումե՛ր,– գոչեց նա,– վազիր, Հյուբերթ: Սա՛մ, Ջո՛րջ, Հե՛նրի, արագացրե՛ք:

Նախավերջին արգելքի մոտ Հյուբերթը Հումերին հասավ:

– Ների՛ր,– ասաց:

– Առա՛ջ անցիր,– պատասխանեց Հումերը:

Հյուբերթ Աքլին մի փոքր առաջ անցավ, ու էլ համարյա վազելու բան չէր մնացել: Հումերի ոտքը վերջին արգելքին դիպավ, բայց համարյա հասավ Հյուբերթին: Այնքան մոտ էին, որ ոչ ոք չհասկացավ, թե ով հաղթեց: Սամը, Ջորջն ու Հարրին էլ շուտով հասան:

Կատաղած, դառնացած և ընկնելուց փոքր-ինչ ցնցված՝ Իթակայի ավագ դպրոցի մարզիչը վազեց դեպի օրիորդ Հիքսի շուրջը հավաքված խումբը:

– Մաքո՛լի,– տասնհինգ մետր հեռվից բղավեց նա:

Տեղ հասնելով՝ հևալով կանգնեց, որ շունչը տեղը բերի, ու աչքերով Հումեր Մաքոլիին շանթահարեց: Հետո ասաց.

- Էս կիսամյակում էլ ո՛չ մի մրցման չես մասնակցի:
- Լավ, սը՛ր,- պատասխանեց Հոմերը:
- Հիմա իմ սենյակը գնա ու սպասիր:
- Ձեր սենյա՛կը,- Հոմերը հանկարծ հիշեց, որ ժամը չորսին պետք է աշխատանքի հասներ:- Ժամը քանի՞սն է,- հարցրեց:

Հյուբերթ Աքլին ձեռքի ժամացույցին նայեց:

- Չորսին քառորդ պակաս:
- Սենյա՛կս գնա,- բղավեց Բայֆիլդը:
- Ախր չեք հասկանում, պարո՛ն Բայֆիլդ,- ասաց Հոմերը:- Տեղ պիտի գնամ: Ուշանալ չի կարելի:
- Ջո Տերանովան մոտեցավ խմբին:
- Ինչու՞ պիտի ձեր սենյակը գնա: Ոչ մի բան չի արել: Խեղճ մարզիչի համբերության բաժակը լցվել էր, ու է՛լ չդիմացավ:

- Դու լավ կանես՝ կեղտոտ իտալացու կեղտոտ բերանդ փակե՛ս,- գոռաց նա: Հետո տղային կոպիտ հրեց, բայց սա, նախքան գետին փռվելը, հասցրեց բղավել:

- Կեղտոտ իտալացու՛,- ու ոտքի թռչելով՝ ըմբիշի նման մարզիչի վրա նետվեց:

Շփոթված ու շնչասպառ՝ վազելով պարոն էքը հասավ:

- Պարոնա՛յք,- գոչեց նա,- տղանե՛ր, տղանե՛ր,- ու Ջոյին մարզիչի վրայից քաշեց տարավ: Մարզիչը մնաց գետնին պառկած:

- Պարո՛ն, Բայֆիլդ,- ասաց տնօրենը,- էս տարօրի-նակ պահվածքը ո՞նց կբացատրեք:

Մարզիչը, պապանձված, օրիորդ Հիքսի կողմը ցույց տվեց:

- Պարոն Բայֆիլդը պետք է Ջո Տերանովայից նե-րողություն խնդրի,- ասաց վերջինս:

– Էդպե՛ս է: Էդպե՛ս է, պարո՛ն Բայֆիլդ,– հարցրեց պարոն Էքը:

– Ճիշտ է, Ջոյի ընտանիքն *իտալացիներ են*, պարո՛ն Բայֆիլդ, բայց նրանց կեղտոտ ասելու իրավունք չունեք,– ասաց օրիորդ Հիքսը:

Ջո Տերանովան ասաց.

– Ինձ ներողություն պետք չի: Փորձի մի անգամ էլ վիրավորել՝ քիթբերանը կջարդեմ: Փորձի խփել՝ եղբայրներիս կկանչեմ:

– Ջո՛զեֆ,– ասաց օրիորդ Հիքսը,– պետք է պարոն Բայֆիլդին ներողություն խնդրելու հնարավորություն տաս: Պետք է թույլ տաս, որ ամերիկացի դառնալու մի փորձ էլ անի:

– Այո՛,– ասաց տնօրենը,– մեր ապրած երկիրն Ամերիկա՛ն է: Էս երկրի միակ օտարականները նրանք են, ովքեր մոռանում են, որ սա *Ամերիկա՛ն է*,– հետո դարձավ դեռևս գետնին փռված մարդուն:

– Պարո՛ն Բայֆիլդ,– ասաց առարկություն չհանդուրժող ձայնով:

Իթակայի ավագ դպրոցի մարզիչը ոտքի կանգնեց և, առանց որևէ մեկին նայելու, ասաց.

– Ներե՛ք ինձ,– ու արագ հեռացավ:

Ջո Տերանովան և Հոմերը միասին քայլեցին: Ջոն լավ էր քայլում, բայց Հոմերը մի քիչ կաղում էր. երբ Բայֆիլդը փորձել էր կանգնեցնել՝ ոտքը վնասել էր:

Օրիորդ Հիքսն ու պարոն Էքը խմբված կանգնած երեսունից ավելի տղաներին ու աղջիկներին դարձան. բոլորն իրարից տարբեր էին ու տարբեր ազգության:

– Իսկ հիմա,– ասաց օրիորդ Հիքսը,– բոլորդ տուն գնացեք,– բայց տեսնելով, որ երեխաները մի տեսակ մոլորված են՝ ավելացրեց,– աշխուժացե՛ք, աշխուժացեք, մեծ բան չի պատահել:

– Հա,– ասաց տնօրենը,– աշխուժացեք, երեխաներ, բոլորդ:

Երեխաները խումբ-խումբ ցրվեցին:

13. ՄԵԾ ՔՐԻՍԸ

Նույն պահին, երբ Հումերը մրցավազքից հետո հեծանվի թամբին ցատկեց, որ ինչքան կարող է շուտ գործի հասնի, Մեծ Քրիս անունով մի մարդ Թուլարե փողոցի Քովինգթոնի մարզական պարագաների խանութը մտավ: Մարդը փարթամ շեկ մորուքով մի աժդահա էր՝ բարձրահասակ, նիհար ու ջլուտ, որ Պիեդրայի սարերից իջել՝ եկել էր պարեն, փամփուշտ ու թակարդներ գնելու: Պարոն Քովինգթոնը՝ խանութի տերն ու տնօրենը, իսկույն անցավ Ֆրիանթից մի մարդու հորինած նոր թակարդի բավական խրթին աշխատանքը ցուցադրելուն: Թակարդը պողպատից, կիտրոնափայտից, զսպանակներից ու ճոպաններից բաղկացած հսկայական բարդ սարք էր: Սկզբունքը հետևյալն էր. կենդանուն բռնում՝ վեր էր թռցնում, շուռ տալիս ու կախած պահում, մինչև որսորդը գար:

– Նոփ-նոր սարք է,– ասաց պարոն Քովինգթոնը:– Ֆրիանթից Սաֆըրթի անունով մի մարդ է հորինել ու դեռ ընդամենը երկու հատ է սարքել: Մեկը որպես նմուշ ուղարկել է արտոնագիր ստանալու, սա էլ վաճառքի համար ինձ է տվել: Նախատեսված է բոլոր վազվզող արարածների համար: Պարոն Սաֆըրթին սարքին անուն է տվել. ՍԱՖԸՐԹԻԻ-ՎԵՐ ԹՈՒՑՆՈՂ-ՇՈՒՌ ՏՎՈՂ-ԿԱԽՈՂ-ՕԴՈՒՄ ՊԱՀՈՂ-ԲԱՑ ՉԹՈՂՆՈՂ-ՀԱՄԱՅՆ-ԳԱԶԱՆԱՑ-ԹԱԿԱՐԴ: Գինը քսան դոլար է ասում: Իհարկե, դեռ չի փորձարկվել, բայց հո տեսնում եք՝ ինչ ամուր է. հեշտուհանգիստ հսկա արջին օդ կհանի՝ կպահի:

Մեծ Քրիստը երեխայի նման ականջ էր դնում մարգա-
կան պարագաների խանութի տիրոջ խոսքերին: Նրա-
նից հետ կանգնած Ուլիսես Մաքուլին, երկու մեծահա-
սակների արանքից ծիկրակելով, որ թակարդը լավ
տեսնի, նույնքան հմայված լսում էր: Պարոն Քովինգ-
թոնին թվացել էր, թե Ուլիսեսը Մեծ Քրիստի հետ է եկել,
Մեծ Քրիստն էլ կարծել էր, թե պարոն Քովինգթոնի տղան
է, հետևաբար ոչ մեկին փոքրիկ տղայի ներկայությունը
անտեղի չէր թվացել: Ինչ վերաբերում է Ուլիսեսին,
նրան միշտ թվում էր, որ իր տեղն այնտեղ է, ուր տես-
նելու հետաքրքիր բան կա:

– Էս թակարդի ամենաերևելի առավելությունն էն
է,– շարունակեց պարոն Քովինգթոնը,– որ կենդանուն
չի վնասում՝ մորթին անվնաս է թողնում: Պարոն Սաֆըր-
թին ինքն իր սարքի համար տասնմեկ տարվա անխա-
փան աշխատանք է խոստանում: Նկատի ունի բոլոր
մասերը. փայտի ճկունությունը, զսպանակների, պող-
պատի, պարանների ամրությունը՝ ամե՛ն ինչը: Մարդը
որսորդ չէ, բայց համարում է, որ սրանից մարդկային
ու գործուն թակարդ աշխարհում չկա: Ինքը յոթանա-
սունին մոտ կլինի: Ֆրիանթում հանգիստ ապրում է,
գիրք է կարդում ու սարքեր հորինում: Ասում են՝ երե-
սունյոթ շատ պետքական սարքեր է հորինել,– պարոն
Քովինգթոնը թակարդի հետ գործը վերջացրեց:– Ըհը՛,-
ասաց,– ոնց որ լարեցի:

Ուլիսեսը, որ լավ տեսնելու համար առաջ-առաջ էր
գալիս, չափից ավելի մոտեցավ. թակարդը կամացուկ,
բայց ակնթարթորեն, նրան իր մեջ առավ, օդ թռցրեց,
շուռ տվեց ու հատակից երեք ոտնաչափ բարձր՝ հորի-
զոնական դիրքով կալանեց: Տղան, թեև փոքր-ինչ
անակնկալի էր եկել, ծպտուն չհանեց: Մինչդեռ Մեծ
Քրիստը կատարվածը նրա պես թեթև չտարավ:

– Զգույժ, ի՞նչ ես անում,– ասաց Քովինգթոնին:–
Հանկարծ տղադ չվնասվի:

– Տղա՛ս,– զարմացավ Քովինգթոնը:– Կարծում էի՝ *քոնն*
է: Առաջին անգամ եմ տեսնում: Քեզ հետ ներս մտավ:

– Ինձ հե՛տ,– հիմա էլ Մեծ Քրիսը զարմացավ:– Չեմ
նկատել: Լավ, ինչ որ է՝ շուտ արա, դրան թակարդից
հանի՛ր:

– Իսկույն,– ասաց Քովինգթոնը:– Սպասիր՝ տեսնեմ...
Մեծ Քրիսը շփոթվել էր ու անհանգստացել:

– Անունդ ի՞նչ է, տղա՛ս,– հարցրեց:

– Ուլիսես,– թակարդի միջից պատասխանեց տղան:

– Իմը Մեծ Քրիս է: Պի՛նդ կաց, Ուլիսես: Հիմա էս
մարդը քեզ կազատի՝ բաց կթողնի:– Մեծ Քրիսը պարոն
Քովինգթոնին դարձավ,– Դե, մի բան արա,– ասաց,–
տղային ցած բեր:

Մինչդեռ պարոն Քովինգթոնը Մեծ Քրիսից պակաս
շփոթված չէր:

– Էնքան էլ չեմ հիշում, թե Սաֆըրթին թակարդի
աշխատանքի էդ մասը ոնց էր բացատրում: Ո՞նց ասեմ.
թակարդը *չփորձարկեց*, որովհետև գազան չկար, որ
վրան փորձարկեի՞նք: Ուղղակի *բանավոր* բացատրեց:
Կարծեմ՝ *սա* պիտի դուրս քաշվի... չէ, էս մեկը չի շարժ-
վում:

Մեծ Քրիսն ու պարոն Քովինգթոնը հիմա էլ միա-
սին գործի անցան: Մեծ Քրիսը Ուլիսեսին էր բռնել,
որ հանկարծ թակարդը բացվելուց քիթբերանի վրա
գետին չընկնի, իսկ Քովինգթոնը մի ծայրից մյուսն էր
նետվում ու տարբեր մասեր քաշքշում՝ հույսով, որ մեկ-
նումեկը տեղի կտա:

– Մի բան արա՛ արագացրու՛,– ասաց Մեծ Քրիսը:–
Տղային ամբողջ օրը կախ ընկած չենք պահելու: Հո ոչ
մի տեղդ չե՛ս վնասել, Ուլիսե՛ս:

– Չէ, սը՛ր, – պատասխանեց Ուլիսեսը:

– Դե պի՛նդ կաց, հիմա քեզ կազատենք: – Հետո խիստ նայեց տղային ու հարցրեց. – Ինչի՞ էիր առաջ եկել:

– Որ տեսնեմ, – ասաց տղան:

– Հա՛, շատ ուշագրավ սարք է, չէ՞: Հիմա էս պարոնը քեզ կազատի, ես էլ կպահեմ, որ չընկնես: Քանի՞ տարեկան ես:

– Չորս, – ասաց Ուլիսեսը:

– Չորս, – կրկնեց Մեծ Քրիսը: – Փաստորեն քեզնից հիսուն տարով մեծ եմ: Հիմա էս մարդը քեզ կհանի: Չէ՞, – Մեծ Քրիսն աչքերը պարոն Քովինգթոնի վրա ոլորեց: – Քո՞ անունն ինչ է:

– Ուոլթեր Քովինգթոն: Իմ խանութն է:

– Լավ է: Հիմա էս տղային հանիր, Ուոլթեր: Էն փայտի ծայրից քաշիր: Ես բռնել եմ: Չվախենաս, Ուլիսե՛ս: Հայրիկիդ անունն ի՞նչ է:

– Մաթյու, – պատասխանեց Ուլիսեսը:

– Հա՛, բախտը բերել է, որ քեզ նման տղա ունի: Ուշիմ: Կյանքս կտայի, որ քեզ նման տղա ունենայի, բայց սրտիս թագուհուն էդպես էլ չեմ գտել: Երեսուն տարի առաջ Օքլահոմայում մի աղջկա էի հանդիպել, էն էլ ուրիշին ընտրեց: Հը՛, Ուոլթեր, ձևը գտա՞ր:

– Դեռ չէ, – ասաց պարոն Քովինգթոնը: – Բայց ուր որ է՝ կգտնեմ: Ոնց որ *սա է...* չէ: Սաֆըրթին *բացատրել է* գազանին հանելու ձևը, բայց ինչ-որ չի ստացվում: Երևի փոքրիկ տղաների համար ուրիշ սկզբունք է գործում:

Երկու տղամարդ, մի կին, մի փոքրիկ աղջիկ ու ինը-տասը տարեկան երկու տղա խանութ մտան, որ նայեն:

– Ի՞նչ է եղել, – հարցրեց տղաներից մեկը:

– Թակարդը տղա է ընկել, – պատասխանեց պարոն Քովինգթոնը, – Ուլիսես անունով:

– Ո՞նց է հաջողացրել, – զարմացավ տղամարդկան-
ցից մեկը: – Պե՞տք է՝ բժիշկ կանչեմ:

– Չէ, տղային բան չի պատահել, – ասաց Մեծ Քրիսը: –
Ոչ մի տեղը չի վնասվել: Ուղղակի մնացել է օդում
կախված:

– Գուցե ոստիկա՞ն կանչեք, – առաջարկեց կինը:

– Չէ, տիկին, – ասաց Մեծ Քրիսը: – Մեծ բան չի՝ թա-
կարդն է ընկել: Էս մարդը՝ Ուոլթերը, հիմա կհանի:

– Ի՞նչ ասեմ, – վրդովվեց կինը, – ամո՛թ, որ փոքրիկ
տղաները հիմար սարքերից պիտի տառապեն:

– Տղային բան չի պատահել, տիկի՛ն, – կրկնեց Մեծ
Քրիսը: – Հեչ էլ չի տառապում:

– Մի բան կասեմ, – չէր հանդարտվում տիկինը, – եթե
իմ տղան լիներ, երկուսդ էլ ոստիկանության ձեռքից
չէիք պրծնի, – ու փնջացնելով՝ աղջկա ձեռքը քաշեց, որ
խանութից դուրս տանի:

– Թող տեսնե՛մ, թող տեսնե՛մ, – բղավեց աղջիկը, –
ինչի՞ պիտի բոլորը տեսնեն, ես՝ չէ՛:

Կինն յաղջկան թափ տվեց ու հետևից քարշ տալով
տարավ:

– Բան չկա, Ուլիսե՛ս, – հանգստացրեց Մեծ Քրիսը, –
մի վայրկյանում կհանենք:

Բայց պարոն Քովինգթոնը հանձնվեց:

– Երևի ճիշտ կանեմ՝ պարոն Սաֆըրթիին զանգեմ, –
ասաց, – ես գլուխ չեմ հանում:

– Հիմա էսպես պիտի մնա՞մ, – հարցրեց Ուլիսեսը:

– Չէ, տղա՛ս, – ասաց Մեծ Քրիսը, – չէ, ո՞նց թե՛ պիտի
մնաս:

Կեսօրվա լրագրերի կապոցը թևի տակ՝ մի տղա
մտավ խանութ, միացավ բազմությանը, նայեց Ուլիսե-
սին, նայեց հավաքվածներին, հետո էլի Ուլիսեսին ու
խոսեց:

– Բարև, Ուլիսե՛ս, – ասաց, – էդ ի՞նչ ես անում:

– Բարև, Օ՛գի, – պատասխանեց Ուլիսեսը: – Բռնվել եմ:

– Ի՞նչ ես արել, որ:

– Թակարդն եմ ընկել:

Լրագրավաճառ տղան փորձեց Մեծ Քրիսիին օգնել, բայց ավելի խանգարեց: Նա խուճապահար, վախից պապանձված՝ չորս կողմը նայեց ու մի պահ մոլորված կանգնելուց հետո կայծակի արագությամբ փողոց նետվեց: Ուղիղ հեռագրատուն սլացավ: Բայց Հոմերն այնտեղ չէր, ու նորից փողոց թռավ, մարդկանց հրմշտելով դեռ վազեց, դեռ վազեց՝ ամբողջ ժամանակ օրվա գլխավոր լուրը բղավելով:

Կանանցից մեկը, որին քիչ էր մնացել վայր գցի, քթի տակ ասաց.

– Թերթ վաճառելուց խելքը թռցրել է:

Օգին մի ամբողջ թաղամաս վազեց, դուրս եկավ փողոցի մեջտեղն ու չորսկողմը նայեց, որ տեսնի՝ Հոմերը չի՞ երևում: Բախտի բերմամբ՝ Հոմերն իր հեծանվով անկյան հետևից հայտնվեց: Օգին՝ ձայնը գլուխը գցած, նրա կողմը նետվեց.

– Հոմե՛ր, արի տես՝ ի՛նչ է եղել:

Հոմերը հեծանվից իջավ:

– Ի՞նչ է պատահել, Օ՛գի:

– Վա՛յ, ի՛նչ է պատահել, – բղավեց Օգին, թեև Հոմե-րը ճիշտ կողքին էր կանգնած: – Չէ, պիտի հետս գա՛ս, – ու Հոմերի թևից քաշեց:

– Բայց ի՞նչ է եղել:

– Քովինգթոնի խանութում, շո՛ւտ, գնացի՛նք:

– Հա՛, – ասաց Հոմերը, – երևի ցուցափեղկում հրա-ցան կամ կարթ-մարթ ես տեսել: Չեմ կարող հետդ գալ, Օ՛գի, գործի եմ: Գործ ունեմ անելու:

Հումերը նորից թամբին հեծնեց ու պատրաստվեց հեռանալ, բայց Օգին թամբը բռնեց ու, հետևից վազելով, փորձեց Քովինգթոնի խանութի կողմը հրել:

– Հումե՛ր, պիտի գաս, թակարդն է ընկել՝ դուրս չի գալիս:

– Ինչե՛ր ես խոսում:

Այսպես մոտեցան Քովինգթոնի խանութին: Խանութի առջև մի փոքրիկ բազմություն էր հավաքվել, ու Հումերի սիրտը կասկած ընկավ: Օգին մատը հավաքվածների կողմը տնկեց: Երկուսով, մարդկանց դեսուդեն հրելով, մտան խանութ ու թակարդին մոտեցան: Թակարդում Հումերի եղբայր Ուլիսեսն էր, չորսբուրդը՝ Մեծ Քրիսը, պարոն Քովինգթոնը ու մի խումբ անծանոթ տղամարդիկ, կանայք ու տղաներ:

– Ուլիսե՛ս, – բղավեց Հումերը:

– Բարև, Հումեր, – ասաց Ուլիսեսը:

Հումերը պարոն Քովինգթոնին դարձավ:

– Եղբայրս *էդ բանի* մեջ ի՞նչ է անում, – հարցրեց:

– Թակարդն է ընկել, – պատասխանեց պարոն Քովինգթոնը:

– Էս մարդիկ էստեղ ի՞նչ գործ ունեն: Տնե՛րդ գնացեք, – ասաց հավաքվածներին: – Փոքրիկ տղան իրավունք չունի՞ թակարդն ընկնել՝ առանց համայն մարդկությունը գլխին հավաքվելու:

– Այո՛, – համաձայնվեց պարոն Քովինգթոնը, – պիտի խնդրեմ, որ միայն հաճախորդները մնան, – նա հայացքը հավաքվածների վրայով սահեցրեց: – Պարո՛ն Ուոլես, – ասաց, – դուք կարող եք մնալ, մեր հաճախորդն եք: Դուք էլ՝ պարոնայք Սիքերթ, Ջորջ, Սպինդլ և Շորթի:

– Ես էլ եմ ձեր հաճախորդը, – ասաց մարդկանցից մեկը: – Մի շաբաթ չկա, որ ձեզնից կարթեր եմ առել:

– Հա,– հիշեց պարոն Քովինգթոնը,– կարթերը:
Մյուսներին կխնդրեմ հեռանալ:

Ընդամենը երկու հոգի տեղներից մի փոքր շարժվեցին:

– Չվախենա, Ուլիսե՛ս,– ասաց Հոմերը,– հիմա ամեն
ինչ կարգին կլինի: Լավ էր, որ Օգին ինձ գտավ: Օ՛գի,
վազիր հեռագրատուն՝ պարոն Սպանգլերին ասա, որ
եղբայրս Քովինգթոնի խանութում թակարդն է ընկել,
ու փորձում եմ հանել: Ասա, որ ուշանում եմ, բայց հենց
Ուլիսեսին հանենք, իսկույն կգամ: Շու՛տ արա:

Օգին շրջվեց ու վազեց: Դռան մեջ ներս մտնող
ոստիկանին բախվեց ու քիչ մնաց՝ գետին տապալեր:

– Էս ի՞նչ իրարանցում է,– հարցրեց ոստիկանը:

– Մի փոքրիկ տղա թակարդն է ընկել,– բացատրեց
պարոն Քովինգթոնը:– Չենք կարողանում հանել:

– Թողեք՝ տեսնեմ,– ասաց ոստիկանը: Նայեց թա-
կարդն ընկած Ուլիսեսին, հետո հավաքվածներին:

– Դե լավ,– ասաց,– ցրվեք, բոլորդ: Բան է՝ պատա-
հել է: Բանուգործ չունե՞ք, պարապ կանգնած՝ փոքրիկ
տղային եք նայում:– Ոստիկանը մարդկանց խանութից
դուրս արեց ու դուռը կողպեց: Հետո պարոն Քովինգթո-
նին ու Մեծ Քրիսին մոտեցավ:

– Հիմա տեսնենք, թե ոնց ենք տղային էս սարքի
միջից հանում՝ տուն ուղարկում:

– Հա,– ասաց պարոն Քովինգթոնը,– ինչքան շուտ,
էնքան լավ: Թե չէ ցերեկվա չորս անց կեսից խանութս
կողպել եք:

– Հիմա էս սարքը ո՞նց է աշխատում,– հարցրեց
Հոմերը:

– Նոփ-նոր թակարդ է,– պատասխանեց պարոն
Քովինգթոնը,– Ֆրիանթից Ուիլֆրեդ Սաֆլրթի անունով
մարդու հնարած: Քսան դոլար է ասում: Արդեն դիմել է
արտոնագիր ստանալու:

- Դե ոնց գիտեք՝ եղբորս ազատեք,- ասաց Հումերը,- կամ դրա ձևն *իմացող* մարդ բերեք: Սաֆըրթիին բերեք:

- Արդեն փորձել եմ զանգել, բայց հեռախոսը չի աշխատում,- պատասխանեց պարոն Քովինգթոնը:

- Չի աշխատում,- բղավեց Հումերը: Այս ամբողջ կատարվածից կատաղել էր:- Իմ ի՞նչ գործն է, թե չի աշխատում: Էդ մարդուն էստեղ բերեք, թող եղբորս հանի:

- Ես էլ եմ կարծում, որ լավ կանեք՝ մարդուն բերեք,- պարոն Քովինգթոնին ասաց ոստիկանը:

- Պարո՛ն ոստիկան,- ասաց Քովինգթոնը,- ես օրինական գործ եմ անում: Օրինապաշտ քաղաքացի եմ, հարկ եմ մուծում, որից էլ, թող թույլ տրվի ասել, դուք ձեր աշխատավարձն եք ստանում: Արդեն փորձել եմ պարոն Սաֆըրթիի հետ կապվել: Բայց ի՞նչ անեմ, որ հեռախոսը չի աշխատում: Հո օրը ցերեկով խանութս անտեր չե՛մ թողնի՝ գնամ էդ մարդուն փնտրելու:

Հումերը ուղիղ նրա աչքերին նայեց ու քթի առաջ մատը թափ տվեց:

- Գնացեք, ոնց ուզում եք էս խոշտանգման գործիքի հեղինակին գտեք,- ասաց,- ու եղբորս միջից բաց թողեք: Էսքան բան:

- Ի՞նչ խոշտանգման գործիք,- վրդովվեց պարոն Քովինգթոնը:- Մինչև հիմա եղած ամենակատարյալ թակարդն է: Գազանին բռնում՝ օդում պահում է, առանց մորթին կամ մարմինը վնասելու: Ո՛չ ճզմում է, ո՛չ կտոր-կտոր անում կամ տրորում: Աշխատում է կենդանուն իր տեղից տարհանելու ու այս կերպ վնասազերծելու սկզբունքով: Համ էլ պարոն Սաֆըրթին կարող է տանը չլինել:

- Ու՛՛Ֆ,- ասաց Հումերը,- ի՞նչ եք խոսում:

Հիմա էլ ուստիկանը որոշեց թակարդը զննել:

– Միգուցե,– առաջարկեց,– տղային *սղոցելո՞ւ* հանենք:

– Պողպատը սղոցե՞նք,– զարմացավ Քովինգթոնը:– Ո՞նց:

– Ուլիսե՛ս,– ասաց Հոմերը,– ո՞նց ես: Ինչի՞ կարիք ունես:

Մեծ Քրիսը, թակարդի վրա տառապելով, մի եղբորից մյուսին նայեց՝ մինչև հոգու խորքը ցնցված թակարդն ընկած տղայի անխռովությամբ և նրա եղբոր մոլեգին նվիրվածությամբ:

– Ուլիսե՛ս,– ասաց Հոմերը,– ի՞նչ կուզես՝ քեզ բերեմ:

– Հայրիկին,– պատասխանեց Ուլիսեսը:

– Ըհ, – շփոթվեց Հոմերը,– հայրիկից բացի՝ ի՞նչ կուզես՝ բերեմ:

– Մարկուսին,– ասաց թակարդն ընկած տղան:

– Մարկուսը բանակում է,– առարկեց Հոմերը:– Պաղպաղակ կամ դրա նման մի բան կուզե՞ս:

– Չէ,– պատասխանեց Ուլիսեսը,– մենակ Մարկուսին:

– Ի՞նչ անեմ. Մարկուսը բանակում է,– ասաց Հոմերն ու Քովինգթոնին դարձավ:

– Ոնց գիտեք՝ թոպե առաջ եղբորս էդ սարքից հանեք:

– Մի՛ թոպե,– ասաց Մեծ Քրիսը:– Եղբորդ պինդ բռնիր, տղա: Պահիր, որ չընկնի,– նա թակարդի հետ մենամարտի էր բռնվել:

– Ախր թակարդը *կոտրում* ես,– գոչեց պարոն Քովինգթոնը:– Դրա նման երկրորդն աշխարհում չկա՛, չի՛ կարելի կոտրել: Թողեք՝ գնամ, Սաֆըրթին գտնեմ: Մեծ նորարարություն եք ավերում: Պարոն Սաֆըրթին տարեց մարդ է, կարող է սրա նման երկրորդը չհասցի ստեղծել: Տղային բան չի պատահել, իրեն լավ է զգում:

Գնամ՝ պարոն Սաֆըրթիին բերեմ: Մի երկու ժամից ավել չի տևի:

– Մի երկու ժամի՞ց, – բղավեց Հոմերը: Նա աշխարհի ամենամահացու ոչնչացնող արհամարհանքով Քովինգթոնին նայեց, ապա շուրջբուրդը՝ խանութին:

– Էս խանութից քարը քարին չեմ թողնի, – ասաց ու Մեծ Քրիսին դարձավ:

– Ջարդե՛ք, մի սպասեք: Ջարդեք, թող գնա:

Մեծ Քրիսն անցավ մատների, ձեռքերի, ուսերի ու մեջքի բուր մկանների ուժով թակարդը քաշքշելուն, և սարքը կամաց-կամաց սկսեց նրա ուժին տեղի տալ:

Ուլիսեսը վիզը մի կերպ ոլորած նրան էր նայում: Վերջապես Մեծ Քրիսին հաջողվեց թակարդն ավերել:

Ուլիսեսն ազատված էր:

Հոմերը, ամուր բռնած, որ հանկարծ բերանքսիվայր հատակին չընկնի, եղբորը կամացուկ ցած դրեց: Խանութի առջև խռնված բազմությունը ծափ տվեց, բայց ոչ այնքան որոտընդոստ, որովհետև առաջնորդ չունեին ու անկազմակերպ էին: Ուլիսեսը փորձեց ոտքերը շարժել: Քանի որ կարծես ամեն ինչ բարեհաջող էր վերջացել, Հոմերը եղբորը գրկեց: Ուլիսեսը Մեծ Քրիսին նայեց: Աժդահան համարյա ուժասպառ էր:

– Թակարդի համար մեկը պիտի վճարի, – ասաց պարոն Քովինգթոնը: – Ջարդուխուրդ եք արել: Մեկը պիտի հատուցի:

Մեծ Քրիսը, առանց մի խոսք ասելու, գրպանից փող հանեց, քսան դոլար հաշվեց ու նետեց վաճառատեղանին: Հետո ձեռքն Ուլիսեսի գլխին դրեց՝ մազերը խառնեց, ոնց որ մեկ-մեկ հայրերն են անում: Հետո շրջվեց ու խանութից դուրս եկավ:

Հոմերը եղբորը դիմեց:

– Հը՛, ո՞նց ես: Ո՞նց ես ամեն անգամ հաջողացնում սուկալի բաների մեջ ընկնել,– Հոմերը ջարդուխուրդ ընկած թակարդին նայեց ու աքացի տվեց:

– Զգու՛յշ մնա, տղաս,– ասաց ոստիկանը:– Նոր սարք է, չես իմանա՝ ինչի է ընդունակ:

Պարոն Քովինգթոնը փողոց գնաց՝ հավաքվածների հետ խոսելու:

– Խանութն արդեն բացել ենք: Քովինգթոնի խանութը ամեն առավոտ ութին բացվում է, երեկոյան յոթին փակվում, բացի շաբաթ օրերից: Շաբաթ մինչ տասը բաց ենք: Կիրակի չենք աշխատում: Ամեն ինչ սպորտի համար. ձկնորսական պիտույքներ, զենք, զինամթերք, մարզանքի պարագաներ: Տիկնա՛յք և պարոնայք, խանութը բաց է, համեցե՛ք:

Մարդիկ կամաց ցրվեցին:

Նախքան հեռանալը՝ Հոմերը ոստիկանին դիմեց:

– Եղբորս թակարդից ազատող մարդն ո՞վ էր:

– Առաջին անգամ էի տեսնում,– պատասխանեց ոստիկանը:

– Մեծ Քրիսն էր,– ասաց Ուլիսեսը:

– Անունը Մեծ Քրի՞ս էր:

– Ըհը՛, Մեծ Քրիս:

Այդ պահին Օգին վազելով խանութ հասավ: Ուլիսեսին նայեց:

– Վա՛յ, ազատվեցի՞ր, Ուլիսես՛ս: Ո՞նց դուրս եկար:

– Մեծ Քրիսն էր,– ասաց Ուլիսեսը:

– Ո՞նց դուրս եկավ, Հոմե՛ր,– հարցրեց Օգին:– Ի՞նչ պատահեց: Թակարդն ի՞նչ արեցիք: Մորուքով մարդն ու՞ր գնաց: Էս ընթացքում ինչե՞ր են եղել:

– Ամեն ինչ կարգին է, Օ՛գի,– հանգստացրեց Հոմերը:– Պարոն Սպանգլերին ասածս փոխանցեցի՞ր:

– Հա, փոխանցեցի, բայց էստեղ ի՞նչ արեցիք: Թակարդը կաշխատի՞: Գազան կբռնի՞:

– Թակարդը, – ասաց Հումերը, – ապուշ բան էր: Գազան բռնելու իմաստը ո՞րն է, եթե հետո միջից հանել չես կարողանալու: Պարո՛ն Քովինգթոն, էդ ջարդոնի համար Մեծ Քրիսից քսան դուլար գանձելը խարդախություն էր:

– Վաճառքի գինը քսան դուլար է, – արդարացավ պարոն Քովինգթոնը:

– Վաճառքի գի՞նը, – կրկնեց Հումերը: – Ինչե՞ր եք խոսում: Գնացի՞նք, Օ՛գի, էստեղ էլ անելիք չունենք: – Տղաները, երեքով, խանութից դուրս եկան ու հեռագրատան կողմը քայլեցին: Պարոն Սպանգլերը, սեղանին հենված, դուրս էր նայում: Պարոն Գրոգանը հեռագիր էր ուղարկում: Հումերը արգելավազքի ժամանակ պարոն Բայֆիլդի հետ բախվելուց հետո առաջվանից ավելի էր կաղում:

– Պարո՛ն Սպանգլեր, – ասաց, – եղբայրս է՛ Ուլիսեսը: Հենց նոր Քովինգթոնի խանութի ինչ-որ թակարդից ազատեցի՞նք: Մեծ Քրիսն ազատեց: Ստիպված էր թակարդը ջարդել: Հետո էլ ստիպված ջարդածի համար քսան դուլար վճարեց: Սա էլ Օգին է: Ձեզ ասել է, չե՞, թե ինչի եմ ուշանում:

– Բան չկա, – հանգստացրեց Սպանգլերը: – Մի քանի հեռագիր է կուտակվել, որ պիտի հասցնես, բայց մեծ բան չի: Ասում ես՝ եղբա՛րդ է, Ուլիսես՛սը:

Ուլիսեսը, հեռագրիչի սեղանի հետևը կանգնած, վերջինիս աշխատանքին էր հետևում: Օգին կանգնել էր դիմացն ու սարքի չխկչխկոցն էր լսում:

– Մի քանի կանչ էլ նոր ենք ստացել: Մոտիկները ես հասցրի: Երկուսը դարակին են: Նախ դրանք հասցրու, հետո հեռագրերը կտանես:

– Լավ, սը՛ր,– ասաց Հումերը:– Իսկոյն: Ներեք ինձ, պարո՛ն Սպանգլեր: Կարելի՞ է՝ Ուլիսեսն ինձ էստեղ սպասի: Հետո, որ ազատվեմ, երևի կարողանամ հեծանվով տուն տանել:

– Ես կհետևեմ,– ասաց Սպանգլերը:– Դու գործիդ գնա:

– Հա, սը՛ր,– ասաց Հումերը,– Շնորհակալ եմ, սը՛ր: Ուլիսեսը չի խանգարի: Հանգիստ կնայի: Ոչ մի բան չի անի:

Հումերը, կաղալով, որքան կարող էր՝ արագ, հեռագրատնից դուրս գնաց:

14. ԴԱՅԱՆԱՆ

Մինչ Օգին կանգնած հեռագրիչ սարքի ճարճատոցն էլ լսում, Ուլիսեսն էլ ավելի մոտեցավ պարոն Գրոգանին:

– Էն ի՞նչ է,– սարքը ցույց տալով՝ պարոն Սպանգլերին հարցրեց Օգին:

– Պարոն Գրոգանը հեռագիր է ուղարկում:

– Ու՛ր:

– Նյու Յորք:

– Էստեղից մինչև Նյու Յո՛րք: Ո՞նց է հասնում:

– Լարերի միջով:

– Հեռագրասյուների վրայի՞: Իթակայից մինչև Նյու Յորք սյունե՛ր կան:

– Իհարկե:

– Ուղարկողներն ովքե՛ր են:

– Ով ասես:

Լրագրավաճառ տղան մի փոքր մտածեց ու ասաց.

– Ես ոչ մի անգամ հեռագիր չեմ ստացել: Ի՞նչ պիտի անեմ, որ ստանամ:

– Մեկնումեկը պիտի ուղարկի:

- Չէ, ես չեմ ստացել: Ո՞վ ուղարկեր:
- Ընկերդ կամ ուրիշ ծանոթ մեկը:
- Իմ բոլոր ծանոթներն էստեղ՝ Իթակայում են:– Սարքի վրա կանաչ լույս վառվեց:– Էն կանաչ լույսն ինչի՞ համար է,– հարցրեց Օգին:
- Նշան է տալիս, որ գիծն ազատ է,– պատասխանեց Սպանգլերը:
- Ի՞նչ գիծ:
- Սան Ֆրանցիսկոյինը:
- Հա՛,– ասաց Օգին:– Հեռագրատար դառնալու համար քանի՞ տարեկան պիտի լինես:
- Տասնվեց:
- Ես ինը տարեկան եմ: Ինչի՞ պիտի էդքան սպասեմ: Տասնյոթ տարեկանում նավատորմ են զինվորագրվում:
- Օրենք է:
- Ամեն տեղ անընդհատ օրենքներն ինչի՞ են պետք,– հարցրեց Օգին:
- Սպանգլերը սկսեց հեռագրերը ջոկ-ջոկ դարակները դնել:
- Էս մեկը,– ասաց,– նրա համար է, որ փոքրերը չաշխատեն:
- Ինչու՞ որ:
- Որ չհոգնեն: Որ խաղալու ժամանակ ունենան: Էս օրենքը երեխաներին պաշտպանելու համար է:
- Ինչի՞ց պաշտպանելու:
- Ո՞նց ասեմ,– պատասխանեց Սպանգլերը,– գործատերերից, որոնք փողի դիմաց երեխաներին չարչարում են:
- Լավ, իսկ եթե երեխան չի՞ ուզում, որ իրեն պաշտպանեն: Եթե երեխան ուզու՞մ է աշխատել:
- Մեկ է՝ օրենքը պաշտպանում է:

– Իսկ քանի՞ տարեկան պիտի դառնաս, որ էլ երեխա չլինես: Քանի՞ տարեկան պիտի դառնաս, որ ինքդ քեզ պաշտպանես, կամ ինչ աշխատանք ուզես՝ անես:

– Հեռագրատար լինելու համար՝ տասնվեց:

– Բա ո՞նց է Հոմերն աշխատում: Երբվանի՞ց տասնվեց տարեկան դառավ:

– Հոմերը, – պատասխանեց Սպանգլերը, – բացառություն է: Ճիշտ է՝ տասնչորս տարեկան է, բայց ամուրկել է ու բանհմաց:

– Այսինքն ո՞նց՝ բանհմաց, – չհասկացավ Օգին: – Հեռագրատար դառնալու համար պիտի բանհմաց լինես:

– Պարտադիր չի, բայց չի խանգարի: Ինչ էլ դառնալու լինես՝ բանհմացությունը չի խանգարի:

– Բա ո՞նց են իմանում՝ մարդը բանհմաց է, թե՞ չէ:

Սպանգլերը նայեց տղային ու ժպտաց:

– Հետը մի քիչ խոսելով:

– Էդ թղթերն ինչու՞ եք ջոկ-ջոկ դարակները դնում:

– Սրանք երեկվա հեռագրերն են: Քաղաք-քաղաք դասավորում ենք, որ հաշիվ պահենք: Օրինակ՝ էս մեկը Սան Ֆրանցիսկո ենք ուղարկել՝ դնում են էստեղ: Էս դարակի բոլոր հեռագրերը Սան Ֆրանցիսկո ուղարկվածներն են:

– Էդ էս էլ կարող են անել, – ասաց Օգին: – Հեծանիվ քշել էլ գիտեմ, բայց չունեմ: Որ հեծանիվ ունենամ, կարո՞ղ են հեռագրատար դառնալ, պարո՞ն Սպանգլեր: Ինձ գործի կընդունե՞ք:

Սպանգլերն աշխատանքը դադարեցրեց ու տղային նայեց:

– Կընդունեմ, Օ՛գի, բայց հիմա չէ: Ինչ տարեկանը շատ փոքր է: Գոնե տասներեք-տասնչորս որ դառնաս՝ հա:

– Իսկ տասներկու՞,– հարցրեց Օգին:

– Միգուցե: Ինչու՞ ես ուզում հեռագրատար աշխատել:

– Որ բան սովորեմ: Հեռագրեր կարդամ: Նոր բաներ իմանամ,– նա մի պահ լռեց,– բայց մինչև տասներկուսը դեռ երեք տարի կա:

– Երեք տարին էնքա՛ն արագ կանցնի:

– Ինձ չի թվում: Արդեն էնքա՛ն եմ սպասել:

– Շուտով կտեսնես,– ասաց պարոն Սպանգլերը:– Չես հասցնի աչքդ թարթել՝ տասներկու տարեկան կդառնաս: Ազգանունդ ի՞նչ է:

– Գոթլիբ: Անունս Օգասթ Գոթլիբ է:

Հեռագրատան կառավարիչն ու լրագրավաճառ տղան իրար նայեցին: Երկուսն էլ շատ լուրջ էին:

– Օ՛գաստ Գոթլիբ,– ասաց Սպանգլերը,– խոսք եմ տալիս. հենց որ ժամանակը գա...

Սպանգլերը խոսքն ընդհատեց՝ տեսնելով, որ Դայանա Սթիդ անունով երիտասարդ մի կին վազքով ներս ընկավ: Հեռագրատան առջև՝ փողոցում, մեքենան էր կանգնած, որով եկել էր: Ղեկին համազգեստավոր վարորդ էր նստած: Սպանգլերին տեսնելով՝ կինը անսովոր՝ մի քիչ թատերական, բայց հաճելի ձայնով գոչեց.

– Ա՛յ թե ուր ես, սիրելի՛ս,– և բուռն զգացմունքով վրան նետվեց, փարվեց ու համբուրեց այնքան անհավատալի կրքոտությամբ, որ կարող էր իրական լինել կամ իրականից մի բան էլ ավելի:

– Սպասի՛ր,– ասաց Սպանգլերը: Նա կնոջը հետ տարավ և ձեռքի՝ թղթերի զամբյուղը գրասեղանին դրեց: Կինը նորից փորձեց գրկել, բայց նա նորից հեռացրեց:

– Սպասի՛ր,– ասաց:– Ծանոթացի՛ր. Օգասթ Գոթլիբն է:

– Բարև, փոքրիկ տղա,– ժպտաց կինը:

– Օգասթ, – ասաց Սպանգլերը, – սա օրիորդ Սթիդն է:
– Բարև ձեզ, – պատասխանեց Օգասթը, ապա, չինանալով, թե էլ ինչ ասի, առաջարկեց.

– Լրագիր կուզե՞ք, տիկին:

– Իհարկե, անպայման, – պատասխանեց Դայանան: – Ի՞նչ արժե:

– Հինգ սենթ, – ասաց Օգին: – Մեր տեղականն է: Ձիարշավի արդյունքները, բորսայի վիճակը, ռազմաճակատից վերջին լուրերը:

– Տուր, խնդրեմ, – ասաց Դայանան:

Օգին հինգսենթանոցը վերցրեց, ապա գործույթա տեսքով վարպետորեն լրագիրը ծալեց՝ նախ ծնկին խփեց, երկու տակ արեց, երկտակ արած՝ էլի ծնկին խփեց ու ծալեց և արդյունքը զարմանալի հնարք ցուցադրած աճապարարի տեսքով օրիորդ Սթիդին մեկնեց:

– Շնորհակալ եմ, տիկին, – ասաց: – Չորեքշաբթի օրերը *Սաթըրդեյ իվնինգ փոսթ* եմ վաճառում: Քաղաքով մեկ:

– Ապրե՛ս, – ասաց Դայանան: – Հուսով եմ՝ կարգին վաստակում ես:

– Ըհը, միջինում լրագրերից ու հանդեսներից օրը քառասուն սենթ: Տոնավաճառին էլ օջարակ եմ ծախում:

– Մի խոսքով՝ պարապ չես մնում, – ասաց Դայանան իր կարկաչուն զվարթ ձայնով:

– Չէ, – համաձայնվեց Օգին, – ու լիքը նոր բան եմ սովորում: Համ էլ մարդկանց լավ եմ ճանաչում: – Թվում էր, թե Օգին հասցրել էր Դայանային էլ լավ ճանաչել ու տպավորությունից գոհ էր:

– Հավատում եմ, – ասաց վերջինս, – չեմ էլ կասկածում, – ապա Սպանգլերին դարձավ: – Ջանգիդ էի սպասում, սիրելիս: Ասել էիր, չէ՞, որ ժամը հինգին կգանգես:

– Ճիշտ որ,– ասաց Սպանգլերը:– Մոռացել էի: Օգիհետ խոսքով էի ընկել: Ուզում է հեռագրատար դառնալ, ես էլ խոստացա, որ հենց մեծանա՝ գործի կընդունեմ:

– Շատ շնորհակալ եմ, պարո՛ն Սպանգլեր,– ասաց Օգին և շրջվեց, որ դուրս գա:– Կհանդիպե՛նք: Մնաք բարով, տիկի՛ն: Ցտեսություն, Ուլիսե՛ս:

– Ուլիսե՛ս,– զարմացավ Դայանան,– ի՛նչ էլ հարմար անուն է՝ Իթակացի Ուլիսեսը: Սիրելիս, շտապում եմ: Ուզում էի հարցնել՝ ընթրիքի կգաս, չէ՞: Անպայման պիտի գաս:

Սպանգլերն ուզեց ինչ-որ բան ասել, բայց ջահել կինն ընդհատեց.

– Չէ, չէ՛, խոսրացել ես: Խոսք ես տվել: Հայրիկն ու մայրիկը երազում են քեզ տեսնել: Ուղիղ ժամը յոթին:

– Մի բոպե լսիր,– ասաց Սպանգլերը:

– Սիրելի՛ս,– ընդհատեց Դայանան,– հո ինձ նորից չե՛ս դառնացնի:

Սպանգլերը հոգոց հանեց:

– Ախր կյանքումս երկու անգամ եմ ընթրիքի եղել: Երկու անգամն էլ վախից մեռնում էի, ու հե՛չ լավ չէի զգում:

– Մայրիկին ու հայրիկին շատ կսիրես: Հատուկ հագնվել պետք չի: Ուղղակի երեկոյան հագուստ:

– Երեկոյան հագու՛ստ: Ես առավոտ երեկո նույն հագուստն եմ հագնում:

– Ուղիղ յոթին,– ասաց Դայանան: Հետո սեղանին Սպանգլերի խաշած ձուն նկատեց:– Վա՛յ, սիրելիս, ի՛նչ սիրուն բան է: Ի՞նչ է:

– Չու: Բախտ է բերում:

– Ի՛նչ անուշն է,– հիացավ Դայանան:– Պիտի վազեմ, սիրելիս,– և հրաժեշտ տալով՝ այտը համբուրեց ու դուրս վազեց:

Պարոն Գրոգանը հեռագիր ուղարկելը վերջացրեց:
Սպանգլերն Ուլիսեսին նրա մոտ տարավ:

– Վիլլի, – ասաց, – գնամ՝ Քորբեթի բարում մի բաժակ
խմեմ: Սա Ուլիսես Մաքուլին է՝ Հոմերի փոքրիկ եղբայ-
րը: Փորձություն է տարել՝ թակարդն էր ընկել: Ուլիսես՝
սա պարոն Ուիլյամ Գրոգանն է:

– Մենք հին ընկերներ ենք, – պատասխանեց պարոն
Գրոգանը: – Ինչքան ժամանակ է՝ ինձ էր նայում:

– Մի բաժակ խմեմ՝ շուտ հետ գամ, – ասաց Սպանգ-
լերը:

15. ԱՆԿՅՈՒՆՈՒՄ ԿԱՆԳՆԱԾ ԱՂՋԻԿԸ

Սպանգլերը շրջվեց, որ գնա, բայց հեռագրասար-
քի ձայնի վրա կանգ առավ: Զանգի հետ միաժամանակ
ժապավենի վրա ուղերձը սկսեց տպվել: Նա սեղանին
մոտեցավ ու ժապավենը զննեց:

– Իթակայի գինու գործարանից է, – ասաց Գրոգա-
նին, – ծայրամասից: Հոմերը որ գա, կպահես, մինչև
«Արևհաս չամիչի» երեկոյան հեռագիրը ստանանք:
Արդեն երկուսից երկու անգամ «Վեսթերն յունիոնից»
առաջ է անցել: Էս անգամ էլ հաղթեց՝ կարող է՝ մի ամիս
լավ գործ ունենանք: Երեկ դրանցից քանի՞ հեռագիր
ենք ստացել:

– Վաթսունյոթ, – ասաց Գրոգանը:

– Վաթսունութից վաթսունյոթը, – ասաց Սպանգլե-
րը, – կտաս առաջինը եկած տղային: Երկրորդին մեկը
կտաս: Լավ, գնամ՝ խմելիքս խմեմ:

Բայց հիմա էլ մի ուրիշ հեռագիր սկսեց գալ. *կետր-
կետր-կետր, գիծ, կետր-կետր-կետր*: Հեռագրատան կառա-
վարիչն արդեն առաջին *կետր-կետրից* հասկացավ, որ
«Արևհաս չամիչից» է, բայց քանի որ Հոմերը դեռ չէր
եկել, Գրոգանին բղավեց.

– *հնքս* կգնամ: *Ես* նրանից շուտ կհասնեմ:

Մինչ հեռագիրը երեք անգամ կրկնվել ու գրանցվել էր, Սպանգլերը, մարդկանց բազմությունը ֆուտբոլային հարձակվողի արագությամբ դեսուդեն հրելով՝ արդեն հարևան թաղի կեսին էր հասել: Նրա դիմաց՝ երեսուն ոտնաչափ հեռու, փողոցի անկյունում երկչոտ տեսքով մի միայնակ աղջիկ էր կանգնած՝ տասնութ-տասնինը տարեկան, հոգնած, հանդարտ և այսպիսով գեղեցիկ: Ավտոբուսի էր սպասում, որ աշխատանքից հետո տուն հասնի: Անգամ վազքի մեջ՝ Սպանգլերը չէր կարող չնկատել աղջկա մեկուսիությունը, որն իրեն, ինչքան էլ շտապելիս լիներ, բացարձակ՝ *ամեն հնչից* կտրված թվաց: Առանց ձև թափելու, առանց կանխավ մտածելու, նա արագ, անբռնազբոս մոտեցավ աղջկան, մի պահ վարանեց ու այտը համբուրեց: Նախքան հեռանալը ասաց միակ խոսքերը, որ հնարավոր էր ասել.

– Աշխարհի ամենասիրուն աղջիկն եք:

Ու առաջ վազեց: Երբ երեք-երեք հաղթահարում էր «Արևհաս չամիչ» ընկերության աստիճանները, «Վեսթերն յունիոն» ընկերության առաքիչն ուշացած (որովհետև ի տարբերություն Սպանգլերի՝ առաքումները սպասարկող աշխատակիցն ազդանշաններն անգիր չգիտեր)՝ նոր, շենքի առջև հեծանվից էր իջնում: Իսկ երբ Սպանգլերն արդեն գրասենյակ էր մտնում, «Վեսթերն յունիոնի» առաքիչը դեռ վերելակի մոտ կանգնած էր:

Սպանգլերը, կարծես ինքն էլ դեռ առաքիչ լիներ, ներկայացավ «Արևհաս չամիչի» ընդունարանում նստած կնոջը.

– «Փոստալ թելեգրաֆ» ծառայություն՝, – ասաց:

– Թո՛ւմ, – ուրախացած ու զարմացած բացականչեց ծեր կինը, – մենակ չասես, թե նորից *առաքիչ* ես դարձել:

– Մեկ առաքիչ եղածը միշտ առաքիչ կմնա,– պատասխանեց Սպանգլերը՝ ասածի անհեթեթությունը բանի տեղ չդնելով: Ապա ժպտաց ու ասաց,– բայց նախևառաջ ձեզ տեսնելու համար եմ եկել, տիկի՛ն Բրոքինգթըն:

«Վեսթերն յունիոնի» առաքիչը գրասենյակ մտավ:

– «Վեսթերն յունիոն» ընկերություն՛ն,– ներկայացավ նա:

– Է՛հ, Հարրի,– հառաչեց ծեր կինը,– նորից քեզնից առաջ են անցել,– և մեն–մի հեռագիր պարզեց,– հուսանք՝ մյուս անգամ բախտդ կբերի:

«Վեսթերն յունիոնից» եկած տղան, փոքր–ինչ շվարած ու շփոթված, որ այս անգամ էլ են իրենից առաջ անցել, այն էլ ով–ով՝ «Փոստալ թելեգրաֆի» կառավարիչը, պարզած մինուճար հեռագիրը վերցրեց ու «Ամեն դեպքում շնորհակալ եմ, տիկի՛ն Բրոքինգթըն» ասելով՝ հեռացավ:

Ծեր կինը Սպանգլերին հեռագրերի մի ամբողջ խուրձ մեկնեց:

– Առ, Թո՛մ: Երկրով մեկ հարյուր քսանինը գիշերային հեռագիր, բոլորը վճարված: Բա ձեր նոր առաքիչն ու՛ր մնաց:

– Հոմե՛րը,– հարցրեց Սպանգլերը,– Հոմեր Մաքուլիի՞ն նկատի ունեք: Էս առավոտ մեր գործերը մի քիչ հետ ընկան, որովհետև փոքրիկ եղբորը՝ Ուլիսեսին, բան էր պատահել. Քովինգթոնի խանութում թակարդն էր ընկել: Ստիպված գնացել էր, որ ազատի: Բայց սրանից հետո շուտ–շուտ կհանդիպեք,– նա կնոջը ժպտաց:– Հեռագրերի համար շնորհակալ՛ եմ:

Մեկուսի կանգնած աղջկա անկյանը հասնելով՝ մի պահ կանգ առավ. «Ա՛յ հենց էստեղ էր կանգնել: Երևի էլ երբեք չտեսնեմ: Թե տեսնեմ էլ՝ նույնը չի լինի, ինչ

որ էս առավոտ»: Ու քթի տակ սուլելով՝ ճանապարհը շարունակեց: Քորբեթի բարի հակառակ մայթին հասնելով՝ դաշնամուրի ձայն լսեց. հին՝ «*Ինձ միայն դու ես պեպք*» վալսն էին նվագում: Մոտեցավ դռանը, ականջ դրեց, հետո ներս մտավ: Վաճառասեղանի մոտ ինքը պարոն Քորբեթն էր կանգնած: Իսկույն գործի անցավ. Սպանգլերի համար նրա մշտական՝ ջրով բացված վիսկին լցրեց: Վերջինս հայացքն ուղղեց դաշնամուրի մոտ կանգնած զինվորներին:

– Գործերդ ո՞նց են, Ռա՛լֆ, – հարցրեց:

– Ոչինչ, – ասաց Քորբեթը: – Մեծ մասն անգործ-անփող զինվորներ են: Ամեն վճարած բաժակի դիմաց երեքն իմ հաշվին են լցնում:

– Քեզ էդ ծախսը թույլ տալ կարո՞ղ ես, – հարցրեց Սպանգլերը:

– Չէ, բայց ի՞նչ արած: Գուցե պատերազմը վերջանա՛ մի մասը հետ բերեմ: Բարի աշխատողի գործն իմը չէ: Առաջվա Ջահել Քորբեթն են մնացել:

Հեռագրատան կառավարիչն ու նախկին չեմպիոն բռնցքամարտիկը մի հինգ թույլ խոսեցին, և Սպանգլերը գրասենյակ վերադարձավ:

16. ՏՈՒՆԴԱՐՁ

Առաքումների սեղանի մոտ Մաքուլի եղբայրներին տեսավ՝ Հոմերին և Ուլիսեսին: Հեռագրատարը հեռագրերը ծալում՝ ծրարներն էր դնում, իսկ փոքր եղբայրը լուռ հիացմունքով նայում էր նրան:

– «Արևհաս չամիչի» հեռագրերը *դու՛ք* ստացաք, պարո՛ն Սպանգլեր, – հարցրեց Հոմերը:

– Սեփական ձեռքով, – պատասխանեց Սպանգլերը: – Հարյուր քսանինը հեռագիր, – նա հեռագրերի խուրձն առաքչին ցույց տվեց:

– Հարյուր քսանի՞նը: Բա ո՞նց առաջինը հասար:

– Վազքով:

– «Վեսթերն յունիոնի» առաքչից վազելո՞վ եք առաջ ընկել:

– Է հա, ի՞նչ մեծ բան է: Դեռ ճանապարհի կեսին էլ կանգնել եմ՝ գեղեցկությանն ու անմեղությանը հիացմունքի տուրք մատուցելու:– Հոմերն ասածից բան չհասկացավ, բայց Սպանգլերը շարունակեց,– Ուլիսեսին տուն տար:

– Հա, սը՛ր,– ասաց Հոմերը:– Գուգենհայմից կանչ ունենք: Մեր ճամփի վրա է. Ուլիսեսին տուն կտանեմ, հետ կգնամ էնտեղ, հետո Իթակայի գինու գործարան, էնտեղից՝ Ֆուլիի խանութ ու հետ կգամ: Մի րոպե չի տևի:

Սպանգլերը նայեց, թե հեռագրատարը ոնց դուրս եկավ ու եղբորը խնամքով հեծանվին՝ իր առջևը նստեցրեց: Հետո ինքն էլ թամբին ցատկեց ու փողոցն ի վար սլացավ: Երբ համարյա քաղաքից դուրս էին եկել, Ուլիսեսը շրջվեց, որ մեծ եղբորը նայի: Այդ օրն առաջին անգամ նրա դեմքին Մաքուլիների ժպիտը շողաց:

– Հոմե՛ր,– ասաց:

– Հը՞:

– Ես երգել գիտեմ:

– Ապրե՛ս:

Ուլիսեսը սկսեց երգել. «Հիմա մի երգ կերգենք»: Լռեց, հետո նորից սկսեց. «Հիմա մի երգ կերգենք», բայց էլի լռեց:

– Էդ երգ չի, էդ երգի մի փոքր կտոր է: Հիմա ինձ լսիր ու հետս երգիր,– մեծ եղբայրը երգեց, իսկ փոքրիկը նրան էր լսում:

*Լաց մի՛ լինի, սիրուն փրկին, է՛լ հերիք փխրենք:
Քենթուկիի մասին արի հին երգը երգենք
Ու կարոտով՝ հեռվում թողած մեր փունը հիշենք:*

– Էլի՛ երգիր, Հումեր,– խնդրեց Ուլիսեսը:

– Լավ,– ասաց Հումերն ու էլի երգեց, բայց այս անգամ փոքր եղբայրն էլ էր մեծի հետ երգում, և երգելու ընթացքում Ուլիսեսը բեռնատար գնացքը տեսավ, և էլի սևամորթը՝ գնացքից կախված, ժպտալով ձեռքով էր անում: Սա Ուլիսես Մաքուլիին՝ աշխարհի երեսին նրա չորս տարվա կյանքի ընթացքում պատահած ամենահիասքանչ բանն էր:

Ինքն էլ ձեռքով արեց, ու մարդը *պատրաստանեց*, մեկ չէ՛ մի քանի անգամ: Այս բանը մինչև կյանքի վերջը՝ ինչքան ապրեր, չէր մոռանա:

Մաքուլիների տան մոտ Հումերը հեծանվից իջավ ու զգուշորեն եղբորն իջեցրեց: Երկուսով մի պահ կանգնեցին՝ մայրիկի տավիղը, քրոջ դաշնամուրն ու հարևանի՝ Մերի Արինայի երգը լսելու:

– Լավ,– ասաց Հումերը,– հիմա տանն ես: Նե՛րս գնա: Ես դեռ գործ ունեմ:

– Գնում ես աշխատանքի՞,– հարցրեց Ուլիսեսը:

– Հա,– ասաց Հումերը,– բայց երեկոյան կգամ: Գնա տուն, Ուլիսե՛ս:

Փոքր եղբայրը սկսեց մուտքի մի քանի աստիճանը բարձրանալ, իսկ մեծը հեծանիվ նստեց ու սլացավ փողոցն ի վար:

17. ԵՐԵՔ ԶԻՆՎՈՐ

Երբ Սթիդների ընտանիքը հյուրերով՝ ներառյալ Թոմաս Սպանգլերը, ընթրիքի էր նստած, Իթակայում տեղատարափ անձրև էր սկսվել: Բեսս Մաքուլին և

Մերի Արինան, անձրևանոցով ու կրկնակոշիկ հագած, հեռագրատուն էին գնում՝ Հոմերին ճաշ տանելու: Բարի մոտով անցնելիս դռանը կանգնած մի երիտասարդ վավաշոտ հայացքով նրանց աչքով արեց:

– Բարև, սիրու՛ն, – ասաց Բեսսին, – էդ ու՛ր:

Բեսսը չլսելու տվեց, Մերիին սեղմվեց, ու շարունակեցին քայլել: Հիմա էլ դիմացից երեք ջահել զինվորներ հայտնվեցին: Նրանք վազվզում, խաբս էին տալիս՝ ինչ-որ անհայտ խաղ խաղալով, որը հորինել էին ազատ երեկոյից ու թարմացնող անձրևից արբած: Բարձր հռիռալով՝ իրար հետևից էին ընկնում, քաշքշում ու մականուններով իրար կանչում. Չա՛ղ, Տեխա՛ս, Չի՛: Բայց Մերիին ու Բեսսին տեսնելով՝ երեք տղաները ակնածանքով քարացան: Հերթով մինչև գետին խոնարհվեցին: Աղջիկներին սա դուր եկավ, բայց չգիտեին, թե ինչ պիտի անեին՝ ոնց պիտի վարվեին:

– Սովորական զինվորներ են, Բե՛սս, – շշնջաց Մերին, – տուն-տեղից հեռու:

– Արի կանգնենք, – ասաց Բեսսը:

Չաղ կոչված զինվորը, որպես խմբի պատգամախոս, առաջ եկավ:

– Ամերիկուհի՛ օրիորդներ, – ասաց, – մենք՝ հզոր բանակի զինվորներս, ձեր խոնարհ ծառան, այսօր և հուսով ենք՝ վաղն էլ այստեղ գտնվողներս, շնորհակալ ենք ձեզ՝ սիրուն դեմքերի համար, որ բալասան են պապակ օրերին ու, անձրևը վկա՝ ոչ միայն: Թու՛յլ տվեք ընկերներիս ու ձեր երկրպագուներին ներկայացնել: Սա Տեխասն է՝ Նյու Ջերսիից: Սա Չին է՝ Տեխասից: Ես Չաղն եմ՝ Քաղցից, ու ամենից ավելի գեղեցիկ ամերիկուհիների ընկերակցություներն են քաղցում: Ի՞նչ կասեք:

– Ի՞նչ ասենք, – պատասխանեց Բեսսը: – Մենք կինո էինք գնում:

– Կինո՛, – թատերական վերամբարձությամբ գոչեց Չաղը:– Թույլ կտա՞ք, մենք՝ զինվորներս, այսօր այստեղ, վաղը՝ այլուր, ձեզ՝ ամերիկուհի օրիորդներին, կինո ուղեկցենք: Այսօրն այսօր է, վաղը՝ վաղը, բայց վաղն արդեն զորանոցում ենք լինելու՝ սոսկալի, թեև անխուսափելի պատերազմին մասնակից: Այս երեկո՛՛ն՝ ռազմաբեմից հեռու ու միայնակ, քանզի Իթական մեր տունը չէ, ձեզ եղբայր կլինենք: Ամերիկյան զինվորի հագուստս Իլինոյս կոչվող հպարտ երկրի վայրագ Չիկագո քաղաքի խուլ փողոցներից եմ կրում: Այսօր ինձ մտովի հարազատ վայրերս դարձրեք, եղբայրներիս՝ իրենցը, քանզի բոլորս մի ընտանիք ենք, թեկուզ եթե պատերազմը չլիներ՝ դժվար հանդիպեինք:– Չաղ կոչվածը գլուխ տվեց ու ձիգ կանգնեց:– Ի՞նչ կասեք:

– Գի՞ժ է, – շշուկով հարցրեց Մերին:

– Չէ, – պատասխանեց Բեսսը, – ուղղակի միայնակ է:

Արի՛ հետները կինո գնանք:

– Լավ, – համաձայնվեց Մերին, – բայց *դու* ասա: Ես չգիտեմ՝ ո՞նց ասեմ:

Բեսսը զինվորին նայեց ու ժպտաց:

– Լավ, ուղեկցե՛ք, – ասաց:

– Շնորհակալ՛ ենք, ամերիկուհի օրիորդներ, – պատասխանեց Չաղը ու թևը Բեսսին առաջարկեց, որ թևանցուկ անի:

– Բայց նախ պիտի եղբորս ճաշ տանեմ: Հեռագրատուն:

– Հեռագրատու՞ն, – կրկնեց Չաղը:– Ուրեմն ես էլ հեռագիր կուղարկեմ, – նա ընկերներին դարձավ:– Դու՛, Տեխա՛ս:

– Նյու Ջերսի հեռագիր ուղարկելն ի՞նչ արժի, – հարցրեց Տեխասը:

– Ստացողի բերկրանքից էժան, – ասաց Չաղը: – Դու՞, Չի՛:

– Ըհը՛, – պատասխանեց Չին, – երևի կուզեմ մայրիկիս, Ջոյին ու Քեթիին հեռագիր ուղարկել: Քեթին ընկերուհիս է, – ասաց Բեսսին:

– Աշխարհի ամեն աղջիկ *իմ* ընկերուհին է, – ասաց Չաղը, – բայց քանի որ բոլորին հեռագիր չեմ կարող ուղարկել, միայն մեկին կուղարկեմ: Միլիոն հեռագիր՝ միակ աղջկան:

Երբ երեք զինվորներն ու երկու օրհորդները ներս մտան, գրասենյակում մենակ Գրոգանն էր: Տարեց մարդը կանգնեց:

– Ես Հոմերի քույրն եմ՝ Բեսսը: Ճաշ եմ բերել, – աղջիկն ամանը սեղանին դրեց:

– Ձեր եղբայրը շուտով կգա, օրհորդ Մաքուլի, – ասաց Գրոգանը: – Ճաշը կփոխանցեմ:

– Երիտասարդներն էլ ուզում են հեռագիր ուղարկել:

– Բարի, տղանե՛ր, – ասաց Գրոգանը: – Համեցե՛ք, մատիտ ու ձևաթուղթ վերցրեք:

– Ձերսի հեռագիր ուղարկելն ի՞նչ արժի, – հարցրեց Տեխասը:

– Քսանհինգ բառը հիսուն սենթ, գումարած չնչին հարկը: Հասցեն ու անունը հաշիվ չեն: Հեռագիրը վաղն առավոտ կստանան:

– Հիսուն սե՛նթ: Վատ չի, – Տեխասն անցավ հեռագիր գրելուն:

– Սան Անթոն ուղարկե՛լն ինչ կարժենա, – հարցրեց Չին:

– Ձերսիի կես գինը: Սան Անտոնիոն Իթակային ավելի մոտ է:

Չաղ կոչվող զինվորը գրելը վերջացրեց ու հեռագիրը Գրոգանին մեկնեց: Տարեցը, կարդալով, բառերը հաշվեց:

ԷՄՄԱ ԴԱՆԱՅԻՆ,
ՉԻԿԱԳՈՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ,
ՉԻԿԱԳՈ, ԻԼԻՆՈՅՍ

ԻՄ ՍԻՐԵԼԻ, ՍԻՐՈՒՄ ԵՄ, ԿԱՐՈՏԵԼ ԵՄ, ՄԻՇՏ ՔՈ
ՄԱՍԻՆ ԵՄ ՄՏԱԾՈՒՄ: ԳՐԻՐ, ՍՈՎՈՐԻՐ, ՍՊԱՍԻՐ:
ՀԱՎԱՏԱ: ԻՆՁ ՄԻ՛ ՄՈՌԱՑԻՐ: ՉՄՈՌԱՆԱՍ, ՈՐՈՎՀԵՏԵՎ
ԵՍ ՔԵԶ ԵՐԲԵՔ ՉԵՄ ՄՈՌԱՆԱ:

ՆՈՐՄԱՆ

Նրանից հետո Տեխաս անունով զինվորն *իր* հեռա-
գիրը Գրոգանին տվեց:

ՏԻԿԻՆ ԷԴԻԹ ԱՆԹՈՆԻԻՆ
1702 ½ ՈՒԻԼՄԻՆԳԹՈՆ ՓՈՂՈՑ
ՔԱՂԱՔ ՋԵՐՍԻ, ՆՅՈՒ ՋԵՐՍԻ

ՍԻՐԵԼԻ ՄԱՅՐԻ՛Կ, Ո՞ՆՑ ԵՄ: ԵՄ ԼԱՎ ԵՄ: ՆԱՄԱԿԴ ՈՒ
ԹԶԻ ՉԻՐԸ ՄՏԱՑԱ, ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՄ: ՉԱՆՀԱՆԳՍՏԱՆԱՍ:
ՍԻՐՈՒՄ ԵՄ ՔԵԶ: ԼԱ՛Վ ՄՆԱ:

ԲԵՌՆԱՐԴ

Ապա Ձի անունովն *իր* հեռագիրը հանձնեց:

ՏԻԿԻՆ ՀԱՐՎԻ ԳԻԼՖՈՐԴԻՆ
211 ՍԱՆԴԻՖՈՐԴ ԲՈՒԼՎԱՐ
ՍԱՆ ԱՆՏՈՆԻՈ, ՏԵԽԱՍ

ԲԱՐԵՎ, ՄԱ՛: ՈՒՋԵՑԻ ԱՐԵՎԱՅԻՆ ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ
ԻԹԱԿԱՅԻՑ ՔԵԶ ԲԱՐԵՎ ԱՍԵԼ, ԱՓՍՈՍ ԱՆՁՐԵՎՈՏ
Է, ՀԱ՛-ՀԱ՛: ԲՈԼՈՐԻՆ ԲԱՐԵՎՆԵՐ: ՋՈՅԻՆ ԱՍԱ, ԹԵ
ՈՒՋԻ՛ ՀՐԱՑԱՆՍ ՈՒ ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐԸ ԹՈՂ ՎԵՐՑՆԻ:
ՀԱՍԲՈՒՐՈՒՄ ԵՄ:

ՔՎԵՆԹԻՆ

Ջինվորներն ու աղջիկները գնացին, իսկ պարոն
Գրոգանը վերադարձավ սարքի մոտ՝ հեռագրերն
ուղարկելու:

Երբ երեք զինվորներն ու երկու ամերիկուհի օրիորդ-
ները կինոթատրոն մտան ու շարքերով անցնում՝ իրենց

տեղերն էին փնտրում, էկրանին Անգլիայի պրեմիեր մինիստր պարոն Ուինսթոն Չերչիլը՝ մեր թվարկության 1942 թվականին, Կանադայի պառլամենտի առջև հանդես էր գալիս: Մինչև նստեցին, պարոն Չերչիլը մեկը մյուսի հետևից երեք բան էր ասել՝ ոչ միայն Կանադայի պառլամենտի, այլև Իթալիայի կինոթատրոնի հասարակության աճող հրճվանքին արժանանալով: Չաղ անունով զինվորը Բեսս Մաքուլիի կողմը թեքվեց:

– Սա, – ասաց, – մեր ժամանակների մեծագույն մարդկանցից մեկն է ու ականավոր ամերիկացի:

– Կարծում էի, թե Չերչիլն անգլիացի է, – առարկեց Չին:

– Իհարկե, – պատասխանեց Չաղը, – համ էլ ամերիկացի, – ու փոքր-ինչ սեղմվեց մյուս կողքին նստած Մերի Արինային: – Անչափ շնորհակալ եմ, որ թողեցիք ձեզ հետ կինո գալ, – ասաց: – Երբ կողքիդ զինվորի փոխարեն աղջիկ է նստած, մի տեսակ ավելի լավ ես զգում: Էլ *բույրը* չասած:

– Մեկ է՝ կինո էինք գալիս, – ասաց Մերին:

Այդ պահին էկրանին Ֆրանքլին Դելանո Ռուզվելթ անունով մարդը՝ Միացյալ Նահանգների նախագահը հայտնվեց և Հայդ Փարքի իր տնից խոսքով ազգին դիմեց: Նրա խոսքն ինչպես միշտ հանդիսավոր էր ու հումորով համեմված: Հինգ ջահելներն աշխատում էին բառ բաց չթողնել: Խոսքի ավարտին էկրանով մեկ Ամերիկայի դրոշը ծածանվեց, ու հանդիսատեսը ծափահարեց:

– Ամեն անգամ դրոշը տեսնելիս կոկորդս սեղմվում է, – ասաց Բեսսը: – Առաջ Վաշինգթոնին ու Լինքոլնին էր հիշեցնում, հիմա եղբորս՝ Մարկուսին: Ինքն էլ է զինվոր:

– Հա՛, բանակում եղբա՛յր ունես, – հարցրեց Չաղը:

– Վերջին անգամ որ լուր ստացանք՝ Հյուսիսային Կարոլինայում մի տեղ էր, – պատասխանեց Բեսսը:

Այս նույն միջոցին Մարկուսը նստած էր Հյուսիսային Կարոլինայի փոքրիկ մի քաղաքի՝ «Ռմբարկու» կոչվող գինետանը: Նրա հետ ընկերն էր՝ Թոբի Ջորջը, և երեք ուրիշ զինվորներ: Նա «Երազ» կոչվող երգն էր նվագում, իսկ Թոբին երգում էր: Երբ երգը վերջացավ, Թոբին Մարկուսի կողքին նստեց ու խնդրեց մի քիչ էլ հթակայից ու Մաքուլիների ընտանիքից պատմել: Մարկուսը պատմում էր, իսկ հթակայում Թոմաս Սպանգլերն ու Դայանա Սթիդը կինոթատրոն էին մտնում: Ֆիլմն ուր որ է՝ պիտի սկսվեր: Նստեցին: Էկրանին դեռ պատկեր չկար, միայն բառեր էին գրվում՝ նախ ֆիլմի ու ֆիլմը ստեղծելուն մասնակցած մարդկանց անունները: Հետո բառերի անվերջ շարանը անհամար մարդկանց երախտիքի խոսքեր էր ասում: Այս ամենն ուղեկցվում էր չափազանցված վեհաշուք երաժշտությամբ, որ հատուկ այս առիթով էին ստեղծել:

Սպանգլերն ու Դայանան Էկրանին շատ մոտիկ էին նստած՝ երրորդ շարքում, Բեսսից, Մերիից ու երեք զինվորներից տասը շարք առաջ: Տեղերը ճիշտ շարքի կենտրոնում էին, իսկ շարքում մյուս նստածները՝ փոքրիկ տղաներ: Էկրանին մաս-մաքուր շողացող հատակով հիվանդանոցի ընդունարան պատկերվեց: Սրահի ծայրի բարձրախոսից բուժքրոջ դառն ու կոպիտ ձայնն էր գալիս:

– Բժիշկ Քա՛վենո, – կանչեց ձայնը, – վիրահատարա՛ն: Բժիշկ Քա՛վենո, վիրահատարա՛ն:

Այս բառերը լսելուն պես Թոմաս Սպանգլերը ոտքի կանգնեց: Մի քանի բաժակ կոնծել էր: Երեկոն թեև հաճելի, բայց բավական ծանր էր նստել վրան՝ ծանր

ակնկալիքներով հղի, բայց որոնք արդեն անցել գնացել էին, ու կարծես է՛լ կարիք չունեիր իրեն շարքում նստած երեխաների պես պահել:

– Ու՛Ֆ, աչքիս՝ սխալ ֆիլմ ենք եկել, – ասաց ու Դայանայի ձեռքից բռնեց: – Գնացի՛նք:

– Ախր ֆիլմը դեռ չի վերջացել, սիրելի՛ս, – շշնջաց Դայանան:

Սպանգլերը, ձեռքից բռնած, քարշ տվեց:

– *Ինձ* համար վերջացել է: Գնացի՛նք:

Այդ պահին անցնում էին մի փոքրիկ տղայի կողքով, որը ինքնամոռաց հայացքը էկրանին էր հառել:

– *Դու* հաստատ դրախտ կգնաս, – տղային ասաց Սպանգլերը, հետո Դայանային դարձավ: – Գնացի՛նք, ի՞նչ ես տղայի տեսադաշտը փակել:

– Ինչ ասացի՞ք, պարո՛ն, – հարցրեց տղան:

– Դրա՛խտ ասացի, – պատասխանեց Սպանգլերը, – *դու* դրախտ կգնաս:

– Ժամը չէի՞ք ասի:

– Չէ, ժամացույց չունեմ, բայց դեռ շուտ է:

– Շնորհակալ եմ, սը՛ր:

Սպանգլերն ու Դայանան միջանցքին էին հասել:

– Քորբեթի բարը գնանք, – ասաց Սպանգլերը, – մի երկու բաժակ խմենք, դաշնամուր լսենք, հետո տուն կգնաս, – նա դեմքով դեպի էկրանը շրջվեց ու հետ-հետ քայլեց:

– Բժիշկ Քավենոյի՛ն տես, – ասաց, – արքանով ուզում է առջևի ատամներից մեկը հանել:

Կինոթատրոնի ճեմասրահում Դայանան հարցրեց.

– Գիտեմ, որ ինձ սիրում ես, չէ՞, Թո՛մ:

– Սիրու՛մ, – կրկնեց Սպանգլերը: – Թե չէ ինչու՞ էի կինո բերելու:

Նրանք փողոց դուրս եկան ու ինչքան կարող էին՝ շենքերին կպած, որ անձրևից չթրջվեն, Քորբեթի բարի կողմը քայլեցին:

18. ՀԵՌԱԳԻՐԸ

Երբ Սպանգլերն ու Դայանան անձրևի տակ Քորբեթի բարն էին վազում, Հոմեր Մաքուլին, մինչև ոսկորները թրջված, հեռագրատան առաջ հեծանվից իջավ ու ներս մտավ: Առաքումների սեղանին նայեց. կանչեր չկային, բայց մի հեռագիր կար, որ պետք էր տեղ հասցնել:

Պարոն Գրոգանը հեռագիր տպելը վերջացրեց ու ոտքի կանգնեց:

– Տղա՛ս, քույրդ քեզ ճաշ է բերել:

– Իզուր էլ բերել է: Մտածում էի՝ գնամ, մեզ երկու կարկանդակ առնեմ:– Հոմերը ճաշի ամանը վերցրեց ու ասաց,– երկուսիս կհերիքի: Պարո՛ն Գրոգան, հետս կճաշե՞ք:

– Շնորհակալ եմ, տղա՛ս: Սոված չեմ:

– Որ սկսեք ուտել, գուցե ախորժակը բացվի՞:

– Չէ, շնորհակալ եմ: Ո՛նց ես թրջվել: Տես՝ էնտեղ անձրևանոցներ ունենք:

– Անձրևի տակ էի ընկել,– Հոմերը բրդուճը կծեց,– էս բրդուճն ուտեմ ու հեռագիրը տանեմ:– Լուռ ծամեց, հետո ծեր հեռագրիչին նայեց,– ի՞նչ հեռագիր է:

Պարոն Գրոգանի լռությունից հասկացավ, որ էլի մահվան լուր է: Ծամելը դադարեց ու մի կերպ կուլ տվեց:– Երանի էդ հեռագրերից էլ չտանեի,– ասաց:

– Գիտեմ,– ասաց պարոն Գրոգանը: Մի կես ընկած ձայն չէր հանում: Հոմերը, կիսատ բրդուճը ձեռքին, չէր շարժվում:– Քույրդ մի շատ սիրունիկ աղջկա հետ էր եկել:

– Մերին է՝ Մարկուսի ընկերուհին: Պատերազմից հետո պիտի ամուսնանան:

– Հետները երեք զինվոր էր եկել: Հեռագրեր ուղարկեցին:

– Հա՞: Կթողնե՞ք՝ տեսնեմ:

Պարոն Գրոգանը ուղարկված հեռագրերի տրցակը ցույց տվեց: Հոմերը վերցրեց ու մեկ առ մեկ կարդաց: Հետո ծեր հեռագրիչին նայեց:

– Պարո՛ն Գրոգան, – ասաց, – երբ մեկն էսպես մեռնում է, կապ չունի՝ ծանոթ է, անծանոթ է, կամ ընդհանրապես կյանքումդ չտեսած մեկը, նրանց մահը իզուր չէր, չէ՞:

Ծեր հեռագրիչը միանգամից չպատասխանեց: Հետո, կարծես ասելու այնքան բան կար, որ առանց օգնության ասել չէր կարողանալու, գնաց ու գրասեղանի դարակից շիշը հանեց: Մի մե՛ծ կում խմեց, նստեց ու սկսեց ծանրութեթև անել, թե ինչ ասի:

– Ես երկար եմ ապրել, – ասաց, – բայց հարցիդ պատասխանը չգիտեմ, տղա՛ս: Չգիտեմ էլ, թե պատասխան կա՞: Հարցդ ջահելի հարց է: Ես արդեն ծեր եմ:

Պարոն Գրոգանը սովորականից ավելի ծանր հառաչեց, հետո գրպանից թղթի պատառիկ հանեց ու տվեց առաքչին:

– Էս մի խնդրանքս էլ կկատարե՞ս, դեղատուն կգնա՞ս:

Հոմերը գլխով արեց ու արագ դուրս եկավ:

Պարոն Գրոգանը մենակ մնաց: Կանգնած՝ տարօրինակ ջերմությամբ ու մի տեսակ զայրույթախառը սիրով շուրջը նայեց: Համարյա դանդաղ օձիքը բռնեց, կարծես շատ երկար էր սպասել վրա հասած ցավին, որն է՛լ իրեն չէր զարմացնի: Կամաց գնաց՝ քարացած նստեց աթոռին, մինչև ծակող ցավը թուլացավ:

Հեռագրատարը դեղատնից հետ եկավ ու ձեռքի փոքրիկ տուփը նրան տվեց:

– Ջոն, – ասաց ծերունին:

Հոմերը թղթե բաժակը լիքը ջուր լցրեց՝ տարավ: Ծերունին տուփից երեք հաբ հանեց, բերանը գցեց ու Հոմերի բաժակն առնելով՝ կուլ տվեց:

– Ապրես, տղա՛ս:

Հոմերը հետևեց, որ տեսնի՝ լա՞վ է, հետո առաքումների սեղանից մահվան հեռագիրը վերցրեց: Մի պահ անշարժ կանգնած՝ հեռագրին էր նայում: Հետո ծրարը բացեց, որ կարդա, նորից ծրարը դրեց, սունձեց ու, շրջվելով, գրասենյակից դուրս՝ անձրևոտ փողոցը գնաց: Ծեր հեռագրիչը աթոռից վեր կացավ ու նրա հետևից փողոց դուրս եկավ: Մայթին կանգնած՝ նայում էր, թե ոնց է տղան անձրևի ու քամու դեմ մաքառում: Ներսում հեռագրասարքը սկսեց աշխատել, բայց նա չլսեց: Հեռախոսը զանգեց, բայց էլի չլսեց: Զանգում էր ու զանգում, բայց միայն յոթերորդ զանգի վրա շրջվեց ու ներս մտավ:

19. ԱԼԱՆԸ

Տասնհինգ րոպե անց Հոմերը մի մեծ, գեղեցիկ հին տան առաջ հեծանվից իջավ: Տանը հյուրեր կային: Լուսամուտից չորս ջահել պարող զույգերի տեսավ: Հոմերը սարսափից սրտխառնոց զգաց: Մոտեցավ դռանն ու երաժշտությանն ականջ դրեց: Մատը տարավ զանգին, բայց ձեռքը թուլացած ընկավ:

– Հիմա գրասենյակ կգնամ, – ասաց ինքն իրեն, – ու գործից կազատվեմ:

Նստեց շենքի աստիճանների, որ մտածի: Երկար նստեց, հետո վեր կացավ, նորից մոտեցավ դռանը ու զանգի կոճակը սեղմեց: Դուռը բացվեց, և մի ջահել

կնոջ տեսավ: Նախքան կհասցնեք հասկանալ, թե ինչ է անում՝ հետ վազեց իր հեծանվի մոտ: Կինը շեմքին կանգնեց ու բղավեց.

– Ի՞նչ պատահեց, տղա՛:

Հոմերը հեծանվից իջավ ու նորից հետ վազեց:

– Ներեցեք, – վրա տվեց, – տիկին Քլաուդիա Բոֆրերի համար հեռագիր ունեմ:

– Իհարկե, մայրիկի ծննդյան օրն է, – ասաց կինն ու ներս մտավ: – Մայրի՛կ, – կանչեց, – քեզ հեռագիր են բերել:

Աղջկա մայրը դռանը մոտեցավ:

– Հաստա՛տ Ալանից է, – ասաց: – Ներս համեցեք, երիտասա՛րդ: Եկեք՝ ձեզ կարկանդակ հյուրասիրեմ:

– Չէ, տիկի՛ն, շնորհակալ եմ, – ասաց Հոմերը, – պիտի աշխատանքի վերադառնամ: – Նա հեռագիրը պարզեց, ու կինը վերցրեց, ասես հերթական շնորհավորական հեռագիր լիներ:

– Բայց նախ մի բան կուտեք ու մի բաժակ կխմեք, – նա Հոմերի թևից քաշեց ու տոնական սեղանին մոտ տարավ: Հյուրերը շարունակում էին պարել: – Ծննդյանս օրն է, – ասաց: – Աստվա՛ծ, ի՛նչ ծեղ եմ: Ինձ երջանկություն մաղթիր, տղա՛ս: – Նա Հոմերին մի բաժակ պունջ հրամցրեց:

– Մաղթում եմ... – սկսեց ասել Հոմերը, բայց շարունակել չկարողացավ: Բաժակը դրեց սեղանին ու տնից դուրս փախավ: Մայրը շուրջը նայեց, սենյակի ծայրը գնաց, որ մյուսները չտեսնեն, իսկ աղջիկը, նրան նայելով՝ հակառակ ծայրը գնաց: Հոմերը, հեծանվին հեծած, անձրևի տակով հեռագրատուն էր սլանում: Հյուրասենյակի պատին՝ մոր աչքերի առջև, սիրուն, շիկահեր տղայի շրջանակած լուսանկար էր: Նկարի տակ՝ գրած. «Ալանից՝ մայրիկին: Իմ տասներկուերորդ

տարեդարձի օրը»: Մայրը հեռագիրը բացեց ու կարդաց: Չայնապնակը շարունակում էր «Իմ սիրելի սևահերը» երգը նվագել, իսկ երջանիկ հյուրերը շարունակում էին պարել: Աղջիկը սենյակի հակառակ ծայրից մորը նայեց: Հետո խելագարի պես վազեց ու նվագարկիչն անջատեց:

– Մայրի՛կ, – գոչելով՝ մոր կողմը նետվեց:

20. ՖԻԼՄԻՑ ՀԵՏՈ

Ֆիլմը վերջացել էր. հանդիսատեսը թատրոնից դուրս էր գալիս: Փողոցում Բեսսը Չաղ կոչվող զինվորին դարձավ ու ասաց.

– Մենք պիտի տուն գնանք:

– Շնորհակալ ենք, ամերիկուհի օրիորդներ, – ասաց Չաղը: Մնաք բարով ասելու ժամանակն էր, բայց չգիտես ինչու մնացել էին փողոցում կանգնած, կարծես ուր որ է՝ մի հրաշալի անհայտ բան էր կատարվելու: Չաղ անունով զինվորը Բեսսից Մերիին նայեց, հետո անմիջական ու անմեղ համբուրեց՝ նախ մեկին, հետո մյուսին:

Այս բանի վրա Չի անունով զինվորը գոչեց.

– Բա մե՞նք: Մենք հաշիվ չե՞նք: Մենք էլ ենք զինվոր, – ու ինքն էլ աղջիկներին համբուրեց: Հետո՝ Տեխասը: Փողոցով անցնող մի կին դատապարտող հայացքով նրանց նայեց: Աղջիկները շրջվեցին ու փախան: Չի անունով զինվորը ցատկեց ու Տեխաս անունովին հրեց, սա էլ ցատկեց ու Չաղ անունովին հրեց, ու մեկը մյուսին ձայն տալով՝ կողքի փողոցով ցած վազեցին:

– Յա-հու՛ւ, – բղավեց Չին:

– Ի՛նչ լեզու ունես, – Չաղին գոռաց Տեխասը, – *n'ug* ես խոսում:

Չաղը հաճույքից քրքջաց:

– Այ թե Կոնգրես կընկնե՛մ, – բղավեց նա: – Դրանց մի երկու լավ խոսք կասեմ:

– Յիփի-յու՛, – բղավեց Ջին, – *Առաջ անցեք, խեղճ հորթուկներ, ցավը ձերն է՝ իմը չէ...*

Ջինվորները սկսեցին իրար վրայով ցատկել, հավալլա խաղալ ու թաց, մութ փողոցով շարժվել՝ ո՛վ իմանա, ճակատագրով սահմանած ո՛ր փորձությանն ընդառաջ: Աստված պահապան:

21. ՀՈՎՏԻ ՉԵՄՊԻՈՆԸ

Երբ հեռագրատարը Բոֆրերների տնից հեռագրատուն հասավ, անձրևը կտրվել էր, լուսինը շողում էր, ու քամին երկնքով փուչ՝ բարակած ու արդեն սպիտակած ամպերն էր քշում: Սարսափելի հոգնած՝ կաղալով գրասենյակ մտավ:

– Ոտքդ ի՞նչ է եղել, – հարցրեց Գրոգանը: – Ամբողջ օրը կաղում ես:

– Հեչ, բան չկա, – ասաց Հոմերը: – Էլի հեռագրեր կա՞ն:

– Ոչ մի հատիկ: Շուտով տուն կգնաս: Հիմա ասա, տեսնեմ. ոտքդ ի՞նչ է եղել:

– Ոնց որ երկու հարյուր մետր արգելավագքը վազելիս ոլորել եմ կամ դրա նման մի բան: Պարոն Սպանգլերը Հովտի չեմպիոնն է եղել, ես էլ կուզեի մի օր դառնալ: Բայց էս տարի դժվար ստացվի, – Հոմերը մի երկու անգամ ծունկը ծալեց-բացեց: – Քնելուց առաջ Սլոընի քուրքը կքսեմ: Շա՞տ է երևում:

– Չէի ասի, թե շատ, բայց մի քիչ նկատելի է, – ասաց պարոն Գրոգանը: – Հեծանիվ քշել կարողանու՞մ ես:

– Հա, – պատասխանեց Հոմերը, – էս ոտքը բարձրացնելիս մի քիչ ցավում է, աշխատում եմ ուժը աջ ոտքիս տալ: Մեկ-մեկ ձախս ոտնակից հանում՝ կախում

եմ, որ մի քիչ հանգստանա: Երևի ջլերս եմ վնասել.
քսուք կքսեմ:

Ու լռեց: Ծեր հեռագրիչն ասաց.

– Խոսիր, տղա՛ս, էլի խոսիր:

– Ը՛հ, ուզում եմ, բայց չգիտեմ՝ ինչից սկսեմ, – ասաց
Հումերը:– Քանի էս գործին չէի անցել, բան չգիտեի:
Շատ բան գիտեի, բայց բան չգիտեի, ու երևի չեմ էլ
իմանա: Երևի ոչ ոք էլ չի իմանա: Թե մի բան իմանամ՝
ես կիմանամ: Ուզում եմ ու միշտ կուզեմ ու կփորձեմ,
բայց ի՞նչ իմանա: Ո՞նց է հնարավոր ամեն ինչ ճիշտ
հասկանալ, որ խելքին մոտ ստացվի:

– Ի՞նչ ասեմ, – պատասխանեց պարոն Գրոգանը:–
Չգիտեմ, բայց լավ է, որ որոշել ես փորձել:

– Պիտի փորձեմ, – ասաց Հումերը:– Չգիտեմ՝ ուրիշ-
ները ոնց, ու չգիտեմ՝ ինձ կհասկանաք, թե չէ, բայց
ես մարդկանց *տեսած* տղան չեմ, դրանից բացի՝ համ
էլ ուրիշն եմ, երևի ավելի լավը: Մեկ-մեկ *ինքս էլ* կար-
գին չեմ հասկանում՝ ոնց: Ձեզնից բացի՝ ուրիշներին
կամաչեի ասել, պարո՛ն Գրոգան, բայց կտեսնեք՝ մի օր
կգնամ գործի ու աշխարհի բոլոր երեխաների համար
լավ գործեր կանեմ: Բոլորի՛ ով ինչ հոգս էլ որ ունենա:
Չգիտեմ, թե էդ լավ գործերն ի՞նչ կլինեն, բայց հաս-
տատ *մի լավ բան* կլինեն: Այսինքն՝ արժանի:– Հումե-
րը ոտքը շարժեց, որ տեսնի՝ խոսելու ընթացքում չի՞
լավացել: Չէր լավացել:– Էս վիճակն ինձ դուր չի գալիս,
պարո՛ն Գրոգան: Չգիտեմ ինչու՝ ուզում եմ, որ ավելի
լավացնեմ: Երևի որովհետև մտածում եմ, որ *ճիշտ կլինի՛*
լավանա: Դպրոցում հիմար-հիմար բաներ եմ ասում,
բայց դասատուներին խանգարելու համա՛ր չէ: Ոնց որ
բոլորն իրենց կորցրած լինեն, ոնց որ ամեն ինչ թարս
լինի, դրա համար էլ ուզած-չուզած մեկ-մեկ հիմար
բաներ եմ ասում: Ախր մարդ ողջ լինելուց պիտի գոնե

մի հաճույք ստանա: Երևի ինչքան էլ ուզեմ՝ բարեկիրթ չեմ դառնա: Եթե մտքումս չկա, քաղաքավարի վարվել չեմ կարողանա:

Նա ոտքն էլի շարժեց ու այնպես ասաց, կարծես իրենը չլիներ. – Չէ, մի բան կարգին չի, – ու ժամացույցին նայեց: – Էհ, պարո՛ն Գրոգան, կեսգիշերն անց հինգ է, երևի տուն գնամ: Չնայած քունս ոչ էլ տանում է, վաղն էլ շաբաթ է: Առաջ շաբաթ օրերն ամենաշատն էի սիրում, բայց էլ չէ: Երևի վաղը գամ: Մեկ էլ տեսար՝ օգնելու բան եղավ, – նա ճաշի ամանը սեղանից վերցրեց: – Հիմա է՛լ մի բրդուճ չեիք ուտի, պարո՛ն Գրոգան:

– Հիմա որ մտածում եմ, – ասաց ծեր հեռագրիչը, – չեմ հրաժարվի, տղա՛ս: Ոնց որ սովածացա, – նա ամանից մի բրդուճ առավ ու կծեց: – Մայրիկիդ շնորհակալություն կասես:

– Մեծ բան չի:

– Չէ, անպայման կասես:

– Հա, սը՛ր, – ասաց Հումերն ու գրասենյակից դուրս եկավ:

22. ԿՈՂՈՊՈՒՏԸ

Գրասենյակում մենակ մնալով՝ պարոն Գրոգանը, ժամանակին՝ ջահել, ժամանակին՝ աշխարհի ամենաարագաշարժ հեռագրիչը, սկսեց իր սեղանը կարգի բերել: Նա քթի տակ մի մեղեդի էր երգում՝ ջահել օրերից մտքում մնացած: Քանի ծերունին գործ էր անում, Թոմաս Սպանգլերը՝ Քորբեթի բարից աշխուժացած, ալկոհոլից և գլխապտույտ ու հանդիսավոր երջանկության խառնուրդից փոքր-ինչ գինովցած՝ մտավ գրասենյակ ու իր սեղանին մոտեցավ: Ծեր հեռագրիչին նայեց, բայց բան չասաց: Նրանք առանց խոսքի էլ իրար հասկանում էին: Հաճախ կարող էին մեկ-երկու ժամ

հանգիստ աշխատել՝ առանց մի բառ փոխանակելու: Սպանգլերը հեռագրերի կույտի վրայից բախտավոր ձուն վերցրեց ու սկսեց դրա ապշեցուցիչ համաչափությունը զննել: Հետո ձուն տեղը դրեց և գորովանքով աղջկան հիշելով՝ շուրթերին նրա շուրթերի ձևը տվեց ու նրա խոսքերն ասաց.

– *Գիտեմ, որ ինձ սիրում ես, չէ՞:*

Ծեր հեռագրիչը կառավարչին նայեց:

– Բան ասեցի՞ր, Թոմ:

– Վիլլի, ի՞նչ կմտածեիր աղջկա մասին, եթե ամեն անգամ քեզ տեսնելիս ասեր. «Գիտեմ, որ ինձ սիրում ես, չէ՞»:

– Երևի կմտածեի՝ տեսնես ինչի՞ց որոշեց:

– Ես էլ նույնը, – Սպանգլերը ձեռքով երեսը շփեց՝ կարծես երջանկությունից ազատվելու համար, ու ասաց, – ի՞նչ նոր բան կա:

– Բացի անձրևից՝ ոչ մի:

– Նոր առաքիչը ո՞նց է: Լավ է աշխատում:

– *Իմ տեսածներից ամենալավը: Դու՞ ինչ կարծիքի ես:*

– Էն ընդհանրաց, որ ներս մտավ ու աշխատանք ուզեց, հավանեցի, – պատասխանեց Սպանգլերը: – *Գիտեմ, որ ինձ սիրում ես, չէ՞*, – նա ոչ մի կերպ ուշքի չէր գալիս Դայանա Սթիդի՝ այս չնչին բառերն ասելու ձևից: – Տուն գնա, Վիլլի: Ես դուռը կկողպեմ: Դեռ մի քիչ գործ ունեմ:

– Տու՞ն, – կրկնեց պարոն Գրոգանը: – Թոմ, եթե դեմ չես, կուզեի մի քիչ հետդ նստել: Գործից հետո քնելուց բացի անելիք չունեմ, քունս էլ չի տանում: Երևի վախեցած եմ:

– Վախենալու բան չկա, Վիլլի: Առանց քեզ էս գրասենյակում տեղս չեմ գտնի: Դեռ հարյուր տարի կապրես ու հարյուր տարի ամեն օր աշխատանքի կգաս:

– Շնորհակալ եմ, – ասաց ծեր հեռագրիչը: – Էսօր էլի սիրտս ցավեց: Չէ, լուրջ բան չկա: Ջգում էի, որ պիտի ցավի: Տղան էստեղ էր: Ուղարկեցի, որ դեղ բերի: Օրենքով ամեն օր պիտի բժշկի գնամ, բայց վախենում եմ: Օրենքով պիտի հանգստանամ:

– Բժիշկները ամենագետ չեն, բայց վատ չէր լինի, որ հանգստանայիր:

– Էհ, կհանգստանամ, Թո՛ւմ, շուտով շա՛տ երկար կհանգստանամ::

– Գնա Քորբեթի բարը՝ մի բաժակ բան խմիր: Դաշնամուր լսիր: Որ հետ գաս, հին օրերից կխոսենք: Վոլինսկուց, Թոմլինսոնից ու պառավ Դավենփորթից: Լարերը ձգող Հարրի Բուլից, գիժ Ֆրեդ Մաքինթայրից ու հրաշալի Ջերի Բիթիից: Գնա, Վի՛լլի: Մի բաժակ խմիր՝ արի, որ անցած օրերը հիշենք:

– Ինձ խմել *խորհուրդ* չեն տալիս, Թո՛ւմ:

– Գիտեմ՝ *խորհուրդ* չեն տալիս, բայց գիտեմ, որ *սիրում* ես: Մեկ-մեկ ավելի լավ է՝ մարդ սիրածն անի, քան խորհուրդ տվածը: Էնպես որ՝ գնա ու մի բաժակ խմիր:

– Ոնց ասես, Թո՛ւմ, – պարոն Գրոգանը գրասենյակից դուրս եկավ:

Փողոցում մի երիտասարդ երեք-չորս րոպե հեռագրատան առաջով հետ-առաջ էր անում ու ներս նայում: Վերջը ներս եկավ ու սեղանի առջև կանգնեց: Սպանգլերը նկատեց ու մոտեցավ:

– Ո՞նց ես, – հարցրեց Սպանգլերը՝ տղային հիշելով: – Կարծում էի, արդեն վաղուց Փենսիլվանիայի՝ տան ճանապարհին կլինես: Մայրիկդ փողն ուղարկել է: Պարտքդ տալու համար կարիք չկար, որ գայիր:

– Ես պարտք տալու համար չեմ եկել, – ասաց երիտասարդը: – Եկել եմ էլի վերցնելու: Ու ոչ էլ խնդրելու եմ եկել, այլ հենց *վերցնելու*:

– Քեզ ի՞նչ պատահեց, – հարցրեց Սպանգլերը:

– Ա՛յ թե ինչ, – ասաց երիտասարդը, բաճկոնի աջ գրպանից դողացող ձեռքով ատրճանակ հանեց ու պահեց Սպանգլերի վրա: Վերջինս, դեռ գինու ազդեցությունից չսթափված, ոչինչ չէր հասկանում:

– Ձե՛զ տեսնեմ: Ինչքան փող կա՝ բերե՛ք: Բոլորն իրար են սպանում: Թող ես էլ ձեզ սպանեմ: Թող *ինքս* էլ սպանվեմ, ի՞նչ: Գլուխս տաք է, բայց *ինձ* փորձանք պետք չէ. փողը տվեք, շու՛տ:

– Փողն էսպես թե էնպես կտայի, – ասաց Սպանգլերը, – բայց ո՛չ որովհետև վրաս ատրճանակ ես պահել: Որովհետև կարիքն ունեւ: Ա՛ռ: Ամբողջն է: Վերցրու, գնացք նստիր ու գնա տուն: Գնա, ուր գնալու ես: Ոստիկանություն չեմ կանչի: Գումարն ինքս կփակեմ: Էստեղ մոտ յոթանասունհինգ դոլար է:

Նա սպասեց, որ տղան փողը վերցնի, բայց տղան չէր շարժվում:

– Կատակ չեմ անում, – ասաց Սպանգլերը: – Փողը վերցրու՝ քեզ պետք է, ու գնա: Դու հանցագործ չես, ոչ էլ էնքան հիվանդ ես, որ չբուժվես: Մայրդ քեզ է սպասում: Էս փողն ինձնից նրան նվեր: Վերցնելով գող չես դառնա: Հանգիստ վերցրու, զենքդ գրպանդ դիր ու գնա տուն: *Դեն գցիր* զենքդ: Քեզ ավելի լավ կզգաս:

Երիտասարդը զենքը գրպանը դրեց: Ձենքը պահած ձեռքը դողացող շուրթերին դրեց:

– Ճիշտ կանեի, որ դուրս գայի ու ինքս ինձ սպանեի, – ասաց:

– Հիմար բաներ մի՛ խոսիր, – ասաց Սպանգլերը: Նա փողը հավաքեց ու տղային մեկնեց: – Ա՛ռ: Եղածն էս է: Վերցրու ու տուն գնա, էդքան բան: Կուզես՝ զենքդ ինձ թող: Փողը քոնն է: Հա, *քոնն* է, եթե ուզում էիր զենքով վերցնել: Գիտեմ, թե ինչ ես զգում. ինքս էլ եմ նույնը

զգացել: Բոլորս էլ նույնը զգացել ենք: Գերեզմանոցներն ու բանտերը լիքը լավ ամերիկացի տղաներ են, որոնց բախտը չի բերել, որոնք հանցագործ չեն: Ա՛ռ, – ասաց մեղմ ձայնով, – առ ու տուն գնա:

Երիտասարդը զենքը գրպանից հանեց, սեղանին դրեց ու Սպանգլերի կողմը հրեց: Սա վերցրեց ու գցեց դարակը:

– Չգիտեմ՝ ով եք, – ասաց տղան:– Ինձ հետ ոչ ոք երբեք էսպես չի խոսել: Ջենքն ինձ պետք չի, փողն էլ չեմ վերցնի ու *տուն* կգնամ: Մի կերպ էստեղ եմ հասել, մի կերպ էլ տուն կհասնեմ:– Նա հազաց, հետո շարունակեց, – չգիտեմ, թե մայրիկս երեսուն դուլարը որտեղից էր ճարել: Գիտեմ, որ հազիվ է ծայրը ծայրին հասցնում: Մի մասը խմիչքի եմ տվել, մի մասով խաղացել եմ, ու...

– Ներս արի՛ նստիր, – ասաց Սպանգլերը: Մի ընդամենը վարանելուց հետո տղան Սպանգլերի սեղանի կողքի աթոռին նստեց: Սպանգլերը նստեց սեղանի մոտ:

– Քեզ ի՞նչ է եղել, – հարցրեց:

– Չգիտեմ, – ասաց երիտասարդը, – երևի թոքախտ ունեմ: Վստահ չեմ, բայց եթե չունեմ էլ, վարածս կյանքից *պիպի որ ունենայի*: Չեմ սիրում լաց լինել: Գիտեմ, բախտս չի բերել, բայց մեղքն իմն է: Հիմա գնամ: Անչափ շնորհակալ եմ: Մի օր մի ձևով կհատուցեմ, – երիտասարդը շրջվեց, որ դուրս գա:

– Սպասիր, – կանգնեցրեց Սպանգլերը, – նստի՛ր: Մի շտապիր: *Հիմա* արդեն ժամանակ ունես: Հիմա շտապելու բան չկա: Հիմիկվանից մի քիչ հանգիստ ապրիր: Քեզ պես տղան ի՞նչ հետաքրքրություններ ունի:

– Ի՞նչ իմանամ: Չգիտեմ՝ ուր գնամ, կամ որ տեղ հասնեմ՝ ինչ անեմ, ինչին հավատամ... Չգիտեմ: Հայրս քարոզիչ էր, բայց երեք տարեկան էի, որ մահացավ:

Ուղղակի չգիտեմ՝ ինչ անեմ:– Եւ Սպանգլերին նայեց,–
անելու *ի՞նչ* կա:

– *Հայրուկ՝* ոչինչ: Ինչ ուզես: Ի՞նչ կարևոր է՝ մարդ ինչ
է անում: Ուզածդ ազնիվ աշխատանքը:

– Ամբողջ կյանքս անհանգիստ ու դժգոհ եմ եղել:
Չգիտեմ ինչու: Ինձ համար ոչինչ իմաստ չունի: Մարդ-
կանց չեմ սիրում: Շփվել չեմ սիրում: Չեմ վստահում:
Ոչ մարդկանց ապրելն եմ հավանում, ոչ խոսելը, ոչ
հավատքը, ոչ հրմշտոցը:

– Աշխարհում ամեն մարդ կյանքի մեջ գոնե մի
անգամ նույն բանն է զգում:

– Չեմ ասի, թե *ինքս ինձ* չեմ հասկանում: Ոնց որ
հասկանում եմ: Արդարացում չունեմ: Ամեն ինչի
համար ինքս եմ պատասխանատու: Հիմա ուղղակի
հոգնած եմ, կուշտ եմ ու զզված: Ոչ մի բան չի հե-
տաքրքրում: Աշխարհը գժվել է: Ուզածս կյանքով
ապրել չեմ կարող, իսկ ուրիշն էնքան էլ չեմ ուզում:
Ուզածս կամ կարիքս փողը չի: Գիտեմ, որ գործ
կգտնեմ, մանավանդ հիմա: Բայց գործ տվող մարդ-
կանց չեմ հավանում՝ լավը չեն: Ինձ դուր չի գալիս
նրանց ենթարկվելը. ոչ մեկի թույլ չեմ տա, որ ինձ
նվաստացնեն: Փենսիլվանիայում՝ Յորքում, մի քանի
տեղ աշխատել եմ, բայց միշտ կռվել եմ, ու դուրս են
արել: Երեք-չորս օր, մի շաբաթ, շաբաթուկես, ամե-
նաշատը մի ամիս եմ դիմացել:

– Յորքում ուզեցի զորագրվել. մտածեցի՝ լավ կլինի.
տեղեր կգնամ: Կամ կսպանվեմ: Բանակում էլ են ստի-
պում հնազանդվել, բայց ոնց որ իմաստ ունի: Չգիտեմ՝
ունի թե չէ, բայց գոնե *համարվում է*, որ ունի: Մերժեցին:
Բժիշկների քննությունը չանցա: Մենակ թոքերս չէին,
ուրիշ բաներ էլ կային: Ոչ էլ ուզեցի իմանալ:– Երիտա-
սարդն էլի սկսեց հազալ, բայց այս անգամ համարյա

մի րոպե հազում էր: Սպանգլերը դարակից փոքրիկ շիշ հանեց:

– Ա՛ռ, մի կում արա:

– Շնորհակալ եմ, – ասաց երիտասարդը: – Մի քիչ չափն անցնում եմ, բայց հիմա *կարիքն ունեմ*: – Նա շշից կում արեց ու շիշը Սպանգլերին տվեց, – շնորհակալ եմ, – կրկնեց:

Սպանգլերը որոշեց, որ պիտի երիտասարդին էլի խոսեցնի:

– Ի՞նչ գրքեր ես կարդում, – հարցրեց:

– Օ՛, ինչ ասեք: Այսինքն՝ որ տանն էի՝ կարդում էի: Հայրս մեծ գրադարան ուներ: Ոչ միայն քարոզների: Լավ գրողների լավ գրքեր: Ամենաշատը Ուիլյամ Բլեյքին էի սիրում: Երևի գործերն իմանաք: Հայրիկիս գրադարանի բոլոր գրքերը կարդացել եմ, մի մասը՝ երկու անգամ, մի քանիսը՝ երեք: Առաջ շատ էի կարդալ սիրում, բայց հիմա էլ չէ: Իսկի թերթերը կարդալ չեմ ուզում: Լուրերը *գիտեմ*: Աշխարհով մեկ ամեն տեղ խարդախությունն ու սպանություններ են, ու մեկը չկա, որ դեմն առնի, – նա գլուխը ձեռքերն առավ ու, առանց աչքերը բարձրացնելու, կամացուկ ձայնով շարունակեց:

– Չգիտեմ՝ ձեր լավության համար ոնց շնորհակալություն ասեմ, բայց ազնիվ խոսք, եթե ինձնից վախենայիք կամ կոպտեիք՝ կսպանեի: Հիմա հասկանում եմ, որ *փողի* համար չէի զենքով էստեղ մտել: Չգիտեմ՝ կհասկանաք, թե չէ, բայց զենքն առած եկել էի, որ մեկընդմիջտ պարզեմ, թե աշխարհի միակ մարդը, որ հենց էնպես, ուղղակի, ուրիշի հանդեպ պարկեշտ է վարվել, *իսկապե՞ս* էդպիսին է: Որովհետև սա իմ բոլոր պատկերացումները տակնուվրա էր անում: Շատ երկար ժամանակ էնպես եմ կարծել, թե մարդ տեսակը անհույս փչացած է, որ աշխարհում ուրիշի

հարգանքին արժանի մեկը չկա: Շատ երկար ժամանակ թշվառներին էլ, գոռոզներին էլ արհամարհել են: Մեկ էլ հանկարծ տնից հազարավոր մղոններ հեռու՝ մի անծանոթ քաղաքում, մի պարկեշտ մարդ հանդիպեցի: Էս միտքն ինձ հանգիստ չէր տալիս. պիտի համոզվեի: Ուզում էի, որ ճիշտ դուրս գար: Ուզում էի հավատալ, որովհետև տարիներ շարունակ ինքս ինձ ասել են. «Երանի մի պարկեշտ մարդ գտնեմ, որ ես էլ պարկեշտ մնամ, որ կարողանամ հավատալ ու ապրել»: Առաջին անգամը վստահ չէի, բայց հիմա հաստատ գիտեմ: Ինձ ձեզնից ոչինչ պետք չի: Ինչ ուզում էի՝ արդեն ստացա: Սրանից ավելի ինձ տալիք չունեք: Գիտեմ, որ հասկանում եք: Հիմա վեր կկենամ ու ցտեսություն կասեմ: Չանհանգստանաք: Տուն են գնալու: Ու էս հիվանդությունից չեմ մեռնի: Կապրեմ: Հիմա արդեն կիմանամ, թե *ոնց* ապրեմ:– Տղան մի քանի վայրկյան գլուխը չէր բարձրացնում: Հետո կամաց վեր կացավ ու Սպանգլերին նայեց:– Շնորհակա՛լ են,– ասաց:

Սպանգլերն աչքերով նրան ուղեկցեց: Հետո գանձարկղին մոտեցավ ու փողը տեղը դրեց: Հետո երիտասարդի ատրճանակը ձեռքն առավ ու փամփուշտները դատարկեց: Ատրճանակը դարակը գցեց, փամփուշտները գրպանը լցրեց: Հետո դարակներին մոտեցավ, որտեղ կապոց-կապոց օրվա հեռագրերն էին դրված: Դրացից մեկում տղայի՝ մորն ուղարկած հեռագիրը գտավ: Մի մաքուր ձևաթուղթ վերցրեց ու սկսեց լրացնել:

ՏԻԿԻՆ ՄԱՐԳՐԵԹ ՍՏՐԻՔՄԱՆԻՆ

1874 ԲԻԴԼ ՍՏՐԻԹ

ՅՈՐԲ, ՓԵՆՍԻԼՎԱՆԻԱ

ՍԻՐԵԼԻ ՄԱՅՐԻԿ, ՓՈՂԸ ՍՏԱՑԱ, ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՄ:
ՇՈՒՏՈՎ ՏԱՆԸ ԿԼԻՆԵՄ: ԱՄԵՆ ԻՆՉ ԼԱՎ Է:

Նա հեռագիրը կարդաց, հետո որոշեց «լավ» բառի փոխարեն «կարգին» գրել: Հետո մի պահ տղային հիշեց ու ավելացրեց. «Սիրում եմ քեզ, Ջոն»: Գնաց պարոն Գրոգանի սեղանի մոտ ու կանչ արեց: Կանչին արագ պատասխանեցին: Սպանգլերը սկսեց հեռագիրը տպել, ապա՝ ժպտալով ու կետ-գծերի ձայնը լսելով, լարի մյուս ծայրին նստած հեռագրիչի հետ մի քանի խոսք փոխանակեց: Գործն ավարտեց ու իր տեղը գնաց:

Պարոն Գրոգանը եկավ ու նստեց աթոռին, ուր քիչ առաջ երիտասարդն էր նստած:

– Հիմա ո՞նց եք, – հարցրեց Սպանգլերը:

– Իհարկե ավելի լավ, – պատասխանեց Գրոգանը: – *Երկու* բաժակ խմել եմ, Թո՛մ: Զինվորների երգն եմ լսել: Ո՞նց են դաշնամուրը սիրում: Ու հին երգերը, որ առաջ չէին էլ լսել:

– *Գիտեմ, որ ինձ սիրում ես, չէ՞*, – կրկնեց Սպանգլերը: – Անընդհատ էս է ասում ու հե՛նց նույն ձևով: Երևի հետն ամուսնանամ:

Սպանգլերը մի պահ դադարեց Դայանա Սթիդի մասին երազելուց ու ծեր ընկերոջ դեմքը պրպտեց:

– Հին երգերը լավն են:

– Թո՛մ, – ասաց պարոն Գրոգանը, – հիշո՞ւմ ես՝ պառավ Դավենփորթն էդ բալլադները ոնց էր երգում:

– Բա ո՞նց, – պատասխանեց Սպանգլերը: – Քանի էս գրասենյակը կա, միշտ ձայնը ականջումս կլինի: Ոնց որ հիմա էլ լսելիս լինեմ: Չեք մոռացել, չէ՞, ոնց էր ամեն կիրակի եկեղեցական երգեր երգում:

– Չեմ մոռացել: Հատ-հատ հիշում եմ: Ձև էր անում, թե անհավատ է, բայց կիրակիներն առավոտից ծխախոտ ծամելով ու հեռագրեր ուղարկելով օրհներգեր

էր երգում: Երգում էր ու ծխախոտը թքամանը թքում:
Առավոտ կգար ու կասեր. «Գալդ բարի՛, օրհնված օր»:
Երևելի մարդ էր, Թո՛մ: Հետո ձայնը գլուխը կգցեր.
«Առավոտ լուսո, Արեգակ արդար, Առ իս լույս ծագեա:
Եղիցի՛ լույս»:

– Հիշում եմ, – ասաց Սպանգլերը:

– Հետո կերգեր. «Տե՛ր իմ, Աստված առավոտի ու
գիշերվա, շնորհակալ եմք, որ մեզ լույս ես պարգևել»:
Մեծն անհավատը: Ամեն ինչից շատ լույսն ու կյանքն
էր սիրում: Հետո օրվա վերջին աթոռից դանդա՛ղ վեր
կկենար, կձգվեր ու շա՛տ կամաց կերգեր. «Օրը լրա-
ցավ, գիշերն է հասնում»: Բոլոր հին երգերը գիտեր:
Բոլորը սիրում էր: «Փրկի՛չ, – կբղավեր, իբր աթեիստ է
ու կատակով է ասում, – օրհնի՛ր մեր երեկոն նախքան
հոգիներս հանգստի գնան: Ապաշխարելու եմք եկել, որ
փրկես ու ամոքես մեզ»:

Հեռագրիչը լռեց, որ իր հին, տարիներ առաջ մեռած
ընկերոջը հիշի:

– Ճշմարիտ է, Թո՛մ: Ինչ որ երգում էր՝ ճշմարիտ է:

Հեռագրատան կառավարիչը ժպտաց իր ծեր ընկե-
րոջն ու ուսին թփթփացրեց: Հետո գնաց, որ լույսը
հանգցնի և գրասենյակը կողպի մինչև հաջորդ առավոտ:

23. ՄՂՁԱՎԱՆՋԸ

Հոմեր Մաքուլին, վերջապես անկողնում պառկած,
անհանգիստ շուռումուռ էր գալիս: Երագում տեսնում
էր, իբր նորից երկու հարյուր մետր ցածր արգելքնե-
րով վազքն է վազում, բայց ամեն անգամ արգելքի
հասներ թե չէ՝ Բայֆիլդն արդեն իրեն էր սպասում:
Հետո ոտքի ցավն այնքան ուժեղացավ, որ փորձեց
վազել ու ընկավ: Գետնից վեր կացավ ու Բայֆիլդի
քիթերանին հասցրեց: Ու գոռաց. «Ինձ կանգնեցնողը

չե՛ք: Ինչ արգելք ուզում է՝ լինի, ցածր թե բարձր, մեկ է, չի՛ ստացվի»:

Նորից սկսեց վազել, սկզբում՝ կաղալով, հետո կամաց-կամաց թափ առնելով: Հաջորդ արգելքը անմարդկային բարձր էր՝ ութ ոտնաչափ, բայց Հոմեր Մաքուլին՝ թերևս, Կալիֆոռնիայի Իթակա քաղաքի ամենաերևելի անձնավորությունը, կատարյալ վարպետությամբ հաղթահարեց այն:

Հետո տեսավ, իբր հեռագրատարի համազգեստը հագին, հեծանվով մի նեղ փողոցով է անցնում: Հանկարծ ճամփի մեջտեղը Բայֆիլդը հայտնվեց: Հոմերը ոտնակներն է՛լ ավելի արագ սկսեց պտտել: «Չասեցի՞, որ ինձ կանգնեցնել չեք կարողանա»: Հեծանվի ղեկը վեր թեքեց, և հեծանիվը սկսեց օդ բարձրանալ: Թռավ՝ անցավ Բայֆիլդի գլխի վրայով ու մյուս կողմում վայրէջք կատարեց: Բայց հենց մայթին դիպավ՝ Բայֆիլդն էլի բուսնեց: Հեծանիվը նորից բարձրացավ, որ վրայով թռչի, բայց այս անգամ մնաց օդում կախված՝ Բայֆիլդի գլխից քսան ոտնաչափ վերև: Մարզիչը շշմած ու վրդովված, կանգնել մնացել էր փողոցի մեջտեղը: «Ի՞նչ ես անում, – գոռաց նա, – ձգողականության օրենքը խախտել չի՛ կարելի»:

«Թքել եմ ձգողականության օրենքի վրա, – բղավեց Հոմերը:– Թքել եմ հավանականության օրենքի վրա, թքել եմ առաջարկի ու պահանջարկի ու մյուս բոլոր օրենքների վրա: *Դուք ինձ կանգնեցնողը չե՛ք:* Շանթ ու կայծա՛կ, ես ձեր ժամանակը չունե՛մ»: Հեռագրատարը օդով սուրաց՝ անպիտան մարդուն՝ ոչնչությունից էլ չնչին, փողոցում մենակ թողնելով:

Հիմա էլ բա՛րձր՝ մութ ամպերի միջով էր թռչում: Երկինքը կտրելիս սև թուխպից հայտնված, իրեն շատ նման, բայց ավելի արագ սլացող, հեռագրատարի

համազգեստով մի ուրիշ հեծանվորդի նկատեց: Այս երկրորդ հեռագրատարը, չգիտես ոնց, համ ինքը՝ Հումերն էր, բայց համ էլ մեկը, որից վախենում էր: Հետևից սուրաց, որ պարզի՝ ով է:

Շատ երկար իրար հետևից գնացին, մինչև Հումերը կամաց-կամաց սկսեց հասնել: Հանկարծ երկրորդ հեծանվորդը կտրուկ շրջվեց, ու Հումերը զարմանքով տեսավ, որ ճիւղ-ճիւղ ինքն է, բայց մյուս կողմից՝ անկասկած, ոչ այնքան տեսքից, ինչքան էությամբ, Մահվան սուրհանդակ է: Հեծանվորդներն արագորեն հթակային էին մոտենում: Հումերը, առաջվանից է՛լ ավելի արագ, Մահվան սուրհանդակի հետևից ընկավ: Ցածում՝ շատ հեռու, քաղաքի հատուկենտ լույսերն էր տեսնում, ամայի փողոցներն ու մենավոր տները: Հումերը մտադիր էր ամեն գնով Սուրհանդակին հթակայից քշել՝ հեռու վանել: Կարծես աշխարհում ոչ մի բան այնքան կարևոր չլիներ, որքան չթողնելը, որ Սուրհանդակն հթակա հասնի:

Երկու հեծյալները ուղիղ, առանց խաբս տալու, ամբողջ թափով իրար հետևից էին սլանում: Արդեն երկուսն էլ ուժաթափ էին, բայց վերջապես Հումերը երկրորդ հեծյալին հասավ ու սկսեց հթակայից դեն մղել: Մեկ էլ հանկարծ վերջինս նոր թափ առավ, շուռ եկավ ու էլի փոքրիկ քաղաքի կողմը սուրաց: Հուսահատ ու ինքն իր վրա բարկացած, բայց ամբողջ ուժով ոտնակները պտտելով՝ Հումերը տեսավ, որ Սուրհանդակը, իրեն հեռու հետևում թողած, հթակա է սլանում: Իսկ ինքն է՛լ շարունակել չէր կարող: Մեջը ոչ մի կաթիլ ուժ չէր մնացել, որ Մահվան սուրհանդակին հետապնդի: Հումերը քամված ընկավ հեծանվին ու սկսեց գահավիժել, բայց գոռում էր. «հթակա չգնա՛ս: Մեզ հանգի՛ստ թող»:

Անասելի դառը վշտից սկսեց հեծկլտալ:

Սանտա Կլարա պողոտայի տանն անհանգիստ քնածի փոքրիկ եղբայր Ուլիսեսը, Հոմերի կողքին կանգնած, լսում էր: Հետո մթան միջով մայրիկի սենյակը գնաց և ուսը ցնցեց: Մայրիկը վեր թռավ, ու տղան, ձեռքից բռնած, նրան Հոմերի անկողնու մոտ տարավ: Տիկին Մաքուլին մի պահ քնած որդուն լսեց, հետո Ուլիսեսին անկողին դրեց, տաքուկ ծածկեց ու հետ գնաց, նստեց քնի մեջ լացող տղայի կողքին: Եվ կամացուկ ձայնով խոսեց.

– Հանգիստ, Հոմե՛ր: Հանգստացիր: Շատ ես հոգնել, պիտի քունդ առնես: Դե, քնիր: Բարի երազներ:

Տղայի հեծկլտոցը դադարեց, ու շուտով դեմքը խաղաղվեց:

– Քնիր, տղա՛ս, – շշնջաց մայրիկը:– Անուշ երազներ:

Տղան սկսեց հանդարտ շնչել: Մայրիկը փոքրիկին նայեց. սա էլ էր քնած: Նրան թվաց, թե սենյակի ծայրին Մաթյու Մաքուլին է կանգնել ու ժպտալով իրեն է նայում: Արագ վեր կացավ, զարթուցիչը վերցրեց ու իր սենյակը գնաց:

Հեռագրատարը մռայլ սարսափներից անխռով ու լուսավոր երազների գիրկն ընկավ: Այս քնի մեջ Հոմեր Մաքուլին հայտնվեց առվակի ափին, մեծ թզենու տակ պառկած: «Սա, – ասաց ինքն իրեն, – երևի էն Գետափը կլինի, էն թզենին՝ արևի տակ խայտացող ջրի կողքին, որը զվարթ կշկչում էր ու մարդկանց ծիծաղեցնում: Հիշում եմ: Անցյալ ամառ էր, ես ու Մարկուսը եկել էինք լողանալու, հետո էլ ափին նստած՝ խոսում էինք, թե ով ինչ է ուզում դառնալ»: Հիմա, այս տեղի գողտրիկ խաղաղությունը հիշելով, դրա պարզևած ջերմությունը զգալով, ծառի տակ հարմարավետ փռվեց ու բոլորովին մոռացավ, որ երագ էր տեսնում:

Հագին նույն շորերն էին, որոնցով ամռան այն օրն էր՝ Մարկուսի հետ: Առջևը՝ փափուկ հողի մեջ խրված, ձկան կարթը տեսավ, բայց սա արդեն ուրիշ օր էր՝ շատ, շատ ավելի վաղուց: Ծառ ու խոտից այն կողմ՝ հեռվում, Հոմեր Մաքուլին սիրունիկ Հելեն Էլիոթին տեսավ, որ իր պես ոտաբոբիկ, չթի շորը հագին, նեղլիկ արահետով իրեն էր մոտենում: «Հելեն Էլիոթն է, – ասաց ինքն իրեն, – աղջիկը, որին սիրում եմ»: Հոմերը նստեց, նրան նայեց, հետո վեր կացավ ու մոտեցավ: Առանց խոսքի, մի տեսակ հանդիսավորությամբ, ձեռքը բռնեց, ու միասին թզենու կողմը քայլեցին: Այստեղ շորերը հանեց ու զուլալ ջուրը թռավ: Աղջիկն էլ թփի հետևն անցավ՝ հանվեց: Հոմերը նայեց, թե ոնց է ասի գալիս ու ջուրը սուզվում: Միասին մեղմիկ խոխոջող ջրում լողացին, հետո միասին դուրս եկան՝ արևի տակ ավազին փռվեցին ու քնեցին:

24. ԾԻՐԱՆԻ ԾԱՌԸ

Ուլիսես Մաքուլին առավոտ շատ շուտ արթնացավ, լույսի առաջին շողերի հետ դուրս վազեց ու թռչկոտելով մի բակ գնաց, որի տերը կով ուներ: Հասավ ու կովին տեսավ: Երկար կանգնել՝ կովին էր նայում, մինչև որ կովի տերն իր փոքրիկ տնակից դուրս եկավ: Ձեռքին դույլ էր ու մի աթոռակ: Ուղիղ կովի մոտ գնաց ու սկսեց կթել: Ուլիսեսը մոտեցավ՝ մարդու մեջքի հետևը կանգնեց, բայց մեկ է՝ լավ չէր տեսնում, ու չոքեց, համարյա կովի տակ մտավ: Կովի տերը տղային նկատեց, բայց բան չասաց: Շարունակեց կթել: Իսկ կովը վիզը թեքեց ու փոքրիկին նայեց: Ուլիսեսն էլ կովին նայեց: Թվում էր՝ ոնց որ կովին շատ դուր չեկավ տղայի մոտիկությունը: Ուլիսեսը տակից դուրս եկավ, մի քիչ հեռացավ ու հեռվից սկսեց նայել: Կովը, իր հերթին, աչքը տղայից

չէր կտրում, և Ուլիսեսին թվաց, որ կարող են ընկերներ դառնալ:

Տան ճանապարհին Ուլիսեսը կանգ առավ, որ խորդանոց սարքող մի մարդու աշխատանքը նայի: Մարդը լարված էր, ջղային ու անհամբեր՝ երևի չպիտի այս գործը բռնած լիներ: Նա կատաղի աշխատում էր՝ սխալ սխալի հետևից թույլ տալով, իսկ Ուլիսեսը նայում էր՝ իզուր փորձելով հասկանալ:

Ուլիսեսը Սանտա Կլարա պողոտա հասավ ճիշտ այն պահին, երբ պարոն Արինան հեծանիվ էր նստել, որ գործի գնա: Մերի Արինան հայրիկին շեմքից ձեռքով արեց ու ներս մտավ:

Իթակայում շաբաթ առավուտ էր: Մոտիկ տներից մեկից ութ-ինը տարեկան մի տղա դուրս եկավ: Ուլիսեսը ձեռքով արեց, ու տղան պատասխանեց: Տղան Լայոնել Քաբոթն էր՝ թաղի պարզամիտը, բայց չնայած դրան՝ նվիրված, առատաձեռն ու բարեհոգի՝ մի արտակարգ անձնավորություն: Քիչ անց Լայոնելը նորից Ուլիսեսին նայեց, ու քանի որ միտքը ոչ մի ուրիշ բան չեկավ, նորից ձեռքով արեց: Ուլիսեսը պատասխանեց: Այս բանը կարճ ընդմիջումներով շարունակվեց այնքան, մինչև որ Արայի խանութի կողքի իրենց տնից Օգասթ Գոթլիբը դուրս եկավ:

Այն օրից, ինչ Հոմեր Մաքուլին տասներկու տարեկանում իր դիրքը զիջել էր, Օգին թաղի տղաների առաջնորդն էր դարձել: Նորընտիր առաջնորդը շուրջը նայեց՝ իր հետևորդներին տեսնելու: Լայոնելը նրա համար հաշիվ չէր, որովհետև դմբո էր, իսկ Ուլիսեսը դեռ շատ փոքր էր, բայց նա, մեկ է՝ երկուսին էլ ձեռքով արեց: Հետո փողոցի մեջտեղը դուրս եկավ ու լրագրավաճառավարի սուլեց՝ ուժգին, հրամայական, առարկություն չհանդուրժող ու վերջնական: Ապա սպասեց

մի մարդու վստահությամբ, որը գիտի, թե ինչ է անում
ու ինչ արդյունք է ստանալու: Անմիջապես լուսամուտ-
ներ բացվեցին, ու պատասխան սուղոցներ լսվեցին: Քիչ
հետո մի քանի տղաներ վազելով անկյունում հավաք-
վեցին: Երեք ընկեր չանցած՝ թիմը տեղում էր. Օգի
Գոթլիբը՝ առաջնորդը, Նիքի Պալուտան, Ալֆ Ռայֆն ու
Շաք Մանուկյանը:

– Ու՛ր ենք գնում, Օգի, – հարցրեց Նիքին:

– Գնում ենք, տեսնենք՝ Հենդերսոնի ծիրանները
հասե՞լ են, թե՞ չէ:

– Կթողնե՛ք, ես էլ գամ, – խնդրեց Լայոնելը:

– Լավ, Լայոնել: Որ հասած լինեն՝ մի քանի հատ
կգողանա՛ս:

– Գողանալը մեղք է, – ասաց Լայոնելը:

– Ծիրաններին չի վերաբերում, – պատասխանեց
Օգին՝ կարևոր տարանջատում անելով: – Իսկ դու, Ուլի-
սե՛ս, տուն գնա: Փոքրերի խելքի բանը չի: Կարող է
վտանգավոր լինել:

Ուլիսեսը երեք քայլ հետ գնաց, կանգնեց ու աչքերը
նրանց հառեց: Օգիի խոսքերից ո՛չ վիրավորվել էր, ո՛չ
սրտնեղել: Խաղի կանոնները հասկանում էր. ուղղակի
դեռ տարիքը չէր հասել, այդքան բան: Բայց ինչքան էլ
կանոնները հարգեր, մեկ է՝ չէր կարող իրեն ստիպել,
որ չերագի թիմի անդամ դառնալ:

Տղաները ճամփա ընկան Հենդերսոնի այգին: Փո-
ղոցներով ու մայթերով գնալու փոխարեն՝ արահետնե-
րով, ամայի տարածքները կտրելով ու ցանկապատներ
մագլցելով գնացին: Ուզում էին դժվար՝ արկածներով
լի ճանապարհով գնալ: Ուլիսեսը, շատ հետ չընկած՝
ապահով հեռավորությունից, հետևներից էր գնում:

– Հասած ծիրանը վայ թե աշխարհի ամենահամով
պտուղն է, – հայտարարեց Օգին:

– Ծիրանը մարտի՞ն է հասնում,– հարցրեց Նիքի Պալուտան:

– Համարյա ապրիլն է,– պատասխանեց Օգին:– Վաղահաս ծիրանները լավ արևի տակ շուտ են հասնում:

– Բայց վերջերս անձրևոտ էր,– նկատեց Ալֆ Ռայֆը:

– Քո կարծիքով՝ ծիրաններն ինչի՞ց են հյուսեղ,– առարկեց Օգին:– Անձրևի՞ց: Անձրևը ծիրանների համար արևից պակաս կարևոր չի:

– Ցերեկը՝ արևը, գիշերը՝ անձրևը,– ասաց Շաք Մանուկյանը:– Մեկը ջերմացնում է, մյուսը՝ հյուսեղացնում: Գրագ գամ՝ ծառին լիքը հասած ծիրան կա:

– Երանի,– ասաց Ալֆ Ռայֆը:

– Ծիրանի համար մի քիչ շատ շուտ է,– առարկեց Նիքի Պալուտան:– Անցյալ տարի հունիսին դեռ չէին հասել:

– Էն անցյալ տարի էր,– ասաց Օգին:– Էս տարի էս տարին է:

Մոտավորապես հարյուր մետր չհասած՝ տղաները կանգնեցին, որ նշանավոր ծիրանի ծառով զնայվեն: Հենդերսոնի բակի անկյանը աճած հսկա ծառը ամբողջովին կանաչ էր, շատ սիրուն ու շատ ծեր: Արդեն տասը տարի կլինեք, որ թաղի տղաները գալիս էին ծերունի Հենդերսոնի ծիրանները գողանալու: Ամեն գարուն պարոն Հենդերսոնը իր խարխուլ տնակի պատուհանից հիացնունքով ու բավարարությամբ նրանց գալուն էր նայում ու երբեք հուսախաբ չէր անում՝ վերջին պահին հայտնվում էր, որ գողերին քշի: Հիմա էլ՝ վարագուրած լուսամուտի հետևը նստած, հայացքը ձեռքի գրքից կտրեց:

– Մի դրանց տեսեք,– ասաց ինքն իրեն,– մարտ ամսին՝ ձմեռվա կեսին ծիրան գողանալու են եկել:– Նա վարագույրի հետևից ծկրակեց ու, ասես ինքն էլ տղաներից մեկը լինեք, քթի տակ ասաց:

– Ըհը՛, եկել են ծեր Հենդերսոնի ծիրանները գողա-
նալու: Կամա՛ց, տղանե՛ր, հա-հա՛,– ծիծաղեց,– դրա՛նց
տեսեք:– Բա էն պատի՛կը: Վայ թե չորս տարեկան լինի:
Էս մեկը նոր է: Եկե՛ք, տղաներ, հրաշք ծեր ծառիս մո՛տ
եկեք: Մի ճար լինե՛ր՝ էդ ծիրանները ձեզ համար հասու-
նացնե՛ի...

Նա հետևեց, թե Օգին ոնց էր հրահանգներ տալիս,
ուղղորդում ու հարձակման ծրագիր մշակում: Տղա-
ները զգուշորեն ծառը շրջապատեցին՝ սրտներում
հույսն ու վախը միախառնված: Թեկուզ ծիրանները
դեռ խակ էին, մեկ է՝ Հենդերսոնի ծառին էին ու նրան
էին պատկանում, և նրանց նույն պատիժն էր հասնե-
լու, ինչ հասած ծիրանների համար: Հետևաբար, նրանք
ուզում էին *հույս ունենալ*, որ ծիրանները հասած *կլի-
նեն*: Մյուս կողմից՝ վախենում էին: Հենդերսոնից էին
վախենում, մեղք գործելուց, բռնվելուց ու պատժվելուց
էին վախենում: Մեկ էլ վախենում էին, որ ծիրանները
հասած չլինեն:

– Երևի տանը չի,– շշնջաց Նիքի Պալուտան, երբ
համարյա ծառին էին հասել:

– Տանն է,– ասաց Օգին:– *Միշտ* տանն է: Պահ է մտել,
էդքան բան: Դարան է մտել, որ մեզ բռնի: Բուլորդ զգույշ
եղեք: Չես իմանա՛ ուր կլինի: Ուլիսե՛ս, դու տուն գնա:

Ուլիսեսը հնազանդորեն երեք քայլ հետ գնաց ու
կանգ առավ՝ հիասքանչ ծառի հետ հիասքանչ մենա-
մարտը դիտելու:

– Հը՛ հասա՞՞ծ են,– հարցրեց Շաքը,– գույն տեսնու՞մ
ես՞, Օգի:

– Մենակ կանաչ,– ասաց Օգին:– Տերևներիհնը: Ծի-
րանները տակն են: Հանգի՛ստ բուլորդ: Լայոնելն ու՛ր է:

– Էստեղ եմ,– շշուկով ասաց Լայոնելը: Շատ վախե-
ցած էր:

– Մի խոսքով՝ չքնեք. հենց Հենդերսոնը հայտնվեց՝
փախե՛ք:

– Տեսնես ու՞ր կլինի, – ասաց Լայոնելը, ոնց որ Հեն-
դերսոնը անտեսանելի մեկն էր կամ նապաստակի
մեծության, ու կարող էր անսպասելիորեն՝ խոտերի
միջից դուրս ցատկել:

– Այսինքն ո՞նց՝ ուր կլինի: Տանը, էլ ու՞ր: Չնայած
Հենդերսոնն էն մարդկանցից է, որ հաստատ չես իմա-
նա: Մեկ էլ տեսար՝ մի տեղ դարան մտած սպասում է,
որ վրա տա:

– Ծառը դու՞ ես բարձրանալու, – հարցրեց Ալֆ Ռայֆը:

– Բա էլ ո՞վ, – ասաց Օգին: – Սպասեք, նախ տեսնենք՝
ծիրանները հասա՞ծ են:

– Ուզում է՝ հասած լինեն, ուզում է՝ խակ, – ասաց Շաք
Մանուկյանը: – Գոնե *մի քանի հայր* պիտի գողանանք,
Օ՛գի:

– Չմտածես, կգողանանք: Որ հասած եղան՝ *շար*
կգողանանք:

– Բա վաղը կիրականորյա դպրոցում ի՞նչ պատաս-
խան ես տալու, – հարցրեց Լայոնելը:

– Ծիրան գողանալը Աստվածաշնչի միջի գողություն-
նը չի, Լայոնել: Տարբեր բաներ են:

– Բա էլ ինչի՞ եք վախենում:

– Ո՞վ է վախենում: Ուղղակի զգուշանում ենք, էդքան
բան: Իզուր տեղն ինչի՞ բռնվենք, եթե կարելի է չբռնվել:

– Ոչ մի հասած ծիրան չեմ տեսնում, – ասաց Լայոնելը:

– Ծառը հո տեսնու՞մ ես, – ասաց Օգին:

– Ծառը՝ հա, բայց *մենակ* ծառը. մեծ ու կանաչ: Ըատ
սիրուն է, Օ՛գի, չէ՞:

Տղաներն արդեն համարյա ծառի տակ էին: Ուլիսե-
սը՝ նրանցից մի քանի քայլ հետ: Իսկի վախեցած չէր:
Ոչինչ չէր հասկանում, բայց հաստատ գիտեր, որ շատ

կարևոր բան է՝ ծառերի ու ծիրանների մասին: Տղաները ծեր, բայց նոր ծլած կանաչ տերևներով ծիրաններու ճյուղերն էին զննում: Ծիրանները դեռ շատ փոքրիկ էին, շատ կանաչ, ու երևում էր՝ որ խակ:

– Հասած չեն, – ասաց Ալֆ Ռայֆը:

– Ըհը, – ընդունեց Օգին: – Դեռ մի քանի օր ուզում են: Երևի մինչև մյուս շաբաթ հասնեն:

– Հա, մյուս շաբաթ՝ *հաստա՛յր*, – համաձայնվեց Շաքը:

– Ինչ էլ շատ են, – ասաց Օգին:

– Բայց հո դատարկ ձեռքով հետ չե՞նք գնա, – ասաց Շաքը: – Գոնե մի *հատ*՝ խակ թե հասած, պիտի քաղենք: Գոնե մի *հատիկ*:

– Լավ, – որոշեց Օգին, – ես կքաղեմ: Մյուսներդ ճողոպրելու պատրաստվեք, – Օգին ծառի վրա նետվեց ու ընկերների, պարոն Հենդերսոնի և Ուլիսեսի՝ հիացմունքից ապշած աչքերի առաջ, ցածի ճյուղերից մեկը բռնեց ու վրան ցատկեց: Այստեղ պարոն Հենդերսոնը դռնից դուրս եկավ ու շեմքին կանգնեց: Տղաները վախեցած ձկնիկների վտառի պես դեսուդեն ցրվեցին:

– Օ՛գի, – բղավեց Շաք Մանուկյանը, – *Հենդերսոն՛ը*:

Օգին ջունգլիների խուճապահար օրանգուտանի նման ճյուղից ճյուղ թռավ, ցած ցատկեց ու այնպիսի արագությամբ վազեց, որ ոտքերը համարյա գետնին չէին կաշում: Բայց հանկարծ Ուլիսեսին նկատեց ու տեղում մեխվեց:

Փախիր, Ուլիսես՛ա: Վազիր, *փախիր*:

Բայց Ուլիսեսը տեղից չշարժվեց. չէր հասկանում, թե ինչ է կատարվում: Օգին նետվեց փոքրիկ տղայի կողմը, գրկեց ու ինչքան ոտքերում ուժ կար՝ փախավ, իսկ Հենդերսոնը կանգնած նայում էր: Երբ տղաները անհետացել-կորել էին, և նորից խաղաղություն էր

հաստատվել, ծերունին ժպտաց ու ծառին նայեց: Հետո
շրջվեց ու իր տուն գնաց:

25. ՊԱՐՈՆ ԱՐԱՆ

Ծերունի Հենդերսոնի այգուց բարեհաջող փախուս-
տից հետո Օգասթ Գոթլիբի Գաղտնի ընկերության
անդամները մեկ առ մեկ եկան-հավաքվեցին Արայի
խանութի մոտ, որ իրենց առաջնորդի վերադարձին
սպասեն: Վերջապես այս մեծ մարդու անձնվեր հե-
տևորդները նկատեցին նրան Ուլիսես Մաքուլիի ձեռքը
բռնած իրենց կողմը քայլելիս: Ընկերության անդամ-
ները լուռ սպասեցին, մինչև իրենց միանա: Բոլորը
պրպտող հայացքով առաջնորդի երեսին նայեցին,
ապա նրանցից մեկը՝ Ալֆ Ռայֆը, հարցրեց.

– Ծիրան քաղեցի՞ր, Օ՛գի:

Առաջնորդն իր անհավատ հպատակին նայեց ու
ասաց.

– Ի՞նչ հարցնելու բան է: Տեսար, որ ծառն եմ բարձ-
րացել: *Գիտես*, որ քաղել եմ:

Այստեղ բոլորը միաժամանակ սկսեցին խոսել (այ-
սինքն՝ բոլորը, բացի Լայոնելից, որը լիիրավ անդամ էլ
չէր): Հիացած գոչեցին.

– Ու՛ր է, Օ՛գի, ցույց կտա՞ս: Ցույց տուր՝ տեսնենք:

Փոքրիկ Ուլիսեսը ուշիուշով նայում էր՝ այդպես էլ
կատարվածի խորհրդավոր իմաստը բոլորովին չհաս-
կանալով, բայց համոզված, որ աշխարհում դրանից
կարևոր բան չկա: Գոնե այդ պահին՝ հաստատ:

– Դե ցույց տուր, ի՞նչ ծիրան ես գողացել, Օ՛գի,–
նորից ասացին ընկերության նվիրյալները,– ցույց տուր՝
տեսնենք:

Օգասթ Գոթլիբը ձեռքը կամաց շալվարի գրպանը
տարավ, բռունցք արած դուրս հանեց ու առաջ պարզեց:

Թիմակիցները շուրջը հավաքվեցին ու աչքները հառեցին բռունցքին: Երբ բոլորը հավուր պատշաճի լրջացել ու հարգալից տեսք էին ընդունել, Օգասթ Գոթլիբը բռունցքը բացեց:

Ափին լորի ձվի մեծության մի կանաչ ծիրան էր:

Մեծն առաջնորդի նվիրյալները ժպտացին՝ այս զարմանահրաշ պտուղը տեսնելով, իսկ Լայոնելը՝ բոլորից ամենաբարեհոգին, թեկուզ աղանդավորների այս խմբի իսկական անդամ էլ չէր, Ուլիսեսին գրկեց, որ նա էլ կարողանա զմայլվել փոքրիկ կանաչ գնդիկով: Խակ ծիրանը տեսնելով՝ Ուլիսեսը նրա գրկից դուրս պրծավ՝ ոչ թե հիասթափությունից, այլ որևէ մեկի հետ կիսվելու փափագով:

Այդ պահին խանութից դուրս եկավ ինքը՝ պարոն Արան, սրանից յոթ տարի առաջ Կալիֆոռնիայի Իթակա քաղաքի այս թաղում Արայի խանութը հիմնադրած մարդը: Պարոն Արան կոստյումի վրայից նպարավաճառի սպիտակ գոգնոց կապած, բարձրահասակ, նիհար դեմքով, թախծոտ, բայց զավեշտական մարդ էր: Նա մի պահ խանութի շենքին կանգնեց, որ նորոքյա Փրկչին ու նրա առաքյալներին նայի և սրանց հիացական բացականչությունները լսի Սուրբ մասունքի առնչությամբ:

– Հե՛յ, Օ՛գի,– բղավեց,– Շա՛ք, Նի՛քի, Ա՛լֆո, ձեզ եմ ասում, Լա՛յոնել, ձեր կարծիքով՝ էս տեղը Միացյալ Նահանգների Կոնգրես՞ն է, ի՞նչ է: Գնացեք՝ ձեր ժողովները ուրիշ տեղ արեք: Էստեղ խանութ է, Կոնգրեսը չէ:

– Իհարկե, պարո՛ն Արա,– ասաց Օգասթ Գոթլիբը:– Հիմա դիմացի դատարկ բակը կգնանք: Կուզե՛ք ծիրան տեսնել:

– Ծիրա՛ն եք գտել,– զարմացավ նպարավաճառը:– Որտեղի՞ց:

– Ծառի վրայից: Ցույց տա՛մ:

– Ի՛նչ ծիրան, ինչ բան: Ծիրանը երկու ամսից կլինի:
Մայիսին:

– Մերը մարտյան ծիրան է,– հայտարարեց շրջիկ դերվիշների նշանավոր առաջնորդը: Հետո էլի բռունցքը բացեց՝ փոքրիկ կանաչ կոշտ գնդիկը ցույց տվեց:– Տեսեք, պարո՛ն Արա, սիրուն է, չէ՞:

– Հա՛, հա՛,– ասաց պարոն Արան,– սիրուն է: Ծա՛տ լավ ծիրան է: Հիմա գնացեք, ձեր Կոնգրեսի ժողովը մի ուրիշ տեղ գումարեք: Ծաբաթ օր է՝ խանութը պիտի բաց լինի: Առավոտ գիշերով հրմշտոց մի՛ սարքեք, թողեք՝ աշխատեմ: Փոքր խանութը հրմշտոց չի սիրում, կորե՛ք:

– Լավ, պարո՛ն Արա,– ասաց Օգին,– հրմշտոց չենք սարքի: Դիմացը կգնանք: Գնացինք, տղե՛րք:

Պարոն Արան հայացքով մոլեռանդ դավանապաշտների փոքրիկ գաղթն ուղեկցեց և արդեն ուզում էր խանութ վերադառնալ, երբ նրան շատ նման մի փոքրիկ տղա դուրս եկավ ու կանգնեց կողքին:

– Հայրի՛կ:

– Հա, Ջո՛ն:

– Խնձոր կտա՛ս,– հարցրեց շատ լուրջ, համարյա թախծոտ ձայնով:

Հայրը տղայի ձեռքը բռնեց, ու միասին խանութ մտան, որտեղ վաճառասեղանին կույտ-կույտ մրգեր էին դարսված:

– Խնձո՞ր,– կրկնեց հայրը, կույտից մի խնձոր վերցրեց՝ մեջներից ամենալավը, ու տվեց տղային:– Էս էլ քեզ խնձոր:

Հետո վաճառասեղանի հետևը կանգնեց, որ հաճախորդների սպասի, համ էլ աչքը տղայի վրա պահի, որը հոր պես թախծոտ էր, թեև երկուսի մեջ առնվազն

քառասուն տարվա տարբերություն կար: Որդին խնձորից մի մեծ կտոր կծեց, դանդաղ ծամեց, կուլ տվեց ու կարծես մի րոպե դրա մասին էր մտածում: Կարծես հայրն էլ էր նույն մտքով տարված: Խնձորը տղային չգոհացրեց: Դրեց վաճառատեղանին՝ հոր առաջ, ու աչքերը բարձրացրեց: Այնպես էր ստացվել, որ Կալիֆոռնիայի Իթակա քաղաքում էին ապրում, ո՞վ իմանա՝ երևի յոթ հազար մղոն հեռու այն վայրից, որ դարերի վեր աշխարհում իրենց տունն էր եղել: Պարզ է, որ երկուսի հոգում էլ թախիծ կար, թեև ոչ ոք չգիտեր՝ եթե յոթ հազար մղոն այն կողմ՝ իրենց տանը լինեին, արդյոք նույն թախիծը չէի՞ն՝ զգալու: Հիմա տղան կանգնել էր խանութում՝ հոր կողքին, ու հայրը նրան նայեց. ինքն իրեն՝ փոքր ժամանակ, իր աչքերին, աչքերի մեջ՝ ինքն իր հոգուն: Ճիշտ նույն մարդն էր, ուղղակի փոքր: Հայրը կիսատ խնձորն առավ, խռթոցով կծեց, ծամեց ու կուլ տվեց: Եռանդով ու սաստկաձայն ծամելուց դատելով՝ կարող էր ոչ ավել, ոչ պակաս՝ ողբերգական Լիր արքան լինել: Խնձորն ափսոս էր, դեն գցել չէր կարելի. եթե տղան չէր ուտելու, ի՞նքը կուտեր, շատ էլ թե խնձոր չէր սիրում: Փոխարենը գիտեր, որ ոչ մի բան դեն գցել չի կարելի: Ու շարունակեց կծել, ծամել, կուլ տալ, ասես մի տեսակ բեմական մենախոսություն խաղալիս լիներ: Ինչևէ, պարզվեց, որ խնձորը մեծ էր, մի քիչ չափից ավելի, և ուզած-չուզած՝ *մի մասը* պիտի դեն գցվեր: Մի տեսակ անողջամտորեն՝ ինչ լինում է՝ լինի, ու երևի մի փոքր ափսոսանքով մնացորդն աղբի ամանը շարտեց:

Տղան նորից ասաց.

– Հայրի՞կ:

– Հը, Ջո՛ն:

– Նարինջ կտա՞ս:

Հայրը նարինջների կույտից ամենամեծն ընտրեց ու տղային տվեց:

– Նարի՞նջ: Ա՛ն քեզ նարինջ:

Տղան ատամները կեղևի մեջ խրեց, հետո մատներով շարունակեց կեղևը մաքրել՝ դանդաղ, մանրակրկտորեն, բայց հետո այնպիսի ահագնացող եռանդով, որ անգամ հորը սկսեց թվալ այն, ինչ հաստատ որդին էր զգում, որ այս պտղի կեղևի տակ ոչ թե պտղամիս է թաքնված, այլ սրտի մեծագույն փափագ: Տղան կեղևի կտորները վաճառասեղանին՝ հոր առաջ լցրեց, հետո նարինջը կիսեց, մի դիլիմ պոկեց՝ բերանը դրեց, ծամեց ու կուլ տվեց: Ավա՛ղ, նարինջը նարինջ էր, բայց սրտի մեծագույն փափագը չէր: Տղան մի թուպե հապաղեց ու նարինջի մնացորդը հոր առաջ դրեց: Եվ էլի հայրն առանց մի խոսքի՝ կիսատ թողած գործը փորձեց ավարտին հասցնել: Բայց շուտով սահմանը հատեց, ու համարյա կես նարինջը ստիպված էր աղբամանը նետել:

– Հայրի՞կ, – մի թուպե անց ասաց տղան, ու հայրը նորից պատասխանեց.

– Հա, տղա՛ս:

– Ինձ կոնֆետ տուր:

– Կոնֆե՛տ: Լավ, թող կոնֆետ լինի:

Կոնֆետների դարակից ամենից սիրված՝ հինգ սենթանոց մի կոնֆետ վերցրեց ու տղային տվեց: Տղան քաղցրավենիքի այս նմուշը զննեց, մոմած թուղթը բացեց, շոկոլադի ջնարակով կոնֆետից մեծ կտոր կծեց, դանդաղ ծամեց ու կուլ տվեց: Բայց էլի եղածն ընդամենը կոնֆետ էր: Քաղցր էր, այո, բայց ընդամենը այդքանը: Տղան նորից հոր առջև դրեց հերթական իրեղեն հիասթափությունը, որ էլի սրտի ուզածը չէր: Հայրը համբերատար՝ վատնումից խուսափելու այս մի պատասխանատվությունն էլ իր վրա առավ: Կոնֆետը

վերցրեց, բերանը տարավ, բայց փոշմանեց ու աղբա-
մանը գցեց: Նրան դառը զայրույթ համակեց, ու սրտի
խորքում յոթ հազար մղոն հեռու մարդկանց հայհոյեց,
որոնց մի ժամանակ անգութ էր համարել, կամ գոնե
տգետ: *Շա՛ն որդիներ, ասաց:*

– Հայրի՛կ:

– Հա, Ջո՛ն:

– Բանան կտա՞ս:

Հայրը հոգոց հանեց, բայց դեռ հույսը չկորցրեց:–
Բանա՞ն: Լավ, բանան տամ:– Նա մրգի կույտերի գլխին
կախված բանանի ողկույզները տնտղեց ու վերջապես
իր կարծիքով ամենահասածն ու ամենաքաղցրը գտավ:
Պոկեց ու մեկնեց տղային:

Վերջապես մի հաճախորդ մտավ խանութ: Այս
հաճախորդին պարոն Արան առաջին անգամ էր տես-
նում: Խանութպանն ու հաճախորդը գլխով միմյանց
բարև տվին, հետո մարդը յուրօրինակ առոգանությամբ
հարցրեց.

– Բլիթներ ունե՞ք:

– Բը-լիթներ՞ր,– անհամբեր հարցրեց նպարավաճա-
ռը,– ի՞նչ տեսակի բը-լիթներ եք ուզում:

Մի ուրիշ հաճախորդ խանութ մտավ: Այս մեկը Ուլի-
սես Մաքուլին էր: Նա կողքի կանգնեց և լսելով ու նայե-
լով՝ սկսեց իր հերթին սպասել:

– Մեջը չամիչ բլիթներ ունե՞ք,– հարցրեց առաջին
հաճախորդը:

– Մեջը չամիչ բը-լիթներ՞ր,– կրկնեց նպարավաճառը:
Ա՛յ քեզ խնդիր:– Մեջը չամիչ բը-լիթներ՞ր,– մի անգամ էլ
կրկնեց՝ համարյա շշուկով:– Մեջը չամիչ բը-լիթներ,–
ասաց երրորդ անգամ ու չորս կողմը նայեց: Նպարա-
վաճառի որդին մերժված բանանը հոր առջև՝ վաճառա-
սեղանին դրեց:

– Հայրի՛կ:

Հայրը նայեց որդուն ու սկսեց արագ-արագ վրատալ.

– Խնձոր ուզեցիր՝ խնձոր տվի: Նարինջ ուզեցիր՝ նարինջ տվի: Կոնֆետ ուզեցիր՝ կոնֆետ տվի: Բանան ուզեցիր՝ բանան տվի: Հիմա՞ ուզածդ ինչ է:

– Բլիթներ, – ասաց տղան:

– Ի՞նչ տեսակ բլ-լիթներ ես ուզում, – հարցրեց հայրը՝ հաճախորդին չմոռանալով, այլ հե՛նց հաճախորդին *դիմելով*, բայց միաժամանակ հարցը որդուն, մյուսներին՝ ինչ-որ բան ցանկացող բոլորին ուղղելով:

– Մեջը չամիչ բլիթներ, – ասաց տղան:

Հայրը պատասխանեց՝ բարկությունը հազիվ զսպելով, համարյա շշուկով, բայց որդուն նայելու փոխարեն՝ հաճախորդին նայելով:

– Բլ-լիթներ չունե՛մ, – շշնջաց նա, – *ոչ մի* տեսակի: Բլ-լիթն ի՞նչ ես անում: Ամեն ինչ ունեմ, բլ-լիթ չունեմ: Բլ-լիթը ո՞րն է, ուզածդ ի՞նչ է:

– Բլիթներ, – հանգիստ ասաց մարդը, – փոքրիկ տղայի համար:

– Բլ-լիթներ չունեմ, – կրկնեց նպարավաճառը: – Ես էլ փոքրիկ տղա ունեմ, – նա որդուն մատնացույց արեց: – Խնձոր տվեցի, նարինջ, կոնֆետ, բանան տվեցի՝ լավ-լավ բաներ: – Նա ուղիղ հաճախորդի աչքերին նայեց ու, կարծես բարկացած՝ նորից ասաց, – ուզածդ *ի՞նչ է*:

– Եղբայրիս տղան, – ասաց հաճախորդը, – հիվանդ է: Լացում, բլիթ ուզում է, ասում՝ «մեջը չամիչ»:

Մինչդեռ ամեն մարդ իր կյանքն է ապրում, ու ամեն կյանք իր կարիքով է ապրում, և նպարավաճառի տղան, նորից հորը նայելով, նորից ասաց.

– Հայրի՛կ:

Բայց հայրն այս անգամ չուզեց որդուն նայել: Փոխարենը նայեց մարդուն, որի եղբորորդին հիվանդ էր ու չամիչով բլիթ էր ուզել: Ըմբռնումով նայեց, կարեկցանքով, սրա հետ մեկտեղ՝ մի տեսակ գեղջուկի բարկությամբ, որը մարդուն չէր ուղղված, չէ, այլ հենց աշխարհին, հիվանդությանը, ցավին, թախիծին, այն ամենին, որ սիրտն ուզում է, բայց չի գտնում: Նպարավաճառն ինքն իր վրա էլ էր բարկացած, որովհետև թեկուզ տնից յոթ հազար մղոն հեռու՝ Կալիֆոռնիայի հթակա քաղաքում, խանութ էր բացել, այդ խանութում չամիչով բլիթ չուներ. չուներ այն, ինչ հիվանդ երեխան էր ուզել: Նա իր տղային ցույց տալով՝ հաճախորդին դիմեց.

– Խնձոր կա, – ասաց, – նարինջ, կոնֆետ, բանան, բայց բլիթներ չունեմ: Տղա՛ս է: Երեք տարեկան է: Հիվանդ չի: Շատ բան է ուզում: Բայց ուզածն ինչ է՝ *չգիտեմ*: Ո՞վ իմանա՛ ինչ է ուզում: Ուզում է ու վերջ: Աստծուն նայում է՝ ասում. «Է՛ս եմ ուզում, է՛ն եմ ուզում», բայց չի գոհանում: Միշտ ուզում է: Միշտ տխուր է: Աստված էս տխրության դեմ էլ ի՞նչ ունի: Ամեն ինչ տվել է՝ աշխարհը, արևը, հայր, մայր, քույր, եղբայր, քեռի, զարմիկ, տուն, հող, վառարան, սեղան, անկողին: Խեղճ Աստված ամեն բան տվել է, բայց ոչ ոք չի գոհանում: Բոլորը էդ փոքրիկ տղայի պես հիվանդ են, բոլորը ասում են՝ մեջը չամիչ բլիթ եմ ուզում:– Նպարավաճառը մի պահ լռեց, որ խոր շունչ քաշի: Հետո արտաշնչեց ու ասաց. – *Մեջը չամիչ բլիթ չկա*:

Նպարավաճառը սկսեց համարյա վեհության հասնող անհամբերությամբ ու զայրույթով գործ անել: Նախ թղթե տոպրակ վերցրեց ու շխկոցով բացեց: Հետո սկսեց մեջը բաներ լցնել:

– Նարի՛նջ, շատ սիրուն: Խնձո՛ր: Աննա՛ն: Բանա՛ն: Աննահակա՛ն:– Այս խոսքերով՝ մեղմորեն, վերին աստիճանի սիրալիր և հաճախորդի ու նրա եղբորորդու հանդեպ անկեղծ կարեկցանքով՝ տոպրակը մեկնեց:

– Տա՛ր տղային: Չվճարես: Փող չեմ վերցնի:– Հետո կամացուկ կրկնեց,– չամիչով բլիթ չկա:

– Լացում է,– ասաց մարդը,– շատ է հիվանդ: Ասում՝ «Մեջը չամիչ բլիթ եմ ուզում»: Շնորհակալ եմ, բայց խնձոր, նարինջ, ինչ ասես՝ տվել ենք,– նա տոպրակը վաճառասեղանին դրեց:– Հիվանդ է, ասում է՝ «Մեջը չամիչ բլիթ տվեք»: Խնձոր, նարինջ չի օգնում: Ներեք ինձ: Գնամ՝ մեծ խանութը փորձեմ: Երևի *էնտեղ* մեջը չամիչ բլիթ ունենան:

– Լավ, բարեկա՛ն,– շշնջաց նպարավաճառը,– գնա, մեծ խանութը փորձիր: Բայց չամիչով բլիթ չունեն: Ոչ մի տեղ չունեն:

Հաճախորդը համարյա ամաչելով դուրս գնաց: Մի ամբողջ րոպե նպարավաճառը, վաճառասեղանի հետևը կանգնած, որդուն էր նայում: Հանկարծ սկսեց իր լեզվով՝ հայերեն խոսել:

– Աշխարհը գժվել է,– ասաց:– Մենակ Ռուսաստանում՝ մեր երկրին, մեր սիրուն փոքրիկ ժողովրդին էդքան մոտ, օրից օր սոված անթիվ-անհամար մարդիկ, երեխաներ կան: Մրսած, թշվառ, ոտաբոբիկ թափառում են՝ առանց քնելու տեղի: Աղոթում են, որ մի կտոր չոր հաց ուտեն, պառկելու տեղ ունենան, մի գիշեր հանգիստ քնեն: Իսկ մե՞նք: Մենք ի՞նչ ենք անում: Մենք, որ Իթակայում ենք, Կալիֆոռնիայում, Ամերիկայի պես մեծ երկրում: Ի՞նչ ենք անում: Լավ-լավ շորեր ենք հագնում: Ամեն առավոտ զարթնում՝ կարգին կոշիկ ենք հագնում: Հանգիստ փողոց ենք դուրս գալիս, ու ոչ մեկը հրացանն առած չի հարձակվում, տները չի վառում,

երեխաներիս, եղբայրներիս, հայրերիս չի սպանում:
Մեքենա նստում՝ քաղաքից դուրս ենք գնում: Կուշտ
ուտում: Գիշերներն անկողին ենք մտնում ու հանգիստ
քնում: Ու ի՞նչ. դժգո՛հ ենք: *Էսքանից հետո դժգոհ ենք:*–
Նպարավաճառն այս ապշեցուցիչ ճշմարտությունը
տղայի հանդեպ անասելի սիրով բղավեց:

– Խնձո՛ր,– ասաց,– նարինջ, կոնֆետ, բանան...
Աստված սիրես, տղա՛ս, էդ բանը չանե՛ս: Թե ես էլ
անեմ, դու որդիս ես, դու ինձնից լավն ես, դու՛ չպիտի
անես: Գոհ եղիր: Երջանիկ եղիր: Ես դժբախտ եմ, բայց
դու պիտի երջանիկ լինես,– նա մատը խանութի խոր-
քի դռանն արեց, որը տուն էր տանում: Տղան՝ զգաս-
տացած ու հնազանդ, խանութից դուրս եկավ ու գնաց
տուն:

Նպարավաճառն ինչ–որ ժամանակ փորձում էր ինքն
իրեն հավաքել: Վերջապես որոշեց, որ խաղաղվել է ու
կարող է հաճախորդի՝ Ուլիսես Մաքուլիի հետ խոսել:
Դարձավ տղային ու ձև արեց, թե զվարթ է: Նույնիսկ
ժպտաց:

– Սիրտդ ի՞նչ է ուզում, փոքրի՛կ Ուլիսես:

– Ձավար:

– Ո՞ր ձավարից:

– Վարսակի:

– Վարսակի երկու տեսակ ձավար ունենք, փոքրի՛կ
Ուլիսես: Սովորական և արագ եփվող: Երկու տեսակի՝
դանդաղ ու արագ: Մեկը՝ հինը, մյուսը՝ նորը: Մայրիկդ
որի՞ց կուզի, փոքրի՛կ Ուլիսես:

Ուլիսեսը մտքի մեջ ընկավ, հետո կրկնեց.

– Վարսակի:

– Հին տեսակի՞ց, թե՞ նորից:

Բայց փոքրիկը չգիտեր, ու նպարավաճառը նրա
փոխարեն որոշում կայացրեց:

– Լավ, ուրեմն վերջին՝ նոր տեսակից: Քեզնից տասնութ սենթ, խնդրեմ, փոքրիկ Ուլիսես:

Ուլիսեսը ձեռքը պարզեց, բռունցքը բացեց, և նպարավաճառը ափից քսանհինգսենթանոցը վերցրեց: Հետո մանրը տվեց ու ասաց.

– Տասնութ սենթ: Տասնինը, քսան և մի հատ հինգսենթանոց: Շնորհակալ եմ, փոքրիկ Ուլիսես:

– Խնդրեմ, պարո՛ն Արա,– պատասխանեց Ուլիսեսը: Նա վարսակի ձավարի տուփը վերցրեց ու խանութից դուրս գնաց: Շատ դժվար էր ամեն ինչ հասկանալը: Նախ՝ ծիրանների պատմությունը, հետո՝ չամիչով բլիթների, հետո՝ տղայի հետ անհասկանալի լեզվով խոսող նպարավաճառին: Բայց մեկ է՝ շա՛տ հետաքրքրիր էր: Փողոցում փոքրիկը սկսեց ցատկոտել, որ սովորաբար անում էր, երբ մի բանից գոհ էր լինում, ապա վազելով տուն գնաց:

26. ՏԻԿԻՆ ՄԱՔՈՒԻՆ

Տիկին Մաքուլին, խոհանոցում մի հոգու համար սեղան գցած, սպասում էր, որ Հոմերը նախաճաշի գա: Վարսակի շիլան սեղանին դրեց, ու տղան եկավ: Մայրը մի հայացք գցեց վրան և իսկույն հասկացավ, որ դեռ գիշերվա տարօրինակ երազի տպավորության տակ էր: Երևի ինքն էլ չգիտեր, որ քնի մեջ լաց է եղել, բայց մի տեսակ ընկճված էր, ոնց որ վիշտ արած մարդը:

– Ո՛նց եմ էսքան երկար քնած մնացել,– ասաց:– Համարյա ինն անց կես է: Զարթուցիչն ու՛ր էր կորել:

– Շատ ես աշխատում,– ասաց տիկին Մաքուլին:– Մի քիչ էլ պիտի հանգստանաս:

– Էնքան էլ շատ չեմ աշխատում: Համ էլ վաղը կիրակի է:

Նա առավոտյան աղոթքն ասաց, որը, չգիտես ինչու, սովորականից կրկնակի երկար տևեց: Հետո գդալը վերցրեց, որ շիլան ուտի, բայց կեսից կանգ առավ ու սկսեց տարօրինակ հայացքով գդալը զննել: Հետո լվացարանի առջև կանգնած մայրիկին դարձավ:

– Մա՞:

– Հա, Հոմե՛ր:

– Երեկ որ տուն եկա, հետո չխոսեցի, որովհետև ասածիդ պես՝ *խոսելու* չէր գալիս: Մեկ էլ հանկարծ տան ճանապարհին լաց էի եղել: Դու հո գիտես, որ փոքր ժամանակ կամ դպրոցում մի բան պատահեր՝ լաց չէի լինում: Ամաչում էի: Ուլիսեսը որ Ուլիսես է՝ լաց չի լինում: Բայց երեկ չդիմացա ու չեմ էլ հիշում՝ ամաչում էի: Չէ, ոչ էլ ամաչում էի: Բայց չէի կարող ուղիղ տուն գալ: Իթակայի գինու գործարանը պիտի գնայի, հետո քաղաքը կտրեի՝ ավագ դպրոց քշեի: Ճանապարհին մի տան կողքով անցա. էնտեղ երեկոյան՝ ավելի շուտ, տոն էին նշում, իսկ հիմա լույսերը հանգած էին: Էդ մարդկանց հեռագիր էի տարել: Գիտես՝ ինչ հեռագիր: Հետո քշեցի քաղաքով մեկ՝ փողոցից փողոց, ամեն ինչին նայում էի՝ ծանոթ շենքերին, բուրբ տեղերին, որ ամբողջ կյանքս իմացել եմ, ու ամեն տեղ լիքը մարդ կար: Ու մեկ էլ իսկապես Իթական *տեսա*, իսկապես մարդկանց ճանաչեցի: Սիրտս ցավեց, ու նույնիսկ աղոթեցի նրանց համար, որ վատ բան չպատահի: Սրանից հետո լացս կտրվեց: Առաջ կարծում էի, թե մեծ տղան երբեք լաց չի լինի, բայց հիմա մտածում եմ՝ հենց մեծ ժամանակ էլ *սկսում* է, որովհետև սկսում է պարզել՝ ինչն ինչոց է,– Հոմերը մի պահ լռեց, հետո խոսեց՝ առաջվանից ավելի մռայլված,– ու պարզած ամեն ինչը համարյա միշտ վատ է կամ տխուր:– Նա սպասեց, որ մայրը մի խոսք ասի,

բայց մայրը լուռ, գլուխը կախ, իր գործն էր անում:—
Ինչու՞ է եղպես:

Տիկին Մաքուլին, առանց գլուխը բարձրացնելու, սկսեց խոսել:

– Ինքդ կիմանաս: Ոչ ոք չի ասի: Ամեն մարդ ինքն է իր համար պարզում՝ իր ձևով: Ախր ամեն մարդը մի *աշխարհ* է:

– Բայց ինչու՞ լաց եղա: Ինչու՞ հետո խոսելս չէր գալիս: Ինչու՞ չգիտեի, թե ինչ ասեմ.քեզ, ինքս ինձ:

– Խղճալուց: Իմ կարծիքով՝ խղճալուց էս լաց եղել: Մարդը, որ խղճմտանք չունի, մարդ չի: Մարդը, որ աշխարհի ցավը տեսնում ու լաց չի լինում՝ կես մարդ է, իսկ աշխարհի ցավը միշտ կա: Սա չի նշանակում, թե մարդ պիտի հուսահատվի: Լավ մարդը պիտի փորձի էս ցավն ամոքել: Հիմարն էս ցավը չի տեսնի, միայն իրենը կզգա: Խեղճ ու դժբախտ վատ մարդն էս ցավը գնացած տեղը կտարածի: Բայց երևի թե մարդը մեղք չունի, որովհետև իր ուզելով չի հայտնվել էստեղ, ոչ էլ ոչնչից է ստեղծվել: Մարդը մարդու սերունդ է: Չեմ կարծում, թե վատ մարդը *գիտի*, որ վատն է: Ուղղակի բախտը չի բերել, եղբան բան: Նախաճաշդ կեր:

Հանկարծ Հոմերին թվաց, որ կարող է ուտել:

27. ԼԱՅՈՆԵԼԸ

Ուլիսես Մաքուլին իր լավագույն ընկերոջ՝ Լայոնել Քաբոթի, *մեծն* Լայոնելի հետ Մաքուլիների խոհանոցը մտան: Թեկուզ Լայոնելն Ուլիսեսից ամբողջ վեց տարով մեծ էր, կասկած չկար, որ այս երկուսն իսկական ընկերներ են: Նրանք միասին քայլում էին, միասին կանգ առնում, ոնց որ մենակ շատ մտերիմ ընկերները կանեին՝ առանց իրենց հաշիվ տալու, անգամ առանց խոսք փոխանակելու կարիքի:

– Տիկի՛ն Մաքուի, – ասաց Լայոնելը, – եկա՛ հարցնեմ.
թույլ կտա՛ք, որ Ուլիսեսն ինձ հետ գրադարան գա: Քույ-
րիկիս՝ Լիլիանի գիրքը պիտի տանեմ:

– Լավ, Լայոնել, – ասաց տիկին Մաքուին: – Բա ո՞նց է,
որ մյուս տղաների՝ Օգիի, Ալֆի, Շաքի ու մյուսների հետ
չես:

– Նրանք... – սկսեց ասել Լայոնելն ու շփոթված պա-
պանձվեց: Հետո ասաց, – ինձ քշեցին: Ինձ չեն սիրում,
ասում են՝ դժբո եմ:

– Հիմար բաներ են դուրս տալիս, – ասաց տիկին
Մաքուին: – Դու մեր թաղի ամենալավ տղան ես: Բայց
մի՛ նեղացիր, իրենք էլ են լավ տղաներ:

– Չեմ նեղանում, – պատասխանեց Լայոնելը: – Բոլո-
րին էլ սիրում եմ: Բայց հենց մի փոքրիկ սխալ անեմ՝
ինձ քշում են: Համ էլ հայհոյում են: Ամեն փոքրիկ սխալի
համար բարկանում են վրաս: Ասում են՝ «հերիք է, Լա՛-
յոնել»: Հենց ասեցին՝ գիտեմ, որ պիտի գնամ: Մեկ-մեկ
իսկի հինգ րոպե էլ չի տևում: Մեկ-մեկ *առաջին* արածս
սխալ է դուրս գալիս: Ու միանգամից ասում են՝ «հերիք
է, Լա՛յոնել»: Իսկի չեմ էլ հասկանում, թե ինչն եմ սխալ
արել: Ուզածներն ի՞նչ է: Ուրիշ բան չեմ ուզում իմանալ,
մենակ սա, բայց ասող չկա: Ամեն շաբաթ օր ինձ խաղից
վռնդում են: Մենակ Ուլիսեսն է հետս խաղում: Միակ
ընկերս է: Բայց մի օր էդ մյուսները դեռ շատ կփոշմա-
նեն: Օրերից մի օր կգան խնդրելու, որ իրենց օգնեմ,
տիկի՛ն Մաքուի, ու ես կօգնեմ, ու իրենք կափսոսան, որ
ինձ միշտ քշում էին: Կարելի՞ է ջուր խմել:

– Իհա՛րկե, Լայոնել, – տիկին Մաքուին տղայի համար
մի բաժակ ջուր լցրեց, ու սա ագահաբար խմեց՝ կլկլո-
ցով, ոնց որ տղաները խմում են, երբ ջուրն իրենց դեռ
աշխարհի ամենահրաշալի ըմպելիքն է թվում:

– Դու ջուր չե՛ս ուզում, Ուլիսե՛ս, – հարցրեց նա:

Ուլիսեսը գլխով արեց, որ ինքն էլ մի բաժակ կուզեր:
Խմեց, վերջացրեց, ու Լայոնելն ասաց.

– Երևի արդեն գնանք, տիկի՛ն Մաքուլի,– և ընկերները միասին դուրս եկան:

Երբ տղաները գնացին, Հոմերը մորը հարցրեց.

– Փոքր ժամանակ Մարկուսն է՞լ էր Ուլիսեսի պես:

– Ի՞նչը նկատի ունես:

– Դե Ուլիսեսի պես, էլի. որ ամեն ինչով հետաքրքրվում է, անընդհատ ամեն ինչ դիտում է: Ոչինչ չի ասում, բայց ամեն ինչից հրճվում է, ոնց որ բուլորին սիրի, ու բուլորն իրեն սիրեն: Շատ բառեր չգիտի, կարդալ չգիտի, բայց համարյա միշտ հերիք է վրան նայես, որ հասկանաս: Որ ձայն էլ չհանի, համարյա միշտ կհասկանաս, թե քեզ ինչ է ուզում ասել: Մարկուսն է՞լ էր էդպիսին:

– Ո՞նց ասեմ: Մարկուսն ու Ուլիսեսը *եղբայրներ են*: Իհարկե Ուլիսեսը Մարկուսին նման կլինի: Բայց *նույնը* չեն:

– Ուլիսեսը մի օր երևելի մարդ կդառնա, չէ՞:

– Երևի ոչ ամբողջ աշխարհի աչքին, բայց անպայման՝ երևելի կդառնա, որովհետև հիմա էլ է երևելի:

– Մարկուսն էլ էր փոքր ժամանակ երևելի, չէ՞:

– Իհարկե բուլորդ էլ իրար նման եք, բայց շատ չէ: Մարկուսը քեզ նման անհանգիստ չէր: Ինքնամփոփ էր: Ավելի շատ սիրում էր մենակ լինել, քան Ուլիսեսի պես՝ մարդկանց մեջ: Մարկուսը կարդալ էր սիրում, երաժշտություն լսել, մենակ մնալ ու մենակ զբոսնել:

– Բայց Ուլիսեսը Մարկուսին *շատ* է սիրում:

– Ուլիսեսը բուլորին սիրում է,– ասաց տիկին Մաքուլին:– Աշխարհի բուլոր մարդկանց:

– Հա,– համաձայնվեց Հոմերը,– բայց Մարկուսին *հայրուկ* է սիրում, ու գիտեմ, թե ինչու: Որովհետև Մարկուսը, շատ էլ թե բանակ է գնացել, դեռ երեխա է:

Իմ կարծիքով բոլոր երեխաները բոլոր պատահած մարդկանց մեջ երեխա են փնտրում: Ու եթե մեծ մարդու մեջ երեխա են գտնում, իմ կարծիքով՝ էդ մարդուն մյուսներից շատ են սկսում սիրել: Երանի կարողանայի մեծանալ, բայց Ուլիսեսի պես մնալ: Աշխարհում ամենաշատը նրանով են հիանում: Քեզ պատմե՛ց՝ երեկ հետն ինչ էր պատահել:

– Ինքը ոչ մի խոսք չի ասել: Օգին եկավ ու պատմեց:

– Բա որ հեռագրատնից տուն բերեցի, ի՞նչ ասեց:

– Ոչ մի բան: Նստեց, երաժշտություն լսեց, հետո ընթերցեցինք: Որ ննջարան տարա՝ պառկեցրի, մենակ «Մեծ Քրիս» ասեց ու քնեց: Որ Օգին չպատմեր, չէի էլ իմանա, թե Մեծ Քրիսն ով է:

– Ուլիսեսն ամենաշատը ու՛մ է նման:

– Հայրիկին:

– Դու հայրիկին փոքր ժամանակ ճանաչե՞լ ես:

– Ի՞նչ ես ասում, – զարմացավ տիկին Մաքուլին, – ո՞նց ճանաչեի: Հայրդ ինձնից յոթ տարով մեծ էր: Ուլիսեսն էնպիսին է, ոնց որ հայրիկդ՝ *ամբողջ* կյանքում: Փա՛ռք Աստծու, բախտավոր մարդ եմ: Երեխաներս, երեխա լինելուց բացի, լավ մարդ են: Եթե մենակ երեխա լինեին, ինձ էդքան բախտավոր չէի կարծի: Ոտքդ ի՞նչ է եղել:

– Հե՛ջ, – ասաց Հոմերը, – ընկել եմ: Գնացի հեռագրատուն:

Հոմերը տնից դուրս եկավ: Մայրը լսեց՝ ոնց է հեծանիվը մի քանի անգամ գետնին խփում, որ տեսնի՞ դողերը լա՛վ են փչված, հետո տեսավ, որ տունը շրջանցեց ու քաղաք քշեց:

28. ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ

Մտերիմ ընկերները՝ Ուլիսեսն ու Լայոնելը, գրադարանի կողմը քայլեցին: Ճամփի կեսին տեսան, որ հթակայի առաջին երիցական եկեղեցուց թաղման թափոր է դուրս գալիս: Դագաղակիրները մի պարզ դագաղ դեպի սգակառքն էին տանում: Հետևից մի բուռ սգավորներ էին գնում:

– Վազեցինք, Ուլիսես՛ս, – գոչեց Լայոնելը, – թաղում է:

Նրանք իրար ձեռք բռնած՝ թաղի կեսը վազեցին ու իրադարձությունների կենտրոն հասան:

– Հե՛ն է դագաղը, – շշնջաց Լայոնելը: – Մեջը մեռած մարդ կա: Տեսնես ո՞վ կլինի: Ծաղիկները տեսա՞ր: Մեռածներին ծաղիկ են նվիրում: Լացողների՛ն տես: Ծանոթներն են:

Լայոնելը մի մարդու դարձավ, որը կարծես զբաղված չէր: Մարդը քիթն էր սրբում, հետո թաշկինակն աչքերին տարավ:

– Ո՞վ է մեռել, – հարցրեց Լայոնելը:

– Խեղճ կուզիկ Ջոնի Մերիվեզերը, – պատասխանեց մարդը:

– Խեղճ կուզիկ Ջոնի Մերիվեզերն է, – Ուլիսեսին ասաց Լայոնելը:

– Յոթանասուն տարեկան էր, – ասաց մարդը:

– Յոթանասուն տարեկան էր, – Ուլիսեսին ասաց Լայոնելը:

– Երեսուն տարի Մարիփոզա փողոցի ու Բրոդվեյի անկյանը ադիբուդի էր ծախում:

– Մերիփոզա փողոցի ու Բրոդվեյի... – Լայոնելը հանկարծ պապանձվեց ու մարդուն նայեց: – Ո՞նց, ադիբուդի ծախո՞ղը, – համարյա գոռաց նա:

– Հա, Ջոնի Մերիվեզերը: Մշտնջենական հանգստի գնաց:

– Ես նրան *ճանաչում* էի, – բղավեց Լայոնելը: – Քանի՛ անգամ եմ ադիբուդի առել: *Ի՞նքն է մահացել:*

– Հա, չի էլ զգացել՝ քնի մեջ: Աստված հոգին լուսավորի:

– Ախր *ճանաչում* էի նրան, – ասաց Լայոնելը, մի կերպ դիմանալով, որ լաց չլինի: – Չգիտեի, որ Ջոնի Մերիվեզերն է, բայց *ճանաչում* էի:

Լայոնելը շրջվեց ու ընկերոջը գրկեց:

– Ջոնին է մեռել, – ասաց՝ լացը հազիվ զսպելով: – Ջոնի Մերիվեզերը: Իմ ամենալավ ընկերներից մեկը: Հոգին Աստծուն է ավանդել:

Սգակառքը մեկնեց, ու շուտով եկեղեցու առաջ, Լայոնելից և Ուլիսեսից բացի, ոչ ոք չէր մնացել: Չգիտես ինչու՝ Լայոնելին թվում էր, որ չի կարելի թողնել – գնալ մի տեղից, որտեղ քեզ ասել են, որ *ճանաչած* մարդն է մահացել, թեկուզ և չգիտեիր, որ անունը Ջոնի Մերիվեզեր է: Բայց վերջիվերջո որոշեց, որ եկեղեցու առաջ անվերջ կանգնած մնալ չի կարող, *ինչքան էլ* որ ժամանակին Ջոնի Մերիվեզերից ադիբուդի գնած լիներ: Եվ ադիբուդին հիշելով, համարյա համը բերնում զգալով՝ Ուլիսեսի հետ *ճանապարհը* շարունակեց:

Տղաները գրադարան մտան ու հայտնվեցին մի սրահում, ուր խոր, հանդիսավոր լռություն էր տիրում, կարծես այստեղ էլ սգո արարողություն լիներ: Մի քանի ծեր մարդ լրագիր էին կարդում: Քաղաքի փիլիսոփաները հաստափոր գրքերի վրա էին խոնարհվել: Դպրոցական տղաներն ու աղջիկները դասի համար նյութ էին փնտրում, բայց այս ամենը՝ լռեցյալն, որովհետև եկել էին գիտելիք ձեռք բերելու: Նրանց չորս կողմը գրքեր էին: Նրանք եկել էին գաղտնիքներ պարզելու: Լայոնելը ոչ միայն շշուկով էր խոսում, այլև սկսեց ոտքերի ծայրին քայլել: Ծշուկով խոսելու պատճառը

ընթերցողներին չխանգարելը չէր, այլ, իր կարծիքով, գրքերի հանդեպ ակնածանքը: Ուլիսեսն էլ նրա նման ուտքերի ծայրին քայլեց, ու միասին սկսեցին գրադարանը հետազոտել: Երկուսն էլ լիքը գանձեր գտան, Լայոնելը՝ գրքեր, Ուլիսեսը՝ մարդկանց: Լայոնելը գիրք չէր կարդում ու գիրք վերցնելու համար չէր գրադարան եկել: Նրան դուր էր գալիս *տեսնել* այդ հազարավոր գրքերը: Նա մատը դարակներից մեկի կողմն արեց ու շշուկով ընկերոջն ասաց.

– Տես՝ ինչ շատ են: Հեն են՝ նրանք... սրանք... սրանք...

Տե՛ս են կարմիրը: Էն բուրբը: Էն կանաչը: Էն բուրբը:

Վերջիվերջո տիկին Գալագերը՝ ծեր գրադարանավարուհին, տղաներին նկատեց ու մոտ գնաց: *Ինքը* բուրբովին էլ շշուկով չխոսեց: Լավ էլ բարձրաձայն խոսեց, կարծես հեջ գրադարանում չլիներ: Այս փաստը Լայոնելին ցնցեց, իսկ ընթերցողներից մի քանիսին ստիպեց գլուխները բարձրացնել:

– Ի՞նչ ես փնտրում, տղա՛ս, – հարցրեց նա:

– Գրքեր, – շշուկով պատասխանեց Լայոնելը:

– Ո՞ր գրքերն ես փնտրում:

– Բուրբ:

– Բուրբ: Ի՞նչ նկատի ունես: Մի քարտով միայն չորսը կարող ես վերցնել:

– Ես *ոչ մեկն էլ* չեմ ուզում վերցնել:

– Լավ, բա ի՞նչ ես ուզում *անել*:

– Ուղղակի նայել:

– Նայե՛լ: Գրադարանը գրքերի *վրա* նայելու համար չէ: Կարող ես *մեջը* նայել, կարող ես միջի *նկարները* նայել: Բայց կազմերին նայես, որ ի՞նչ:

– Սիրում եմ, – շշնջաց Լայոնելը: – Չի՞ կարելի:

– Ի՞նչ ասեմ: Նայելու դեմ օրենք չկա, – նա Ուլիսեսի կողմը շրջվեց: – Սա՞՛ ով է:

– Սա Ուլիսեսն է: Կարդալ չգիտի:

– Իսկ դու՞:

– Չէ, բայց ինքն էլ չգիտի: Դրա համար էլ ընկերներ ենք: Իմ ճանաչած միակ մարդն է, որ ինքն էլ կարդալ չգիտի:

Ծեր գրադարանավարուհին երկու ընկերներին նայեց: Գրադարանում աշխատած տարիների ընթացքում էսպիսի բան դեռ չէր պատահել:

– Ի՞նչ արած: Գուցե և լավ է, որ կարդալ չգիտեք: Ես գիտեմ: Վաթսուն տարի կարդացել եմ ու չէի ասի, թե առանձնապես տարբերություն եմ տեսնում: Վազե՛ք՝ ինչքան սրտներդ ուզի՝ նայեք:

– Հա, տիկի՛ն:

Ընկերները շարժվեցին դեպի զարմանահրաշ գաղտնիքների ու արկածների թագավորության խոր-խորատները: Լայոնելն Ուլիսեսին էլի գրքեր ցույց տվեց:

– Սրա՛նք տես,– ասաց,– ու ա՛յ նրանք: Ու դրանք: Չորս կողմը գրքեր են, Ուլիսե՛ս,– նա մի պահ լռեց, որ մտածի:– Տեսնես մեջներն ի՞նչ է գրված:– Հետո խիտ դասավորված մի երկար դարակ ցույց տվեց,– էսքան գրքի մեջ,– ասաց,– ինչե՛ր գրված կլինեն:– Հետո մի կանաչ՝ թարմ խոտի գույնի գիրք գտավ:– Տե՛ս, ինչ սիրուն է, Ուլիսե՛ս:

Ինքն իր արածից մի փոքր վախեցած՝ նա գիրքը դարակից վերցրեց, մի պահ ձեռքում պահեց ու բացեց:

– Տեսա՛ր, Ուլիսես, գի՛րք է: Հես է, տե՛ս: Մեջն ինչ-որ բան է գրված,– ու մատը տառերին դրեց:– Էս մեկը «Ա» է: Ա՛յ էս մեկը: Մի ուրիշ տառ էլ կա, բայց չգիտեմ, թե որն է: Բոլոր տառերը տարբեր են, ու բոլոր բառերը տարբեր են,– նա հոգոց հանեց ու շուրջը՝ իրենց շրջապատած գրքերին նայեց:– Չեմ կարծում, թե երբևէ

կարդալ կտվորեն, բայց էնքա՛ն կուզեի իմանալ, թե ինչ են ասում: Տես՝ նկար էլ կա: Աղջկա նկար է, տե՛ս, – հետո էջերը թերթեց ու ասաց, – մինչև վերջ տառեր ու բառեր են: Գրադարան է, գիտե՛ս, Ուլիսես: Մեջն ամբողջը գրքեր են:

Նա տպագրած էջերին մի տեսակ ակնածանքով նայեց ու քթի տակ ինչ–որ բան մրմնջաց, կարծես կարդալ էր փորձում: Հետո գլուխը թափ տվեց:

– Չէ, Ուլիսես, մինչև կարդալ չիմանաս, չես իմանա՛ գրքերն ինչ են ասում: Իսկ ես կարդալ չգիտեմ:

Նա գիրքը կամացույց փակեց՝ տեղը դրեց, ու երկու ընկերները ոտքերի ծայրերին գրադարանից դուրս եկան: Ուլիսեսն էլի սկսեց ցատկոտել, որովհետև թվում էր, թե նոր բան է սովորել:

29. ՀՌԵՏՈՐԱԿԱՆ ԱԿՈՒՄԲՈՒՄ

Հոմեր Մաքուլին հեծանվից իջավ գաղութապետական ճարտարապետության և բողոքական եկեղեցական ոճի խառնուրդ՝ Իթակայի Հռետորական ակումբի սպիտակ շենքի առջև: Ժամը երկուսն անց կես էր, և շաբաթ օրվա բանախոսությունն ուր որ է՝ պիտի սկսվեր: Բնականաբար, միջին տարիքի կանանց, հիմնականում՝ մայրերի, բազմությունը առույգ քայլով ներս էր մտնում: Հեռագրատարը գլխարկի տակից մի հեռագիր հանեց ու սկսեց զննել: Այն հասցեագրված էր. «Ռոզալի Սիմս–Փիբոդիին, Իթակայի Հռետորական ակումբ, Իթակա, Կալիֆոռնիա: Հանձնել առձեռն»:

Երբ հեռագրատարը դահլիճ մտավ, ակումբի նախագահը՝ հիսունն անց կլորիկ մի տիկին, օրվա հռետորին էր ներկայացնում, որը, սակայն, բեմին չէր: Ակումբի նախագահը ընկույզ կոտրելու մուրճիկը խփեց սեղանին, և լսարանը սկսեց հանդարտվել:

– Հեռագիր եմ բերել,– տիկնոջը շշուկով ասաց Հոմերը,– տիկին Ռոզալի Սիմս-Փիբոդիի համար: Պետք է առձեռն հանձնեմ:

– Ռոզալի Սիմս-Փիբիթիի,– ուղղեց տիկինը:– Այո, նա հեռագիր է սպասում: Կհանձնեք, երբ ամբիոնին մոտենա:

– Ե՞րբ է մոտենալու:

– Հիմա՝ ուր որ է: Դուք նստեք, սպասեք: Հենց գա՛ր բեմ բարձրացեք ու լսելի հայտարարեք. «Հեռագիր Ռոզալի Սիմս-Փիբիթիի համար»: Ոչ թե *Փիբոդիի*, տղա՛ս:

– Հա, տիկին,– Հոմերը նստեց, իսկ տիկինը, կարևոր գործ կատարած մարդու գոհունակ ժպիտով, կամացուկ հեռացավ:

– Իթակայի Հռետորական ակումբի ունկնդիրներ,– ասաց Ակումբի նախագահը,– ձեզ համար հատուկ հյուր ենք հրավիրել: Այսօրվա մեր բանասացը Ռոզալի Սիմս-Փիբիթին է լինելու:– Նախագահը լռեց՝ սպասելով ավանդական ծափահարությանը: Ապա շարունակեց.

– Կարիք չունեմ ասելու, թե Ռոզալի Սիմս-Փիբիթին ով է: Նրա անունը քաջ հայտնի է, և բոլորս գիտենք, որ նշանավոր անձնավորություն է: Բայց արդյոք բոլո՞րս գիտենք, թե *ինչով* է նշանավոր,– և ինքն իր հարցին պատասխանեց:– Վախենամ՝ չգիտենք:– Ռոզալի Սիմս-Փիբիթիի պատմությունը,– շարունակեց նա, ասես Ռդիսևսի մասին առասպելից ոչ պակաս նշանավոր պատմություն էր պատմելու,– *հարկապես՝ ուշագրավ* է կանանց համար: Սիմս-Փիբիթին (տիկինը նախընտրում է այս անվամբ հանդես գալ) արկածներով, հույզերով, վտանգներով ու գեղեցիկ պատմություններով հագեցած կյանք է ապրել, բայց այսօր մյուսներից գրեթե չտարբերվող՝ սքանչելի, գեղեցիկ, սովորական *բրիտանուիի* է: Բրիտանուիի, որ պողպատի տոկունություն

ունի և շատ տղամարդկանցից ուժեղ ոգի: Իրականում Սիմս-Փիբիթի կյանքի պես արկածներով լի կյանք ապրած մարդիկ շատ չեն:

Այստեղ նրա ձայնի մեջ թախիժ հայտնվեց:

– Ինչ վերաբերում է մեզ՝ տանու կանանց, մայրերիս, այսպես ասած՝ երեխա խնամողներիս, Սիմս-Փիբիթի կյանքը մեզ երազ է թվում՝ *մեր* չիրականացած երազը՝ յուրաքանչյուրիս, որ մնացել է տանը, երեխա է բերել ու տան հոգսն է հոգացել: Մենք էլ *կուզեինք* նրա գեղեցիկ կյանքն ապրած լինել, եթե հանդգնեինք, սակայն Ճակատագրի կամոք մեզ նման՝ արկածներով հարուստ կյանք չի սահմանվել, և աշխարհը միայն մեկ Սիմս-Փիբիթի է ունեցել: Մե՛ն-միակ:

Ակումբի նախագահը լռեց, որ լսարանի ծանոթ՝ իր վաղեմի ընկերների դեմքերին նայի:

– Արդ ի՞նչն է, – շարունակեց նա, – որ Սիմս-Փիբիթին կանանց մեջ եզակի է դարձնում: Նրա արկածների ցանկն ապշեցուցիչ է, և հիմա, երբ դրանք թվարկեմ, ձեր հավատը չի գա, որ որևէ կին, այս ճանապարհն անցնելով, կարող է ողջ մնալ, մինչդեռ նա ոչ միայն ողջ-առողջ է, այլև *այստեղ*՝ մեզ հետ: Սիմս-Փիբիթին մեզ հետ պարզ կխոսի՝ պարզ լեզվով, որից շատերը գուցե սարսռան: Բայց նախ թույլ տվեք թվարկել այս արկածները: Հակիրճ, որովհետև մանրամասն թվարկումը շատ երկար կտևեր, քանզի նրա *ամեն օրը* մի նոր արկած է: Սիմս-Փիբիթին իր գնացած վայրն արկած է *դարձնում*, և վստահ եղեք՝ նախքան մեր փոքրիկ աննշան քաղաքից՝ Իթակայից հեռանալը, նա այստեղ բաներ կգտնի, որ ինքներս չենք իմացել:

– 1915-ից 1917-ը՝ առաջին պատերազմի տարիներին, Սիմս-Փիբիթին շտապ օգնության մեքենա է վարել: 1917-1918-ին մի այլ աղջկա հետ բեռնատար

շոգենավերով, ոտքով ու հեծյալ, շրջել է աշխարհով մեկ՝ ամենատարբեր կացարաններում, մինչև իսկ բնիկների հյուղակներում ապրելով: Քսանյոթ երկիր է այցելել: Չինաստանում մակույկով և պատգարակով Կանտոնից Հանքոու հասնել փորձելիս ձերբակալվել է Հարավային բանակի կողմից, – նախագահը դադար առավ, որ խորհրդավոր օտար բառերը մարսելու ժամանակ տա, ապա կրկնեց, – Կանտոնից Հանքոու: Սիմա-Փիբիթին իրեն գերողներից կարողացել է փախչել՝ անձրևների սեզոնին Սյան գետի ջրվեժը նետվելով, երբ ոչ մի նավակ սպառնալից ջրերը մտնել չէր հանդգնի:

– 1919-ին կտրել անցել է Հյուսիսային Աֆրիկան՝ Մարոկկոյից մինչև Եթովպիա: 1920-ին Սիրիայի գաղտնի ծառայության աշխատակից էր: Դամասկոսում հանդիպել է Ֆեյսալ թագավորին, որը նրան օգնել է հետազոտել Կուֆարան՝ մոլեռանդ սենուսիտների սրբազան մայրաքաղաքը Լիբիական անապատի սրտում, ուր մինչ այդ ոչ մի սպիտակամորթ ոտք դրած չկար: Սիմա-Փիբիթին ստիպված է եղել ծպտվել որպես եգիպտուհի և հազար մղոն ուղտ հեծած անցնել անտաշ բնիկների ուղեկցությամբ, որոնք անգլերեն մի բառ չեն իմացել:– Այս խոսքի վրա Հռետորական ակումբի նախագահն աչքերը բարձրացրեց, որ իր երկու ամենամտերիմ ընկերուհիներին նայի: Հոմեր Մաքուլին մտածեց, թե տեսնես հայացքով ի՞նչ էր ուզում ասել, հետո՝ թե դեռ ինչքա՞ն է պատրաստվում այս անհավատալի, զարմանալի անձնավորության մասին խոսել:

– 1923-ի ընթացքում, – շարունակեց հռետորը, – Սիմա-Փիբիթին՝ այս անգամ որպես արաբ կին ծպտված, արաբական նավով տասնչորս օր Կարմիր ծովով նավարկել, Ջեյզանի արգելված նավահանգիստն է հասել: 1925-ին բարձրացել է Մարոկկոյի Ատլասի լեռները: 1926-ին,

ն՞վ իմանա՝ աշխարհի ռեկորդ սահմանելով, հազար մղոն անցել՝ կտրել է Եթովպիան:– Ապա իր և իր նմանների հանդեպ անթաքույց արհամարհանքով՝ Իթակայի Հռետորական ակումբի նախագահն ասաց.

– Հարց եմ տալիս. արդյոք մենք հաճույքո՞վ ենք կտրում անգամ Գոթչոքից մինչև Ռեդինգ-փարք տարածությունը,– նա հառաչեց, ապա, ինքն իր հարցի պատասխանը չիմանալով, ասաց.

– Գուցե վատ չէր լինի,– ինչից հետո վերադարձավ օրվա հռետորին ներկայացնելու գործին և մտքի թելը գտնելու համար ձեռքի գրառումներին նայեց:

– 1928-ին Սիմս-Փիբիթին, մեկ այս, մեկ այն տեղաբնակ կնոջ կերպարանքով ծպտված, լոնդոնյան մի լրագրի համար Բալկաններում ստեղծված իրավիճակն է ներկայացրել:

Ձանձրացած, անհամբեր, հեռագրատուն ու իր աշխատանքին վերադառնալ տենչալով՝ Հոմերը մտածեց. «Տեսնես ինչու՞ է շարունակ ծպտվել»:

– 1930-ին Սիմս-Փիբիթին անհավանական ճամփորդություն է կատարել Թուրքիայով, ուր մի թուրքի է հանդիպել՝ Մուսթաֆա Բենալին: Այս ընթացքում որպես սարերից եկած թուրք աղջիկ է ծպտվել: Ձի հեծած ինը հազար մղոն է կտրել, ողջ Մերձավոր Արևելքը: Ադրբեջանում ականատես է եղել կոմունիստների Կարմիր բանակի և Կովկասի գյուղացիների բախմանը: 1931-ին ճամփորդել է Հարավային Ամերիկայով և հետազոտել է Բրազիլիայի ջունգլիները՝ բնիկ տղամարդկանցից բացի, այլ ուղեկցորդ չունենալով, որոնցից մեկին, իր իսկ հավաստմամբ, Մաքս էին կոչում: Սիմս-Փիբիթի արկածները վերջ չունեն, և, իհարկե, դուք նրան, այլ ոչ *ինձ* լսելու եք եկել:– Համեստության այս դրսևորումից նախագահը ջղաձիգ ժպտաց, ինչին

հետևեց ընկերների կարեկցական, բայց բուռն ծիծաղը: Երբ լսարանը նորից հանդարտվել էր, նախագահը հստակ ու հանդիսավոր ձայնով ասաց.

– Ինձ՝ ակումբի նախագահիս համար մեծ պատիվ է Ռոզալի Սիմս-Փիբիթիին ձեզ ներկայացնելը:

Հանդիսատեսն իսկույն բուռն ծափահարեց: Ակումբի նախագահը հետնաբեմի դռան կողմը շրջվեց՝ երևելի հյուրին ողջունելու համար, բայց վերջինս չկար: Հավաքվածները՝ այս ուշացումից օգտվելով, էլ ավելի բուռն ծափահարեցին, և մոտ երկու րոպե անդադար ծափահարելուց հետո, երբ կանանց մի մասը սկսեց խոստովանել, որ ձեռքերը ցավում են, մեծն տիկինը վերջապես հանդես եկավ:

Հոմերը կարծում էր, թե մինչև հիմա տեսած կանանցից բոլորովին տարբեր մեկին պիտի տեսնի: Չէր պատկերացնում, թե ինչ տեսք կունենա, բայց չէր կասկածում, որ հաստատ գոնե հետաքրքիր մեկը կլինի: Այդպես էլ եղավ: Ռոզալի Սիմս-Փիբիթիին պառավ, ձիու դեմքով, ցամաքած, բարձրահասակ, լղար ու անորոշ սեռի արարած էր: Հեռագիրը հանձնելու պահը եկել էր, բայց Հոմերը գուցե ապշած լինելուց մոռացավ, որ պիտի վազելով բեմ բարձրանա:

Վազելու հրահանգ տված բարեկիրթ տիկինը նրա կողմը նետվեց և, տղայի ուշքը դեռ գլուխը չեկած, բեմ հրեց՝ միաժամանակ ականջին այնքան բարձր շշնջալով, որ բոլորը լսեցին.

– Հը՛, տղա, հեռագիրը տար՝ տու՛ր:

Բեմին կանգնած տիկինը ձև արեց, թե իրարանցումը չի նկատում:

– Տիկնայ՛ք,– խոսքը սկսեց նա,– Իթակայի Հռետորական ակումբի անդամնե՛ր...– նրա ձայնը ճիշտ տեսքին համապատասխան էր՝ բարձր ու ծղրտան:

Հումերը վազքով բեմ բարձրացավ և հստակ ու զնգուն ձայնով հայտարարեց.

– Հեռագիր՝ Ռոզալի Սիմս-Փիբիթի համար:

Երևելի տիկինը խոսքն ընդհատեց և հեռագրատարին այնպես նայեց, կարծես սրա հայտնվելը բոլորովին անակնկալ մի բան էր:

– Լսում եմ, տղա՛ս, – ասաց նա, – Սիմս-Փիբիթին ես եմ, – հետո նորից լսարանին դարձավ, – ներող եղեք, տիկնայ՛ք: – Նա ստացականը ստորագրեց, հեռագիրը տղայի ձեռքից վերցրեց, ապա մի տասը ցենտանոց ձեռքը դնելով՝ ասաց.

– Առ, տղա՛, սա քեզ:

Հումերը սրտնեղեց, բայց ամեն ինչ այնքան անհեթեթ էր, այնքան շփոթեցնող, որ ոչ էլ ուզեց մերժելու փորձ անել: Մետաղադրամը վերցրեց, ձեռքից գցեց, բարձրացրեց ու սաստիկ շփոթված՝ բեմից ցած վազեց: Մինչդեռ տիկինն իր ելույթին անցավ:

– 1939 թվականին, – ասաց նա, – այս երկրորդ պատերազմի նախաշեմին ինձ վիճակվեց ծպտված, որպես էլզասցի կթվորուհի, գաղտնի առաքելությամբ Բավարիայում լինել...

Փողոցում Հումերը Հենրի Ուիլքինսոնին տեսավ, որը ջահել ժամանակ երկաթուղու վթարից զույգ ոտքը կորցրել էր: Հիմա՝ երեսուն տարի վթարից անց, նա, մայթին նստած, գրկին դրած գլխարկի միջից մատիտներ էր վաճառում: Հումերն ամբողջ կյանքը տեսել էր նրան, բայց անունը չգիտեր: Չգիտես ինչու՝ երբեք մատիտ չէր առել, ոչ էլ գլխարկը դրամ էր գցել: Այս անգամ Հենրի Ուիլքինսոնին տեսնելով՝ Հումերը տասը սենթանոցը նրա գլխարկը գցեց ու գնաց իր հեծանիվը գտնելու:

30. «ԲԵԹԵԼ» ՀՅՈՒՐԱՆՈՑՈՒՄ

Մոտ կես ժամ անց հեռագրատարը հեծանվից իջավ Այ փողոցի Բեթել հյուրանոցի առջև և երկար սանդուղքով բարձրացավ: Ընդարձակ սրահում գրասենյան չկար, փոխարենը պարզ երկար սեղան էր, վրան՝ մեն-մի զանգի կոճակ, և պատին փակցված գրություն, որն ասում էր՝ սեղմե՛ք: Հեռագրատարը չորս կողմը նայեց՝ փոքրիկ հյուրանոցի փակ դռների շարքին, ապա՝ հեռագրին, որը ոմն Դոլլի Հոթորնի էր հասցեագրված: Սենյակներից մեկում նվագարկիչ էր նվագում, և Հոմերը երկու ջահել կանանց ու տղամարդկանց զվարթ ձայները լսեց: Հաջորդ վայրկյանին մի ուրիշ սենյակից քառասունին մոտ մի տղամարդ դուրս եկավ ու դռան մեջ կանգնած՝ սկսեց ինչ-որ երիտասարդ կնոջ հետ խոսել, որի միայն գլուխն էր երևում: Հետո դուռը փակվեց, ու տղամարդն աստիճաններով ցած իջավ: Հոմերը զանգի կոճակը սեղմեց: Հենց նոր փակված դուռը նորից բացվեց, և աղջիկը ձայն տվեց. «Գալի՛ս եմ»: Երբ երևաց, հեռագրատարն ապշեց, թե ի՛նչ սիրունիկ ու ջահել էր: Մերիից ու Բեսսից շատ չէր տարբերվում:

- Հեռագիր Դոլլի Հոթորնի համար, - ասաց Հոմերը:
- Էս պահին սենյակում չի: Կարո՞ղ եմ ես ստանալ:
- Հա, օրիո՛րդ: - Աղջիկը ստացականը ստորագրեց, ապա պրպտող հայացքով Հոմերին հայեց:
- Մի ընկալե՛ք, - ասաց ու վազեց սրահի հակառակ ծայրի սենյակներից մեկը: Այս ընթացքում աստիճաններով մի տղամարդ բարձրացավ ու կանգնեց երկար սեղանի առջև: Հոմերն ու մարդը մի քանի անգամ հայացքներ փոխանակեցին: Աղջիկը վազքով հետ եկավ և տղամարդուն տեսնելով՝ Հոմերի ձեռքից բռնեց ու իր քիչ առաջ գնացած սենյակը տարավ:

Սենյակում տարօրինակ բոյր էր կանգնած, բայց հեռագրատարը տեղը չբերեց, թե ինչ էր:

Աղջիկը մի ծրար պարզեց:

– Էս նամակը չէի՞ք ուղարկի,– նա ուղիղ Հոմերի աչքերին նայեց,– շատ կարևոր նամակ է՝ քրոջս համար: Փոստատուն տարեք՝ օդային հատուկ փոստով ուղարկեք: Մեջը փող կա: Բայց նամականիշ չունեմ:– Աղջիկը լռեց, որ Հոմերին թույլ տա հասկանալ, թե ինչքան կարևոր էր նամակը տեղը տեղին հասցնելն ու ուղարկելը:– Ինձ չեք մերժի, չէ՞:

Իր համար բոլորովին անհասկանալի պատճառով Հոմերը սրտխառնոց զգաց: Նույնպիսին, որ պատերազմում որդուն կորցրած մեքսիկուիու տանն էր զգացել:

– Լավ, օրիորդ,– ասաց Հոմերը,– նամակը փոստատուն կհասցնեմ ու օդային հատուկ փոստով կուղարկեմ:

– Էս դուլարանոցը վերցրեք: Նամակը գլխարկի մեջ դրեք: Հանկարծ մարդ չտեսնի: Հանկարծ *որևէ մեկին* դրա մասին բան չասեք:

– Լավ, օրիորդ, ոչ մեկին չեմ ասի,– նա ծրարը գլխարկի մեջ դրեց:– Ուղիղ փոստատուն կտանեմ: Հետո մանրը կբերեմ:

– Չէ, հետ չգա՛ք: Շու՛տ արեք: Չմոռանաք՝ ոչ մեկին ոչ մի խոսք:

– Չե՛մ մոռանա,– խոստացավ Հոմերն ու սենյակից դուրս եկավ:

Աղջիկը մոտեցավ սեղանի մոտ սպասող տղամարդուն, իսկ ինքը հասավ սանդուղքին: Ցածի հարթակին դեմառդեմ հայտնվեց մի խոշորամարմին, գեղեցիկ հագնված տիկնոջ առջև: Հեռագրատարին տեսնելով՝ կինը կանգ առավ ու ժպտաց:

– Երևի ինձ հեռագի՞ր էիր բերել. Դուլի Հոթորնին:
– Հա, տիկին, վերևում թողեցի:
– Ապրե՛ս, – ասաց Դուլի Հոթորնը: Նա մի պահ Հոմե-
րին նայեց, հետո հարցրեց, – նոր ես սկսել աշխա-
տել, չէ՞: Բոլորին ճանաչում եմ: Վեսթերն Յունիոնում
էլ, փոստատանն էլ լավ, բարի տղաներ են աշխա-
տում: Բոլորն իմ հանդեպ բարի են, ես էլ ոչ մեկին չեմ
նեղացնում, – Դուլի Հոթորնը թանկ զարդակար պայու-
սակը բացեց ու այցեքարտեր հանեց: – Վերցրո՛ւ, – ասաց
և մի քսան քարտ տվեց Հոմերին: – Ուր ասես՝ հեռա-
գրեր ես տանում. գինետներ, նման տեղեր: Ամեն տեղ
սրանցից մեկը թող: Լավ կլինի՝ ճամփորդող մարդկանց
աչքի առաջ՝ զինվորների, նավաստիների, որ գիշերե-
լու տեղ են փնտրում: Էս ահավոր պատերազմի օրե-
րին պիտի մեր տղաների կյանքը թեթևացնենք, քանի
մեզ հետ են: Ինձնից լավ ո՞վ գիտի, թե զինվորն ի՞նչ
միայնակ է զգում: Ի՞նչ իմանա՝ վաղն ինչ է լինելու, ողջ
կմնա՞... կսպանվի՞...

– Լավ, տիկին, – ասաց Հոմերը: Նա շարունակեց
իջնել ու փողոց դուրս եկավ: Դուլի Հոթորնն էլ շարու-
նակեց բարձրանալ ու հյուրանոցի իր սենյակը գնաց:

31. ՊԱՐՈՆ ՍԱՐՔԸ

Գրադարանի իրենց արկածից հետո Ուլիսեսն
ու Լայոնելը շարունակեցին Իթակայի փողոցները
պրպտել: Իրիկնամուտին հասան պարապ անցորդնե-
րի մի փոքրիկ խմբի, որ կանգնած՝ աղքատիկ դեղա-
տան ցուցափեղկի մարդուն էին նայում: Մարդը, թեև
միս-արյունից էր, մեխանիկական սարքի շարժումներ
էր անում: Տեսքից, սակայն, ավելի շատ մոմե արձա-
նի էր նման, քան կենդանի մարդու: Բոլորովին մարդու
նման չէր, առավել ևս՝ կենդանի: Ավելի շուտ չթաղված՝

կանգնած դիակ էր հիշեցնում, որ դեռ շարժվել է կարողանում: Ուլիսեսն այս աշխարհի երեսին իր ապրած չորս տարիների ընթացքում սրանից արտասովոր բան չէր տեսել: Մարդու աչքերը մարած էին, շուրթերը՝ սեղմված, ասես երբևէ չէին բացվելու:

Նա *Բժիշկ Բրադֆորդի բալասանն* էր գովազդում: Երկու կողքից ցուցանակներ էին դրված, մեկին գրված էր. «Պարոն Սարքը՝ Մարդ-մեքենան: Կեսմարդը՝ ոչ մեռած, ոչ կենդանի: 50 դոլար նրան, ով կստիպի ժպտալ: 500 դոլար՝ ծիծաղեցնողին»: Մյուս ցուցանակին պարոն Սարքը քարտեր էր փակցնում՝ անբնական, մեքենայական շարժումներով առջևը դրված սեղանիկից վերցնելով: Քարտերը կոչ էին անում գնել բժիշկ Բրադֆորդի ստեղծած բալասանը, որ խոստանում էր ավյուն պարզևել: Ամեն նոր քարտ փակցնելիս պարոն Սարքը ցուցափայտով մեկ առ մեկ դրա բառերն էր ցույց տալիս: Բոլոր տասը քարտերը փակցնելուց հետո նա դրանք պոկում՝ սեղանին էր դնում ու ամբողջ գործողությունը սկզբից կրկնում:

– Իսկական է, – ասաց Լայոնելը: – Լավ եմ տեսնում, Ուլիսես՛ս, մեքենա չի՛, մարդ է: Աչքերի՛ն նայիր: Տեսա՛ր, կենդանի՛ է:

Պարոն Սարքի՛ հենց նոր փակցրած քարտն ասում էր. «Կիսամեռ քարշ մի՛ եկեք: Վայելե՛ք կյանքը: Խմե՛ք բժիշկ Բրադֆորդի բալասանն ու նորածնի ավյունով լցվեք»:

– Տե՛ս, նորն է փակցնում, – ասաց Լայոնելը: – Ի՞նչ է գրված: – Բայց մեկ էլ, չգիտես ինչու, հոգնեց ու ուզեց տուն գնալ: – Լավ, Ուլիսես՛ս, գնացի՛նք տուն: Երեք անգամ բոլոր քարտերը տեսանք: Գնացի՛նք, շուտով մութը կընկնի, – նա ընկերոջ թևը բռնեց, բայց Ուլիսեսը հետ քաշեց:

– Գնացիք, Ուլիսե՛ս: Տուն պիտի գնամ: Սովա՛ծ եմ:–
 Ուլիսեսը ոչ մի կերպ չէր համոզվում: Կարծես Լայոնե-
 լին չլսեր:

– Դե ես գնացի, Ուլիսե՛ս,– Լայոնելն ընկերոջը մար-
 տահրավեր նետեց: Սպասեց, որ շրջվի ու հետը գա,
 բայց Ուլիսեսը տեղից չշարժվեց: Ընկերոջ դավաճա-
 նությունից մի քիչ շշմած ու վիրավորված՝ Լայոնելը
 քայլերն ուղղեց տան կողմը, ժամանակ առ ժամանակ
 շրջվելով, որ տեսնի՝ վերջն ընկերը հետը գալու՞ է, թե՞
 ոչ: Իզուր: Ուլիսեսն ուզում էր մնալ ու մի քիչ էլ պարոն
 Սարքին նայել: Լայոնելը, մինչև հոգու խորքը խոցված,
 ճանապարհը մենակ շարունակեց: «Ես էլ կարծում էի՝
 աշխարհում ամենալավ ընկերս է»:

Ուլիսեսը մնաց Մարդ-մեքենային նայողների հետ
 կանգնած, մինչև որ իրենից ու մի ծերունուց բացի՝
 բոլորը ցրվել էին: Պարոն Սարքն առաջվա պես քար-
 տերը մեկ առ մեկ ցուցանակին էր փակցնում: Մեկ առ
 մեկ ամեն քարտի բառերն էր ցույց տալիս: Շուտով
 ծերունին էլ գնաց, և Ուլիսեսը մնաց մայթին մենակ
 կանգնած, ու շարունակում էր դեղատան ցուցափեղկի
 տարօրինակ մարդ արարածին նայել: Երբ փողոցի լույ-
 սերը վառվեցին, Ուլիսեսը հափշտակությունից սթափ-
 վեց: Այս մարդու տեսքը նրան ասես հիպնոսացրած
 լիներ: Այժմ սթափված շուրջը նայեց: Մութն ընկել էր,
 ու բոլորը գնացել էին: Մնացել էր միայն մի բան, որի
 անունն ինքը չգիտեր՝ Մա՛հը:

Փոքրիկ տղան նորից մեքենա-մարդուն նայեց:
 Մեկ էլ առաջին անգամ նրան թվաց, թե մարդը ուղիղ
 իրեն է նայում: Տղային խուճապ ու տագնապ համակեց,
 ու նա վազեց, որ փախչի: Հատուկենտ անցորդները,
 որոնց փողոցում տեսավ, կարծես պարոն Սարքի նման
 իրենք էլ ողջ չլիներին: Ուլիսեսը վազեց, մինչև համարյա

շնչասպառ եղավ: Վերջապես հեալով կանգնեց: Չորսկողմը նայեց՝ ամեն ինչից անձայն անհողողող սարսափով համակված. պարոն Սարքից, Մահից: Առաջ երբեք *ոչ մի տեսակ իրական վախ չէր ապրել, էլ ուր մնաց՝ այսպիսի: Եվ աշխարհում ավելի դժվար բան չկար, քան հասկանալը՝ ի՞նչ անի: Նրա անդորրը խռովվել էր՝ փշուր-փշուր էր եղել այն մտքից, որ մարդը կարող է իրեն հասնել: Ու նորից սկսեց վազել: Այս անգամ վազելիս ինքն իրեն՝ համարյա լաց լինելով, կրկնում էր. «Հայրի՛կ, մայրի՛կ, Մա՛րկուս, Բե՛սս, Հոմե՛ր»:*

Առաջ աշխարհը հրաշալի էր, մեջը՝ լիքը լավ բաներ, որ ուզում ես նորից ու նորից տեսնել, իսկ հիմա դարձել էր մի տեղ, որից պիտի փախչեիր, մենակ թե չգիտեր՝ ո՛ր կողմ: Ուզում էր շուտ իր ընտանիքից մեկնումեկին հասնել: Զարհուրած կանգնեց, հետո մի քանի քայլ մի կողմ արեց, ապա՝ մի քանի քայլ մյուս կողմ, ու ամբողջ ժամանակ շուրջը սարսափելի աղետի ներկայություն էր զգում, որից միայն հայրիկին, մայրիկին, եղբայրներից մեկին կամ քրոջը հասնելը կփրկեր: Բայց նրանցից որևէ մեկին հասնելու փոխարեն, հանկարծ փողոցի ծայրին թաղի առաջնորդին՝ Օգասթ Գոթլիֆին տեսավ: Լրագրավաճառ տղան, ամայի փողոցի անկյանը կանգնած, լրագրի վերնագրերն էր կանչում, կարծես շուրջը մարդկանց բազմություն լիներ, որոնց պետք էր աշխարհի անցուդարձը պատմել: Վերնագրեր կանչելը Օգասթ Գոթլիֆին միշտ մի փոքր զավեշտական բան էր թվացել, որովհետև նախ վերնագրերը միշտ ինչ-որ սպանությունների մասին էին, երկրորդ՝ իթակայով մեկ շրջելն ու մարդկանց ներկայությամբ ձայնը գլուխը գցելը կարծես մի տեսակ անկիրթ մարդու պահվածք լիներ: Հետևաբար տղան գոհ էր, որ փողոցները վերջապես

ամայացել էին: Առանց գիտակցելու, որ ամեն անգամ Իթակայի փողոցները դատարկվելիս նույն բանն է անում, Օգասթ Գոթլիբը, կարծես քաղաքի տերն ու տիրականը մնալու երախտագիտությունից, ձայնն էլ ավելի բարձրացրեց՝ օրվա թշվառ իրադարձությունները կանչելով: Լուրերը մարդու ինչի՞ն էին. որ թերթ վաճառի ու մի քանի սե՞նթ վաստակի: Հենց սա՞: Ի՞նչ հիմարություն էր, չէ՞, օրվա մեջ գործած սխալները բղավել՝ ասես բարի ավետիս լինեին: Ամոթ չէ՞ր, որ մարդիկ անփոփոխ անտարբերությամբ էին վերաբերվում օրեցօր կատարվող հանցանքներին: Լրագրավաճառ տղան երբեմն նույնիսկ քնի մեջ էր լրագիր վաճառում ու վերնագրեր կանչում, բայց այնտեղ՝ երազում, այդ լուրերի բնույթի հանդեպ արհամարհանք էր զգում: Այնտեղ ինքը՝ բա՛րձր բարձունքին կանգնած, բղավում էր, իսկ ցածում՝ գլուխը կորցրած անձայրածիր բազմությունը սխալ սխալի հետևից էր գործում: Բայց ձայնը լսում էին թե չէ՝ տեղում քարանում էին, որ իրեն նայեն, իսկ ինքը միշտ բղավում էր. «Գնացեք՝ գործո՛վ զբաղվեք: Վե՛րջ տվեք սպանություններին: Փոխարենը ծառե՛ր տնկեք»: Ծառ տնկելու գաղափարը նրան միշտ էր հրապուրել:

Երբ Ուլիսեսն անկյանը Օգասթ Գոթլիբին տեսավ, սիրտը պատած սարսափը մի քիչ մեղմվեց: Ուզեց Օգիին ձայն տալ, բայց բերնից ձայն դուրս չեկավ: Փոխարենը՝ ինչքան ոտքերում ուժ կար, վազեց նրա կողմն ու այնպիսի թափով գիրկը նետվեց, որ քիչ մնաց՝ խեղճ լրագրավաճառին գետին տապալի:

– Ուլիսե՛ս, – գոչեց Օգին, – քեզ ի՞նչ պատահեց: Ինչու՞ ես լացում:

Ուլիսեսը նրա աչքերին նայեց, բայց բերանը դեռ չէր բացվում:

– Մի բանից վախեցել ես: Մի՛ վախեցիր: Վախենալու ի՞նչ կա: Էլ չլացե՛ս, լա՛վ,– Օգին սպասեց, իսկ Ուլիսեսը ջանք թափեց, որ լացը կտրի: Շուտով նրա հեծկլտոցը հանդարտվեց, համարյա զկռտոցի վերածվեց: Օգին ասաց.

– Գնացի՞նք, Ուլիսե՛ս, արի քեզ Հոմերի մոտ տանեմ: Եղբոր անունը լսելով՝ Ուլիսեսը վերջապես ժպտաց, մի անգամ էլ զկռտաց ու կրկնեց.

– Հոմերի՞:

– Ըհը, գնացի՛նք:

Սրանից փոքրիկն այնպես ուրախացավ, որ հավատը չէր գալիս:

– Հոմերին կտեսնե՞նք:

– Բա ո՞նց: Հեռագրատունը մոտիկ է:

Օգասթ Գոթլիբն Ուլիսես Մաքուլիի հետ հեռագրատուն մտավ: Հոմերն առաքումների սեղանի մոտ նստած էր: Եղբորը տեսնելով՝ Ուլիսեսի հետ հրաշք կատարվեց. սարսափն աչքերից իսպառ վերացավ, որովհետև զգաց, որ տանն է:

Հոմերը, եղբորը տեսնելով, Օգինն հարցրեց.

– Ուլիսեսն էս ժամին քաղաքում ի՞նչ գործ ունի:

– Երևի մոլորվել էր: Լաց էր լինում:

– Լաց էր լինու՞մ,– կրկնեց Հոմերը՝ եղբորը գրկելով: Ուլիսեսն էլի զկռտաց:– Լավ, հիմա քեզ հեծանվով տուն կտանեմ:

Հեռագրատան կառավարիչը՝ Թոմաս Սպանգլերը, իր գրասեղանի մոտ նստած՝ տղաներին էր նայում: Ուիլյամ Գրոգանն էլ, գործը թողած, նրանց նայեց: Նրանք մի քանի հայացք փոխանակեցին: Հոմերը եղբորը ցած դրեց: Երբ Ուլիսեսը գնաց՝ տեսնի, թե առաքումների սեղանին ինչեր կան, Հոմերը հասկացավ, որ եղբայրն արդեն լավ է: Նա Օգասթին գրկեց ու ասաց.

– Շնորհակալ եմ, Օ՛գի:

Սպանգւերը տեղից վեր կացալ ու մոտեցալ տղաներին:

– Ինձ մի լրագիր կտա՞ս, Օ՛գի:

– Հա, սը՛ր, – ասաց Օգին և անցալ լրագիրը ծալելու իր արարողությանը, բայց Սպանգւերն ընդհատեց ու ձեռքից առալ: Հեռագրատան կառավարիչը վերնագրերը կարդաց ու թերթը զամբյուղը նետեց:

– Ի՞նչ կա, ի՞նչ չկա:

– Դեռ հիսունհինգ սենթ եմ վաստակել, բայց ժամը մեկից էի սկսել: Հենց յոթանասունհինգ վաստակեմ՝ կգնամ տուն:

– Ինչու՞, – հարցրեց Սպանգւերը, – ինչու՞ անպայման յոթանասունհինգ սենթ:

– Չգիտեմ, – ասաց Օգին: – Ուղղակի որոշել էի, որ շաբաթ օրերը յոթանասունհինգ սենթ պիտի վաստակեմ: Փողոցում համարյա մարդ չի մնացել, բայց երևի մի երկու ժամում մնացած թերթերս ծախեմ: Շուտով մարդիկ ընթրիքից հետո դուրս կգան: Կինո գնացողները:

– Կորչե՛ն կինո գնացողները: Թերթերդ տուր ինձ ու *հենց հիմա* տուն գնա: Ա՛ն էս քսանհինգ սենթը:

Թեկուզ լրագրավաճառը կառավարչին երախտապարտ էր այս արարքի համար, մեկ է՝ համարեց, որ ազնիվ չի լինի: Լրագրավաճառի գործը լրագրերը մեկ առ մեկ ծախելն էր՝ տարբեր մարդկանց: Պիտի կանգնեիր փողոցի անկյունում ու վերնագրեր բղավեիր և մարդկանց *համոզեիր*, որ լրագրեր առնեն ու լուրերը կարդան: Հոգնած էր, սոված էր, ուզում էր տուն՝ ընթրիքի հասնել, և Սպանգւերի նման ուրիշ մարդ չէր ճանաչում, բայց մեկ է՝ համարեց, որ ազնիվ չի լինի:

– Չեմ ուզում քսանհինգ սենթը *ձեզնից* վաստակել, պարո՛ն Սպանգւեր:

– Ոչինչ,– պնդեց Սպանգլերը,– թերթերդ տուր ինձ ու գնա տուն:

– Լավ, սը՛ր,– ասաց Օգին,– բայց գուցե մի օր թույլ տաք, որ մի բան էլ ե՛ս ձեզ համար անեմ:

– Անկասկա՛ծ,– պատասխանեց Սպանգլերն ու լրագրերը զամբյուղը գցեց:

Օգին ուզեց գնալ, բայց Հոմերը կանգնեցրեց.

– Սպասի՛ր: Քեզ հեծանվով կտանեն: Կարելի է, չէ՞, պարո՛ն Սպանգլեր: Մի բան կա վերցնելու՝ Իթակայի գինու գործարանից, էն էլ ճանապարհիս է: Եթե թույլ տաք, Ուլիսեսին ու Օգինն կտանեն, հետո գործարան կգնամ: Կարելի՞ է:

– Իհարկե,– ասաց Սպանգլերն ու գրասեղանի մոտ վերադարձավ:

– Ինձ տուն տանել պետք չի,– ասաց Օգին:– Միանգամից երկու հոգու ո՞նց ես տանելու: Ուտքով մի ընկալում կհասնեմ:

– Մի ընկալում չես հասնի՝ համարյա երկու մղոն ճանապարհ է: Շատ լավ էլ երկուսիդ կտանեն: Դու ձողին կնստես, Ուլիսեսը՝ առջևդ: Գնացի՛նք:

Տղաները Հոմերի հեծանվի մոտ գնացին: Բեռը ծանր էր, մանավանդ ուտքը վնասած մեկի համար, բայց Հոմերն իր ուղևորներին բարեհաջող տուն հասցրեց: Նախ Արայի խանութի կողքի փոքրիկ տան մոտ կանգ առան, որտեղ Օգին էր ապրում: Պարոն Արան, փոքրիկ որդու ձեռքը բռնած, կանգնած էր խանութի առջև: Երկուսով երկնքին էին նայում: Փողոցի ծայրում՝ ամայի տարածքի կողքին, տիկին Մաքուլին բակի ընկուզենու տակ լվացքն էր հավաքում: Մերին ու Բեսսը հյուրասենյակում նվագում, երգում էին, և դաշնամուրի ու Մերիի ձայնը փողոցից լսելի էր:

Օգին հեծանվից իջավ ու տուն գնաց: Հոմերը մի պահ մնաց կանգնած. ձեռքերը դեկին՝ երկնքին նայեց, հետո Մաքուլիների տանը: Հետո Օգին դուրս եկավ, որ պարոն Արայի խանութը գնա:

– Էսօր առևտուրը ո՞նց էր, պարո՛ն Արա,– հարցրեց Օգին:

– Շնորհակալ եմ, Օ՛գի: Գոհ եմ:

– Յոթանասունհինգ սենթ ունեմ, վաղվա համար լիքը բան պիտի առնեմ:

– Լավ, Օգի,– ասաց նպարավաճառը, բայց նախքան խանութ մտնելը մատն ամպերին արեց ու ու նայեց որդուն:– Տե՛ս, Ջո՛ն, գիշեր է, շուտով պիտի անկողին մտնենք, որ քնենք: Մինչև առավոտ: Հենց լույսը բացվի՝ էլի կարթնանաք: Նոր օր կսկսվի;

Նպարավաճառը, որդին ու հարևան տղան խանութ մտան, իսկ Ուլիսեսը՝ եղբոր հեծանվին նստած, մայրիկին էր նայում: Վերջապես Հոմերը հեծանիվ նստեց, ու քշեց տուն:

Որքան մոտենում էին բակում ծառի տակ կանգնած կնոջը, Ուլիսեսի դեմքն այնքան պայծառանում էր, բայց մեկ է՝ ինչ որ խոր թախիծ դեռ մնացել էր:

Հոմերն ամայի տարածքը կտրելով՝ հեծանիվն ուղիղ իրենց բակ՝ ընկուզենու մոտ քշեց: Հետո հեծանվից իջավ ու եղբորն իջեցրեց: Ուլիսեսը կանգնած՝ մայրիկին էր նայում: Պարոն Սարքի պատճառած սարսափը հիմա կարծես անհետ մոռացել էր:

– Մոլորվել էր,– ասաց Հոմերը:– Օգին գտել՝ հեռագրատուն էր բերել: Դեռ գործ ունեմ, բայց գնամ՝ Բեսսին ու Մերիին բարև ասեմ:

Հոմերը տուն մտավ, մութ ճաշասենյակում կանգնեց՝ քրոջն ու եղբոր սիրած աղջկան լսեց: Երբ երգը վերջացավ՝ մտավ հյուրասենյակ:

Աղջիկները շրջվեցին:

– Էսօր Մարկուսից նամակ եմ ստացել,– ասաց Մերին:

– Ո՞նց է:

– Լավ: Շուտով տեղափոխվելու են, բայց դեռ չգիտի՞ ուր: Ասում է՝ որ ինչ–որ ժամանակ նամակ չստանանք՝ չանհանգստանանք:

– Բոլորիս գրել է,– ասաց Բեսսը,– մայրիկին, ինձ, նույնիսկ Ուլիսեսին:

Հոմերը սպասեց, որ *իրեն* գրած նամակի մասին էլ ասի, բայց վախենում էր՝ բա որ չասի՞: Վերջապես կամացուկ հարցրեց.

– *Ինձ* չի՞ գրել:

– Ո՞նց չի գրել,– ասաց Բեսսը:– Քոնն ամենաերկարն է: Ինձ թվաց՝ *կհասկանայիր*, որ եթե բոլորիս գրել է, ուրեմն քեզ էլ է գրել:

Քույրը սեղանից մի ծրար վերցրեց ու տվեց եղբորը: Հոմերը երկար նայում էր ծրարին, մինչև քույրն ասաց.

– Ինչու՞ չես բացում: Դե բաց՝ մեզ էլ կարդա:

– Չէ, Բե՛սս, գործերս դեռ չեմ վերջացրել: Հետս կտանեմ գործի, հետո որ ազատ ժամանակ ունենամ՝ կկարդամ:

– Ամբողջ օրը աշխատանք ենք փնտրել,– ասաց Բեսսը,– բայց բան չգտանք:

– Մեկ է՝ հավես էր,– ասաց Մերին:– Տեղից տեղ գնալն ու հարցնելն էլ էր շատ հավես:

– Հավեսը չգիտեմ,– ասաց Հոմերը,– բայց լավ է, որ գործ չեք գտել: Իմ վաստակած փողը մեր ընտանիքին հերիքում է, Մերիի հայրիկն էլ գինու գործարանում է աշխատում: Աշխատանք փնտրելու ի՞նչ կարիք ունեք:

– Ունե՛նք,– առարկեց Բեսսը:– Ու վաղը-մյուս օր անպայման կգտնենք: Երկու տեղ ասեցին, որ նորից հանդիպենք:

– Մտքիցդ հանի՛ր,– ասաց Հոմերը: Արդեն բարկացավ:– Ինչ որ պետք է անել, տղամարդիկ առանց քեզ էլ կանեն: Աղջիկների տեղը տունն է ու տղամարդկանց մասին հոգ տանելը՝ էսքան բան:– Նա «Բեթել» հյուրանոցի սիրունիկ աղջկան հիշեց:– Ինչ է թե պատերազմ է, չի նշանակում, որ բոլորը պիտի գլուխը կորցնեն: Հանգիստ մնա տանն ու մայրիկին օգնիր: Իսկ դու, Մերի, հայրիկիդ:

Այնքան կտրուկ էր խոսում, որ քույրը համարյա հպարտություն զգաց, որովհետև եղբորը *ինչ-որ բանով* այսքան մտահոգ դեռ տեսած չկար:

Հոմերը նորից մութ ճաշասենյակը գնաց: Բեսսը նորից սկսեց դաշնամուր նվագել, իսկ քիչ անց Մերին սկսեց երգել: Հեռագրատարը, մութ սենյակում կանգնած, լսում էր, բայց երգի կեսից կամացուկ դուրս գնաց: Բակում Ուլիսեսին տեսավ, որ հավի գլխին կանգնել՝ ածած միակ ձվին էր նայում:

– Ձու՛ է,– ասաց Ուլիսեսը, կարծես այդ մի բառի մեջ ամբողջ աշխարհը լիներ:

Հոմերը հեծանիվ նստեց ու քշեց դեպի Իթակայի գինու գործարան:

32. ԳՆԱՑՔՈՒՄ

Նույն միջոցին, երբ Հոմերն իր հեծանիվն էր քշում, հեռու հեռվում ամերիկյան մարդատար գնացքը, գիշերը ճեղքելով, սլանում էր առաջ: Գնացքը լիքն էր ամերիկացի համազգեստավոր տղաներով:

Նրանց մեջ քառասունն անց տղաներ էլ կային, բայց մեծ մասը դեռ երեխա էին՝ մեծ ու փոքր քաղաքներից,

ագարակներից, գրասենյակներից, հարուստ կամ աղքատ ընտանիքներից: Մի մասը՝ մեծ ակնկալիքներից, մյուսները՝ խաղաղության մասին պարզունակ երազներից կտրված. տաղանդավոր, նպատակասլաց, թե միամիտ ու հուսալի: Աղմուկի, ծիծաղի, խանդավառության, վախի, կասկածի, շփոթմունքի, ոգևորության, զարմանալի տգիտության և զարմանալի իմաստության համադրության այս խառնարանում Մարկուս Մաքուլին ու ընկերը՝ Թոբի Ջորջը, կամացուկ զրուցում էին:

– Ոնց որ, – ասաց Թոբին, – վերջապես գնացինք:

– Ոնց որ, – պատասխանեց Մարկուսը:

– Չգիտեմ՝ դու ոնց, Մարկուս, բայց ես երջանիկ եմ, որովհետև եթե պատերազմն ու զորահավաքը չլինեք, քեզ չէի հանդիպի ու ընտանիքիդ մասին չէի իմանա:

Մարկուսը շփոթվեց:

– Ես էլ քո մասին եմ նույն բանը մտածում, – նա լռեց, հետո մի հարց տվեց, որ անհայտ վտանգին դեմ առ դեմ դուրս եկած ամեն տղամարդ ինքն իրեն անպայման շարունակ տալիս է:– Ճիշտ ասա, սպանվելուց վախենում ես:

Ընկերն այս հարցին միանգամից պատասխանել չկարողացավ, բայց մի քիչ մտածելուց հետո ասաց.

– Էն էլ ոնց: *Կարող էի սուտ ասել՝ ձև անել*, թե չեմ վախենում: Բայց վախենում եմ: Դու՞:

– Շատ, – ասաց Մարկուսը:– Որ բախտդ բերեց, ի՞նչ կուզես անել:

– Չգիտեմ, – պատասխանեց Թոբին, որովհետև իսկապես չգիտեր:– Երևի կուզեմ վերադառնալ, նրան, ինչ սպասում է: Ես քեզ պես ընտանիք չունեմ: Ինձ սպասող չկա, բայց ինչ էլ լինի՝ բարին էդ է: Ինձ Մերիի պես աղջիկ չի սպասում, ոնց որ քեզ, բայց մեկ է՝ կուզեմ վերադառնալ: Թե ստացվի:

– Հասկանում եմ,– ասաց Մարկուսը:– Ո՞նց է, որ երգել ես սիրում:

– Ի՞նչ իմանամ: Սիրում եմ, էլի:– Նրանք ինչ-որ ժամանակ գնացքի ձայնն էին լսում, գնացքի աղմուկն էին լսում, հետո Թորին հարցրեց.

– Դու՞ ինչի մասին ես մտածում:

Մարկուսը նախքան պատասխանելը մի փոքր մտածեց:

– Իթակայի,– վերջապես ասաց:

– Մի բան ասեմ,– խոստովանեց Թորին:– Երևի ինձ չհասկանաս, բայց ոնց որ Իթական իմ տունն էլ լինի: Որ էս ամեն ինչից պրծնենք, ինձ Իթակա կտանե՞ս:

– Իհարկե,– ասաց Մարկուսը:– Կուզեմ, որ ընտանիքիս հետ ծանոթանաս: Հայրս կարծեմ երևելի մարդ է եղել: Ոչ թե հաջողակ կամ նշանավոր՝ է՛դ չեմ ուզում ասել: Ոչ մասնագիտություն է ունեցել, ոչ արհեստ: Ուղղակի ապրել է ու աշխատել: Վաստակել է հազիվ էնքան, որ կարիքները հոգա, բայց մեկ է՝ իմ կարծիքով մեծ մարդ է եղել:

– Մաթյու Մաքո՞լին,– հարցրեց Թորին:

– Հա, խաղողի այգիներում է աշխատել, մթերանոցում, գինու գործարանում: Սովորական հասարակ աշխատանք է արել: Փողոցում հանդիպեիր՝ չէիր էլ նկատի, բայց հայրս էր՝ ես հո գիտեի, որ ուրիշ է: Ամեն ինչից շատ ընտանիքն էր սիրում՝ մայրիկին ու մեզ: Քանի ամիս փող էր հավաքել, որ ապառիկ տավիղ առնի, պատկերացրու՛: Էսօր ո՞վ է տավիղ նվագում: Բայց մայրիկս ուզում էր: Հինգ տարի տևեց, որ վճարի: Երևի ամենաթանկ տավիղն էր: Մեզ թվում էր՝ եթե մենք ունենք, ուրեմն երևի ամեն տանը տավիղ կա: Հետո քրոջս՝ Բեսսի համար դաշնամուր առավ: Էս մեկն էդքան թանկ չէր: Առաջ կարծում էի, թե բոլորն

էլ հայրիկիս նման են: Մինչև մեծացա ու ուրիշներին հանդիպեցի:

– Երանի ես էլ նրա նման մեկին ճանաչեի, – ասաց Թորին: – Թող *հայրս* չլիներ: Ով ուզում է՝ լիներ, մենակ թե *ճանաչեի*:

– Կարող է՝ քո հայրն էլ է *մեծ մարդ* եղել:

– Կարող է: Մի բան ասե՞մ՝ ծիծաղես: Որ փոքր էի՝ չգիտեի, որ երեխաները հայրիկ-մայրիկ են ունենում: Հետո դպրոցում երեխաներից իմացա: Կարծում էի՝ աշխարհում բոլորը ինձ պես մենակ են՝ իրենք իրենց գլխի տերը: Հետո որ իմացա՝ ինձ էնքան վատ էի զգում: Երևի *դրանից* է, որ երգել եմ սիրում: Երգելիս մարդ իրեն էդքան աշխարհից կտրված ու մենակ չի զգում: – Հետո կամացուկ, համարյա անոթխած՝ հարցրեց.

– Բեսսը ո՞նցն է:

Մարկուսը զգաց, որ ընկերն անաչելով էր հարցնում:

– Քրոջս մասին ինչքան ուզում ես՝ հարցրու: Կուզեմ, որ մի օր հանդիպեք: Ինձ թվում է, որ քեզ կհավանի:

– Ի՞նձ, – կրկնեց Թորին:

– Հա, կարծում եմ՝ շատ կհավանի: Կուզեմ, որ մեր տանը ապրես: Եթե իրար հավանեք... Մի խոսքով, ինձ թվում է, որ ինքը քեզ շատ կհավանի: Էսքան բան:

Մարկուսը սկսեց արագ խոսել, որովհետև մի կողմից՝ գիտեր, որ նման բաներից խոսելը համարյա անհնար է, մյուս կողմից՝ գիտեր, որ գոնե պիտի փորձեր:

– Եթե էնպես պատահի, որ դու էլ Բեսսին հավանես... ուզում եմ ասել՝ անուսնացեք ու հթակայում ապրեք: Լավ քաղաք է: Լավ կապրես: Արի՛ քեզ քրոջս նկարը տամ, որ մոտդ պահես, – նա ընկերոջը մի փոքրիկ լուսանկար մեկնեց, – զինվորական գրքույկդ դիր: Տե՛ս, ես էլ Մերիի նկարն եմ մեջը պահում:

Թորին լուսանկարը վերցրեց ու երկար նայում էր: Մարկուսն էլ նրան էր նայում: Վերջապես ասաց.

– Բեսսը շատ սիրուն է: Ո՞վ է տեսել՝ մարդ մեկին առանց հանդիպելու սիրահարվի, բայց ինձ թվում է, թե արդեն Բեսսին սիրահարվել եմ: Ինձ էնքան վատ եմ զգում: Քեզ խոստովանեմ՝ մինչև հիմա վախեցել եմ քեզ Բեսսից հարցնել: Բայց հետո մտածեցի՝ ճամփի վրա ենք, ո՞վ իմանա՝ ինչ է լինելու, ու ասեցի՝ շատ դեմ չես լինի: Գիտե՞ս, միշտ մտածել եմ, որ ուրիշների նման շատ իրավունքներ չունեմ: Հայրիկի ու մայրիկի փոխարեն անունս մանկատունն է տվել: Չեմ իմացել, թե հայրիկս ու մայրիկս ովքեր են: Չեմ իմացել, թե ազգությունս ինչ է: Մի մասն ասում են՝ իսպանացի կամ ֆրանսիացի եմ: Մի մասն ասում են՝ իտալացի կամ հույն եմ: Մի մասն ասում են՝ անգլիացի կամ իռլանդացի եմ: Համարյա բոլորը տարբեր բաներ են ասում:

– Պարզ է, որ ամերիկացի ես, – ասաց Մարկուսը: – Էդքան բան: Ո՞վ չգիտի: Նկարը մոտդ պահիր: Հետո հթակա կգնանք, ու ընտանիք կունենաս: Ես էլ ընտանիք կունենամ, ու մեկ-մեկ իրար հյուր կգնանք, երաժշտություն կլսենք, կերգենք, կյանքը կվայելենք:

– Մի բան ասե՛մ, Մա՛րկուս. քեզ *հավատում եմ*: Ազնիվ խոսք՝ հավատում եմ: Չեմ մտածում, թե ուղղակի ասում ես, որովհետև ընկերներ ենք ու ճամփի վրա: Հավատում եմ ու աշխարհում ամենաշատը հթակա գնալ եմ ուզում: Ուզում եմ էնտեղ ապրել ու քո ասած բաներն անել: – Նա մի պահ լռեց՝ փորձելով պատկերացնել, թե ինչը կարող է խանգարել, որ այս բոլոր բաներն անի: Հետո ասաց.

– Եթե Բեսսին դուր չգամ, եթե ուրիշին սիրի, եթե մինչև մեր հասնելն ամուսնացած լինի, մեկ է՝ հթակայում կապրեմ: Չգիտեմ ինչու՝ ոնց որ հթական *իմ*

տունն էլ լինի: Կյանքումս առաջին անգամ էնպես է թվում, թե ես էլ տուն ունեմ ու... հույս ունեմ՝ չես սրտնեղի, թվում է, թե Մաքուլիների ընտանիքն իմ ընտանիքն էլ է, որովհետև եթե ընտրել թողնեին՝ էդպիսի ընտանիք կուզեի: Ո՛նց եմ երագում, որ Բեսսին դուր գամ, որ ուրիշի հետ ամուսնացած չլինի, որովհետև ես գիտեմ, որ ինքը ինձ դուր է գալիս:– Հետո շատ կամացուկ ասաց, բայց, թեև գնացքում աղմուկ էր, Մարկուսը նրա խոսքերը լսեց,– Իթական իմ տունն է: Ուզում եմ էնտեղ ապրել: Ուզում եմ էնտեղ մեռնել: Եթե ստացվի:

Հետո նրանց ուրիշ տղաներ մոտեցան, ու սկսեցին բոլորով աղմկել, նույնիսկ տղաներից մի քանիսի հորինած երգը երգեցին՝ փողոցային կանանց ու նրանց առավելությունների մասին: Երգի կեսից Թոբին հանկարծ ասաց.

– Մանկատանը ստիպում էին, որ աղոթք ասենք: Օրենք էր. ուզեինք չուզեինք՝ պիտի աղոթեինք:

– Վատ օրենք չէր,– ասաց Մարկուսը:– Բայց, իհարկե, աղոթքն էն բաներից չի, որ ստիպելով անես:

– Երևի դրանից էր, որ մանկատանից գնացի թե չէ՝ էլ աղոթք չեմ ասել: Վայ թե տասներեք տարեկանից էս կողմ աղոթած չկամ: Բայց նորից կսկսեմ. հենց հիմա: Լսե՛ք:– Թոբին մի բռպե սպասեց, հետո, առանց աչքերը փակելու, առանց գլուխը խոնարհելու, առանց ձեռքերը ծալելու՝ սկսեց աղոթել: «Թե կարող ես՝ էնպես արա, որ Իթակա հասնեմ: Ինչ ասես՝ կանեմ, մենակ թե ինձ Իթակա հասցրու: Թույլ տուր տուն գնալ: Բոլորին պահապան եղիր: Բոլորի ցավերն ամոքիր: Տուն չունեցողներին տուն պարգևիր: Ճամփորդին ապահով տեղ հասցրու, իսկ ինձ տա՛ր Իթակա: Ամե՛ն»:

– Գեղեցիկ աղոթք էր,– ասաց Մարկուսը:– Հույս ունեմ՝ կկատարվի:

Զինվորները անցան մի նոր երգ երգելու: Այս մեկը աշխարհում ամեն ինչի անցողիկ լինելու մասին էր, հատկապես՝ կանաց սիրո: Տղաներին դուր էր գալիս երգի անպատկառ իմաստությունը: Թորքին ու Մարկուսն էլ միացան, բայց հանկարծ Թորքին հարցրեց.

– *Դու՞* ինչի մասին ես աղոթում:

– Նույն բաների: Հենց քո ասած նույն բաների:

Երգը վերջացավ, ու բոլորը լռեցին: Լռելու հատուկ պատճառ չկար, բայց գնացքի բոլոր ուղևորները, չգիտես ինչու, սակվեցին: Վերջապես Ջո Հիգինս անունով մի զինվոր Մարկուսին ու Թորքին մոտեցավ ու ասաց.

– Գրո՞ղը տանի, ի՞նչ պատահեց: Ինչու՞ են բոլորը պապանձվել: Թո՞րքի, մի *կարգին* երգ չե՞ս երգի: Մա՛րկուս, ակորդեոն կնվագե՞ս:

– Ի՞նչ երգ կուզեիր, – հարցրեց Մարկուսը:

– Ի՞նչ իմանամ: Ինչքան կեղտոտ երգ կար՝ երգեցինք: Երևի հներից մի բան երգենք, գիտես, էլի, մի *լավ* բան: Եկեք մի հին եկեղեցական երգ երգենք, էն, որ փոքրուց անգիր ենք արել:

– Եկեղեցական ի՞նչ երգ գիտես, Ջո՛:

– Ըը՛, – ասաց Ջոն, – մենակ չծիծաղեք: *Ապավեն*-ը գիտեմ: Հիշում եք՝ *Տե՛ր, թևերդ՝ հավերժ ապավեն...*

– Թո՞րքի, դու բառերը գիտե՞ս: Թե չգիտես՝ կօգնեմ:

– *Ո՞նց* չգիտեմ, – գոչեց Թորքին: – Երևի տասը տարի ամեն կիրակի դա ենք երգել:

– Ուրեմն լավ, – ասաց Մարկուսը, – եկեք Ջոյի խաթեր երգենք: Ջո՛, թե կուզես՝ դու էլ երգիր: Կարևոր չի, թե ոնց ես երգում: Ուղղակի միացիր մեզ:

– Չվախենա, *էդ մի* երգը լավ կերգեմ:

Մարկուսը սկսեց հին եկեղեցական օրհներգը նվագել, ու Թորքին երգեց.

*Տէր, քո թները՝ հավերժ ապավեն,
Ո՛հ, բերկրալից համերաշխություն,
Տէր, քո թները՝ հավերժ ապավեն,
Երանելի խաղաղություն:*

Ջնգուն, ոչ շատ երգեցիկ, բայց այնուհանդերձ դուրեկան ձայնով՝ Ջոն միացավ Թոբիին, ու շուտով ամբողջ գնացքը նրանց էր լսում: Քիչ անց բոլորը խռնվեցին Մարկուսի և Թոբիի ու Ջոյի շուրջը, որ մոտիկից լավ լսեն, իսկ Ջոն ու Թոբին շարունակում էին երգել:

*Տէր, քո թները բոլորի համար հավերժ ապահով
պաշտպան կլինեն,
Քեզ ապավինած բոլորի համար հույս ու փրկություն
ու սեր կլինեն:*

Հիմա արդեն բոլորը, նրանց միացած, երգում էին:

33. ՄԱՐԿՈՒՍԸ

Այս շաբաթ օրը Հոմեր Մաքուլիի կյանքի ամենաերկար ու իրադարձություններով լի օրն էր: Աննշան թվացող բաները սկսել էին մի տեսակ կարևորություն ձեռք բերել ու իմաստ ստանալ, որը նրան հասկանալի էր: Անցած գիշերվա անհանգիստ ու կսկիծով լի քունը այժմ արդեն արթնության մասն էր դառել: Ամեն կերպ փորձել էր Մահվան սուրհանդակին իթակայից, նրա բնակիչներից հետ պահել: Երազում սա էր տեսել, բայց արդեն արթնացել էր:

Եղբոր՝ Մարկուսի նամակը հեռագրատարի կապույտ բաճկոնի գրպանում սպասում էր, որ բացի ու կարդա:

Նա, կաղալով, հոգնած ու հանգստի կարոտ, հեռագրատուն հասավ: Կանչերի թերթիկը կարդաց, բայց

առայժմ կանչեր չկային: Նոր ստացված հեռագրերի դարակին նայեց, բայց հեռագրեր էլ չկային: Ազատ էր: Հոմերը ծեր հեռագրիչին մոտեցավ ու հարցրեց.

– Պարո՛ն Գրոգան, ինձ կմիանա՞ք, գնամ՝ երեկվա կարկանդակ բերեմ, խնձորով կամ կոկոսով:

– Կմիանամ, տղա՛ս, թեև կարկանդակ չեմ ուզում: Բայց մեկ է՝ շնորհակալ եմ:

– Եթե *դուք* կարկանդակ չեք ուզում, պարո՛ն Գրոգան, ուրեմն ես էլ չեմ ուզի: Մտածեցի՝ *դուք* սոված կլինեք: Ես սոված չեմ: Ամբողջ օրը դեսուդեն եմ վազել, բայց հե՛չ սոված չեմ: Տարօրինակ է, չէ՞, մարդ կմտածեր՝ օրուգիշեր աշխատելուց պիտի սովածանամ, բայց սոված չեմ:

– Ոտքդ ո՞նց է:

– Ոչինչ, արդեն մոռացել էի: Չի խանգարում, – նա ուշադիր նայեց ծերունուն ու կամաց ասաց:– Խմած չեք, չէ՞, պարո՛ն Գրոգան:– Հարցը շիտակ էր, և ծերունին չվիրավորվեց ու չնեղացավ:

– Խմած եմ, տղա՛ս:– Պարոն Գրոգանը գնաց՝ իր աթոռին նստեց: Հետո տղային նայեց, որ չէր նստել, մնացել էր սեղանի հակառակ կողմում կանգնած:

– Խմած ժամանակ ինձ էնքա՛ն ավելի լավ եմ զգում, – ասաց, դարակից շիշը հանեց ու մեծ կում արեց:– Չեմ ուզում ասել՝ տես, հա՛, երբեք չխմես: Չեմ ուզում էն մյուս հիմար ծերուկների պես ասել՝ *Ինձ տես ու դասդ առ: Տես՝ խմիչքից ի՛նչ եմ դառել*: Հիմա ուր ասես՝ չես գնում, բաներ ես տեսնում, որ առաջ չէիր տեսել: Թու՛յլ տուր՝ քեզ մի բան ասեմ: Ինչ որ մարդկանց է վերաբերում, զգույշ դատիր: Թե մի բան տեսնես, որ վստահ ես՝ սխալ է, *վստահ* մի՛ եղիր: Մարդկանց հարցում պիտի շա՛տ զգույշ լինես: Ներիր, որ ասում եմ, բայց չեմ կարող չասել, որովհետև քեզ հարգում եմ ու պիտի ասեմ, որ չի կարելի մարդուն քննադատել *էսպիսին կամ էնպիսին*

լինելու համար: Մարդու վերջն ինչքան մոտենում է, էնքան ավելի է ուրախանում, որ իր իմացած մարդիկ իրենից հետո էլ պիտի ապրեն: Ասածս հասկանում ես:

– Էնքան էլ չէ, պարո՛ն Գրոգան:

– Էս ասածս քեզ երբեք չէի ասի, եթե խմած չլինեի:

– Ուզում եմ ասել, ինչպիսին որ կաս՝ գոհ եղիր: Հա, ինքդ քեզնից գոհ եղիր: Շնորհակալ: Հասկացիր, որ մարդը, ինչպիսին որ կա, իր եղպիսին լինելու համար կարող է շնորհակալ լինել: Արժի, որ շնորհակալ լինի: Շնորհակալ եղիր, որ քեզ նման մարդուն ինչ-որ անծանոթ կարող է վստահել:

Հումերն էլի «Բեթել» հյուրանոցի աղջկան հիշեց, ու թե ինչ թախանձագին էր խոսում՝ կարծես հին ընկերոջը գաղտնիք վստահեր:

– Մարդիկ կիմանան, որ իրենց հուսախաբ չես անի, չես նեղացնի: Կիմանան, որ չես արհամարհի: Որ նրանց մեջ կտեսնես էն, ինչ ուրիշների աչքից վրիպել է: Ինքդ քո մասին էս բանը պիտի իմանաս: Թող քեզ չշփոթեցնի: Տասնչորս տարեկան ես, բայց հասուն տղամարդ: Չգիտեմ, թե ով է քեզ էսպիսին դարձրել, բայց քանի որ եղպես է, շնորհակալ եղիր դրա համար: Հասկացա՞ր:

Հեռագրատարը թուփը կուլ տվեց.

– Ոնց որ, պարո՛ն Գրոգան:

– Ուրեմն ապրե՛ս: Ձեռքինդ ի՞նչ է, նամա՞կ: Ես վերջացրի: Դե կարդա, տղա՛, ու՛մ ես սպասում:

– Մարկուսից է՛ եղբորիցս: Դեռ չեմ հասցրել բացել:

– Դե բա՛ց արա: Եղբորդ նամակը կարդա: Բարձրաձայն կարդա:

– Բարձրաձա՞յն:

– Հա: Եթե կարելի է՝ կուզեի լսել: Շատ կուզեի:

Հումերը ծրարը պատռեց, ծալած նամակը հանեց, բացեց ու սկսեց դանդաղ ու կամացուկ կարդալ:

«Սիրելի Հոմեր, նախ ասեմ, որ տանն ինչ ունեմ՝ քոնն է, ու հետո, որ էլ պետք չլինի՝ Ուլիսեսին կտաս. գրքերս, նվագարկիչս, ձայնապնակներս, շորերս՝ երբ վրադ լինեն, հեծանիվս, մանրադիտակս, ձկնորսական կարթս, Պիեդրայի հանքաքարերի հավաքածուս ու մյուս բոլոր բաները: Քեզ եմ տալիս, որովհետև հիմա հթակա քաղաքի Մաքուլիների ընտանիքի տղամարդը դու ես: Անցյալ տարի պահեստում աշխատած փողս իհարկե մայրիկին եմ տվել, որ ձեզ օգնեմ: Գիտեմ, որ մեծ բան չի: Չեմ պատկերացնում, թե ոնց ես համ ավագ դպրոց գնալու, համ աշխատելու, բայց գիտեմ, որ ձևը կգտնես: Բանակում ստացած փողս մայրիկը կստանա, իհարկե, բացի մի քանի դոլարից, որ ինձ կարող են պետք գալ, բայց էդ էլ մի մեծ փող չի, իհարկե: Ինձ լավ չեմ զգում, որ քեզնից իմ չարած բաներն եմ սպասում՝ ինքս մինչև տասնինը տարեկան չեմ աշխատել, բայց չգիտեմ ինչու՝ վստահ եմ, որ դու իմ չարածը կանես:

Իհարկե, քեզ շատ եմ կարոտում ու անընդհատ մտքիս ես: Ես լավ եմ, ու թեև պատերազմը միշտ հիմարություն եմ համարել և հիմա էլ գիտեմ, որ հիմարություն է, ինչքան էլ որ անխուսափելի լինի, մեկ է՝ հպարտ եմ, որ մասնակցում եմ, որովհետև էնքան մարդ է մասնակցում: Ասեմ՝ ինչ է կատարվում: Ոչ մի մարդու չեմ կարող թշնամիս համարել, որովհետև ոչ մի մարդ ինձ թշնամի լինել չի կարող: Ով էլ լինի՝ ընկեր է: Իմ կռիվն էդ մարդու հետ չի, այլ նրա մեջ մի բանի, որ նախ ինքս իմ մեջ կուզեի վերացնել:

Ինձ հերոս չեմ զգում: Էդ զգացողությունն իմը չի: Ոչ մեկին չեմ ատում: Ոչ էլ հայրենասիրությամբ տոգորված եմ: Միշտ իմ երկիրը սիրել եմ, մարդկանց, քաղաքները, տունս, ընտանիքս սիրել եմ: Երանի բանակում չլինեի: Երանի պատերազմ չլիներ: Չգիտեմ՝ ինձ ինչ է

սպասում, բայց ինչ էլ լինի՝ կազմ ու պատրաստ կդիմա-
վորեմ: Քեզ պիտի խոստովանեմ՝ շատ եմ վախենում,
բայց որ պահը գա՝ անելիքս կանեմ: Ոչ մեկի հրամանին
չեմ ենթարկվի՝ սրտիցս բացի: Ինձ հետ ուրիշ տղաներ
կլինեն, մեր Իթակայի նման՝ Ամերիկայի հազարավոր
քաղաքներից: Իհարկե կարող եմ սպանվել: Բոլորս էլ
գիտենք: Էս միտքը ինձ հե՛ջ դուր չի գալիս: Աշխար-
հում ամենաշատը Իթակա գալ եմ ուզում: Ուզում եմ
Մերիի մոտ գալ, տուն գալ, իմ սեփական ընտանիքը
գալ: Շուտով գնալու ենք կռվի, բայց ոչ ոք չգիտի, թե
էդ կռիվն ուր է լինելու: Հնարավոր է, որ շատ երկար
ինձնից նամակ չստանաս: Հուսով եմ՝ վերջինը չի, բայց
եթե էդպես լինի, դու մեր ապավենը մնա: Ընկերոջս՝
Թոբի Ջորջին, պատմել եմ Իթակայի ու մեր ընտանիքի
մասին: Հույս ունեմ՝ օրերից մի օր հետո նրան էլ Իթակա
կբերեմ: Ուրախ եմ, որ Մաքուլիներից է՛ս եմ պատերազմ
գնացել, որովհետև ափսոս կլինեն ու սխալ կլինեն, որ
գնացողը դու լինեիր:

Նամակով կարող եմ ասել էն, որ խոսքով չէի ասի:
Դու Մաքուլիներից ամենաարժանավորն ես: Թող քեզ ոչ
մի բան չկանգնեցնի: Հիմա անունդ գրում եմ, որ չնո-
ռանաս. Հոմեր Մաքո՛լին ես, ու քեզ շատ եմ կարոտել:
Էնքա՛ն եմ ուզում քեզ տեսնել: Աստվա՛ծ քեզ պահա-
պան: Մնաս բարով: Քո եղբայր Մարկուս»:

Հեռագրատարը նամակը կարդալիս նստել էր:
Կարդում էր դանդաղ՝ թուրքը կուլ տալով ու տեղ-տեղ
սրտխառնոց զգալով, ինչպես որ մեքսիկուի ու տանն
էր զգացել: Հետո ոտքի կանգնեց: Ձեռքերը դողում
էին: Շրթունքը կծեց ու ծեր հեռագրիչին նայեց: Կամաց
ասաց.

– Եթե եղբայրս էս պատերազմում սպանվի՝ կթքե՛մ
աշխարհի երեսին: Մինչև մահ կատեմ:

Աչքերն արցունք լցվեց: Մոտեցավ պահարանին, համազգեստը հանեց ու իր շորերը հագավ: Շորերը հազիվ վրան քաշած՝ գրասենյակից դուրս վազեց:

Ծեր հեռագրիչը դեռ երկար լուռ նստած էր: Հետո վերջապես իրեն թափ տվեց, շշի միջինը գլուխը քաշեց, վեր կացավ ու շուրջը նայեց:

34. ԵԿԵՂԵՑՈՒՄ

Իթակայի բնակիչների կյանքի ընթացքը, չասած՝ աշխարհի բոլոր մարդկանց կյանքի ընթացքը, մի կաղապարի էր հետևում, որը սկզբում անհեթեթ, անգամ խենթ կթվար, բայց երբ օրերն իրար հաջորդում՝ ամիսներ ու տարիներ էին դառնում, սկսում էիր ընկալել, որ կաղապարն ինչ-որ ձև ու տրամաբանություն ունի:

Հեռագրասարքը նորից ու նորից ճարճատում էր, և պարոն Գրոզանը, գրամեքենայի առջև նստած, աշխարհից իր զավակներին հասցեագրված ուղերձներ էր գրում. սիրո, կսկիծի կամ մահվան: «Տո՛ւն եմ գալիս»: «Ծնունդդ շնորհավոր»: «Պաշտպանության նախարարությունը ցավով հայտնում է, որ ձեր որդին սպանվել է»: «Դիմավորիր Հարավային խաղաղօվկիանոսյան կայարանում»: «Համբուրում եմ»: «Ես լավ եմ»: «Աստված քեզ պահապան»: Հոմեր Մաքուլին նորից ու նորից ուղերձները տեղ էր հասցնում:

Մաքուլիների հյուրասենյակում տավիղի լարերը մեղեդի էին նվագում: Զինվորներն առաջ էին շարժվում՝ ցամաքով, ջրով, օդով, սուզանավով՝ դեպի նոր վայրեր, նոր օրեր, նոր գիշերներ, նոր երազներ, անկարագրելի աղմուկով ու վտանգներով լիքը նոր ու անձանոթ պահեր: Մարդկանց դեմքերը փոխվում էին, թեկուզ աննկատ. Մարկուսինը, Թոբիինը, Հոմերինը, Սպանգլերինը, Գրոզանինը, տիկին Մաքուլիինը,

Ուլիսեսինը, Դայանայինը, Օգիինը, Լայոնելինը, Բեսսինը, Մերիինը, «Բեթել» հյուրանոցի աղջկանը, Ռոզալի Սիմս-Փիբիթիինը, պարոն Արայինն ու նրա որդի Ջոնինը, Մեծ Քրիսինը, օրիորդ Հիքսինը, անգամ պարոն Սարքինը:

Բեռնատար գնացքը, դուրս կախված սևամորթի հետ միասին, էլի անցնում էր: Գետնասկյուռը մնում-մնում՝ իր անցքից ծիկրակում էր: Պարոն Հենդերսոնի ծիրանները ժպտացող արևի գույնն էին ստանում ու իրենց գողանալու եկած տղաների դեմքերի նման պեպեններով ծածկվում: Թխական հավի ճուտիկներն ավելանում էին: Ուլիսեսը շարունակում էր դիտել: Հոմերի ոտքը լավացել էր: Զատկի կիրակին հթակա եկավ, հետո՝ հաջորդ կիրակին: Հետո՝ հաջորդը: Հետո՝ էլի մեկը, էլի մեկը, էլի մեկը...

Այս կիրակի Մաքուլիները ամբողջ կազմով Մերի Արինայի հետ նստած էին հթակայի առաջին բողոքական եկեղեցում: Ուլիսեսը նստել էր շարքերի միջև՝ անցման մոտ: Ճիշտ նրա դիմաց՝ դեպքի բերումով, ճաղատ գլխով մի մարդ էր նստած: Այս կենդանի գնդակը, որ մարդու ամենահետաքրքիր մասն էր, գերել էր տղային: Ձևն արդեն, որ ձվից շատ չէր տարբերվում, ուսումնասիրության առարկա էր: Միայնակ փնջով աճած տասներկու մազերը մի տեսակ հերոսական ու հախուռն տեսք ունեին: Գլուխը վզից բաժանող ծալքը, որ երկիրը հատող հասարակածն էր հիշեցնում, ձևավորման գլուխգործոց էր:

Այս նույն միջոցին Պատվելի Հոլին և համայնքի անդամները Երջանիկ կյանքի մասին բարեպաշտ երկխոսություն էին վարում: Նախ Պատվելին մի հատված էր կարդում, ապա համայնքը միաձայն պատասխան էր տալիս:

– Տեսնելով բազմությունը, – կարդում էր Պատվելին, –
Նա բարձրացավ լեռը, և երբ նստեց, աշակերտները
Նրա մոտ եկան:

– Եվ Նա, – պատասխանեցին հավաքվածները, –
սկսեց ուսուցանել նրանց՝ ասելով:

– Երջանիկ են նրանք, ովքեր աղքատ են, որովհետև
նրանցն է երկնային արքայությունը:

– Երջանիկ են նրանք, ովքեր սգում են, որովհետև
նրանք կսփոփվեն:

– Երջանիկ են նրանք, ովքեր հեզ են, որովհետև նրանք
կժառանգեն երկիրը:

– Երջանիկ են նրանք, ովքեր քաղցած ու ծարավ են
արդարության, որովհետև նրանք կհագենան:

– Երջանիկ են նրանք, ովքեր ողորմած են, որովհետև
նրանց հանդեպ ողորմած կլինեն:

– Երջանիկ են նրանք, ովքեր սրտով մաքուր են, որով-
հետև նրանք կտեսնեն Աստուծուն:

– Երջանիկ են նրանք, ովքեր խաղաղարար են, որով-
հետև նրանք կկոչվեն «Աստուծու որդիներ»:

– Ուրախացե՛ք և ցնծացե՛ք: Դուք երկրի աղն եք: Դուք
աշխարհի լույսն եք:

– Թող ձեր լույսը շողա մարդկանց առջև, որպեսզի
նրանք տեսնեն ձեր բարի գործերը և փառք տան ձեր Հորը,
որ հերկինս է:

Երբ երկխոսությունը սկսվեց, Ուլիսեսը զբաղված էր
ճաղապրն ուսումնասիրելով: Հանկարծ ուսումնասիրության
առարկան մի ճանճ զարդարեց ու սկսեց հեղազոտել՝ ամե-
նայն հավանականությամբ, ինչ-որ կորցրած բան գտնելու
մտադրությամբ: Ուլիսեսն անթարթ նայում էր ճանճին,
հետո ձեռքը երկարեց, որ բռնի, բայց տիկին Մաքուլին
թևը քաշեց ու բաց չթողեց: Աչքերը ճաղապրից ու ճանճից
չկտրելով և հարուկ ոչ մի բանի մասին չմտածելով՝

Ույիսեսը երազների գիրկն ընկավ, ու ողորկ մաշկը նրան անապար թվաց: Գլուխը հափող ծալքը վրակ դարձավ, յոթ մազանոց փունջը՝ արմավենիներ, ճանճը՝ առյուծ: Հեյրո հնքն իրեն պարկերացրեց՝ կիրակնօրյա շորերով վրակի մոտ կանգնած, առյուծը՝ հանդիպակաց ափին: Կանգնած փեղից դիմացը՝ առյուծին նայեց, որն իր հերթին ափին մոտեցել՝ իրեն էր նայում: Սուրբ գրքի ընթերցանությունը շարունակվում էր:

Ույիսեսը հեռվում մի արաբ նկարեց՝ ընդարձակ հագուստը հագին՝ ավազին պառկած: Արաբի կողքին մանդոլին կամ դրա նման մի երաժշտական գործիք կար ու ջրի սափոր:

Ույիսեսը տեսավ, որ առյուծը քնած արաբից ոչ պակաս հանդարտ ու անմեղ տեսքով մոտեցավ մարդուն, կռացավ ու սկսեց գլուխը հոտոտել, ոչ վնասելու, այլ հոտն առնելու համար: Ճիշտն ասած՝ սրա նման մի նկար գրադարանում էր տեսել՝ Լայոնելի բացած գրքերից մեկում:

Սուրբ գրքի ընթերցումն ավարտվեց: Եկեղեցական երգեհոնը խոր շունչ քաշեց, երգչախումբն ու համայնքի անդամները սկսեցին մի երգ երգել, և Ույիսեսն այսպիսի բառեր լսեց. «Ու հեյրս քայլեց, ու հեյրս խոսեց»: Անապարի առյուծը, իհարկե: Հեյրո Փրկիչը:

Անապարում քայլող ու խոսող առյուծի պարկերը չքացավ փոքրիկ տղայի երազից: Փոխարենը օվկիանոս հայտնվեց: Ույիսեսը կառչել էր անձայրածիր ջրերից մի քանի ոտնաչափ սրացած խութից: Միայն գլուխն ու ձեռքերն էին ջրից դուրս: Նա չորսկողմը նայեց՝ ազատում կամ փրկություն փնտրելով, բայց անափ ջրից զատ բան չկար: Հեյրո, վերջապես, Ույիսեսը հեռվում ջրի վրայով քայլող երևելի մարդուն՝ Մեծ Քրիսին տեսավ: Մեծ Քրիսը մոտեցավ, առանց խոսքի ձեռքից բռնեց ու բարձրացրեց՝ ջրի երես հանեց: Բայց Ույիսեսն էլի չլմփոցով ջուրն ընկավ,

և Մեծ Քրիստն էլի դուրս հանեց ու կանգնեցրեց: Հեյրո, ձեռքը բռնած, Ուլիսեսի հետ ջրի վրայով քայլեցին: Հեռու-հեռվում չքնաղ ճերմակ քաղաքի աշտարակները երևացին, քաղաքի շուրջ՝ ցամաք ու բուսականություն: Մեծն ու փոքրիկը քաղաքի կողմը քայլեցին:

Երգը վերջացավ: Հանկարծ ինչ-որ մեկը սկսեց Ուլիսեսին ցնցել: Նա, հանկարծակիի եկած, վեր թռավ: Լայոնելն էր՝ հանգանակության սկուրեղը ձեռքին: Ուլիսեսն իր հինգսենթանոցը գտավ, գցեց վրան ու սկուրեղը մայրիկին փոխանցեց: Լայոնելը հեզ ձայնով շշնջաց.

– Փրկություն ստացա՞ր:

– Ի՞նչ:

– Կարդա՛, – ասաց Լայոնելն ու ձեռքը մի եկեղեցական գրքույկ խոթեց:

Ուլիսեսը գրքույկը զննեց, բայց իհարկե չէր կարող մեծ տառերով գրված բառերը կարդալ, որ ասում էին. «Փրկություն ստացա՞ք: Երբեք ուշ չէ»:

Լայոնելը դիմացի շարքում մի տարեց պարոնի նույն հարցը տվեց.

– Փրկություն ստացա՞ք:

Պարոնը խոժոռված՝ տղային նայեց, հետո շշուկով ասաց.

– Գնա գործիդ, տղա՛ս:

Բայց նախքան գործին գնալը Լայոնելը աֆրիկյան ցեղապետի անհարգալից վերաբերմունքին արժանացած քարոզչի տեսքով, այնուամենայնիվ, տարեց պարոնին էլ մի գրքույկ մեկնեց: Սա, գրգռված, գրքույկը խլեց: Կինը կողքին շշնջաց.

– Քեզ ի՞նչ եղավ, սիրելիս:

– Հարցրեց՝ փրկություն ստացա՞, հետո սա տվեց, – մարդը գրքույկը կնոջը տվեց, որն ամուսնու ձեռքը շոյեց ու ասաց.

– Տղան ի՞նչ իմանար, որ երեսուն տարի Չինաստանում քարոզիչ ես եղել:

Հանգանակություն հավաքելու ողջ ընթացքում գեղեցիկ սուպրանոն երգում էր երգեհոնի մեղմ նվագի տակ: Լայոնելը, Օգին, Շաքը և Իթակայի մյուս տղաները, հանգանակության սկուտեղները ձեռքին, կանգնել էին անցուղու հետնամասում, մինչև երգեցողությունն ավարտվեց: Ապա պատշաճ լռությամբ ու լրջությամբ անցուղով դեպի ամբիոնի տակ դրված սեղանը շարժվեցին, սկուտեղներն իրար վրա՝ սեղանին դրեցին ու ծնողների մոտ վերադարձան:

35. ԾՈՒՂԱԿՆ ԸՆԿԱԾ ԱՌՅՈՒԾԸ

Եկեղեցուց ու կիրակնօրյա ճաշից հետո Օգասթ Գոթլիբը բակում թենիսի հին ցանցն էր նորոգում՝ մտածելով, որ մի բանի պետք կգա: Ինքը Հոփեր անունով Օգիի մի տարեկից կողքով արագ անցնելիս արագ կանգ առավ ու արագ սկսեց նրան հետևել: Ձեռքին բեյսբոլի մի հին կիսամաշ գնդակ էր, որը ուժով մայթին խփեց ու օդում բռնեց: Հետո էլի խփեց ու էլի բռնեց: Ինքը Հոփերն Իթակայի ամենատաքարյուն, ամենաանհանգիստ, ամենաարագաշարժ, ամենաանհամբեր ու ամենից բարձրախոս տղան էր:

- Ի՞նչ ես սարքում, Օ՛գի:
- Ցանց:
- Որ ի՞նչ անես՝ ձու՛կ բռնես:
- Չէ, գազաններ:

Ինքն արդեն սկսեց ձանձրանալ:

– Արի՛ գնանք՝ բեյսբոլ խաղանք կամ Գուգենհայմի ջրմուղ աշտարակը բարձրանանք:

- Ցանցը պիտի սարքեմ:
- Սարքես որ ի՞նչ:

- Որ գազան բռնեմ:
- Էստեղ ու՛ր ես գազան տեսել: Արի՛: Գնանք Մալազա, լողանանք:
- Այ կտեսնես, որ կբռնեմ:
- Էդ թենիսի ցանցով իսկի լու չես բռնի: Գնացի՛նք: Գնանք կինո՝ «Տարզանը» նայենք:
- Նախ շուն կբռնեմ, որ տեսնեմ՝ ոնց է աշխատում: Հետո քեզ ցույց կտամ:
- Լավ, էլի, Օգի, թենիսի ցանցով բան էլ չես բռնի: Արի՛ դատարանի շենքի այգին գնանք՝ բանտարկյալների հետ զրույց անենք:
- Պիտի գազան բռնելու ցանցս նորոգեմ, - ասաց Օգին: - Էսօր մենակ կփորձարկեմ, բայց վաղը... Ա՛յ, վաղը...
- Ա՛յ, վաղը *ի՞նչ*, - հարցրեց Ինոքը: - Էստեղ գազաններ ու՛ր ես տեսել: Հա՛, մի կով, մի երկու շուն, մի վեց-յոթ ճագար, մի քանի հավի ճուտ: Ի՞նչ ես բռնելու:
- Կարգին ցանց է: Արջ էլ կբռնվի:
- Էդ ցանցով վայ թե թավշի արջուկ էլ չբռնես: Արի՛ չինական թաղ գնանք՝ զբոսնենք:
- Օգաստ Գոթլիբը մի պահ աշխատանքն ընդհատեց, որ չինական թաղի ու չինացիների մասին մտածի: Հետո Ինոքին նայեց:
 - Չինացիներից վախենու՛մ ես:
 - Հը՛-ը, - ազնվորեն պատասխանեց Ինոքը, - ոչ մեկից էլ չեմ վախենում: Ուզեին էլ՝ *ինձ* բռնող չկա: Չե՛ն հասնի:
 - Գրազ գամ՝ առյուծը կբռնի:
 - Չե՛, *ինձ* հասնող չկա: Ոչ էլ առյուծը կբռնի, ոչ էլ արջը, վագրը կամ չինացիները: Ես շատ արագավազ եմ: Արի, գնացի՛նք երկաթուղու կայարան՝ տղերքի հետ խաղանք:

- Ծուղակը կբռնի:
 - Աշխարհում ինձ բռնող ծուղակ չկա: Արի՛ խաղա-
հրապարակ գնանք՝ վազենք: Քեզ հարյուր մետր առաջ
կթողնեն:
 - Քեզ հայրդ էլ կբռնի:
 - Չէ՛, մոտիկ էլ չի գա: Հորիզոնից էն կողմ կթողնեն:
Այդ պահին իրենց տնից Լայոնելը եկավ:
 - Ի՞նչ ես սարքում, Օ՛գի:
 - Գազան բռնելու ցանց:
 - Էդ ցանցով լու էլ չի բռնի, - ասաց Ինոքը: - Կգա՞ս՝
գնդակ բռնոցի խաղանք:
 - Ե՛ս, - հարցրեց Լայոնելը:
 - Բա էլ ո՞վ: Դու գնդակը ամբողջ ուժով կշարտես,
ես կբռնեմ: Ես շատ ուժեղ չեմ գցի: Գնացի՛նք, օրն
անցավ:
 - Լավ, Ինո՛ք: Բայց շատ ուժեղ չես գցի, չէ՞:
 - Չմտածես, ուժեղ չեմ գցի: Գնացի՛նք:
- Ինոք Հոփերն ու Լայոնել Քարոթը ամայի տարածքի
կողմը գնացին, իսկ Օգին իր գործին անցավ: Ծուտով
հին ցանցի կտրված թելերը կապված էին, ու ցանցը
համարյա նորի տեսք ուներ: Օգին ծայրերը ձգեց ու
հեռու-հեռու խրած ձողերից կապեց, որ աշխատանքի
արդյունքը տեսնի: Այս միջոցին Շաք Մանուկյանը
ցանկապատին մոտեցավ:
- Էդ ի՞նչ է:
 - Գազան բռնելու ցանց: Կուզե՞ս՝ փորձարկենք:
 - Ըհը՛, ո՞նց է աշխատում:
 - Տե՛ս, - ասաց Օգին, - հիմա ցանցը կբռնեմ ու Արայի
խանութի հետևը կթաքնվեմ: Դու Ինոքին կկանչես:
Էնտեղ՝ ամայի տարածքում Լայոնելի հետ գնդակ
բռնոցի են խաղում: Ինոքը առյուծից արագաշարժ է ու
դժվար բռնվող: Եթե ցանցը Ինոքին դիմանա, ուրեմն

ամեն ինչի կդիմանա: Լավ, ես թաքնվեմ, դու ինքդին կանչիր: Ասա՝ բան պիտի հարցնես: Պատրաստ եմ:

– Լավ,– ասաց Շաքը: Նայեց հեռվում խաղացող ինքդին ու գոռաց.

– Ինք, հե՛յ, Ինո՛ք:

Ինք Հոփերը շրջվեց ու երկու անգամ ավելի բարձր ձայնով գոռաց.

– Հը, ի՞նչ կա, Շա՛ք:

– Արի՛, բան եմ ուզում հարցնե՛լ:

– Ի՛նչ:

– Արի՛ կիմանա՛ս:

– Եկա՛,– ասաց Ինքըն ու Շաքի կողմը վազեց, իսկ Լայոնելը, հետևից ընկած, չէր հասկանում՝ ինքն էլ պիտի վազի՞, թե՞ ուղղակի հետևից գնա:

– Ապրե՛ս, Շաք,– շշուկով ասաց Օգին,– հիմա արի՛ հետս թաքնվիր: Ցանցի ծայրը բռնիր: Հենց անկյունից երևա, վրա կհասնենք ու կբռնենք, հասկացա՞ր:

Ինքըն, ոտքերում ինչքան ուժ կար՝ վազելով, բղավեց.

– Արի Մալագա գնանք՝ լողանա՛նք, օրն անցավ, ու՛մ ենք սպասում, արի մի բան անե՛նք:

Նա վազելով հայտնվեց Արայի խանութի անկյան հետևից: Օգին ու Շաքը վայրկենական ցատկով թաքստոցից դուրս թռան ու ցանցը վրան գցեցին: Ինչ խոսք, Ինք Հոփերը չընտելացրած կենդանու՝ երևի առյուծի շարժումներ էր անում: Երկու անվախ որսորդները կատաղի գործի անցան, բայց ցանցն ամուր չէր, ու շատ շուտով Ինք Հոփերը, անհաջող փորձից դուրսն իսկ չտուժած, ոտքի կանգնեց:

Նա բեյսբոլի գնդակը գետնով տվեց:

– Գնացի՛նք, ա՛յ Օգի, էդ ցանցով լու էլ չես բռնի: Դե գնացի՛նք, ու՛մ եք սպասում:

– Լավ,– ասաց Օգին ու ցանցը բակ նետեց:– Դատարանի այգին գնանք՝ բանտարկյալների հետ զրուցենք:

Օգին, Ինոքը, Շաքն ու Լայոնելը փողոցն ի վարձատարանի կողմը գնացին: Շուտով Ինոք Հոփերը բոլորից ահագին առաջ անցած՝ հետ նայեց ու կանչեց.

– Գնացի՛նք, ի՞նչ եք կրիայի պես սողում,– ու բեյսբոլի գնդակն ուժով գետնին խփեց:

36. ՍՊԱՆՉԼԵՐԸ

Թոմաս Սպանգլերն ու Դայանա Սթիդը մեքենայով քաղաքից դուրս՝ Քինգսբուրգի կողմը, զբոսանքի էին գնացել: Մեքենան հին էր, կարմիր ու բացվող տանիքով:

– Սրանք,– ասում էր Սպանգլերը՝ խաղողի այգու եզրով աճած ծառերի շարքը ցույց տալով,– թզենիներ են: Հետևը մուսկատ խաղողի վազեր են: Էն մի քանիսը ձիթենի են, ա՛յ էն մեկը՝ նռնենի: Էն կողմի խաղողները մալագա են: Տե՛ս, դեղձենու այգի է: Սրանք ծիրանի ծառեր են: Էս մի ծառից հաճախ չես տեսնի՝ խուրմա է: Մեր հովտում *ինչ ասես* չի աճում:

– Ախ, սիրելիս,– ասաց Դայանան,– ծառեր շատ ես սիրում, հա՞:

– Շատ, ու մեր այգում ամեն տեսակից գոնե երկուական կտնկենք, որ երեխաները բարձրանան, պտուղը քաղեն ու հենց ծառից ուտեն:

– Ախ, սիրելի՛ս, երջանիկ ես, չէ՞:

– Ամենաերջանիկը:

Նա թևը Դայանայի ուսին դրեց:

– Չեմ համբերում, թե երբ եմ մեր պստիկին տեսնելու: Երանի աղջիկ լինի: Ո՛նց եմ ուզում ձայնը լսել: Առաջ կարծում էի, թե թռիվռի ես: Բայց *էդ բանն* անել կարողացողը թռիվռի չի լինում: Իսկ դու *կարող* ես:

– Իհարկե կարող եմ, – ասաց Դայանան: – Շատ բնական բան է, սիրելիս:

Փոքրիկ մեքենան ընթանում էր Քինգս գետի հունին զուգահեռ՝ բացօթյա խնջույքների տարածքի մոտով: Այս կիրակի օրը հինգ մեծ խմբեր երգուպարով պիկնիկի էին եկել՝ իտալացիներ, հույներ, սերբեր, հայեր և ամերիկացիներ: Ամեն խումբն իր՝ մյուսներից տարբեր երգուպարն ուներ: Սպանգլերն ամեն խմբի մոտ մեքենան կարճատև կանգնեցրեց, որ երգը լսի ու պարողներին նայի:

– Էն խումբը հույներ են: Ժամանակին մի հույն ընտանիք էի ճանաչում: Սրանք իրենց երկրի պարերն են:

Մեքենան մի կարճ տարածություն անցավ ու էլի կանգ առավ:

– Ա՛յ, էն մարդիկ էլ հայեր են: Մորուքավոր տերտերից ու ժիր երեխեքից հասկացա: Նրանք երկու հավատք ունեն՝ մեկ Աստված, մեկ երեխաները:

Շարժվեցին առաջ ու էլի մի խմբի մոտ կանգնեցին:

– Սրանք էլ սլովենացի ու սերբ են ու երևի էդ կողմերից մի երկու ուրիշ ազգության:

Նորից շարժվեցին ու նորից կանգնեցին:

– Իտալացիներ են: Երևի Քորբեթն էլ ընտանիքով էստեղարենք լինի:

Վերջապես նրանց մեքենան քեֆչիների վերջին խմբին մոտեցավ: Երաժշտությունն աղմկոտ սվինգ, ջայվ ու բուգի-վուգի էր, պարը՝ վայրի:

– Ամերիկացի են՝ հույն, սերբ, լեհ, ռուս, մեքսիկացի, հայ, գերմանացի, սևամորթ, շվեդ, իսպանացի, բասկ, պորտուգալացի, իտալացի, հրեա, ֆրանսիացի, անգլիացի, շոտլանդացի, իռլանդացի: Ո՞ր մեկն ասեմ: Ամերիկացի են:

Կանգնեցին, նայեցին, լսեցին, հետո մեքենան կամաց առաջ շարժվեց:

37. ԻԹԱԿԱՆ

Սան Ֆրանցիսկոյից մեկնած մարդատար գնացքը կեսօրին Իթակայում կանգառ արեց, և հինգ ուղևոր իջավ, որոնցից երկուսը՝ ջահել զինվորներ: Բայց գնացքը մեկնել չհասցրած՝ մեկն էլ դուրս ցատկեց ու ձախ ոտքը կաղալով՝ դանդաղ քայլեց:

Առաջին զինվորը նայեց ընկերոջն ու ասաց.

– Էս էլ քեզ Իթական, եղբայր: Էս էլ քեզ տունը:

– Ու՛խ: Սպասիր՝ լավ տեսնեմ, – ասաց երկրորդը: – Թող մի կարգին շուրջս նայեմ: – Նա հոգու բերկրանքը երգով արտահայտեց՝ սկսեց քթի տակ մռմռացնել, – Ուուու՛, Իթակա, հայրենի տուն: Չգիտեմ՝ դու ինչ ես զգում, բայց ես՝ ուուու՛խ, – հետո չոքեց ու Մեքքայում երկրպագող մահմեդականի պես սալարկած մայթը համբուրեց:

– Վե՛րջ տուր, մարդիկ նայում են: Հո չե՛ս ուզում՝ մեզ գժի տեղ դնեն:

– Չէ, բայց ի՞նչ անեմ. չեմ դիմանում: Ախր հարազատ Իթակայում եմք, – զինվորը վերջապես վեր կացավ ու ընկերոջ թևը բռնեց:

Քայլելով՝ պարոն Արայի խանութի փողոցը հասան: Հանկարծ վազեցին՝ մեկը մի տան շեմքի աստիճաններին ցատկեց, մյուսը՝ հարևան: Ալֆ Ռայֆը անկյան հետևից վազելով եկավ, կանգնեց երկու տների միջև՝ մարգագետնին ու սկսեց նայել: Երկուսի դռները միաժամանակ բացվեցին: Դուռը բացած կանայք տղաներին միաժամանակ գրկեցին: Հետո էլի տղամարդիկ, տղաներ, աղջիկներ ու կանայք հայտնվեցին ու հերթով սկսեցին զինվորներին գրկախառնվել:

Բայց ոնց որ մի բան սխալ լիներ: Ալֆ Ռայֆն այս սխալը նկատեց ու կոկորդով մեկ գոռաց.

– Մերը չի,– բղավեց,– մերը չի, Դանի Բուֆն է՝ հարևանի տղան: Տուն է եկել: Կողքի տանն է ապրում: Ուրիշ տու՛ն է եկել: Գիտեինք՝ մեր տղան է, բայց տիկին Բուֆի՛նն է: Մերը հեն է՝ տիկին Բուֆին է գրկել: Սխալվել ենք, մա՛:

– Վա՛յ, բարով ես եկել, Դա՛նի,– ասաց տիկին Ռայֆը:– Մենք էլ կարծեցինք՝ Հարրին ես:

– Ոչինչ, տիկի՛ն Ռայֆ,– ասաց Դանին,– գնամ՝ մայրիկիս էլ գրկեմ: Դուք էլ եկեք:

Մյուս տան շենքին կանգնած՝ Հարրի Ռայֆն ասաց.

– Բարև, տիկի՛ն Բուֆ: Համեցեք մեր տուն, *բոլորդ*: Որ իմանաք՝ ի՛նչ ուրախ եմ ձեզ տեսնել, տիկի՛ն Բուֆ,– ու նորից համբուրեց:– Դանին էնտեղ՝ մեր տան դռանը մայրիկիս է համբուրում:

Այս ընթացքում մարդիկ, մի տեսակ երջանիկ տենդով համակված, գնում–գալիս՝ կուտակվում էին երկու տների առջև, իսկ Ալֆը հա՛ գոռում էր ու գոռում.

– Ճիշտ չի՛ եկել, ճիշտ չի՛ եկել, ուրիշ տուն է եկել, իրենց տունը կողքի՛նն է: Հե՛յ, Հա՛րրի, մայրիկն *էսպեղ* է: Էդ տիկին Բու՛ֆն է: Ուրիշ տու՛ն ես գնացել:

38. ՊԱՅՏԱԽԱՂԸ

Հոմեր Մաքուլին քրոջ՝ Բեսսի, եղբոր՝ Ուլիսեսի և իրենց ընկերուհի Մերի Արինայի հետ կիրակի կեսօրն անց զբոսնելիս հասան կինոթատրոնի առջև հավաքված բազմությանը, և Հոմերը նրանց մեջ Լայոնելին տեսավ:

– Կինո՞ ես եկել,– հարցրեց:

– Փող չունեմ,– պատասխանեց Լայոնելը:

– Բա հերթ ես կանգնել, որ ի՞նչ:

– Ես, Օգին, Շաքն ու Ինոքը գնացել էինք դատարանի այգին՝ բանտարկյալների հետ զրուցելու: Հետո ինձ քշեցին: Չգիտեի՝ ուր գնալի: Տեսա՝ մարդիկ են կանգնած, ես էլ կանգնեցի:

– Վաղու՛ց ես էստեղ:

– Երևի մի ժամ կլինի:

– Լսի՛ր,– ասաց Հումերը,– *կուզե՛ս* կինո գնալ,– ու գրպանից մի բուռ փող հանեց:

– Չգիտեմ,– պատասխանեց Լայոնելը,– գնալու տեղ չունեի: Կինո էնքան էլ չեմ սիրում:

– Դե մեզ հետ արի: Հենց էնպես ման ենք գալիս, ցուցափեղկերին նայում: Մի քիչ ման կգանք, կգնանք տուն: Գնացինք, Լայոնել,– նա ճոպանը բարձրացրեց, որ Լայոնելը հերթից դուրս գա:

– Շնորհակալ եմ,– ասաց Լայոնելը:– Արդեն էստեղ կանգնելուց հոգնել էի:

Մի քիչ քայլեցին, մեկ էլ Ուլիսեսը կանգնեց ու եղբոր թևից քաշեց: Մատը մայթի կողմն արեց: Մայթին, հենց նրա առաջ, Լինքոլնի սենթանոց էր ընկած՝ երեսը վեր:

– Վա՛յ, փենի է,– ասաց Հումերը:– Վերցրու, Ուլիսե՛ս, բախտավոր է: Միշտ մոտդ կպահես:

Ուլիսեսը սենթանոցը վերցրեց ու չորսկողմը՝ իր բախտի վրա ժպտացող մարդկանց նայեց:

Հեռագրատան դիմացի մայթով անցան, ու Հումերը կանգնեց, որ նայի:

– Ա՛յ էստեղ եմ աշխատում,– ասաց,– արդեն համարյա վեց ամիս կլինի:– Մի պահ լռեց, հետո, կարծես ինքն իր հետ խոսելով, ասաց.

– Բայց ոնց որ հարյուր տարի լինի:– Ներս նայեց ու շարունակեց:– Չլինի՞ պարոն Գրոգանն է: Չգիտեի, որ էսօր աշխատում է:– Նա մյուսներին դարձավ.

– Կսպասե՛ք: Մի րոպեից կգամ:

Հումերը փողոցն անցավ ու վազելով գրասենյակ մտավ: Հեռագրի սարքն աշխատում էր, բայց ծեր հեռագրիչը գրի չէր առնում: Հումերը նրա մոտ վազեց՝ կանչեց:

– Պարո՛ն Գրոգան, պարո՛ն Գրոգան, – բայց ծերունին չզարթնեց:

Հեռագրատարը դուրս վազեց՝ ընկերներին հասավ:

– Պարոն Գրոգանը լավ չի զգում: Պիտի մոտը մնամ: Դուք տուն գնացեք: Շուտով կգամ:

– Լավ, Հումեր, – ասաց Բեսսը:

– Պարոն Գրոգանին ի՞նչ է եղել, – հարցրեց Լայոնելը, որ չգիտեր էլ, թե խոսքն ում մասին է:

– Ժամանակ չկա, պիտի հետ գնամ, – ասաց Հումերը: – Գնացե՛ք: Ծեր մարդ է, Լայոնել, էդքան բան:

Հումերն արագ հեռագրատուն վերադարձավ ու սկսեց պարոն Գրոգանին ցնցել: Վազեց՝ սափորից թղթե բաժակը ջուր լցրեց, հետո ջուրը ծերունու երեսին շփեց: Պարոն Գրոգանի աչքերը բացվեցին:

– Ե՛ս եմ, պարո՛ն Գրոգան: Չգիտեի, որ էսօր աշխատում եք, թե չէ շուտ կգայի՝ մյուս աշխատանքային կիրակիների պես: Ուղղակի էստեղով անցնում էի: Հիմա շուտ սուրճը կբերեմ:

Ծեր հեռագրիչը գլուխը թափահարեց, ձեռքը մեկնեց սարքին ու հակառակ կողմի հեռագրիչին կանգնեցրեց: Հետո գրամեքենան մի ձևաթուղթ դրեց ու սկսեց տպել:

Հումերը Բորբեթի բարը սլացավ ու սուրճ խնդրեց:

– Բորբեթը թարմ սուրճ է եփում, – ասաց Փիթը՝ բարի աշխատողը: – Մի երկու րոպե պիտի սպասես, Հումե՛ր:

– Հնից հեչ չկա՞:

– Վերջացել է: Հիմա նորն է եփում:

– Շատ է պետք: Ես գրասենյակ վազեմ, մի թոպեից էլի կգամ: Երևի արդեն պատրաստ կլինի:

Երբ Հոմերը հետ վազեց, ծեր հեռագրիչն էլի նոր եկող ուղերձը գրի չէր առնում: Հոմերն էլի նրան ցնցեց:

– Պարո՛ն Գրոգան, հեռագիր է գալիս: Քորբեթը նոր սուրճ է եփում: Մի երկու թոպեից կբերեմ: Պարո՛ն Գրոգան, կանգնեցրե՛ք, հեռագիրը չե՛ք տպում:

Հետո շուռ եկավ ու էլի փողոց վազեց:

Ծեր հեռագրիչը նայեց իր տպած հեռագրին ու մի անգամ էլ կարդաց.

ՏԻԿԻՆ ՔԵՅԹ ՄԱՔՈԼԻԻՆ

2226 ՍԱՆՏԱ ԿԼԱՐԱ ՊՈՂՈՏԱ

ԻԹԱԿԱ, ԿԱԼԻՖՈՐՆԻԱ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՑԱՎՈՎ ՀԱՅՏՆՈՒՄ Է, ՈՐ ՁԵՐ ՈՐԴԻ ՄԱՐԿՈՒՍ...

Փորձեց աթոռից վեր կենալ, բայց սիրտը նորից ծակեց, ու նա օձիքը ձգեց: Հետ ընկավ ու մնաց գրամեքենայի վրա:

Հոմերը, որքան կարող էր՝ արագ, տաք սուրճի բաժակը ձեռքին հեռագրատուն վերադարձավ: Մոտեցավ ծերունուն ու բաժակը սեղանին դրեց: Հեռագրիչ սարքը լռեց, և գրասենյակում լռություն տիրեց:

– Պարո՛ն Գրոգան, – ասաց Հոմերը, – ձեզ ի՞նչ պատահեց: – Նա ծերունուն գրամեքենայի վրայից հետ տարավ, որ երեսը տեսնի, բայց գրամեքենայի մեջ կիսատ հեռագիրը տեսավ: Բառերը կարդաց, բայց չէր ուզում հավատալ: Ծերունուն գրկած՝ քարացել էր տեղում:

– Պարո՛ն Գրոգան, – ասաց:

Ֆելիքսը՝ կիրակնօրյա հեռագրատարը, գրասենյակ մտավ ու նայեց ծերունուն, հետո առաքչին:

– Ի՞նչ է եղել, Հումե՛ր: Ծերուկին ի՞նչ է պատահել:

– Մեռել է, – ասաց Հումերը:

– Գժվեցի՞ր, – գոչեց Ֆելիքսը:

– Չէ, – ասաց Հումերը: – Մեռել է: Երևի՛ ես էլ:

– Հիմա Սպանգլերին կանչեմ, – ասաց Ֆելիքսը:

Հեռախոսը վերցրեց, համարը հավաքեց ու սպասեց, հետո լսափողը ցած դրեց: – Տանը չի: Ի՞նչ անենք: – Մոտեցավ, որ տեսնի, թե Հումերը ինչու աչքը գրամեքենայից չի կտրում: Հեռագիրը կարդաց ու ասաց.

– Կիսատ է, Հումե՛ր, կարող է՝ եղբայրդ ուղղակի վիրավոր է կամ անհետ կորած:

Հումերը պարոն Գրոգանին նայեց:

– Չէ: *Ինքը* մինչև վերջ լսել է: Չի տպել, որովհետև *լսել* է:

– Կարող է՝ չի լսել, – ասաց Ֆելիքսը: – Մի հատ էլ Սպանգլերին զանգեմ: Միգուցե արդեն եկած լինի:

Հումեր Մաքուլին շուրջը՝ գրասենյակին նայեց: Հետո հանկարծ թքեց, նստեց ու, ասես վերացած, հայացքը դատարկությանը հառեց: Աչքերը չոր էին:

Քաղաքից դուրս զբոսանքից հետո Սպանգլերը մեքենան հեռագրատան մոտ կանգնեցրեց: Ազդանշան տվեց, ու Ֆելիքսը վազելով եկավ:

– Պարո՛ն Սպանգլեր, – ասաց, – փորձում էի ձեզ զանգել: Բա՛ն է պատահել: Հումերն ասում է՝ պարոն Գրոգանը մեռել է:

– Դու գնա տու՛ն, – Դայանային ասաց Սպանգլերը: – Ես ավելի ուշ կգամ, բայց ընթրիքին չսպասես: Երևի լավ կլինի՝ ձերոնց տուն գնաս, – նա մեքենայից իջավ ու աղջկա այտը համբուրեց:

Հետո արագ գրասենյակ վազեց: Նայեց պարոն Գրոգանին, նայեց Հումերին:

– Ֆե՛լիքս, զանգիր բժիշկ Նելսոնին՝ 1133: Ասա, թող շուտ էստեղ գա:

Սպանգլերը ծերունուն գրկեց ու տարավ՝ պառկեցրեց գրասենյակի հետնամասի բազմոցին: Հետո հետ եկավ ու Հումերին նայեց:

– Շատ մի վշտանա, Հումե՛ր: Տարիքով մարդ էր: Ուզում էր, որ հենց էսպես էլ լինի: Դե, շատ մի՛ վշտանա:

Հեռագրիչ սարքը սկսեց ճարճատել, և Սպանգլերը գնաց, որ պատասխանի: Նստեց պարոն Գրոգանի աթոռին ու կիսատ հեռագիրը տեսավ: Երկա՛ր հեռագրին նայեց, հետո՝ սեղանի մոտ նստած Հումերին: Զանգեց մյուս ծայրի հեռագրիչին ու կիսատ հեռագրի մասին հարցուփորձ արեց: Հեռագրիչը մի անգամ էլ ամբողջն ուղարկեց: Սպանգլերը խնդրեց, որ որոշ ժամանակ հեռագրեր չուղարկի: Հետո վեր կացավ, գնաց՝ նստեց իր տեղն ու աչքերը ոչնչին հառեց: Ձեռքը պինդ խաշած ձվին գնաց, որ բախտի համար էր պահում: Առանց հասկանալու, թե ինչ է անում, սկսեց ձուն սեղանին խփել, մինչև կեղևը փշրվեց: Հետո դանդաղ կճպեց, նայեց կճպած ձվին ու զամբյուղը գցեց:

– Ֆե՛լիքս, – ասաց, – ցերեկային հեռագրիչին զանգիր՝ 4241: Ասա, թող հենց հիմա գա: Որ բժիշկը գա, կասես, թող ինչ պետք է՝ անի: Ես հետո հետը կխոսեմ:

Հումեր Մաքուլին վեր կացավ, մոտեցավ գրամեքենային ու կիսատ հեռագիրը հանեց: Պատճենը, ինչպես որ կարգն էր՝ տեղը դրեց, բնագիրը ծալեց ու դրեց ծրարը: Ծրարը բաճկոնի գրպանը դրեց: Սպանգլերը նրան մոտեցավ ու գրկեց:

– Արի, Հումե՛ր, արի՛ զբոսնենք:

Միասին հեռագրատնից դուրս եկան և երկար, առանց մի խոսք ասելու քայլեցին: Վերջապես Հումերը խոսեց.

– Էսպիսի ժամանակ մարդ ի՞նչ պիտի անի: Չգիտեմ, թե ու՛մ պիտի ատեմ: Չգիտեմ, թե ինչ պիտի անեմ: Մարդ էսպես ո՞նց ապրի: Ու՛մ սիրի:

Հումերն ու Սպանգլերը փողոցով իրենց կողմը քայլող Օգիին, Ինոքին, Շաքին ու Նիքիին տեսան: Տղաները Հումերին բարևեցին, Հումերը՝ նրանց, մեկ առ մեկ, անունով: Արդեն համարյա երեկո էր: Արևը մայր էր մտնում, երկինքը բոսոր էր, քաղաքը սկսում էր մթնել:

– Ու՛մ ատես, – ասաց Հումերը: – Վազքի ժամանակ Բայֆիլդն ինձ խփեց գցեց, բայց ոչ էլ նրան եմ կարող ատել: Էդպիսի մարդ է, ի՞նչ արած: Ո՞նց է էսպես պատահում: Չի ստացվում հասկանալ, բայց միակ բանը, որ ուզում եմ՝ մեկն ասի, ախր ինչու՞ եղբայրս: Հայրիկս մահացավ, բայց դա ուրիշ էր: Նա լավ կյանք էր ապրել: Լավ ընտանիք էր մեծացրել: Որ մահացավ, տխրել էինք, բայց չէինք չարացել: Հիմա ես չարացել եմ, բայց չգիտեմ՝ չարությունս ու՛մ վրա թափեմ: Թշնամին ո՞վ է, պարո՛ն Սպանգլեր, դուք գիտե՞ք:

Ինչ–որ ժամանակ անցավ, մինչև հեռագրատան կառավարիչը որոշեց, որ եթե խելքը գլխին ասելիք չունես, երևի կարելի է սուտ ասել:

– Ի՞նչ ասեմ: Չեմ կարծում, թե թշնամին մարդիկ են, – պատասխանեց նա: – Մեկը մյուսին ատելով՝ ստացվում է, որ իրենք իրենց են ատում: Ուրիշին ատել չի՛ լինում, մենակ՝ ինքն իրե՛ն: Իսկ որ ինքդ քեզ ատում ես՝ մնում է՝ մարմինդ, աշխարհը, աշխարհի մարդկանց թողնես՝ գնաս: Եղբայրդ գնալ չէր ուզում, ուզում էր մնալ: Ու կմնա՛:

– Ո՞նց, – հարցրեց Հումերը, – ո՞նց կմնա:

– Չգիտեմ՝ ոնց, – ասաց Սպանգլերը, – բայց ուզում եմ հավատալ, որ կմնա՛:

– Չէ, – ասաց Հումերը: – Եղբայրս մահացել է: Ինքը մահացել է, իսկ մենք՝ չէ:

Դատարանի այգով էին անցնում՝ բանտի մոտով, ուր մարդիկ պայտախաղ էին խաղում:

Սպանգլերը հասկանում էր, որ չէր համոզել, բայց որոշեց, որ մեկ է՝ պիտի շարունակի: Ոնց գիտի՝ ստով, ճշտով, ինչ-որ կերպ:

– Չեմ փորձելու քեզ սփոփել, – ասաց:– Գիտեմ, որ չեմ կարող: Ոչի՛նչ չի կարող: Մենակ հիշիր, որ լավ մարդը երբեք չի մեռնում: Եղբորդ դեռ շատ կտեսնես՝ փողոցում, տանը, քաղաքում՝ ուր ասես: Մարդու մարմինը թողնում գնում է, բայց նրա լավագույն մասը մեզ հետ է մնում: Միշտ մնում է:– Նա հասկանում էր, որ ասածն օգուտ չունի, ու դրանից մի տեսակ շփոթված էր:

– Պայտախաղ խաղալ գիտե՞ս, – հարցրեց:

– Չէ, սը՛ր, – պատասխանեց Հումերը:

– Ես էլ, – ասաց Սպանգլերը:– Քանի մութը չի ընկել, չփորձե՛նք:

– Հա, սը՛ր, – պատասխանեց Հումերը:

39. ՏՈՒՆԸ

Դանի Բուֆին և Հարրի Ռայֆին տուն՝ իթակա հասցրած գնացքի երրորդ՝ կաղացող զինվորը սկսեց քաղաքով թափառել: Դանդաղ քայլում էր, չորս կողմը նայում ու ինքն իրեն խոսում:

– Ըհը, էս Սանտա Ֆե կայարանն է: Էս կինոթատրոնն է: Գրադարանը: Երեցական եկեղեցին: Ըհը՝ Սանտա Կլարա պողոտան: Արայի խանութը: Իսկ էս էլ տունն է:

Զինվորը կանգնեց ու երկա՛ր տանն էր նայում: Հետո ճամփան շարունակեց:

– Էս դատարանի շենքի այգին է: Բանտն է, բանտարկյալները՝ պատուհանի մոտ: Էն երկու իթակացին էլ պայտախաղ են խաղում:

Զինվորը դանդաղ քայլեց խաղացողների կողմն ու ցածր, փայտե ցանկապատին հենվեց:

Հումեր Մաքուլին ու Թոմաս Սպանգլերը լուռ, անգամ առանց միավորները հաշվելու՝ պայտ էին նետում: Արդեն մութ էր, խաղալը դժվար էր, բայց նրանք շարունակում էին նետել: Ցանկապատին հենված զինվորին տեսնելով՝ Հումերը մի փոքր հանկարծակիի եկավ: Մի պահ թվաց, թե հենց էլ կարող էր Մարկուսը լինել: Նա զինվորին մոտ գնաց ու հարցրեց.

– Կուզե՞ք պայտ նետել:

– Չէ, շնորհակալ եմ: Դուք խաղացեք, ես կնայեմ:

– Ձեզ ոնց որ առաջ չեմ տեսել: Իթակայի՞ց եք:

– Հա:

– Արձակու՞րդ եք եկել:

– Չէ, զորացրել են, տուն են ուղարկել: Մի երկու ժամ առաջ եմ գնացքից իջել: Քաղաքով թափառում էի՝ ուզում էի ամեն ինչը նորից տեսնել:

– Բա ինչու՞ տուն չեք գնում: Չե՞ք ուզում, որ ընտանիքը ձեր գալն իմանա:

– Որ իմանաք՝ ո՞նց եմ ուզում: Կամաց-կամաց կգնամ: Էնքան բան կա, որ պիտի տեսնեմ: Հավատս չի գալիս, որ էստեղ եմ: Դեռ մի քիչ էլ թափառեմ, հետո տուն կգնամ:

Ջինվորը դանդաղ քայլեց, ու Հումերը նկատեց, որ կաղում է:

– Էլ պայտախաղ խաղալ չեմ ուզում, պարո՞ն Սպանգլեր, ձեզ շատ շնորհակալ եմ:

Հետո, մի պահ լռելուց հետո.

– Տնեցիք ինձ են սպասում: Ասել էի՝ ընթրիքին կգամ: Ո՞նց եմ գնալու ու երեսներին նայեմ: Ինձ տեսնեն, թե չէ՝ կհասկանան, որ Մարկուսը մահացել է:

– Սպասի՛ր,– ասաց Սպանգլերը:– Դեռ մի՛ գնա: Նստի՛ր: Մի քիչ սպասի՛ր:

Այգու նստարանին նստեցին, բայց չէին խոսում:
Որոշ ժամանակ անց Հոմերը հարցրեց.

– Ինչի՞ն եմ սպասում:

– Ո՞նց ասեմ,– պատասխանեց Սպանգլերը, ինքն էլ չիմանալով՝ ասածը սու՛տ է, թե՛ ճիշտ,– սպասում ես, որ եղբորդ էն մահացած մասը քո մեջ էլ մահանա: Էն միս-արյուն մասը, որ անցողիկ է: Էս մահը հիմա ցավոտ է, բայց մի քիչ սպասիր: Հենց որ ցավը համակ դառնա, ինքն էլ մահ դառնա՝ քեզ բաց կթողնի, կանցնի: Ժամանակ է պետք: Մի քիչ համբերիր: Հետո եդ մահը միջիցդ հանած՝ տուն կգնաս: Ժամանակ տուր, որ անցնի: Ես հետդ կնստեմ, քանի չի անցել:

Մաքուլիների տնից դաշնամուրի, տավիղի նվագ էր գալիս ու երգի ձայն:

Շենքի աստիճաններին նստած մարդը՝ զինվորը, որ տուն էր եկել մի քաղաք, ուր առաջ եղած չկար, տուն՝ որ առաջ մտած չկար, ընտանիք, որ առաջ ճանաչած չկար, լսում էր. վախեցած, տարակուսած, թերահավատ: Այստեղ լինելու ի՞նչ իրավունք ուներ: Մյուս կողմից՝ գիտեր, որ *տուն* էր եկել: Իթական նրա *տեղն* էր: Ինքն այս *տանն* էր մեծացել: Այս տանն ապրող ընտանիքը *իր* ընտանիքն էր:

Հանկարծ բաց դռան մեջ Ուլիսես Մաքուլին հայտնվեց՝ մատնացույց անելով: Քույրը՝ Բեսսը, եկավ, որ տեսնի՞ ինչ է: Մայրիկին դարձավ.

– Մեկը մեր աստիճաններին է նստել:

– Լավ է արել,– ասաց տիկին Մաքուլին:– Ով որ է՝ ասա, թող ներս գա, Բե՛սս:

Բեսսը դուրս եկավ:

– Մայրիկս ասում է՝ ներս գաք,– ասաց:

Զինվորը դանդաղ շուռ եկավ ու աղջկան նայեց:
Կամացուկ ասաց.

– Բե՛սս: Ոտքերս դողում են: Որ կանգնեմ՝ կընկնեմ:
Ի՞նչ կլինի՝ կողքի՛ս նստիր:

Աղջիկը երիտասարդի կողքին նստեց:

– Անունս որտեղի՞ց գիտեք: Ո՞վ եք:

– Մենակ գիտեմ, թե *դու* ով ես, մայրիկդ ով է, ու
եղբայրներիդ ով են: Մոտի՛կ նստիր, Բեսս, մինչև ներսս
հանդարտվի:

– Եղբորս՝ Մարկուսին ճանաչում եք:

– Աշխարհում ոչ մեկին ավելի լավ չեմ ճանաչում:
Հա, ճանաչում եմ:

– Բա ինքն ու՞ր է:

Զինվորն աղջկան մի մատանի պարզեց:

– Քո եղբայր Մարկուսը խնդրել է, որ սա քեզ բերեմ:

Բեսս Մաքուլին որոշ ժամանակ ոչինչ չասաց, հետո
հարցրեց.

– Մարկուսը մեռե՞լ է:– Նրա ձայնը հազիվ լսելի էր, ո՛չ
հուզված:

Փողոցի ծայրում Հոմեր Մաքուլին երևաց: Բեսսը
վազեց նրա մոտ: Երբ զինվորին հասան, ասաց.

– Մարկուսի մոտից է եկել: Ընկերներ էին,– ու տուն
վազեց:

– Թո՛քի,– հարցրեց Հոմերը:– Այգում որ հետս խո-
սեցիր, ինձ թվաց, որ ճանաչում եմ,– նա մի պահ լռեց,
հետո ասաց:– Հեռագիրը ցերեկը եկավ: Գրպանումս է:
Ի՞նչ անենք:

– Պատռիր, Հոմե՛ր:

Հոմերը գրպանից ծրարը հանեց, պատռեց, բայց
պատառիկները նորից գրպանը դրեց, որ պահի:
Միջոտ:

– Ներս գնանք:

– Հումերը կռացավ, ու զինվորը, վրան հենվելով, դանդաղ վեր կացավ:

Անհավատալի բան եղավ. տնից նորից երաժշտություն հնչեց՝ դաշնամուրի, տավիղի, ու երեք կանանց երգը:

– Թո՛ղ մի թոպե կանգնեմ՝ լսեմ, – խնդրեց զինվորը:

Ուլիսեսը տնից դուրս եկավ ու զինվորի ձեռքը բռնեց: Երբ երգը վերջացավ՝ տիկին Մաքուլին, Բեսսը ու Մերի Արինան բաց դռան մոտ եկան: Մայրը կանգնեց՝ իր երկու տղաներին նայեց, որ կանգնած էին անձանոթի կողքին՝ զինվորի, որ իր որդուն ճանաչել էր, բայց որդին է՛լ չկար: Ցավին հազիվ դիմանալով՝ նա, այնուամենայնիվ, զինվորին ժպտաց ու ասաց.

– Ներս համեցեք, կուզե՞ք մեր տունը տեսնել:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՈՒԼԻՍԵՍԸ	7
2. ՀՈՄԵՐԸ	9
3. ՀԵՌԱԳՐԱՏԱՆԸ	10
4. ՏԱՆԸ	16
5. ՏԻԿԻՆ ՍԱՆԴՈՎԱԼԸ	18
6. ՊԱՐՈՆ ԳՐՈԳԱՆԸ	22
7. ՏԻԿԻՆ ՄԱՔՈԼԻՆ	24
8. ԲԵՍՍՆ ՈՒ ՄԵՐԻՆ	27
9. ՎԵՏԵՐԱՆԸ	32
10. ՀՆԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԻՆ	34
11. ՔԻԹԸ	43
12. ՕՐԻՈՐԴ ՀԻՔՍԸ	46
13. ՄԵԾ ՔՐԻՍԸ	54
14. ԴԱՅԱՆԱՆ	67
15. ԱՆԿՅՈՒՆՈՒՄ ԿԱՆԳԵԱԾ ԱՂՋԻԿԸ	73
16. ՏՈՒՆԴԱՐՁ	76
17. ԵՐԵՔ ԶԻՆՎՈՐ	78
18. ՀԵՌԱԳԻՐԸ	86
19. ԱԼԱՆԸ	88
20. ՖԻԼՄԻՑ ՀԵՏՈ	90
21. ՀՈՎՏԻ ՉԵՄՊԻՈՆԸ	91

22. ԿՈՂՈՊՈՒՏԸ	93
23. ՄՂՁԱՎԱՆՋԸ	102
24. ԾԻՐԱՆԻ ԾԱՌԸ	106
25. ՊԱՐՈՆ ԱՐԱՆ	113
26. ՏԻԿԻՆ ՄԱՔՈԼԻՆ	123
27. ԼԱՅՈՆԵԼԸ	125
28. ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ	129
29. ՀՌԵՏՈՐԱԿԱՆ ԱԿՈՒՄՔՈՒՄ	133
30. «ԲԵԹԵԼ» ՀՅՈՒՐԱՆՈՑՈՒՄ	140
31. ՊԱՐՈՆ ՍԱՐՔԸ	142
32. ԳՆԱՑՔՈՒՄ	152
33. ՄԱՐԿՈՒՍԸ	159
34. ԵԿԵՂԵՑՈՒՄ	164
35. ԾՈՒՂԱԿՆ ԸՆԿԱԾ ԱՌՅՈՒԾԸ	169
36. ՍՊԱՆԳԼԵՐԸ	173
37. ԻԹԱԿԱՆ	175
38. ՊԱՅՏԱԽԱՂԸ	176
39. ՏՈՒՆԸ	183

Ուիլյամ Սարոյան
ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹՅՈՒՆ

William Saroyan
THE HUMAN COMEDY

Թարգմանիչ՝ Նունե Թորոսյան
Խմբագիր՝ Լեռնիկ Դալլաքյան

Հրատ. բաժնի ղեկավար՝	Հռիփսիմե Մադոյան
Հրատ. խմբագիր՝	Արքմենիկ Նիկողոսյան
Տեխն. խմբագիր՝	Արարատ Թովմասյան
Էջադրող՝	Նարինե Հովհաննիսյան
Սրբագրիչ՝	Շողեր Ղազարյան
Կազմը՝	Վիտալի Ասրիևի

Ճապիկի դիմերեսին օգտագործված է
Սարոյանի հեղինակած նկարը



Անտարես

«Անտարես» հրատարակչատուն
ՀՀ, Երևան-0009, Մաշտոցի պ. 50ա/1
Հեռ.՝ (+374 10) 58 10 59, 58 76 69

antares@antares.am

www.antares.am